569
5 Poems 523

Printed in Turkey

2004

p-98
1617
662-44
35
9497-57
4057

ՍՄԲՈՒՐ

Հ. ՈՒԹՓԱՅԼՅԱՆ ՊՅԱՐԳՐՊԵՏԻ

ԹՐԵՄԱՆՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1845

9(47.925) + 282к

Printed in Turkey

ԱՐԿ պատկառամբար հանդիսին, յորում ամ բան ամէ պակին տարեւոր վաստակը առաքինի և ուսումնասէր Աշակերտելոց Ազգայէլեան Արժարանիս, պատճառք լեալ են ձաւիցս բան կարեւորագոյն թուց. զոր թերեւս նեղոսամիտ ոմն առնուցու յանձն վերծանել։

Անհրաժեշտ պարտք պաշտաման իմոյ էին և են, որպէս և ամենայն բարեկիրթ սրտի, տպաւորել՝ ի գեռաթէք կամն՝ խնամոս առաքինութեան և հայրենասիրութեան. զոր դուն գործեալ եմ արդեօք հոչակել հրապարակաւ և՝ ի պատկառելի ժողովի հանդիսականացն, որ ամի ամի հաւաքին՝ ՝ի խրախոյս աղկաղկ հասակին, որպէս երաշխաւորեն սոքին բանախօսութիւնք։ Այլ թէ յաջողեալ իցեմ՝ ՝ի նոյն, արդիւնք իրացն նատցին դատաւոր. իմ անկեղծաւոր խոստովանութիւն այն է միայն և զիւր մտացն խղճի, զի ջանացեալ եմ՝ ՝ի մտաց հաւանութենէ և՝ ի յօժարութենէ սրտի։

Նաւքս հեռի էին յիրերաց ժամանակաւ, վասն այն և ստգիւտ նմանութեամբ խնամոցին ընդ իրեարս՝ ՝ի ժամուն չէր կարի նշմարելի. որ՝ ՝ի միահամուռն խմբել՝ ՝ի մի մատեան գուցէ առաւել տարաւոկ մարթիցին ածել։

Յուսամ միայն նեղողամիտ գտանել զաղ-
գային գաստուրս այնու և եթէ, զի ոմանց 'ի
բազմապատիկ հանդիսից ընտանի հայրենասի-
րութեան առաջին եղէ ես և 'ի բեմէ պերճախօ-
սութեան տալ բարբառ 'ի ջեռուցանել զսիրտ
որդւոց 'ի նմանողութիւն հարց արժանաւորաց։
Յուցեալ միանգամայն այսու՝ եթէ հատանգի
պատմութիւն, ըստ առաքինական Ճոխութեանց,
չբերէ նախանձ ընդ օտարս *։

Եթէ մարթիցիմ այնչափ փառաց ակն ունել՝
զի սոքօք խրախոյս գտայց լեալ 'ի նոյն քաջագու-
նիցն քան զիս, ոչ կորանօք ինչ շիկնեցայց ընդ
տկարութիւնս. բերկրեալ 'ի սրտէ եթէ հոյլք
քաջաց յիմմէ յանդրգնութենէ առին քաջալեր.
և հայրենիք մեր յանկարծ ծանիցեն զանզգաստ
Ճոխութիւնն ընտանի։

Ո՛ տայր ինձ զի և բաղումք ըղձիցս ափուելոց
աստ և անդ 'ի Ճառան ինքնին յարդիւնս լինէին.
և մի ոլոր Ճշմարիտ սիրոյ պնդէր ընդ իրեարս
զորդիս միոյ մօր։ Օ՜ առասպարէզ կենաց հարց մե-
ծոց այս միակ նահատակութիւն ուռոգեաց ծան-
րագին քրտամբք. քանզի այսու ուղիղ եղանէ 'ի
մէնջ խմբակից փառաբանութիւն անուան Ցեառն,
որում եթէ նահատակիցիմք, անեթառամելի պսա-
կեացին և մեր Ճակատք, և գոցուք, այնպիսի
հարց որդիք երախտագէտք։

1845

* Խոր. գիրք ա. գլ. ԺԷ։

ՆԵՐԲՈՂ

ԻՍ. ՆԵՐՍԷՍ ՄԵԾ

Եթէ երբէք երկիւղ խռովեալ է զիս, ո՛ աստուածարեալ Հայրապետ և մեծապատիւ ժողով առաքինեաց, կամ կասկած տարակուսի վարանեալ զմիտս իմ յեղանել իմում յայս ձեր հանդէս պատկառելի, ոչ ինչ նուազ է և այս օր երկիւղն, որով սիրտ իմ բաբախէ. և կասկած տարակուսին, որով շուարին միտք իմ։ Այս օր, յորում աւուր ժամի առաջի մատուցանել կարողամիտ ակրմիս զմեծահրաշ առաքինութիւնս զայնպիսւոյ առն, զոր պարգև անկշռելի շնորհեաց Աստուած հայրենեաց մերոց։ Եթէ ոչ հարկ ոնիս, և սէր որդիական բռնադատէր զիս յայս զժուարին ասպարէզ, անշուշտ ընդ մեզադրանօք յանդգնութեան արկանէիք զիս։

Թէ երբէք զաչս մտաց իմոց դարձուցանեմ 'ի Նէրսէս 'ի Մեծն, անդէն առաջի իմ նկարի Ճշգրիտ պատկեր երկնից, յորոյ յընդարձակաձաւալ և յտանջի կամարն հսկայն յաւիտե-

նական Հայր առնու միայնակ։ Ա՛ռ Երեսիս պատմութեանց մերոց, տուք ինձ համարձակութիւն ասել, այլ և ամենայն աղգաց օտարաց, աղօտանան փառք։ Որպէս 'ի ծագել նշուլից արփւոյն խուսափէն յերեսաց նորա ոսկեփայլ աստեղք, այսպէս առ առաքինութեամբքն Երսիսի այլոցն ամենեցուն ստուերանան հանդէպ քաջութեանց։

Մերևս թուեսցին ոմանց առաւելութեամբ ասացեալ բանքս. այլ աղաչեմ, նկատեցէք միայն 'ի Երսէս, և այս բանք նուաղ թուեսցին ձեզ։ Երսէս յամենայնի վեհ. յամենայնի հրաշալի. և ոչ անձուկ ինչ պայման կենաց սահմանել զառաքինութիւնս նորա։ Զա զարմանալի յարքունիս թագաւորաց, պատկառելի յեկեղեցւոջ Աստուծոյ. նա սուր 'ի պատերազմունս արդարութեան, և խաղաղարար ապրստամբողական ոգւոյն խռովութեան. նա վաճառան ապաւինի տառապելոց, և կշտամբիչ անօրինութեանց. նա անդողրիչ աղքատաց. նա ցուպ կուրաց և կաղաց. նա առողջութիւն հիւանդաց. նա հայր որբոց և յանձանձիչ այրեաց. նա իմաստութեան առաջնորդ, և 'ի խորհրդեան նա դնէ միտս օգտակարս ըստ ժամանակի դիպացն պատահելոց. նա կցորդ հոգոյ. նա բարձիչ վիշտաց. միով բանիւ նա նորոգիչ ընդարձակածաւալ մերոյ աշխարհիս. նա՝ և . . . ո՜հ, քաջամենին ոսկերք իմ, նա և ողջակէզ անաստերիւր առաքի-

նութեան, հանեալ պատարագ յարիւնաշաղախ ձեռաց բարերարելոցն 'ի նմանէ։

Այլ միայն 'ի խուռն առաքինութենէ աստի շատ կոյլ արդեօք 'ի վեր ամբառնալ զմարդ 'ի նուաստ խառնաղանջ ամբոխէն, և մատանիշ առնել զնա յերկրի, և պակաղարդ ձեմեցուցանել յերկինս։ Այլ արդ որպէս չկոյլ իրաւացի երկիւղ իմ և վաղանումն մտաց, որ զայսպիսւոյ առն կամիմ այսօր նորոգել զյիշատակ 'ի միտս ձեր. զժուարին պարտք։ Կամիմ զնա տալ օրինակ ձշմարիտ առաքինութեան առաքինաջան և ուսումնասէր ժողովոյ պատանեացս, զի 'ի ծովածուփ կենցաղիս, որում այսուհետև հանդերձեալ են լինել դիմագրաւ, ըստ նմին նկրտեսցին կերպարանել և ըզվարս իւրեանց. 'ի նա յառեսցեն զաչս, զի մի անձանց անպիտանք, բեռն աշխարհի և նախատինք լիցին հայրենեաց։ Ի մի յայս անուն քանի քանի մտածութիւնք խռնին 'ի միտս միոյ միոյ պատկառելի ժողովոյս։

Զ. լուսաձաձանչ փառս վսեմ անուանս շքանան միտք. առ սէր հօր հայրենեաց բարախնէն սիրտք. և որպէս ես նուաստախոհ բանիւք իմովք հաւատարեցայց խորհրդոց ձերոց. որպէս թերի տեսութիւնք իմ կշռեսցին ընդ կորովարիւք հայեցուածս աչաց մտաց ձերոց։ Զոր թէ նոր եռանդն ածել 'ի լանջս ձեր, որ դարձեալ է սիրոյ հայրենեաց, և 'ի բոց սեղանոյ նորին անդադար բարդի ծուխ մեծարանաց այսպիսւոյ առն անզուգականի։

Ա.ՍԼ դու, դու սէր Հայրենեաց, դու որ վա-
ռեցեր զմիտս և զխորհուրդս Ներսիսի, դու էկ
էջ և 'ի սիրտ իմ, զի խորհուրդք նմին արժանա-
ւորք ծնցին 'ի միտս իմ, և կայծակն քո խոր-
հրդական սրբեսցէ զլեզու իմ, զի մի եղցէ 'ի բե-
բանոց իմմէ անպատշաճ ինչ առաջարկութեան
բանիս։

Սակայն մի հանդիպիցիք, ո՛ պատկառելի ատեան,
եթէ հանդէրձեալ իցեմ մի առ մի զամենայն մե-
ծամեծսն Ներսիսի առնել ձեզ յանդիման. կա-
ցի իսկ ծանր է քան զիս բանդ, և առ այդ չափ
չեմ բաւական. զօրաւորագունից պէտք են առ
այն գործ մեծ։ Ա.ՍԼ'ի կարեւորաց անտի սքանչե-
լագործութեանց նորա քանի մի եւեթ յիշատա-
կեցից, եթէ ընդաւոյս ձերոյին քաղցրութեամբ
ընդունիցէք ինձ զնաւորեալն ձեր ներող երկայն-
մտութիւն։

Զի՞ ընդ արեգականք ինչ յորում զոյգ ընդ
բարւոյն չիցէ խաւն և մութն ինչ վատթարի.
մինչ զի և արփին ինքնին, որ կենդանարար է ա-
մենայն եղականաց, և տիպ բարերարութեան
ամենախնամ արարչին, թէ ագահէ փոքու իւիք
զՆառագայթսն, նկուն լինի բնութիւն 'ի ցրտայ-
ինն անուանեալ գօտիս. և 'ի շռայլելն առ տակա-
մի, խամրէ և յոգիս ապաստան առնէ առ հասա-
ւրակ զլոյս, զտունկ, զանասուն և զմարդ 'ի գլխո-
վին յայրեցեալն կամար։ Ա.ՍԼ և այս անսահմանն

խնամատութեանն հաւատքիզ, զի 'ի չարէն խրատեալ, և խրախուսեալ միշտ 'ի բարին կոչս, վարձս յաձախագոյնս պատրաստեսցէ սիրելեաց իւրոց, և բացցէ աստուածային փառաց սիրողաց անուան իւրոյ։ Այլ եթէ թերակատար այս բնութիւն անփոփոխելի էր 'ի պայմանի իւրում, երանի՛ արդարև, որոց լուսազոյն հաստատեր բաժին. այլ եղա՛ւկ, որոց չարին մնային զամանէին հանդիպեալ։

Օ՜ այսր յեղյեղուկ փոփոխութեան բուսոյ բարուց մարդկան բազում անգամ և եկեղեցի Քրիստոսի էառ զիրաձ։ Մերթ արք մեծամեծք առաքինութեամբ և խնամատութեամբ մանանգամայն բարգաւաձեն զեկեղեցի. և մերթ 'ի դուրս յարձակեալ 'ի դրանց դժոխոց ամենայն դժպհի մոլորութիւնք 'ի խորչս և 'ի բանտս տան հաւատալ հարսին Քրիստոսի. և բազում այն է զի երկոքեան 'ի միասին բարգաւաձին առաքինութիւն և չարութիւն, զի առ երկրորդիս հաւատարութեամբ չքնաղազոյն փայլեսցեն փառք առաջնոյն։ Այս խորհուրդ մեծապէս խրախոյս է և ձեզ, ով Հարք սուրբք, որք արիապէս նահատակիք անխոնջութեամբ 'ի դժուարակոխ աստպարիզի վրայս։

Ակատեմ ստէպ և յաչխարհիս մերում զայս փոխատութիւն բարւոյ և չարի։ Ցեսարանն գեղեցիկ, յորժամ արքայք մեր և թագուհիք փառս հանարէին խնամարհեցուցանել զիրափիա-

վար մարմնոյն ընդ ծանրակիր բեռամբք , զի նախանձարկու ամպոց 'ի վեր առաքեսցեն զերկնապիշ ախոյեան աստուածպաշտութեան իւրեանց . սոքա սպասաւորք պաշտօնէից Ցեառն , զշրթանց նոցա կախէին . և նոցա ամենայն ակնարկութիւնք պատգամ էին առ սոսա յաստուածակոյս կողմանէ ։ Եւ սակայն յետ հիսնալոյ ընդ նորանշան տեսիլ այդպիսի , դարձուցէք աղաչեմ գամ մի զաչս ձեր այսր . և ընդէր Յուսիկ թոռն Գրիգորի մեծի , առ որով այսոցիկ աքանչելեաց ականատես եղև Ս. յրարատ , յետ սուղ ինչ ամաց հառաչանօք զգիշերս հանցէ 'ի գլուխ , և արտասուք դառնութեան 'ի ծաղկեալ այտս նորա ։

Ուրիցուք , աղէ , պատգամաւորին , որ յերկնից թեւածեալ գայ , և բան աւետեաց 'ի բերանի նորա առ նա և առ մեզ ։ — Մի՛ ևս , մի՛ Յուսիկ , մի՛ վհատիր . ոչ 'ի սպառ խաթարեսցի եկեղեցին Ս. ստուծոյ . յարենէ հարց քոց , յարենէ քումմէ թէ որդիք երևեցան օտարախորթք , այլ ելցէ այր՝ որ լցս լիցի աշխարհի ։ Որդիք քո Պապ և Ս. թանագինէ խոտորեցան յուղիղ Հանապարհաց հարց իւրեանց , այլ ելցէ այր՝ որոյ ընթացք անստերիւր յաւետարանական շաւղացն ուղղութեան . նա առաջնորդեսցէ 'ի նոյն և քոյոյ ժողովրդեանդ . յամիսոիկ Հառագայթից քոց 'ի մուտս՝ առ փոքր մի 'ի ստուերս մնասցեն որդիք քո , լուսաւորեալք 'ի լոյս քո և

'ի լոյս հարց քոց · այլ յարևմտից ծագեցի աստղ նորանշան, որոյ Ճառագայթք լուսաւորագոյն քան զարևին։ — Ո՛հ, արդարև լուսաւորագոյն քան զնախահօր քո, որ արևի ծագեցաւ ստուերանած որդւոցս Աբրահամայ։ Լատես Յուսիկ զԹոռնեակն իւր զՆերսէս յԱթանագինեայ և 'ի Սամբշանէ 'ի քեռէ Թագաւորին Տիրանայ։ Աբիւն առաքինեաց և աղքայազանց խաղայր 'ի փափուկ երակս մանկանն։ Ընկալաւ 'ի գիրկս իւր, և իբրև զծերունին Սիմէոն տեսեալ զակնկալութիւն ժողովրդեան իւրոյ, խնդրեաց 'ի Տեառնէ քաղցր արտասուօք։ Կատոյց զաչսն արդարն, զի մի տեսցէ զխոտորել ժողովրդեան իւրոյ 'ի Ճանապարհացն արդարութեան։

Յաւիշտակեցաւ 'ի բաց և անարատն Ներսէս 'ի տանէ հարց իւրոց, զի մի չարութիւն ինչ շըրջեսցէ զիմաստութիւն նորա · և ահա հազիւ 'ի բան հասեալ, հանձարո

այլովքն հանդերձ, այլ և հարս հայաստանեայց. և եկեղեցիդ քո անդրանիկ ձեռաց Աբաբելապետին, և 'ի մեզ գետահետեաց զաղբիւր անպղտոր վարդապետութեանն։ Որ և ցուցանէ ինձ զփառաւոր զսպիսն, որով պՀնեաց զնա, զի վերք վասն Յիսուսի՝ փառք են, որով պՀնեաց զնա Ժանան Յուլիանոս։ Արդ բարենշան քաղաքին այնմիկ նախանձաւոր հանդիսացաւ Թադուհիս Աշխեայ, յոր զՀոգի հարց իւրոց պանդխտեցոյց խն Մխիթար. 'ի սմանէ ելին վարդապետք Ճշմարտութեան, 'ի սմանէ և քաջագործք երիտասարդացն զումար աստուածային և մարդկային լցեալ իմաստութեամբ, Ճգնեսցին նորոգել զսխալթարեալ փառս հայրենեաց մերոց։ Այսպէս ուրեմն միշտ ցողով օտար աստեղաց բարգաւաճեն պարծանք Աղարատայ։

Աղդարձուցէք աղաչեմ զաչս ձեր 'ի Կիլիկիս, որ 'ի վարժարանս Կեսարիոյ նահատակի. ով տեսիլ չքնաղ։ Ո՞ արդաւպետաց բազմաց սահմանեցաւ իմաստութիւն առ ընդարձակաձաւալ հանճար նորա, և յակՃիռս կրթեցաւ մեծապանծն Յունաստան ընդ կորովութիւն մտաց որդւոյն Աբրամայ։ Մինչդեռ հայաստան անծանօթ էր բախտին իւրոց, օտարք երանեին նմա 'ի Կիլիկիս։ Հնարատութիւն վարուցն և հանճար իմաստութեան նորա յապուշ կրթէին զամենեսեան. և ապահ շրթունք կոչէին զնա սուրբ, անուանէին զնա պատիւ աղքատեաց, զնա

նեցուկ արքունի գահուն, զնա զարդ հայաստա-
նեայց։

Ա.յլ բարկ. առ ինչ փոխանակ ուղղելոյ 'ի հայրենի գաւառ իւր զընթացսն զկնի քաջակիրթ արգասաւորութեան 'ի հրահանգս աստուածային և մարդկային վարժից, 'ի թագաւորեալն Խուզանդիոն ուղղեցեալ զգարշապարսն։ — Ոչ վայրապար։ Զրինակ իմն ժրաջանն մեղու յորժամ վտարանդի 'ի հայրենի փեթակէն թափ առեալ ծաղկաց 'ի ծաղիկս մոլորիցի, ոչ թէ զրահեա թափառական շրջիցի, այլ որպէս զի զքաղցր նեկտարն միոյ միոյ 'ի գեղափթիթ ծաղկաց անտի մթերեալ՝ ակաղձուն թիկամբ դառնայցէ 'ի փեթակ անդր ընուլ զրջիջն անուշահամ մեղերքն։ Ա.յսպէս և տեսչութիւն աստուածային իբրու զձեռանէ կալեալ զՆերսիսի առաջնորդէր անդր, ուր ուղղութեանցն յաձախեալ էին կարգք. որպէս զի զկարևոր բարեվայելչութիւնսն առեալ ածցէ և 'ի բնիկ գաւառ իւր. ուր չարանախանձն թշնամի բարւոյն յաչաղկոտ աչօքն խոժոռ հայէր 'ի բարեգուշակ արգասաւորութիւն քրտանց անմահն Գրիգորի։

Ընդ 'ի Խուզանդիոն գողացաւ զսիրտ նորա պարկեշտասուն օրիորդն դուստր իշխանին Ա.պիոնայ. և 'ի նուիրական օրհնութենէ սրբոյ եկեղեցւոյն պարգևեաց Տէր զբարեհաճն մանուկն Խաղակ։ Ո՛հ ընդ յիշատակ անուանն խայտան սակերք իմ. զի քանի՛ ակնկալութիւնք

որդւոյն Աստուծոյ մեթերեալ գանձեալ կան յանուն յայն մեծ, յանուն օրհնեալ Յիսուսոյ։ Ով ազգասոհմ աստուածամերձ առաքինեաց։

Սակայն յորում վայրի և գտանէր, աչք մնացն Ներսիսի անթարթ յառեալ էին 'ի հայրենիս անդր. տեսանէր զաղէտս նորա և հառաչէր։ Տեսանէր զի արքունիք քրիստոսանուէր թագաւորաց՝ իւրոց ազգականաց, չէին ինչ ընդհատ 'ի հեթանոսականացն՝ որչ լեալ ամ ախտից, և ապաւէն ամենայն չարութեանց։ Պարանակալ հայրասպանութիւնք, աղտեղութիւնք պղծութեանց, գաղտնի քսութիւնք, յայտնի դաւաճանութիւնք, բռնութիւնք, չարութիւն պաշտպանեալ, առաքինութիւն հարատահարեալ. աշխարհն ամենայն առ հասարակ մատնեալ 'ի պատերազմունս, դաւառք և քաղաքք յաւերմունս. արիւն, կոտորած, աւարառութիւնք, կործանմունք ամենայն ուրեք։ Որպէս օտար էն արդ կերպարանք քո յառաջնոց քոյոց կերպարանաց, ո՛ դաւառ իմ հայրենի։ Ու ափամբք պղտորն Արասխայ և տխրագին եկեղեցին հայաստանեայց ձեռն 'ի ծնօտի՝ յիշատակեալ զանցեալ գեղ վայելչութեանն իւրոյ, ընդ այժմու հիգութիւնն ողբայր դառնապէս, և զաղի արտասուս իւր խառնէր ընդ փրփրալից ջուրս գետոյն։ Տաճարք Աստուծոյ դատարկացեալք, խորհուրդք ապաիտ եղեալք, և աստուածպաշտութիւն ընդ լերինս և ընդ անտառս թափառական։

Ընտանի Տէր, մեռայսր արդեօք զձեռն մեծ և զբազուկ բարձր, որով Ճոխացուցեր զմիտս անուան Արդեաց քո 'ի գաւառն յայնոսիկ, մինչ զեռ տիեզերք առհասարակ տակաւին թաղեալ կային 'ի խաւար հեթանոսական պատրանաց. մինթէ վայրապար ուռոգեցին զանդաստանս ժառանգութեան քո արիւն առաքելոց և առաքելանման հաղց մերոց։ Այնայեա, Տէր ողորմեր, և մի 'ի սպառ ծանրասցի 'ի վերայ ժառանգութեան քո վրէժխնդիր բազուկ քո։

Այլ արդարև ոչ մինչև 'ի սպառ անարգասաւոր զտան քիրան և արիւն Գրիգորեանց։ Այնուհետև վրիպակարահետ և բազմաշաւիղ մոլորութիւն յանձնէ իսկ տաղտկացեալ, 'ի խնդիր անկանէր առաջնորդի, որ ընդ անքոյթ Ճանապարհ ածցէ զնա յուղիղ պողոտայն։ Այլ ահա 'ի միջոց արքունեացն ընտրեցաւ արժանաւոր աթոռակալ Գրիգորի։ 'Ներսէս սենեկապետ արքային Արշակայ և 'ի զեղծ յարքունիսն ոչ պղծեաց զանարատութիւն վարուց իւրոց։ 'Ներսէս յինքն ձգէր խնամատութեամբն և վայելչութեամբ գեղոյն զաչս և զմիտս ամենեցուն։ 'Ներսէս հրամանաւ երկնաւոր զուարթնոյն եպիսկոպոսապետ հայաստանեայց երկրպագի։ Այլ որպէս երբեմն զՍովսէս շնորհք աստուածային յարքունեաց անտի Փարաւոնի յափշտակեցին կացուցին և առաջնորդ և օրէնսդիր ժողովրդեան իւրոց, այսպէս նոյն շնորհք 'ի ծանրակիր ևս զե-

բուԹենէ՝ Ներսիսիս կամեցան փրկել զմեզ։ Ա-
բրահամ լեր, եկեղեցի սուրբ, ուրախ լեր. ահա եկն
առ քեզ փեսայն քո, որ զարձուսցէ զորդիս քո
ուծացեալս առ 'ի քէն, 'ի զԹալիր ծոց քո մայ-
րենի։

Յայնժամ միւսանգամ զարձ արար Ներսէս
'ի Կեսարիա. այլ որպէս այլազգ քան զառա-
ջին նուագան։ Արկինք և երկիր զմիմեանսիք
եղ և էլս առնէին 'ի պատուել զնա. առաջին
նախարարքն և ոստանիկքն աշխարհին Թուցեալ
յաջմէ և յահեկէ շքեղ յաղԹանակ բոլորեն
զնովաւ։ Նոցին, որպէս երբեմն 'ի Յորդանան,
աղաւնակերպ երևուԹիւն ցուցանէ ամենեցուն
զսիրելի զաւակն ընտրեալ. և սիւնն լուսոյ հա-
ւատարիմ առնէ ԹէՆոր զոմն Մովսէս առաքեաց
Աստուած առ ժողովուրդ իւր ազատել զնա յե-
գիպտական մոլորուԹեանցն, և յաւետարանական
մարգն տաւաղել իբրև զՀոտս գառանց ան-
մեղաց։

Ոմսացեալ աստուածապարգև շնորհիւն գայ
հայրս մեր առ մեզ։ Նա՛ պա, զի յապաղէք, որ-
դիք Լուսոյ. արիք ելէք ընդ առաջ հօրն ձե-
ոոյ, ընդ առաջ ընտրելոյն Աստուծոյ. որ Ներսա-
գոյն և ս քան զամենայն դիւցազունս ձեր բար-
ձեալ բերէ ձեզ աւար անկապտելի. ոչ արիւնա-
ներկ դամբեաւք, այլ լուսով զարդարեալ շնորհաց
Խարձրելոյն։ Նա արդարև երանագոյն և ս քան
զբանս իմ յամենայն սահմանացն Նայոց Թա-

գաւառաւն հանդերձ գիմեն ընդ առաջ Ներսիսի։ Խայտային բլուրք, և ծուփ 'ի ծուփ կայտառէին ալիք Արփրատայ և Արասխայ 'ի տեսիլ հոբահրաշ աւուրն։ Ընձկացան դաշտք ամբոխ բազմութեանն. պողոտայք ընդ որս անցանէր ծաղկապատնոյն և տերևախիթ զարդարեալ ծափ ըզծափի հարկանէին. և ժողովուրդն խրբու այն թէ միւսանգամ գտեալ զփրկիչ իւրեանց աղաղակէին։ — Օրհնեա՛լ Տէր, օրհնեա՛լ որ գաս յանուն Տեառն. դո՛ւ փառք հայաստանեայց, դո՛ւ պարծանք ժողովրդեան քո, դո՛ւ անստուեր Ճառագայթ նախնոյ քում Գրիգորի։ Ընդ մեծայն բերան ՝ի Ներսէս կարդային, և արձագանգք հրապարակաց և Ճանապարհաց ՝ի Ներսէս հնչեցուցանէին։ Որ բարեհաճան օր մտին Ներսիսի 'ի հայաստան քահանայապետական գեղեցիկ պատմուճանաւն. օր բազմախորհուրդ, որ աւետաբեր եղև ոչ միայն այնր ժամու, այլ և երանութեաց մերոց, առ որս ժամանեցին նշխարքն մեսցուածոց գեղեցիկ և բազմաձոխ ժամանակին, զերծեալք յալեկոծ նաւաբեկութենէ դարուց։

Ամուտ Ներսէս յեկեղեցին Ընդ. ոմ տեսիլ աղետալի։ Ոչ ինչ ընդհատ էր տեսարանն այն, քան զոր երբեմն նկարէր յաչս Յուդայի բազմաղէտն Երուսաղէմ։ "Առեալ զսրբութիւնն աւերեալս, զսեղանն աղտեղեալ, զդրունսն այրեցեալ, թուփ առ թուփ բուսեալ 'ի սրահսն իբրև յանտառի և զվարագուրսն ճեղքեալս..։ Ընդարձակ

վեհամ մեծագործ շինուածոյ. և նորոգութիւնն արժանաւոր հանձարոյ մեծախորհուրդ Ճարտարապետիս։ Այտես Ալերսէս. և ոչ ինչ վհատեցաւ ոգին անմուաձելի. սակայն հնչեցին երկայն հառաչանք։ Խորհեցաւ խորհուրդ իւր արժանի և կատարեաց. զի որ ինչ վասն Այ էր խորհել նմա և կատարել ընդ մի համար էին. յորում և ազգողազոյնս տպաւորեալ էր Աստուած զանազանկուն պատկեր իւրոց ամենակարող կամաց։

Այս որպէս բժիշկ Ճարտար զի դարման ազգոյ ախտիցն պատրաստեսցէ, հնարի նախ Ճշգրիտ գտակաւ 'ի վերայ հասանել դժնդակութեան ախտին, այսպէս և Ալերսէս քննէ մի առ մի զվիրառնութիւնս եկեղեցւոյն հայաստանեայց։ Այլ աստանօր աղաչեմ, առ վայր մի եղցուք ընդ Ալերսիսի, ընթացուք ընդ Ճանապարհն՝ ընդ որ նայն ընթանայ։ Բայց, ոչ ժուժկալեն աչք 'ի տեսիլ աղետիցն. աստ կիսակենդան ոք մնանեալ յանգութ ժանիս քաղցու՝ այլագունեալ տարածեալ իբրև զդի անկենդան, և հաղիւ 'ի գանդաղ կտիոյց աչացն տայ նշան զնչխարեալ կենդանութեանն։ Ընդ այլ ոք ոգի 'ի բռին մաքառի ընդ վայրենի գազանաց. այլ անոք անօգնական, եղջ՛ւկ, կուր անպարտ անկանի ապառաժ Ճիրանացն. այլուր անթաղ սպիտակ ոսկերոտի գուշակէ զտարաղ զրաւելոյն 'ի կենաց 'ի ժժգոյն մահուանէ։ Որպէս հանդուրժէր սիրան հայրենի յայս աղէկէզ երևոյթ։ Զոր

դիս նորա առ ախտակիր ցաւոց մարմնոյ հալածէր անգթութիւն ժամանակին արտաքոյ քաղաքաժողով միաբանութեան. անդ զրկեալ 'ի կարեկից օգնականութենէ համաբուն զուգակցաց, անդ օտար 'ի խրախուսանաց քրիստոսական աստուածպաշտութեանն՝ մնան և տուր լինէին տառապեալքն 'ի կարիս մարմնոյ և 'ի ժանիս գազանաց։ Զոր առաջնորդեցեր ասիցս նորա, զու տեսչութիւն աստուածային, որ սահմանեալ էիր զնա վարդապետ Հնմարիտ մարդասիրութեան։

Արտասուեաց Ներսէս ընդ աղէտսն. և արտասուք նոր արգասաւոր բարեաց եղեն աշխարհիս մերոյ։ Զոր ասեաց յԱշտիշատ. անուն լի յիշատակօք բազմօք, և 'ի հնչիւն նորա արձագանգս թնդեցուցանեն արևելք և արևմուտք. անդ փառք մեծութեան մերոյ. անդ զիւտ կորստեան աշխարհիս։ Նոր աշխարհախորհ ձուլիւք հաւանութիւնք 'ի մի միաբանեաց զեպիսկոպոսունս և զիշխանս առ հասարակ. անդուստ սկիզբն էառ և կրկին նորոգութիւն աշխարհիս մերոյ։ Զի զի առաւել քան զամենեսեան սիրէր Ներսէս զաղքատս և զտառապեալս, և ակն ածէր 'ի վերայ նոցա, որոց և Տէրն ինքնին զառաջին երանութիւնն երանեաց 'ի գերաշխարհիկ լեռնէն, զերախայրիս հայրագութ խնամոցն առ նոսա առատաձեռնեաց։ Զի զի 'ի նոսա նկատէր զվասն իւր աղքատացեալն Յիսուս. և զորոց 'ի գիրկս նոցա առատաձեռնէր, աներկեւան ակնկալութեամբ

ամէն ունէր առնուլ զտոկոսիս յերկնաւոր գան-
ձարանաց։ Ընկալաւ նա. և միւսանգամ առ ձեզ
պարգևաբաշխէ, որք նախանձաւորք էք նորին
առաքինութեանց։ Ցնծացէք, ախտաժէտք և
ցաւագնեալք, սրբեցէք այսուհետև զերկայն
արտասուս ձեր յաչաց ձերոց. ահա Ներսէս
ձեզ 'ի Հայր և 'ի Մխիթար և 'ի յարկ ապաւինի
'ի դառն կարիս ձեր։ Այլ անդէն 'ի վերս կան-
գնէին աղքատանոցք, և տեղի մնդեան որբոց
և այրեաց և ծերոց. և բորոտք և ուրկունք ժո-
ղովէին 'ի պատրաստեալ տեղիս իւրաքանչիւր
զտանել դարմանս 'ի գթոցն Ներսիսի։ Այլ որ
սակաւ մի յառաջ անտերունչք լքանէին 'ի լե-
բինս և յանտառս, արդ իբրու տիրագլուխ ի-
խանք հարկս ոռնկաց ընդունին 'ի գիւղից և
յանդաստանաց. և ոչ ոք, ոչ ոք յաւուրս Ներ-
սիսի թափառէր 'ի մուրոյն տառապանս. և աղ-
քատք և հիւանդք քաղցր անուամբն հայրակոչ
լինէին նմա։

Ընդէր չիցեմ ես բառական տպաւորագոյն
խօսիւք և ազդողագոյն դարձուածովք բանից
առաջի նկարել ձեզ զլայնածաւալ միտն Ներ-
սիսի. զանչափելի ընդարձակութիւն սրտին.
զանխոնջելի քրտունս. զնա՝ որ 'ի վերայ հայրե-
նեաց եդ զանձն 'ի գլխովին։ Ընկարկեաց, և
ահա յարեան կանգնեցան եկեղեցիք, արժա-
նաւոր տաճարք փառացն Աստուծոյ. հայրա-
պետանոցք՝ դաբիրայք պատգամաց Տեառն. եղ-

բայրանոցք և մենաստանք՝ ապաւէն տարաշխարհիկ առաքինութեանց։ Արանի՛ քեզ, Հայաստան աշխարհ, զերկնից դու արդ բերես 'ի քեզ զնանութիւն. մանաւանդ թէ նախանձ իսկ արկանես երկնից դունդագունդ հրեշտակակրօն մարդկաւդ, որ արիաբար զերկնաչու Ճանապարհն նախ կոխեալ, տան և քեզ խրախոյս դիմել ընդ նոյն յառագաստ երկնաւոր փեսային։

Ա.յր մի, ո՛վ Հաղբ իմ, այնչափ օՃանս բարեաց մթերեաց յաշխարհ մեր, զոր դարք բազմութք տակաւին չժամանեցին ածել 'ի բազմինատան Աբրոպէ։ Աչ եթէ ոչ փախստական ժամանակն խուՃապէր զիս, կամէի զմի մի 'ի բարեխնամ տնտեսութենցն Աբսիսի 'ի կշիռ արկանել ընդ քրոնավանական տեսչութիւնս զիշերաՋան կենցաղապիտաց. և թէ ոչ յամօթ առնել, այլ գոնեայ յապուշ կրթել զնոսա, որ պանծացեալ են յանձինս իւրեանց։ Ա.յլ զինչ զարմանք. որ ընդ Ա.ստուծոյ միացեալ իցէ, չէք ինչ նման խոափանարար. 'ի բարձրութիւն Ա.ստուծոյ ժամանէ։ Բարձրութիւն, հողեղէն մտաց անկշռելի։ — Ա.յնուհետև չէր ոք օտար 'ի Հայաստան. և որ յերկնից և կամ 'ի մտից արևու ժամանէր 'ի տահմանս մեր, ոչ թէ իբրև օտարոտի ոք, այլ իբրև եղբայր համանուն ողջունէր յամենեցունց։ Աչ Հայաստան հանգիստ լինէր օտարաց, և հիւրընկալ վանատուր պանդխտացելոց. և այս ամենայն երկանցն Աբսիսի արդասիք։

39937-57 1164

Որպէս 'ի ծագել արփւոյն, և 'ի ցոլանալ և 'ի ծաւալել երփնեռանգ Հառապայթից նր գազանք գիշերայինք զօղեալ թաղչին յորջս իւրեանց, և բնութիւն առ հասարակ իբրև 'ի մեռելոց վերակենցաղի, և ամենայն ինչ առնու միւսանգամ զգեղ վայելչութեան իւրոյ, զոր գողացեալ էր տիրագոյնն սեաւ գիշեր, այսպէս յերևեալ Լուսոյ կերպարանափոխ եղև ամենայն Հայաստան։ Կայծակնացայտ աչօքն Հայեցաւ միանգամ 'ի տիրացեալ յախտս և 'ի չարութիւնս, և 'ի Հայեցուածոյ նորա զարհուրեալ անՀետ եղեն։ Լաւագաւորք և իշխանք զսէգ պարանոցս իւրեանց խոնարհեցուցին ընդ լծով Հզօր Հրամանաց նորա։

Եւ որ զամենայն աւուրս, զամենայն ժամն իւր նուիրեալ էր յօգուտ գաւառին իւրոյ, չէր ապաքէն 'ի մոռացօնս արկեալ և զանձնն. զոր խաչեալ էր ընդ Քրիստոսի, թաղակից արարեալ նմին, և սպանեալ մեղացն։ ՑաՀար իւր և սեղան զօրՀանապազ օտարաց էր և Հիւրոց. և զՀանդերձն և զկերակուր Հասարակէր ընդ աղքատաց։ Այլ լռեմ ես աստանօր զերկայն աղօթակացութիւնս նորա, լռեմ զՀգանն, զծոմապահութիւնս, զգետնախշտութիւնս, և զոտանաւոր տքնութեան գիշերայինս։ Հանգիստ, դիւրութիւն, զբօսանք անուանք էին ատելիք յաչսանջս նորա. և դիւրութիւն Հանդիսէր զփոփոխութիւն միայն նեղութեանցն։ Իւանդանոցք տաՀարքք էին նմա զբօսանաց. և ձեռօքն, որ զրե-

թէ զսանձ աշխարհին 'ի բոլոր ունէին, ոչ անարժան համարէր ապաստաւորութիւն մատուցանել ախտացելոցն. ինքնին իւր ձեռօք լուանայր զնոսա, օծանէր, պատէր, և ինքեան ձեռօք ջամբէր նոցա զիւրաքանչիւր կերակրիկն։ Ով անարատ դստերք աքանչելոյն Ս. ինկենտի պաւլայեցւոյ, դուք նմանօրինակ առաքինութեամբ հիացուցանէք արդ զՍաղղիա, նա զԱբրոպէ ողջոյն. և 'ի ձեր նմանողութիւն թեւակոխեն փափուկ օրիորդք. ոչ հիասջիք և դուք, որդիք Հայկայ, և նախանձաւորք կրթեսջիք այսպիսի սիրելի առաքինութեանց մեծախորհուրդ հօրն ձերոյ։

Ա. եթէ ախտ ուրուք 'ի բժշկական հնարիցն հանդիպէր ապաստամբ, նշանագործ աքանչելեօքն պարգևէր այնպիսւոյն զանակնկալ առողջութիւն։ Ա. բազում անգամ յափշտակէր 'ի ձեռաց անողորմ մահուան զանգութ աւարս նորա։

Ա. ոչ զմարմնոց միայն, այլ և զհոգւոց դարմանէր նա զախտս. զորս անոյշ իւղով հայրական քաղցր խրատուն, և զորս ահարկու յանդիմանութեանն երկաթով բուժէր 'ի թարախացեալ վիրաց հոգւոյն։ Ով առաքինութի, ըստ նախնոյ ուրումն Մատաստիրի, յափշտակէր զսիրտ ամենեցուն եթէ առնոյր կերպարանս և ընդ ակամբ անկանէր, որպէս չյափշտակեսցէ զսիրտ առաքինի ունկնդրացս Ելբէս, որ արդարև ինքնին առաքինութիւն էր թագուցեալ ընդ մարմնաւոր կերպարանաւք։

Սակայն զայս ամենայն տակաւին ոչ շատ համարի կորովաբիբն Ներսէս յանխախուտ նոր-բոգութիւն աշխարհիս մերոյ։ Ամենայն բարեկարգութիւնք զաղփաղփուն եղեցին, եթէ ոչ 'ի հոգւոջ կանդաղեալ իցեն. և վասն այսորիկ խորհուրդ խորհի կարևոր քան զամենայն. և ամենայն ուրեք բացան վարժոցք խիտ առ խիտ, խորարմատ սերմանել 'ի մատաղ սիրտ մանկտւոյն զսերմանս առաքինութեան, և Ճշմարիտ իմաստութեամբ զարգացուցանել զմիտս նոցա. և ոչ վրիպեցաւ 'ի խորհուրդս իւր։ Ի նորա ջանիցն այսօր և մեք վայելեմք յարգասիս։

Ներսիսի խորհրդոցն բարգաւաճեցին գեղեցիկ արդիւնք 'ի Սեսրոպ 'ի հրաշալին, յորոյ ընդ հայրենասիրութեան՝ բորբոքեալ յաղնուա-խորհուրդ լանջս և կայծակին ուսումնասիրութեան, այնպիսի Ճոխացոյց զմեզ պարգևօք, որ ոչ անցանեն։ Եթէ փառք են տիեզերական-լութեանց՝ շինջանին. եթէ շինուածք հոյակապ՝ կործանեացին. եթէ իշխանութիւնք՝ քակտեցին. գահոյք արքունիք՝ ոչ կացցեն յակաստանի։ Միայն իմաստութեան չիք փոփոխութիւն. իմաստութիւն յաղթող է բռնութեան ժամանակաց, զի աղգակից է Աստուծոյ։ Ոչ և դուք ինքնին հաւատարիմ եաս երաշխաւոր էք Ճշմարտութեան բանիս, որ ոչ միայն երկիւղած աւանդապահք էք անկասկելի գանձուց իմաստութեան՝ ժառանգելոց 'ի մեծամեծար հարց

ձերոց, այլ և քրիստոնեական և ոգեսպառ աշխատ լինիք 'ի հրահանգել զբարեբաստիկ մանկտի ժամանակիս 'ի բարեկարգ վարժարանս ձեր։ Ո՛հ, փառք ձեր անանցանելի եղիցին առաջի Աստուծոյ և մարդկան։

Եւ այսպէս զամենայն բարեվայելչութիւնս կարգաց հրաւիրեալ Հերսէս յաշխարհ մեր, կացոյց և վերակացուս 'ի վերայ և տեսուչս արս ընտիրս, աշակերտեալս իւրոց առաքինութեանց, զի մի ինչ ժպրհեսցի ստանալ գեղեցիկ կարգացն անսանձելին չարութիւն։ Այլ որպէս հատ ընտիր սերմանեալ յերկրի, թէ ոչ ինքնին մշակին խնամք հակեսցեն 'ի վերայ՝ խլել զդաղձն, կակղել զերկիրն, զի զիսնաւութիւն ցօղոյ և անձրևաց երկնից յինքն ձգեսցէ, խամրի վաղվաղակի և արուգանայ, այսպէս և Հերսէս ինքնին անձամբ շրջէր ընդ ամենայն լայնատարած գաւառս ընդարձակ իշխանութեան իւրոյ՝ յանձանձել զվշտացեալսն, յանդիմանել զստահակսն, խրատել զմոլորեալս։ Մերթ 'ի Ա՝ասպուրական աշխարհէն գիմէր 'ի Ա՝իրս, և մերթ 'ի Ա՝խակեանցն լերանց 'ի Թեւս սիրոյն Թռանէր 'ի ցանկալի գաւառ իւր Յ՝ակեղեաց. և այնպէս ամենայն ուրեք ծաղկեցուցանէր զկրօնս աստուածպաշտութեան, և զհանձար խմաստութեան առաւել քան յաւուրս հարց իւրոց։

Ա՝իրա Հերսիսի ասպնջական էր ամի, որ օգուտ ածէր Հայրենեացն. և Հայրենիք ոչ գեղեցիկ

կարգաք և եթէ բարեվայելչութիւն առնուն բարգաւաճ, այլ և պաշտպանութեամբ 'ի յարձակմանց թշնամեաց։ Այս Դերսէս ոչ միայն բազմ անգամ 'ի դաստ պատերազմողաց զլայնատարած կորովի լանջս իւր թուսքի կանգնեաց ընդդէմ հրոսակաց յարձակելոց 'ի վերայ սահմանաց հայրենեացն, մինչդեռ արութեամբ զսուսերն պողպատիկ շողացուցանէր 'ի ձեռին, այլ և յորժամ խաղն խաղաղարար անկաւ նմա 'ի Ցեռանէ բաժին ժառանգութեան, արիագոյն ևս դիմագրաւ լինէր բանակաց. և բազում այն էր զի ինքնին միայնակ յաչս դնէր զբիւրաւորս թշնամեաց։

Արշակ ահա զօձիս պատառեալ հասանէ առատս սրբոյ հայրապետիս. և էր ամարթիլիմ աստանօր թէ ոչ խորտանգել, գնեալ լռել զնմանպատութիւն։ Վանզի նա ինքն այնուհետև 'ի խաղաղութիւն և 'ի բարգաւաճանս տեսեալ զաշխարհն անմիտ յանդգնութեամբ, որպէս բնաւորեալ է միշտ անմտութիւն 'ի յաջողակս յանդգնագոյն գոլ, և վաստակիրտ 'ի ձախողակս, զայրացոյց զԱ աղենտիանոս քաջն. և բանակք յունականք լի բարկութիւն առաթուր հարեալ զարիւնաշաղակս դիակունս Տրդատայ զեղբօր նորին խակ Արշակայ 'ի հրապարակս Վիզանդիոնի, զոր վերէ ի ինդիր ցասումն կայսեր եհան պատարագ անխորհուրդ յանդգնութեանն, դիմեն 'ի սահմանս Հայոց. և Թէոդոս քաջն սպարապետ նոցա, որ միայնակ 'ի կրնա գայր բանակաց բազմաց։ Ուռաքինութիւն անվեհեր 'ի

գժուարին, մանաւանդ թէ 'ի վտանգս առաւել արիական, ոչ ինչ վհատեցաւ ընդ գոյժն. անվրդով էտ պատասխանի ազգային։ — Այս միայնակ յառնեմ ահա ախոյեան ազգասիրութիւն բանակաց թշնամեաց. այլ դու, օհ, կարի ստերիւրեցար 'ի Ճանապարհացն արդարութեան. հայեաց միանգամ յանձն քո. տես մի գուցէ ընդ երկրաւորիս՝ երկնաւոր ազգային թափեսցի ցասումն 'ի գլուխ քո։

Ոչ այնպէս աշագէղն աղաւնեակ շիւղ 'ի բերանի աւետաբեր գտաւ հաշտութեան Աստուծոյ ընդ նաւակոծ աշխարհիս առ երկրորդ հայր մարդկութեան, յորժամ 'ի խոնարհել արփենայն հեզիկ թևածեալ թռանէր զտապանաւն, որ զշունչ կենդանութեան աշխարհիս յինքեան բովանդակէր, որչափ տեսիլ Ներսիսի ամբեաց զցասումն բանակաց, որ լի էին համայնաջինջ ըստանալեօք, և զուարթացոյց աւետեօք խաղաղութեան զՀայաստան ժողովուրդ։ Ասուլացան բազուկք զայրագինք, և կթոտեցան ծունկք հարկանել զմեսացուած Ճանապարհին. և Ասոդոս իբրու այն թէ շնորհս 'ի Ներսիսէ ընկալեալ, այնպէս մեծարէր զնա։ Ո՛վ Ցէր, նշոյլ լուսոյն, զոր և 'ի մահկանացու կենցաղումն նշողես 'ի Ճակատս սիրելեաց քոց, բռնի յափշտակէ զմեծարանս աշխարհի։

Ընդուստ զիմեաց Ներսէս և առաջի ցասուցելոյն Ալաղենտիանոսի։ Այլ խաբիմ արդեօք.

մինեմ ոչ Ելիսէս զայր ամենել զսիրտ ար-
քային. սակայն ես այլ ընդ այլոց իմն նշմարեմ.
սա Ձգնի իմն յինքն յանկուցանել զվիտս նորա.
և ընդ հաշտութեն պարգևէ նմա և զգրաւական
սիրոյ բարեկամութեան զՏիրիթ և զՎանել Ա.յլ
մի Վանել, ո՜հ, մի երագեր 'ի ծոց սիրելեաց քոց,
'ի ծաղկանկար ափունսն Լչրասխոյ. 'ի սիրտ նո-
ցա դարանակալ է նախանձ, և ոչ խնայեսցէ յա-
րև գեղեցկիդ. և ընդ երփնեբանգ ծաղկօք օձ
դաւաձան թաքուցեալ կայ. մի արդեօք արիւն
քո անպարտ անէծս ցաւագինս հեղուցու 'ի վե-
լոյ սիրելւոյ դաւառին քո։ Լա՜ ահա դուք վկայ
բանիցս Ձնմարտութեան, դուք դրանիկք արքային
Ա.ղշակայ, դուք ինքնին լուայք զասատ յանդիմա-
նութեանցն Ելիսիսի, յորժամ խոփանեալ ըզ-
պաշտօն առաւօտու աղօթիցն 'ի տաճարէ վերէ-
խընդիրն Ա.ստուծոյ ասէաւ 'ի խորանն արքայի։
ԼԷրև զկայծակունս թռեան բանք 'ի շրթանց հայ-
բասպետին 'ի կշտամբանս անօրէն սպանութեանն
Վանելայ։ Թվաւէր իմն եթէ Ա՝ովսէս դիմեալ
յաստուածատեսիլն Վ.ոլեբայ բազմարուեստ
դաւաղանաւն սպառնայր եգիպտական բռնաւո-
բին։ Լա՜ չարութիւն ափ 'ի բերան եղև առաջի
անպարտ առաքինութեան։

Լա՜ մեկնեցաւ Ելիսէս յերեսաց արիւնռուշտ
արքային, յորոյ ձեռն ծիսեր անպարտ արիւն
իւրոյ աղաչատուիմն։ Լա՜ յայնմ հետէ կողոպ-
տեցաւ կարևորագոյն զարդ, մնանաւանդ թէ

ամրութիւն հաստատութեան արքունեացն Ս. Ք-
շակայ. և Սամուէլ նոր թաւալեալ առ սեղա-
նով Խաչբերելոյն՝ ողբայր 'ի վերայ թագաւորին
և 'ի վերայ աշխարհին միանգամայն։ Իբրև բար-
ձաւ առաջնորդն իմաստութեան 'ի տաճարէ,
խորհրդեան իրաց աշխարհիս, ոչ աղէտք ոչ
պատեցին զքեզ, աշխարհ հայաստանեայց. և ե-
բաշխաւոր եղեր անցերկուանալի առ աշխարհ ա-
մենայն, թէ քան զՀաճանչ թագին՝ լոյսն իմաս-
տութեան գեղանչոյլ փայլէ 'ի կենդանութիւն
ազգաց։ Նուր, սուր և գերութիւն յօտարաց և
յորդւոց քոց կեղեքեին զքեզ. և անմտութիւն
եհան պատարագ 'ի բազին կամաց անձին զինչ-
պիտութիւնն զամենայն բարեվայելուչ յօրինուա-
ծութիւնս։ Ս. յլ ոչ 'ի սպառ անառես արար զքեզ
՝Լերսէս, և ցուցաւ քեզ "Իբրև զհայր բազմա-
գութ և իբրև զմայր աղէխորով.,։ Լա յարիւ-
նաշաղախ յաւուրն յայնմիկ, յորում առաքա-
ման վրէժխնդրութիւն ընդ կառափն հաներ զե-
ղերունս զորջացելոցն 'ի վաստանունն Ս. Քշակա-
ւան, դիմեաց ժամանեաց՝Լերսէս թափել 'ի
ժանեաց մարդախոշոշ առաբաց զանմեղսակիր
պատուղն յանցանաց, և իւրով հայրական օրհ-
նութիւն սրբեալ զնոսա, աւանացոյց զԱրեան
փոխանակ ժանտագոյծ ձեռակերտին Ս. Քշակայ։

Լա քանզի՝Լերսէս ախտից ևեթ լիներ
ծանրացաւումն, և ոչ պահէր ընդ ումեք ոխս,
անմարթ էր հայրենասէր սրտին լինել անկա-

բեկիր 'ի վիշտս հայրենեաց։ Զբաշակ յամենայն կողմանց 'ի նեղ անկեալ միւսանգամ ապաւինի 'ի գորովալիր սիրտ Երուսաղեմի. և ոչ թէ իբրև զԱ-ւուղ կշտամբանս ասէր 'ի գերեզմանակուրն Ամուէլէ, այլ մանաւանդ պատանս վիրաւորութեանն։ Վերահրաշ օրինակ անոխակալ սրտի։

Զյլ մի դու, տէր մեր և հայր, մի անձնամատն լինիցիս 'ի ձեռս ոսոխաց հայրենեաց քոց։ Զնդ բազում աշխարհաց 'ի կլիս գայ անձն քո. ահա թունալից հերետիկութիւն, օձ չար, դարանակալ է առ դրունսն Ասղեսի։ Զդարև և Երեսս զգայ ինն յանձին զվտանգ դաւաճանութեան բանսարկուին. անցուցեալ 'ի Խաղ զկրկին ոգի իւր, կանգնէ զնա իւր փոխանակ 'ի յանձանձանս ոգւոցն, և արտասուօք միւսանգամ բաժանեալ 'ի զրկաց նոցա, հաստատէ զերեսն 'ի Կոստանդնուպոլիս։ Հիացան լերինք և անտառք, որ տարածեցան արահետ ոտից Երուսաղեմի, ընդ անխոնջելի հայրենասիրութիւն առնն Աստուծոյ։

Եւ արդարև հերետիկութիւն, որ խիթայր 'ի հաստոյր հարուածոցն Երուսաղեմի, որոգայթս լարէ կենաց նորա. և Ասղես անպատկառ յաստուածայնոցն և 'ի մարդկայնոց օրինաց՝ մահ հրամայէ կրկնակի նուիրական անձին նորա։ Զայս մի նուազ շնորհս մատուցանեմ երկրիմի տեսութեանց խորամանկ քաղաքավարութեան, որ սայթաքեալ զհրաման արքայի, խորհեցաւ

առ ժամանակ մի հեռացուցանել զնա 'ի բարկացայտ աչաց նորա։

Զայլ բարկ, և տարերքք դաշնակից զտան ոխերիմ թշնամեաց քոց, ո՛վ ազգ հայկածին։ Յարեաւ հողմ դառնաշունչ, ջրակարկառ կուտակին փրփրադէզ լերինք, պատառեցան առագաստք, խորտակեցան կայմք, թռեան առագաստակալք, նենգաւոր ժայռք սպառնան անխորշելի նաւակոծութեամբ։ Ո՛վ զուարթունք երկնաւորք, ո՛վ հրեշտակք պահապանք եկեղեցւոյն Հայոց, փութացարուք հասէք 'ի թիկունս. մի, մի զուցէ նեցուկ ամրութեան նորին ծովամոյն կուր անկցի ձկանց։ Զդո՛ւկ, անբուր է ծով, խուլ են հողմք. ահա վայրենի ալիք բախեն զլաստաւոյան, ահա ձնչեն կապարանք կցորդութեանն, ահա խորտակեցաւ նաւն։ Զայլ մի երկնչիք. աշխարհօրէն աղօթք քո, ո՛վ Խաղ, զերծուցին զՀայր մեր 'ի Ձիրանաց գազանացեալ ալեաց։ Զչ նա 'ի ցամաք։ Սակայն թէ խնայեաց 'ի նա ծով, անողոքելի սով սպառնայ կենաց նորա յանմարդի և յապառաժ կղզեկին։

Մի՛ բնաւ, մի երբէք. որոյ ոչ չքաւորէ ձեռն 'ի հրաշալիս, որ հրամայեաց ծառոյն սաբեկայ բերել զխոյն պտուղ, և մորենւոյն հրով տերևել ծաղկել, և օդոյն զքաղցրութիւն հային կերակրոյ 'ի վերուստ ցօղել, և զՅոփեան 'ի մէջ ամենի կոհակաց հիւր առաքեաց դժոխորովայն կիտին, եցոյց և առատաւոր զզօրութիւն բազկի իւ-

բոյ։ Այլ որ երբեմն սպառնային կենաց նորա ա-
լիք, ահա արդ 'ի վերայ ծուփ 'ի ծուփ մկանանց
իւրեանց ընծայաբերք լինին նմա ձկանց, և ա-
մենահնար գաւազան աղօթից նորա 'ի խիստ վիմ
գետս գնացուցանէր անուշահամ ջուրց։

Այդ 'ի կղզեկին մնաց կենդանի, զի խորհրդ-
զազգած եղիցի ծածուկ խորհրդոցն Աստուծոյ.
և տեսող աղետալի կենդանագրութեան ապա-
գայ ժամանակաց։ Ա՛հ, քանիցս անգամ հառա-
չեաց և արտասուեաց 'ի վերայ քո, գաւառ հարցն
իմոց. նկատեալ զառաջին գեղ վայելչութեան
քո առ հաւասարութեամբ յետին բազմաղէտ հի-
գութեանդ։ Զաչեաց արդարն անտխակալ՝ ան-
ցուցանել 'ի քէն զբաժակն ցասման։ Այլ աւա՜ղ
անօրէնութիւնք քո ծանրացան քան զաղօթս նո-
րա։ Այս այս քանի դարք էն, զի վրէժխնդիր ար-
դարոյն՝ շղթայք գերութեանն կապուտակեալ պնդէն
զձեռս և զոտս քո։

Սակայն էր կայք, զի յապաղէք, որդիք օտա-
բախորթք. մոռացայք զՀայր ձեր, որ զայս ամիս
լինն մատնեալ կայ 'ի տառապանս։ Այս փոխանակ
ձեր կշռեաց զկեանսն, դուք անտէս առնէք զնա.
զպատիւ գաւառին. զփառս պետութեան ձերոյ։
Ա՛հ, թէպէտ և պաշտօնեայ եմ խաղաղութեան,
և նկարագիր հաշտարար խաչին 'ի վերայ Ճակա-
տու իմոյ, այլ ներբեցէք արդար ցասմանս. ներբե-
ցէք հայրասէր և հայրենասէր սրտիս, եթէ ու-
բախութեամբ նկատիցեմ զի վրէժխնդիր տու-

սերք մեր շողան 'ի սահմանս Յունաց, և նեռք թանեին արդարութեան 'ի լայնալիր աղեղանց մերոց։

Արձանք ինձ ժամ. այլ աղաչեմ փոքր մի ևս հնարհեցէք ինձ զերկայնամիտ ունկդրութիւն ձեր. քանզի նշուլագեղ միջոցեաց փառաց հօրն խնդ 'ի ձառանչ գեղջն զմայլեցուցանէ զմիտս իմ։ Լերան 'ի կամարաց երկնից ակնարկեաց ամենակալ յոնիւքն յերկիր 'ի խոնարհ, որ 'ի բոլոր ուղի զլեսան տիեզերաց, շանթահար երկնչ Ա աղէս զվրէժ անօրէնութեանցն, և բարձաւ 'ի միջոց. և զարձաւ միանգամ խաղաղութիւն յերկեղջին Քրիստոսի։ Լաւ ահա հրաւիրէ քաջն արանց Դաւոդոս և զՀայրս մեր 'Լերսէս 'ի կարգս հայրապետաց սրբոց, զորս խմբեաց 'ի թագաւորեանն իւր Քրիստոսին՝ տալ զդատակնիք հոգեմարան Ա՝ակեղեցի։ Լաւ նա պերճազոյն զարդ հանդիսին, և հզօր ախոյեան ճշմարտութեանն. խրախոյս եղև միանգամայն և յաղթանակ եկեղեցւոյն սրբոց։

Լ՝այլ աւաղ. մինչդեռ հարքն մերոյ ախոյեան յաղթութեան կանգնէր եկեղեցի սուրբ ընդդէմ դրանց դժոխոց, երթային և վատթարէին իրք աշխարհիս մերոյ։ Լորդրդակորոյս թագաւորն մեր հեծէր 'ի տխուր շղթայս գերութեան։ Դաւառանանն Ա՝երուժանառ ոսն հարեալ նախ զուխն սրբութեան, կեղեքէր և զծոցն մայրենի. և զդիակունս հատազգեաց կամէր առնել պատուանք

զան անարժան ոտիցն եղանել ամբառնալ 'ի գահն արքունի։ Այլ ո՛ ժուժկալեսցէ անթաց աչօք անցանել ընդ էջս պատմութեանց աւուրցն։ Միտ որ մերժէ զօրէնս Խարձրելոյն, և ոչ միոյ առաքինութեան չէ նա ասպնջական։

Այլ ահա 'ի տաղնապողական ժամուն յանկարծ հրեշտակ խաղաղութեան եհաս 'Ի Երուսէս 'ի Հայաստան, և թագ արքայութեան 'ի ձեռին նորա. և զինի հետոց նորա լուսաճաճանչն խաղաղութիւն և փառք աստուածպաշտութեան։ Ահա քեզ, ժողովուրդ լքեալ, ահա քեզ միւսանգամ հայր քո առեալ կենդանութիւն 'ի բիւրապատիկ մահուց. ահա զայ դարձուցանել առ քեզ զգեղ արքայական փառաց քոց. առեալ ածէ և զվայելչագեղ որդի թագաւորաց քոց՝ Ժառանգ հայրենի գահուն. ահա Պապ, ով անուն լարագուշակ, ահա Պապ թագաւորդ, որ ընդ հայրենի գաւազանաւն անդորր արասցէ տառապեալս քոց։

Այլ սակայն խիթամ, կասկած ահաւոր, խիթամ թէ բարձեալ լցեն 'ի քէն, ով երկիր բազմայիշատակ, աւուրք բարութեան։ Օ՛ի որպէս զՀեղեղաստ սպառնալից, որ գլեալ ցասմամբ 'ի գլխոց լերանց թաւալէ ընդ պղտոր պլեանցն մայրիս, վէմն, զՀիւղ և զամենայն ակնկալութիւնս շինականին, այսպէս դիմեն 'ի Հայս բանակք Պարսից. և արքայք սահմանակիցք նիզակակից նոցա։ Ամենայն ուրեք թողուն հետս աւերակաց,

կոյծանամանց և մահուց. և Պերուժան հասեալ գայր ընդ նոսա զայրացմամբ, զոր սովորեալ է ազդել զօրաւորագոյնն 'ի կիրս փառասիրութիւն, 'ի խնդիր արքայական թագին։ Սակայն ահա ընթեռնում՝ 'ի վերայ կամարաց երկնից զանդառնալն վճիռն ահաւոր. զի և ոչ գերեզմանն գաղտնակուր դիականն գոցէ նա 'ի Հայս։

Խրախոյս առին դիւցազունք Լ. Յլարատայ, որ զիք քաջութեան 'ի հայր իւրեանց՝ Լեբսէս։ Լմ բարձ նա 'ի վեր զաղուկս իւր, օրհնեաց զանխոյանարձակ գունդսն. և յօրհնելն իւրում ցոլանային յաչացն կայծակունք յաղթութեան։ Լս զոսկէս երբեմն 'ի բազմախորհուրդ անապատին խրախուսէին ընդդէմ չարաթոյն մահուան, ուրոց 'ի նշանակն պղնձի ժամանէին հայեցուածք, այսպէս և արիագունդ բանակք մեր յառեալ զաչս 'ի խաչատարած բազուկսն՝ Լերսիսի 'ի վերոյ՝ Լոստականն լերին, լեռան նախանձաւոր փառաց լերինն Լատիդիմայ, յաչս դնէին զՀրաբորբոք ցասումն զաղտակաղէն ատրուշանացն։

Լ.Ս զնչ ելեալ առ այդչափ ամբոխ՝ ջոկատ մի փոքրիկ։ Դու Տէր, դու որ երբեմն առաքեցեր զօրավիգն առ քաջազօր ախոյեան քո զՀրեշտակ քո Լերկնից՝ զյաղթութեանն աւետաբեր, և զոլոյսցուցեր զանահաւատիս բանակս քո ընդդէմ լեգեոնախումբն գնդիցն Լնտիոքայ, դու և այժմ առաքեա օգնական 'ի բարձանց յաղթանակաց քոց, զի մի խաչն արծտի քո անկցի գէշ արեանաբբու

վհմակաց գայլոց։ Սակայն հուպ առ մեզ է՝ Լերսէս, զնա պարգևեաց մեզ տէր փոխանակ զնդիկ հրեշտակաց, և ուր այլ սպասեալ ինամք։ Նա՝ Լերսէս լուսաւոր կերպարանօքն 'ի մէջ շողալոյ սուսերաց և թռուցիկ նետից, ուղղէր զնետս մեր 'ի սիրտ ոսոխաց մերոց, և մեզ վահան լինէր փրկութեան ընդդէմ զինուց նոցա։ Հայեցարուք ա զաչեմ, հայեցարուք զամ մի յարիւնոռոգ դաշտն Զիրաւայ. լի են դիակամբք սպանելոց. այլ 'ի միջի այնչափ դիականց չիք ոք, չիք ուրեք, յորում նշմարիցի կնիք օրհնութեանն՝ Լերսիսի. ամենեքեան թշնամիք Աստուծոյ, ամենեքեան ոխերիմք եկեղեցւոյն Քրիստոսի։ Զրն այն օր ինդութեան եղև համօրէն հայաստանեայց. իբրու յօրհասական մահուանէն Հողոպրեալք, ամենեքեան զուրախութեան ողջոյնն առետուրէին իրերաց. և ծուիք գոհաբանական աղօթից յերկինս 'ի վեր ողորտապտոյտ ծառանային։

Ինձ աստանօր արտասուելիք յեղյեղուկ բախտ մարդկային։ Ինդէր ոչ, ո՛վ մահկանացու, հնորհեցաւ քեզ կալ ինալ անսիսիոս 'ի բարւոջն։ Ա՛ծապէս ըղձալի էր ասա վախճան առնել բանիս, և մի միւսանգամ կեղեքել զթերաբոյժ վերս սրտի հայրենասէր ակմբիս։ Սակայն ոչ այնպէս. պատկեր վսեմական առաքինութեան հօրս մերոյ հնչողէր թերակատար. և մեք զրկեալք 'ի կարևորագոյն խրատուէն՝ եթէ աշխարհ բարերարաց իւրոց ոչ միայն ապերախտ, այլ և չարահաճոյց

է գրեթէ միշտ, որպէս զի պայծառագոյն և անթառամ Ճակատք առաքինեացն պՃՆեսցին յաւէրժական պսակօք յերանութիւն զաւառան։

Խաղաղութիւն ոսկերիմ է միշտ բնութեան մերոյ. մինչ զի և ծովածաւալ խմաստութիւն ոչ կարաց կալ յակառաջանի ընդդէմ դաւաՃանութեանց խաղաղութեան։ Որբև խաղաղութիւն վանեաց շուրջանակի 'ի սահմանաց աշխարհիս մերոյ զլեգէոնս թշնամեաց, թշնամի այլ յաբեաւ 'ի միջի մերում, ընդ որում դժուարագոյն էր մարտն, և կասկածաւոր յաղթութիւն։ Ախտն չար, որ զպատմութիւն ազգի մարդկան տխրեցոյց միանգամ նաւակոծ պատժով, և երկրորդ անգամ հրացան բարկութեամբ, և 'ի Աստուծոյ հեղեղս արեան գնացոյց զբիւրաւորացն Խրայէլի, նոյն ինքն խիստ սպառնալեօք սպրդեցաւ է մուտ և յարքունիսն Պապայ։ Հոմիւ խնամակալու հօտին ոչ այնպէս ընդդէմ ոգորի գայլոց, որպէս մարտնչէր Ներսէս հալածել 'ի բաց զախտն ՃԵաստակար։ Այլ աւա՜ղ, չարութիւն դարանակալ եղև արդարոյն։

Ներեա, Ցէր, եթէ յանդգնի բանս քան ըզպայման։ Ընդէր միշտ առաքինութի առ մահկանացուս անվրիպելի դէտնպատակի կանգնեալ կայ դժպհի սլաքացն չարութեան։ Այ՜ որ 'ի զօրաւոր պատերազմին գտաւ յաղթող, 'ի ժանգահար անպարտ շղթայս խաւարչուտ բանտին պնդեալ կայ 'ի Եմիլիս չարայաչաղ նենգութեամբ։ Այ զա-

նարատ դուստրն։ Յուզոյ յանապատակիրմնհուա-
նէ հայրս յարիշտակէ ինքնին ձեռն Ալենակալին
զլեզու մանկան տղայոյ եղեալ պարզախօս։ Ա-
կայն, ո՜հ Տէր, չԼերսէս . . . . զեղանին բանք 'ի
շրթունս իմ ընդ եղեռնն ահաւոր։ Ալիթէ տկա-
բանայցէ, Տէր, ձեռն քո, որ յեզիպտական բրա-
նաւորէն նորահրաշ ապատեցեր զորդիս քո, և 'ի
ժանեաց անձնողսպրելի մահուն կորզեցեր զմար-
գարէն քո 'ի Բաբելոն, հովանի լինել և ապր
քոյոյ նահատակիս։ Բաց զզինարանս ցասման քո.
թռիցեն 'ի կապարձից արդարութեան քո վրէժ-
խնդիր սլաքք քո, թօթափեսցին հրացայտ կայ-
ծակունք ցասման քո 'ի գլուխն չարեացապարտ.
հան ընդ կառամն անօրինին զքէն չարութեանն։

Սակայն արդարոն, որ ձչգրտեաց յանձին զվը-
սեմ պատկեր Պողոսթայ, կամակար մատուցա-
նէր զանձն պատարագ քաւութեան 'ի վերայ քո,
ո՜վ աշխարհ ապառում։ Լա մինչդեռ թոյնն նեն-
գաւոր ընդ երակն խաղայր, նուաղ ձայնիւ, Ալի,
Տէր, մի անէծս, այլ օրհնութիւնս հեղուցուս 'ի
վերայ գառաւոր իմոյ, 'ի գլուխ ոսոխաց իմոց։
Ո՜հ, գեղեցիկ վրէժխնդրութիւն, զոր Պողոս-
թա միայն վարդապետէ։ Լայլ արիւն պաղի յե-
բակս իմ։ Լայսպէս ուրեմն որբացուցեր անձամբ
զանձն 'ի հօրէ քումմէ. զայս ուրեմն հատուցա-
նես արիտուր բարերարին քում, աշխարհ ապե-
բասա։ Ո՜հ, հայր, թէ ոչ գուցեն յերկրի վարձք
արժանաւոր առաքինութեանց քոց, լցեն ար-

գեաք յերկինս։ Եւ թողեաւ Ներսէս 'ի ծոց սի-
րելոյն իւրոյ։

Հանքաւ կարեմիք Ձիչ երարձ գառնապինս,
և ամենայն սահմանք Հայոց եռուն նման արձա-
գանգս ողբոց։ Եւ ձեր տխուր լռութիւն, և հե-
ծութիւնք հառաչանաց և արդ իսկ երաշխաւոր
են անպիտա կորստեան և համաշխարհական թը-
շուառութեան մերոյ։ Օ՛ի յաւուր յորում կա-
փոյց Ներսէս զաչսն յարևէ աստի, 'ի նմին ա-
ւուր լսելի եղեն տխրագին շաչիւնք և շառաչիւնք
շղթայից գերութեան մերոյ։ Եւ որպէս քաւէս-
ցի անօրէնութիւնս այս 'ի մէնջ, և որպէս սրբէս-
ցին այս նախատինք յաւէրժական 'ի Ճակատուց
մերոյ։

Ո՛հ, ոգի բարեմտաց ապերախտութեան, որ
տիրացեալ ես 'ի սիրտ որդւոցն Լ. յրարատայ. ուր
են արդ գոնեայ շիրիմքն, նիստքն, արձանք և
անդրիք անղուգականի հօրս, գոնեայ անագան
մեծարանօք ապարշաւանաց հաշտեցուցանել ընդ
մեզ զատուերս նորա։ Լ։ամ, լռութիւն համր տի-
րեալ է ամենայն ուրեք. և հայրենիք մեր զլա-
նան մեզ և զարձագանգս մեծի այսր անուան։
Թէրևս յայնժամ 'ի պատկերաց Ներսիսի ասա-
նայր կայծակն նոր բորբոքել 'ի սիրտ ձեր զայն
բոց հայրենասիրութեան, որում վարդապետ է-
զև նա մեզ, և տիպար անթերի։ — Ներսա,
պատկառելի ժողով, թերևս տարաժամ այսմ ի-
մոյ ցաւման. և ո տայր ինձ լսելի առնել զիղձս

սրտի իմոյ ամենայն հոյ ոգերոյն. և զձեզ, որ հաւատարիմ ժառանգ գտայք հայրականաց առաքինութեանց, զձեզ տալ նոցին օրինակ նմանողութեան։

Բայց արդ առ ձեզ դարձցին բանք իմ, ո՛վ սքանչելի՛ , սրտատրոփ ակնկալութիւն եկեղեցւոյն Քրիստոսի, և յոյս հայրենեաց և ծնողաց ձերոց. արկէք միանգամ զՀայեցուածս ձեր՝ի պատկերն, զոր նկարեցի այսօր յաչս ձեր, թէպէտ աղօտագոյն գունովք. այլ ինքնին իրացն արդիւնք կարի ազդողական են՝ի սիրտ բարեզգաց։ Ցեսէք, թէ յոր աղէտս թշուառութեան արկանէ անսանձելի չարութիւն ախտից զանձն և զՀայրենիս գլխովին. առ ամենուր կոխէ զսրտառուչ պարտս ծնողասէր երախտագիտութեան. ծաղր առնէ զաստուածաշնորհ կնիք սրբանուէր քահանայութեան. և կերպարանեալ երկրորդ անգամ՝ի սատանայակիր կերպարանս Յուդայի, ոչ միայն զքաղցր համբոյրն՝ զնշանակ սիրոյ սրբատակցորդ բարեկամութե՛ն՝. դարձուցանէ՝ի խաչուած չարաթոյն օձի, այլ և նովին ամպարիշտ սեղանակապուտ շրթամբքն պղծէ զահաւոր խորհուրդն սրբութեան. զայս ամենայն տեսարան ահաւոր յանդիման առնեն ձեզ պատմութիւնք ժամանակացն Ներսիսի, որ և ինքն արդարն չարաժանի եօթնագլուխ գազանին անկաւ պատարագ։

Դարձուցէք արդ զՀայեցուածսդ և՝ի միւս

կողմն. սեսէք զԱ,երսէս զՀայր Հայրենեաց մերոց, զփառս եկեղեցւոյն Աստուծոյ, և զփառաւոր 'ի զարդս երկնից։ Ազգեն քաղցր անուանքս այսոքիկ 'ի լուր ականջաց ձերոց. ոչ տրտմեն սիրտք ձեր նախանձաւորք առաքինութեանց հօրն ձերոյ. միթէ ոչ արծարծեցաւ տակաւին 'ի ընդս ձեր հուր հայրենասիրութեան։ Եթէ այդպէս իցէ, ապա կերպարանակից լիցին կեանք ձեր կենացն Ա,երսէսի. պինդ յուշի կապեցէք զՀամազգի զիմաստնոյն զբանն անոռանալի. "Որ իւրոյ անձին բարի ոչ է, այլում բարի լինել ոչ ունի,,. Նորոգութեան Հայրենեաց սկիզբն ա-բարէք յանձանց ձերոց։ Այս ամք են զրեթէ հնգեակք, յորս հանապազօր լուայք զայն միայն՝ որ կարևոր և օգտակար է ձեզ։ Հրահանգք ոչ նուազեցան, խրատք ոչ խնայեցան, յորդորք անդադար յաձախեցան առ ձեզ։ Եկիք զձեռս ձեր 'ի վերայ ընդջաց ձերոց, և տուք վկայութիւն Աշխարհութեան բանից։ Այս ուրեմն ձեզ ճնայ այսուհետև զընկալեալ սերմանցն հատուցանել զպտուղ. երանի ձեզ, երանի Հայրենեաց մերոց, եթէ զՀարիւրապատիկն հատուցանիցէք։

Յանկալի զարդ է հասակիդ ձերոյ մեծարոյ և դիւրանասց հլութիւն երիտասարդունից, և քաղցր նշոյլ համեստութեան ցոլացեալ 'ի կերպարանաց և յամենայն ընթացից ձերոց։ Ընկեցէք յանձանց, 'ի բաց ընկեցէք զգեստնաքարշ մտածութիւնս. տուք զսիրտ ձեր յառաջնորդութիւն

գեղանշոյլն առաքինութեան, որ հանդիսադիր է և միանգամայն մրցանակ ամենայն վաստակոց բարեաց։ Ոչիք սանձ, ոչ պատանիք, դիք սանձ յարձակմանց բնութեան. ուղիղ արարէք զշարժմունս, զհայեցուածս, զխորհուրդս, և զախորժակս սրտի ձերոյ։ Ցպաւորեսցի 'ի սրտի ձերում, ո՛հ, անջինջ տպաւորեսցի անունն Յիսուսի. ոչ քաղցր անուն, որ և զամենայն դառնութիւն վշտաց քաղցրացուցանէ, և 'ի միջոց հնոցի տառապանաց ձայն ցնծութեան 'ի վեր առաքէ։ Յառեցարուք ընդ երկինս, ո՛հ գեղեցկութիւն անկշռելի. յայն անզուգական գեղեցկութիւն յաւերժից հրաւիրեալ էք։ Ինկառոյց լերուք 'ի կատար լերին Ճշմարիտ փառաց, անդուստ մերձ են երկինք. այլ փառք են պատակք գովութեանցն, զոր բոլորեն ոչ վարկպարապի սրբք, այլ ընտիր առաքինիք։

Հապա, մի յամօթ լիցին, որ սիրեցին զձեզ հայրաբար. մի 'ի մեռտիս քրտունքն, զոր անենախանձ հեղին վասն ձեր։ Ո՛ւրչափ հունձք բազմազուարճ ակնկալութեանց բովանդակին 'ի ձեզ, եթէ ոչ յետսամիտ խորհրդով ապախտ առնիցէք զգեղեցիկ սերմանս կրկնակի Ճշմարտութենցն, զոր ցարդ սիրտ 'ի բերան Ճգնեցաք արկանել 'ի սիրտ և 'ի միտս ձեր։

Ո՛վ հայրապետ սուրբ, դու Ճոխութի՛ և անմահական փառք մեր, աղէ՛ 'ի բարձանց յերկնաւոր աթոռոյդ դարձո առ մեզ 'ի խոնարհ զհայ-

բազուն աչս քո. կամեցո 'ի սիրտ պատանեացս այսոցիկ զշիմս առաքինութեանց քոց, զի նկըրտեսցին յայսմ հետէ, յանձին տպաւորել զվսեմ օրինակ աստուածսիրութեան և հայրենասիրութեան քո. կրկին այսոքիկ առաքինութիւնք քև հրաշս գործեցին յաշխարհին որ միակ իրաւ էր քոյոյ սրտիդ։ Սիրտ քո անսիսիս է և յերկինս. կարողութիւն քո առ աթոռով Նմանհին արդ և զօրաւորագոյն։ Եթէ կրկին այդ առաքինութիւնք ջահաւորեսցին քև և առաջի դողդոջուն քայլատիսից սոցա, աւուրք քո՝ լուսաւոր աւուրք բարեաց հայաստանեայց զարթիցեն 'ի խաւարային լռութենէ ժամանակաց, և նորատաքանչ լուսոնն խայտասցի միւսանգամ Յարարատ յուշ ածեալ զամեն երանութիւն։ Հայրապետ սուրբ, մեծ են արդարև եղերունք մեր. այլ վրէժխնդիր ոխութիւն չէ ասպնջական երանաւէտ օթևանացն երկնից։ Մոռա, տէր մեր և հայր, մոռա զապերախտութիւնս հարց մերոց։ Ինքն օրհնութիւն քո 'ի գլուխ նոցին զաւակաց, 'ի գլուխ սոցա։ Օրհնութիւն քո երաշխաւոր է մեզ և առհաւատչեայ ամենայն բարեմասնութեանց։ Այս տրիտուր քոյոց միայն սեպհական է առաքինութեանց։

Այլ դու, Հայր, դու արժանաւոր գահագլուխ պատկառելի ակնմբիս, դու, առ որով զարթեաւ միւսանգամ հոգին Երուսի, և դու զանարգամեծար աչս քո դարձո և այսօր առ որդիս քո. դու

յանձնեցեր Հայրապետութիւն սրտիւ 'ի խնամն և յաջաղուրջ հոգս մեր զսոսա. Եհաս արդ ժամն զի դարձուսցուք առ քեզ զաւանդ սիրոյ քո։ Եւ յոյս մի այսպիսի ունիմք, եթէ չիցեն կարի յանդգնութեան բանքս, թէ չնորհեսցես մեզ զարժանին մեր տրիտուր՝ զքաղցր ժպիտ Հայրենի դիմացդ։

Պիտեմ թէ գովութեան տատնեկի յարգաւորութեանն չեմ արժանաւոր, այլ ներբեա գեղեցիկ յանդգնութեանս թէ համարձակեցայց ասել, եթէ և ոչ յանդիմանութեան քանքարաթագոյց մատնչին. սակայն թէ դու և զայս յետին նուագ կարկառեսցես զբազուկսդ Հայրենի, ինչդ 'ի վերայ սոցա ցօղն օրհնութեան, և արգասաւորեսցին ոչ տատնպատիկ միայն, այլ և հարիւրաւոր։

1841

ՆԵՐԲՈՂ

Ի ՍՈՒՐԲՆ

ՍԱՀԱԿ ՀԱՅՐԱՊԵՏ

Ընդ այն չէք ինչ երկրայութիւն, ո՛ աստուածապատիւ Հայրապետ և իմաստնախուսմբ կաձառ, եթէ կարի զովելի է գեղեցիկ իմաստութիւնն, որով աբք Ձարտարմտութեամբ հոյակապք առին սոլորութիւն հուչակել զանուանն, որ փառք եղեն իւրաքանչիւր ժամանակաց, և օձան բիւրապատիկ բարեաց ազգացն ապառնեաց։ Որպէս զի անմահ պահեալ զնոցին յիշատակ, և առաքինութեանց նոցին անեղծ մնասցէ պատկեր 'ի սիրտ հիացելոցն 'ի նոսա։ Այսու զովելի սովորութեամբ և իմ դարձուցեալ միանգամ զաչս 'ի տաձար համազգի փառաց, մինչդեռ աւագ որերօք պարծէր, արդ կարի իսկ տրտմագինն Այրարատ, իբրու հակայ վիթխարի յինքն բռվանդակ գրաւեաց զաչս իմ Լուսահակ մեծն։ Այր մի միայնակ ախոյեան սպառնալեաց ամենաձախ դարուց, զազգ մի ողջոյն ձուլէ 'ի նորանշան հալոց սիրոյն իւրոյ. 'ի մերկ ընչքն անմե-

զուարթեան ընդունելի զսպելարուր նեստս աշխարհակոծման ախտից. ընդ քիրան գայ և ընդ ապաժոյժ 'ի բարեբարել ջարարարաց իւրոց և թշնամեաց։ Ա՛վ առաքինութիւն, մինիք անջնջելի վարժարանին Քրիստոսի։ Օ՛հայ բանին բրդեն քաղցու նոցս, և զջուր սիրոյն մատուռակի, 'ի պատուք նոցին. ոչ եթէ 'ի կուտել ինչ կայծակունս հրոյ 'ի գլուխ նոցա, այլ մանաւանդ զբազմաբեղուն ջերմութիւն սիրոյն 'ի կենդանարար դարման ոգւոց նոցին, և 'ի մնունդ բանականին. 'ի զայրացեալ ամպոց կողոպտել զվրէժ երկնից։ Ա՛նուն նորա լծորդեալ է ընդ ամենայն բարեչարդար պաշտամունս եկեղեցեաց մերոց. անուն նորա անմեկին է յամենայն խնամութեանց վարժարանաց մերոց։ Ա՛ռք այսպիսիք և 'ի վատթարանալ անգամ իրաց մերոց, որպիսի իակ են արդ, աւա՜ղ, իրացն հաւատքիք, խրախոյս իմն ազգին յոգիս Ճշմարիտ զուարակաց նոցուն, և 'ի նոցին փառս մեծապանծս շրջեցուցանեն զմեզ, և ջան թոյլ ապահան առնել զՀայրենին մեր ազնուականութիւն։

Ինձ բարեբախտութիւն մեծ այն է՝ զի հասանել խօսել յատենի արանց, որոց չէ հնչումն անհարմանական փառք հայաստանեայց։

Ա՛յլ բաբէ. եթէ ամենահմուտ պատմաբանն մեր խորենացի ծերունին, Ձոխն բանիւք և հաբուստ խնամատիւք, անձնասահ լինէր ջերկրորդել զատենական բանն Սահակայ, որպէս զի մի

մեայլ ինչ արդեօք շտապախօս զրչաւն, կամ բա-
նից կնատութեան ստուեր 'ի համարձակախօս
Հառս նորա արկանիցէ, ես ոչպէս հաւատարե-
ցայց առաջարկութեանս մեծի նիւաղ 'ի բանէ,
և յիմատից աղքատ։ Այլեւ արդեօք ոչք երկրն-
չիցին՝ մի գուցէ աւելաղանց բանիւք գովութեց
զկեղտ անուն սուտակատպասի յանձն ձգեսցէն.
ես աղատ եմ արդարև 'ի կասկածանաց ատի,
զի մարդելուզութիւն ոչ ժամանէ մինչև ցդամ-
բան զողանալ զխուլ և զցուրտ ականջս մահու։
Դարձեալ զի անաչառ էջք Հիմարտապատում
վիպաց քաջ իսկ զանզուգական առաքինութեանց
մեծի հօրս կշռեն զարդարադատ տրիտուր ներ-
բողենին։ Սակայն իմ մանաւանդ այն է երկիւղ
թէ յետ այնպիսի Հառից ելեալ 'ի բեմ այսր,
տկարախոհ խնատիւք և կնատ բանիւք արիա-
կան առաքինութեանցն ապաքէն 'ի վերայ ածից
ստուեր նսեմամիտ։

Դոքր մի ես և իրաւախոհ վհատութիւն ոչ
'ի բերան առներ զիս. այլ ակնկալու աչք ձեր,
այլ շնչասպառ լռութիւն ակմբիդ, այլ խուռն
հաւաքումն նեբողամտացդ հակառակ իսկ յա-
չաղանաց ոիսերիմ հողմոց *, մի մի քաջալեր են։
Այլ յոյս մի մեծ այն է ինձ, զի մեծութիւն
առնն, զորոյ Հգնեցայց առնուլ այսօր 'ի հանդէս

* Յաւուր բանախօսութեանն շնչմունք վայրենի հողմոց
կասկածաւոր առնէին զծովաչու Հանապարհ։

զնաչխարհիկ առաքինութիւնս, ինքնին այժ և կորով ազդեսցէ 'ի բանս. և սէր հայրենի որ շարժէ զշրթունս իմ, և հրաբորբոք առչորեալ է 'ի վսեմ լանջս ձեր, անտաղտուկ սահեցուսցէ զկարձառօտ ժամն։ Ա՞կն ունիք ներբողենի հօրն ձերոյ։ Ա՞հա ձեզ Վահակ, և բովանդակի ամենայն ներբող 'ի վսեմ անունն յայն։

ՈՒՏԵՄ ձարտար, զի ամենեքին դուք, ո՛ վսեմախոհ ատեան, որք պատուէք զձառս իմ ձերով ներողամիտ ունկնդրութեամբ, ձչմարիտ ազնուականութիւն զառաքինութիւն միայն հաշուիք. և երկրորդ այնմ զամենայն օձանս ծնրադեան։ Վակայն թէ զուգակից գտցի և ազնուականութիւն խանձարրոց ընդ ոգւոյն անարատ ձոխութեան, և զձեր և զաշխարհի միանգամայն յինքն զբաւեսցէ արդեօք զզարմանաց հայեցուած։ Ա՞յն զի 'ի սիրտ այդպիսի բնաւորական ինն և գոգցես անջան առաքինութիւն է մեծախոհութիւն հոգւոյն, և զգայուն խնամատիցն վսեմութիւն։ Ա՞անզի բաղում այն է՝ զի անմեկնելի սպասաւորք հանդիպին առքս ազնուական արեան և մեծաշուք խանձարրոց։ Վահակ հայրենեաւք և մայրենեաւք ծնունդ շքեղ, և արիւն դիւցազն յերակս նորա երկնային և երկրաւոր քաջազանց. շնորհք և բնութիւն եղ և ելս առնէին 'ի գեղապատշաճ յօրինել զմանուկն։ Ա՞չ բարախեն սիրտք ձեր 'ի լուր անուանցն Գրիգորի, Ա՛ղթա-

նայ, Յուսկան և Ղերսիսի, ահա զսուտ կոչէ Սահակ իւր հարս. զսուտ նախահարս իւր. սուքա վարժապետք նմին վարուց սրբութեան. սուքա մանրագնին գիտութեանց նմա ուսուցիչք։ Ինձ անձամբ յատենի առաքինեաց և ծայրագեղագոյ իմաստութեամբ յիշատակ առնել պահանջիկ տոհմին, յորմէ առեալ զծնունդ իւր, և թագաւորաց հեթանոսաց անուանքս այսու էր պատկառելի։ Վասնզի արփիանշոյլ փառք քրիստոսակիր նահատակելոց հարցն՝ մեայլ արկանեն զաշխարհածուփ փառաց զարմին։

Յառանին վարժարան հրեշտակարծոն վարուց հայրենի վարդապետութեամբն գործոց քան թէ բանից կրթեալ՝ի կատարեալ վարժս քրիստոսաբնակաց առաքինութեանց, ելանէր այնուհետև՝ի խնդիր բազմախոյզ գիտութեց՝ի յունական վարժոցս բարեբաստիին Խուզանդիոնի, յորմէ բազմահոյլ արգասիք բարեաց ընդ ժամանակս ժամանակս առատացան առ մեզ։ Ընդ և յայնժամ ընդ իշխանական ծիրանեաց կայսերաց կայր ազգաստան իմաստութիւնն վարանդի։ Վասնզի իմաստութիւն զարմանակալ գահոյից Յունականին, ոչ միայն զարդ է Ճոխաձեմ գեղանշոյլ թագին, այլ և անվկանդ հաստատութիւն իշխանական բարձրութեանն, որպէս գեղեցիկս բարբառեցաւ ոմն՝ի մերոց Ճարտարախօս պատմագանից։ Եւ այսպէս անշշունչ միայնացեալ յինքեան, ծածուկ՝ի խուզողական աչաց ամբոխին գեղազար-

զեաց Սահակ զսիրան պերճ առաքինութեամբք, և անխաբելի միթերք գանձուց անատերիւր խնամ-
տութեան Հոխացուցին զմիտս նորա. Հշգրտեալ յանձին զանատգիւտ նկարագիր առն կատարելոյ։
Եւ յայնմ հետէ չէին թագուստ 'ի նմանէ ամ-
բոծածուկ Հոխութիք խնամտից շտեմարանեալք
յամբարտաւանն յունաստան. յանձնառպանծ
սէգն պարսկաստան. և 'ի ծովածաւալ գիւանս
Ասորւոց։ Եւ յիրաւի. քան զի պատրաստէր զնա
Տէր գործի ձեռին իւրոյ 'ի լրումն մեծամեծ
խորհրդոց իւրոց։

Զանձք բարելաւութեան սրտի և մտաց իբրու
ժառանգութեամբ իմն սեփականեալ թուին 'ի
յայտնի ինչ ազգատոհմի սիրելւոյ երկնից. և որ-
պէս որ գժուարաքիքան Հոխութեանց տեսլք
իցեն ցանկան ժառանգակալ պայազատս թողուլ
զկնի իւրեանց, այսպէս գոգցես և ազգ մեր առ
հասարակ ցանկայր զՍահակ հայր տեսանել
բերկրեալ որդւովք, զի մի ցամաքեսցի արիւնն,
որ ոռոգեաց զերկիր մեր, և դրախտ աստուածայ-
ին ծաղկեցոյց 'ի նմա։ Եւ բաղում պարկեշտա-
սուն օրիորդաց Հայոց տրոփէր սիրտ, մինչև զաղ-
նուագոյնն բարեմտութեամբ հոգւոյն և մար-
մնոյն ընտրեալ Տէր և յանձնեաց նմա. այն՝ որ
զկին պատշաճեցուցանէ առն իւրոյ. և եկեղե-
ցատուր օրհնութեան պարգևեցաւ պտուղ դրա-
տրիկ մի, ոչ զիտեմ հոգւովն եթէ մարմնով ա-
ռաւել գեղապատճոյճ. որ հրաշափառ դիւցազանց

սահմանեցաւ մայր ծածուկ խորհրդովք երկնաւոր տեսչութեան։

Յաղթեցաւ Սահակ յաշխարհավար կենաց. քան զի այր որ զաշխարհական իրօք զայցէ՝ գործի անպատկան է 'ի կատարումն մեծամեծացն Աստուծոյ։ Սակայն ախրագին տեսանեմ ես զնա առ սեղանով Նմանին։ Այլ առ որ հաղիւ թէ զարձուցանէր զաչսն աշխարհ, ոչ թաքչէր նա յամենատես աչաց երկնից։ Այլ որպէս 'ի պարտիզին Գեթսեմանի երկնային ոմն զուարթուն. և փոխանակ մխիթարութեան աղիողորմ ևս տանջէր մարգարէատեսիլ ոգին Սահակայ։ Զոր արդարև արժանաւորագոյն պատկեր այնորիկ, որ 'ի խորհրդական պարտիզին տեսեալ զեղերունս մեր, 'ի խաչին աղօթէր անոխակալս 'ի վերայ որոց առաւելագոյն պատժաւորութեանց զտան արժանի։ Ո՛վ տրիտուր 'ի վեր քան զհասողութիւն մահացու մտաց։

Նտես և Սահակ առ սեղանոփն, յորում նոյն Տէր օր ըստ օրէ պատարագի անարիւն՝ զաղէտս մեր. հառաչեաց և լռեաց։ Այլ այնուհետև ասիսագոյն ևս տայր զանձն 'ի Նգունս ինքնաչարչար տանջանաց և մշտամռունչ աղօթից, զի զվերէժխնդիր կայծակունս նեռից մթերեալս 'ի վերոյ գլխոց մերոց 'ի բաց փարատեսցէ 'ի մէնջ։ Այլ զանձին առաքինութիւնս կանոն աշակերտելոց եղեալ, առնոյր ընդ իւր արս համանման, որ զարս և զգիշեր 'ի վերայ աշխարհիս նահատա-

կեալ՝ յանձանձրոյթ աղօթս բոլորէին զաւուրս, զեօթնեակս և զամիսս, հրեշտակային անդադար փառաբանութեանցն լեալ արդեամբք նախանձաւորք։

Բ. յրի տխրագին լայր աթոռն Հայրապետական։ Լ՝ր դանդաղիս հարսն սիրասուն կարկաուել զամօթխած ձեռն քո առ փեսայդ տիրահրաւէր. դու միայն իղձ, ցանկութիւն և անձուկ սրտին Աստուած։ Լ՝թէ առաքինութիւնք հարց սորա գողացան զսիրտ քո, սա նոցին նմանող, և աղօթիցն մասամբ առաւելեալ քան զնոսա։ Բ՝ր ութիւն սրտի խնդրես յառնել դիմագրաւ քոյոց սոխսաց. ահա քեզ Աստուած, զոր ոչ պակուցանեն ոչ սպառնալիք դժոխոց ոչ մարդելուզութիւնք երկրի։ Մնաստութիւն մտաց դաստիարակել զորդիս քո՝ի դժուարընկալ ուսումն քաղցր կրօնիս Քրիստոսի. ահա քեզ Աստուած, որոյ վարժարան վարուց հիացումն է հրեշտակաց, և մարդկան խրախոյս՝ի լաւագունիցն թեւակոխութի, նոյն և յանդիմանութի։ Հեզութիւն բարոյից ժողովել միւսանգամ զսարտուցեալսն առ՝ի քէն. ահա քեզ Աստուած արժանի աշակերտ վսեմ վարդապետին, որ զանձն հեզութեան և խոնարհութեան գներ տիպար, գրաւական անդորր խաղաղութեան։ Օ՛ի այլևս յերկարեմ. Աստուած ժողովող որսացելոցն՝ի թշնամւոյն. նաւահանգիստ աղէկոծելոց՝ի ծովածուփ կենցաղումն. օգնական վաստակելոց յասպարէզ երկնաւոր նահատակու-

թեան . յորդորեցուցիչ վկայեալոց 'ի գժուարա-
յաղթ պատերազմունս քրիստոսամարտ ոսոխաց ։

Ա՛հ , ընդէր ոչ շնորհեցաւ ինձ լեզու ազգու և
բան ճարտար նկարել կենդանի առաջի ձեր , ո՛վ
հայրասէր ակումբ , զամենայն օգնեալս բարեաց
հօրն ձերոյ ։ Դու ընդ իմ , դու ծերունիդ Լուսա-
նոյ , դու էջ 'ի կաճառ այսր , և կայծակնաբուխ
բանիւք շողացո յատենիս զնշոյլս առաքինու-
թեանցն Սահակայ ։ Լրանի՛ ասեմ աչաց քոց ,
որ տեսին զզուարթ շրթանցն ժպտումն . երանի՛
ականջացդ , որ զհայրական բարբառն զուարճու-
թեան լուան 'ի նմանէ ։ Ա՛յլ քեզ մանաւանդ
երանի՛ , հայաստան աշխարհ , որ 'ի շնորհաձիր
առաքինութիւնն վայելեցեր Սահակայ . քան-
զի որ 'ի սկզբան հաճեցաւ զանկերպարան վիճն
կենդանաբեր զուարճացուցանել երկոքումբք լու-
սաւորք , զարդարեաց և զքեզ երկոքումբք անշի-
ջանելի լուսաւորքն Սահակաւ և Մեսրոպաւ .
ամոլք գեղեցկաձեմ , նախանձարկուք երկնից ։
Ա՛ջակցեալ նոցա ճոխացուցին զքեզ ճոխութիւնք ,
որ ոչ քոյ էին ։ Զարմացաւ արդեօք Ա՛յրարատ՝
զի անաւկնկաբս ամբարէին 'ի զոգ նորա աւարք
օտարոտիք , զոր ոչ ճանաչէր , և որոց անանցա-
նելի է ժառանգութիւն ։

Թոյլ տուք ինձ ապա , ո՛վ ատեան արդարակը-
շիռ , թոյլ տուք լսելի առնել ընդ ծագս երկրի
զանկապտելի փառան Սահակայ ։ Շ լանայ աշ-
խարհ ընդ դիւցազունս իւր ։ Ա՛ւր ի՞նչ նորա-

սեսիլ այրն, որ յառուբս մեր յասպուշ կրթեաց զաղգս, և հանքաւ նորա ծագաց 'ի ծագս տիեզերաց։ — Յաղիս յիշատակաց գարուց խառնեցաւ և նա։ Խրատուցանեն արդեօք զանանջս բոմբիւնք աշխարհական զինուց. խոտորեն զաչս շողիւնք յաղթական սուսերաց և փաղփիւնք դասինեզարդ դրօշակաց ծուփ 'ի ծուփ ծածանելոց ուրախութեամբ ընդ օդս. այլ առանց ինչ վարանաց համարձակիմ ասել ես թէ, վեհ ինձ խաղաղաւէտ խնամատութիւն Սահակայ քան զամենայն աշխարհակալութիւնս և զյաղթանակն Գ. ղեքսանդրի։ Յանձուկ սահմանաց անտի ուր զծագումն իւր առնու նուաստն Սոտիմենէ մինչև 'ի սեգն Գանգէս բազմաբերան չափեաց նա սահման ընթացից բանական իւրոց. առաջի նորա արհաւիրք, և զկնի հետք արիւնոտոց։ Մեր զօրութիւն որ ընդդէմ կայր բռնութեան նորա, և ոչ ամուր դժուարակուռ խոսիան ոտից նորա։ Յարեաւ և դու, հայրենասէրդ Սահէ, կալ թումբ ամբարտակի ընդդէմ յոխորտ հոսանաց բանական նորա, որ աւերակս սպառնային և զերազարձոյն քոյոյ գաւառիդ։ Գ. յլ առաջ. արդարև սէր հայրենի կարի առաւել էր 'ի քեզ, բայց առ հաւասարութիւն մեծի խորհրդոցդ այժ զօրութեանդ կարի ստորին։ Սակայն ուրախ լեր. տրիտուր փառաց ոչ յաջողութեան գործոց, այլ խորհրդոցն կշռի աղնուամտութեան։ Լաւ ո՞ 'ի մահացուաց իշխեացէ կալ հակառակ հզօր բազկի

վերին տեսչութեան. նա ինքն կալեալ զձեռանէ, իբրոյ յաղթականին առաջնորդէր յաղթութենէ ի յաղթութիւն. մինչ զի նուազ էին պատերազմունք նորա քան զյաղթանակսն։ Անապարհք հորդէին առաջի նորա. ովկիան ապահեստ տարածանէր ընդ առիւք նորին. և գրունք ծաղկապսակ քաղաքաց ի կայթս ոտից և ի ծոխս ձեռաց փեռեկէին առաջի ընթացից նորա։

Այլ այս ամենայն փառք, այս ամենայն յաղթութիւնք արդ ո՞ր իցեն։ — Տխուր լռութիւն ամենաճախ զարուց ծանրացեալ նստեալ կայ ի վերայ, և ոչ հեռս ինչ թոյլ տայ նշմարել։ Սակայն աշխարհակալութիւնք Սահակայ... ո՜հ, Սահակ կացեալ առ սեան լայնատարած և մեայլ հանդերձելոյ ձայն ետ և կանչեաց աթոյեանս ընդդէմ խաւարամած սահմանաց տգիտութեան. լոյս խնամոյ ցոլացաւ ի հանձարոյ նորա, և առին բարգաւաճանս աղքք, և խոպանացեալ աւերակք զարդ շքեղութեան։ Այս ուրեմն ցորչափ ծագեսցէ արև ի կամարս իւր, անթառամ եղիցին փառքն Սահակայ։ Անաւանդ թէ անդր քան զժամանակս մինչև ց յաւիտեանսն ձգտի խնամութեանն սահման. անձուկ էն նոքա սիրելքք, անձուկ ժամանակք, զոր չափէ արփին։

Այլ մի գուցէ մեղադիր ինչ ոք ինձ լինիցի, իբրու այն թէ խորամանգիցեմ զվաստակս այլոց ի գովել զիմ վերայն։ Պիտեմ և ես եթէ անմահն Աստուծոյ ամենայն ձգտանքքն մնասնէր

զանձն բազմախառնակ քրտանց 'ի բարգաւաճանս մերոսեր գպրութեան, յոլովիչ ոչ խնայէր զի զլոյս խնամատութեան ծագեսցէ 'ի Հայաստան։ Բ. յԼ աղէ, ընդէր 'ի դերեւս եկանէին իղձք նորա յառաջ քան զամբառնալ Սահակայ յաթոռն Հայրապետական. ընդէր իբրու յաղբիւր անդր անապառելի լուսոյ առ նա գիմէր Եսրովպ ջահաւորել զիսաւարն հանճարաց. ընդէր հանդիպեա տաժանական քրտանցն յուսայր գտանել 'ի Սահակ։ Բանզի ոչ էին ընդհատ 'ի նմանէ, նա՝ առաւել իսկ քան զնա, փարեալ էր ցանկալի զանձուն և Սահակ։ Ամն այնորիկ Սահակ խորհրդական նմին. Սահակ նմին խրատուիչ. Սահակ վասնակակից նորա։ Բաւ յինէն մուրացածոյ գոլութիւն. թէ ախորժէր, պատրաստեաց Եսրովպ զառաղձ շինութեանն, և խնամատուն Հարտարապետան Սահակ անխոնջելի Հզամբքն նորակերտեաց զեկեղեցին Հայոց. բարձրակառոյց յօրինեաց 'ի վերայ ազգին Հաստեաց զառաձգին խնամատութեան։ Ճագարդ հրաշալիք հնչեցին 'ի Հայաբնակ բերանոց. ընդարձակեցաւ յաղթութիւն եկեղեցւոյն Բրիտանի. և Հոխանցաք աւարօք խնամատութեան ազգաց։

Եւ գիւցազունք մերոյ աշխարհիս Հոխանցոցին զմեզ յառ և յապուր ազգաց օտարաց, և սիրերիմ վահանք քաջազանց պՀնէին զորսն պաշտանց նոցա։ Բ. յԼ զինչ հաւատարութիւն ընդ նոցա և ընդ Սահակայ աւարառութիւնն։ Սա-

հակայ աւարառութիւնք ցարդ շքեղաշարդեն զգաւառ մեր. նորա աւարօքն ձոխացեալ են ազնուազոյն գանձարանք մեր՝ ամբարանոցք մնառելոց մերոց. նորա աւարօքն ձոխացեալ էք դուք, ո՛վ ակուն խնամանոց. նորա աւարք են ձոխութիւնք մնայ ձերոց. ո՛հ, և սիրտք ձեր աւարք նորա են, կոզապա՛ռ շքեղ. սիրտք որ զՀարկ երախտապարտութեան հարկանեն միշտ առ նա. և միթէ արտիւնք արտից ձերոց 'ի լուր անուանս մեծի չիցե՞ն երաշխաւոր ձշմարտութեան բանից։

Իբրև նորատաքանչ գանձուքս ձոխացոյց Սահակ զՀայաստան, կոչէր առ ինքն յաշխարհաձոյլ ժողով և զամենայն տեսուչս եկեղեցւոյն Հայոց, և այն ոչ միանգամ, զի արտառուչ խրախուսանօքն և զնոսա նախանձաւորս յորդորեսցէ անանցանելի ձոխութեանցն։ Այլ խորագնին աչօքն մանր նկատեալ զՀաղս իրացն, 'ի բաց տանէր 'ի սեզանոյն արքութենէ ոչ միայն զորս անձնաշակքն էին ասատուածատուր, այլ և արտաքին խնամատութենն։ Կանգնեալ խիտ առ խիտ վարժոցս յերկրի մերում՝ յորմէ վտարանդի է արդ, աւա՜ղ, ամենայն խնամատութիւն, պատուհաս 'ի վերայ կապէր՝ որոց հեզգանայցեն առաքել անդր զորդիս 'ի կիրթս խնամատութեան։

Այթէ անատերիւր զՀեաս հարց ձերոց կոխէիք, ոչ արդեօք լուէին արդ բեմք ձեր, ո՛վ որդիք Հայկայ. կամ՝ չար քան զլուութիւն զօգանջէին. ոչ և զրունք իրաւարար առնէիցդ փակէին, և սար-

դիտաստայնք 'ի նմա անկանէին. ոչ հոգլ բարե-
նշան մանկտոյն նրթէր 'ի սովոտ իմաստից, և
հողմոց հոսէին մեծամեծ ակնկալութիւք աշխարհիդ Հայոց։ Լցեալ թէ արդ, թէ և անագան, ապաշաւէիք ընդ զարտուղի գնացան։ Բազմի լանջաց և մեծ խորհրդոց հաւատիք էն առանց վկայութեան դառնալ ընդ կրունկն 'ի գիւտ արահետ Ճանապարհին։

Սակայն դուք ո՞չ նմին առաքինութեան հօրն ձերոյ ժառանգորդ էք, դուք, ո՞ իմաստասէր ակումբ, դուք որ զնորին շաւղաց երթայք զհետ, դուք որ զհայրականացն գուն գործէք պահել անշիջանելի զջահ փառաց. դուք, որ ոչ միայն առեալ 'ի ձեռս որպէս զնա՝ զղէն բանին, 'ի բաց ընդոստուցանէք 'ի փարախն Քրիստոսի զնենգաւոր գողն, այլ և քաղցր հնչեցուցեալ զսրինգ վարդապետութեանն Ճգնիք ընդ միով տաւաղել դրօշակաւ զվայրաւանեալ հօտն Քրիստոսի. որ Ճգնիք ծաղկազարդ յօրինել և անթառամ պահել զանուշահոտ բուրաստանն ոռոգեալ արեամբ Քրիգորեանց, և վարդապետութեամբ նոցին կազդուրեալ. որ 'ի միում ձեռին առեալ զաստուածաղիր պատգամն, միւսովն 'ի հանդիսարան իմաստութեան հրաւիրէք զորդիս Հայկայ, զակնկալութիւնս նորոգութեան կործանմանս մերոյ։ Խրախուսեցէք յաստարիղին ձերում, փառք ուղեկից են ձեզ, և Ճանապարհ փառաց առաջնորդէ յանմահութիւն. յոսկե-

զկնն զրուցս տաճարին իմաստութեան ընդ հօրն ձերոյ և ձեր քանդակեալ էն անուանք։

Սակայն է ինձ ժամն անցանել մի առ մի զամենայն զժուարաբիրտն նահատակութեամբք, զոր յանձն առնոյր Սահակ 'ի վերայ իւրոց հանգեցեաց։ Եւ յիշեմ զզժուարընթաց ճանապարհորդութիւնս նորա բազում անգամ մինչև յարքայանիստն Տիսբոն. յորմէ ոչ դառնայր, եթէ ոչ խաղաղութիւն և օձանս բարեաց բարձեալ բերէր ժողովրդեան իւրում։ Զանազ բերանոց նորա պատկառելի էին և առաջի արքայից հեթանոսաց. բանիւ նորա պարգևեցաւ արին Համազասպ սպարապետ քաջացն Հայոց. բանիւ նորա նախարարքն խախտեալք յիւրաքանչիւր պատուոյ՝ անցանէին միւսանգամ 'ի բարձն հայրենի. բանիւ նորա արարք և կալուածք նահապետութեանց հաստատէին միւսանգամ. բանիւ նորա և Ղազարայ բերդ, ո՛հ անուն չարագուշակ, դառնայր երկրորդ անգամ յաթոռն արքունի քաջացն Խոսրով։ Գիտէք ապաքէն, իմաստուն կաճառ, զի ըստ խուժադուժ հեթանոսական սովորութեանցն յիշել անգամ զանուն բերդին առաջի արքայից արքայի գլխապարտ յանցաւորութիւն էր. և զրեթէ անհնարաւոր շնորհք 'ի բերդէ անտի ազատել զայր փեսասպարտ, թողթէ միւսանգամ վերամբառնալ յաթոռ արքայութեան զմնասակար իրաց արքունի։ Այլ լոյսն երկնային տպաւորեալ 'ի ձեռնատ Սահակայ կա-

ցուցանէր զնա պատկառելի ազգաց և մեծարու թագաւորաց ։

Սակայն, եղուկ, վաստակք նորա մերձ ընդ մերձ 'ի դերևս եղանէին. խախտէր, սպառնայր կործանել զկնի երագավախճան աւուրց Լոս-ռովայ շքեղազարդ գահն արշակունի. գեղայար-դար յօրինուածուԹիւնք յաշխարհէս մերմէ ղո-ղէին Թաքչէին 'ի փապարս քարանձաւաց. և 'ի նախարարակոյտ ազատաց այլ ոք այլուր հանդէպ երեսացն դիմէր 'ի վայրս անմարդիս ։ Եւ զայն ժամ պատեհ գտեալ նենգաւոր կրակապաշտու-Թիւն դարանէր յարամբի մտանել յեկեղեցին Արիստոսի, և առնուլ յաւարի զամենայն բա-րեվայելչուԹիւնս նորա ։ Այսպէս դիւրափոփոխ էր բախտ քո, տառապեալ գաւառ հարցն իմոց. ամք սակաւք են զի ամենայն վայելչուԹեամբք ձոխանայիր, նախանձ արկանէիր մերձաւորաց քոց և հեռաւորաց. և այժմ աւաղելի օտարաց և ընտանեաց. և սպառնալիք արհաւրաց կա-խեալ կան 'ի վերայ գլխոյ քո ։

Բազմիմաստ հառաջանօք դարձաւ հայեցաւ Խահակ 'ի տառապանս աշխարհին. սրատես հայրապետն իրազգաց եղև դաւաճան խորհրդ-գուԹեանն. իմացաւ և զհնարսն ։ Վիմեաց զոյդ ընդ Թոռանցն հանդերձ գործակցաւն բարեաց Մեսրոպաւ 'ի Արզանդիոն կոյս. զազգակից նախարարս յունական կողման համագունդ արձուեացն Եվդոքսի 'ի Թիկունս կոչել օգնակա-

նութեան ընդդէմ հաւատոյ դրուժ ասոխին։ Սա-
կայն ցատումն Յմենակալին խնդրէր զոհ հաշ-
տարար. և ուշ նպատակի երկնաթռիչ սլաքաց
դու ես դու, արիդ Ս արդան. ազգատո՛հմ նուի-
րական Յատուծոյ։ Կամարն ստրատելատի, զոր
կապէր Թէոդոս զմիջով նորա, հրեշտակերամ
գնդաց մանաւանդ կարգեաց գնա զօրավար։ Յօղ
վարդապետն քոյոյ արեան, քաջդ, այն միայն ցարդ
յերկիր հայաստանեայց ուռնացոյց զաստուա-
ծահրաման պտուղն բարեպաշտութեան։ Ի
քում արեան շտեմարանեալ կան տակաւին մե-
ծամեծ օձանք բարեաց աշխարհիս. և տեսցեն
անշուշտ զաւակք մեր և թոռունք։ Յայլ դու ա-
րիդ, ո՛հ, իբրև զգունատեալ շուշան դեռաբողբ-
ոջ անկանիս առաջի անագորոյն սուսերաց կրաւ
կապաշտից. և լայնատարած և անշարժ դիակն
քո սրբանուէր պահպանութեամբ թագուցանէ
զգահն արքունի։ Յատմնին ոսկերք ձեր, ո՛վ
հայրասէր ժողով. այլ, աւա՜ղ, ձշգրտապատում
յիշատակարանք աղիտագոյն ևս տեսարանս կեն-
դանագրեն առաջի աչաց մերոց։

Սակայն դու, հայր, որոյ յանդիման բացան
դպրութիւնք աստուածային տեսչութեան, յո-
րում մասն աստուածային դրոշմեալ է զվճիռ
կործանման գահուն արքունի, ո՛վ վճիռ կարի
անաչառ. դու էր այդպէս ընդ քիրան գաս և ընդ
ապաժոյժ միւսանգամ 'ի մի հաւաքել զխախ-
տեալ վայելչութիւնս փառացն Յարարատայ։

Ահա ազատ որեարն ցան և ցիր ընդ լերինս և ընդ մայրաս. ռամկին կապուտակեալ բազուկք յանիրաւ շղթայից գերութեան. վոհմակք պարսկախումբ բանակաց յափշտակեն զգաւազնան Քրիստոսի. ծուխք ատրուշանաց ծառացեալ յամպս, տարածանին ունին զամենայն երեսս երկնից զի մի կաթեսցէ ցօղ երկնատուր պարգևաց 'ի լերինս և 'ի դաշտս մեր. և յուսամ զուտակաւին զայդպիսի գաւառ 'ի վեր առնուլ միւսանգամ 'ի վատթարութէ անտի, և միւսանգամ շքեղազարդել. ա՜հ, ներբեա յանդգնութեանս, հայր, մի արդեօք յանբեր ապառաժս հոսեսցին ծանրագին քրտունք քո։ Ա՛սեմ արհամարհեալ նա զամենայն վհատութիւն, ընդդէմ իմն ձակատագրին, թէ տայի ինձ համարձակութիւն ասել, հնարի ոգորել։ — Դ՛գանք կնիք էն, ասէ, իմոյ ձակատուս. յաջողութիւն գործոց պարգևք ձեռաց Քրիստոսին. ցորչափ շունչ իցէ յլրընդունս իմ էդիս զանձն իմ 'ի վերայ իմոյ համարգեաց, 'ի վերայ զաւակաց իմոց։ Ա՛ 'ի մահկանացուաց իշխեսցէ 'ի վեր առնուլ զնսեմ և ըզթանձր առագաստ ապառնի դարուց և զհանդերձեալսն նկատել։ Ո՛ւժկալեսցէ սիրան հայրենի տեսանել զհոյլս զաւակաց մատնեալս յանձկութիւնս և զձեռս 'ի գիրկսն հանգուցանել։ Ա՛հ, քա՛ւ յինէն վատութիւն այդպիսի. յետին տուր և առ շնչոյ իմոյ, և վերջին կաթիլ արեան նուիրեսցեն է իմոց զաւակաց։

Լաւ հաւատոյք, ոմ ուղղատես ատեան. արդարև ոչ՝ի դերեւս եղեն սիրայորդոր Ճղանք ծերունւոյն, զոր ոչ երիցայիմ նորոգիչ կոչել կարծանման մերոյ աշխարհիս։ Եւ այնպէս՝ի ձայն քաղցր սրնդի հոլովեն զրդեն հօտք ոչխարաց յաղն ցանկալի, որպէս յանկարծութիւն Սահակայ՝ի մի խմբեցան ազատք և անազատք, աւագն և ռամիկ. և անդէն՝ի վերայ աւերակաց ատրուշանաց եղեն կանգնեցան միւսանգամ մեծափառագոյն և եկեղեցիք Աստուծոյ. պարսկադէն խաժամուժ մոգաց և մոգպետաց վարեցան հեռի՝ի սահմանաց մերոց, և փոխանակ աղխատրոյզ հմայից նոցա՝ քաղցրաձայն հնչեին երկնապիշ զմբեթք, հանդիսաւոր փառաց Նմահեին։

Հապա, որդիք Հայրարատայ. զի կայք, էր յապաղեք. արիք՝ի վեր, կայեցա տուք ցնծութեան. ահաւասիկ հայրն ձեր, ահա Սահակ. ՝ի միում ձեռաց նորա նշոյզ Ճաճանչ արքունի թագին, որում անձկացեալ տենչայիք. ՝ի միւսումն պատկառելի նշանն խաղաղութեան և հեզութեան։ Կայ նա պարզևել ձեզ զկորուսեալ շքեղութիւն փառաց ձերոց. հեղուլ՝ի սիրտ ձեր զքաղցրութիւն ներողութեան, և զյոյս ողորմութեանց Տարձրելոյն։ Եւ Ճանաչիցէք. ահա առոյգ պատանին Աստուածս, որդի բարեացապարան Ռամհատայ ձերոյ արքայի. որ երբեմն բացեալ զկորստական գանձս իւր՝ անկողոպտելի գանձուք խնամատիս Ճոխացուցանէր զձեզ. ահա

եկանէ նա 'ի գահն հայրենի, զի ընդ հովանեաւ համազգի գաւազանին առցէ վերստին աշխարհ ձեր զգեղ վայելչութեան աստուածապաշտ և իմաստուն կարգաց։ Այլ ընդ փոյթ դարձցին առ ձեզ և գովելի ասպատակքն՝ որ 'ի ծագաց երկրի ջնաշխարհիկ Ճոխութեամբ օտար աստեղաց մեծացուցեն զձեզ։

Այլ սակայն զինչ տեսանեմ ես. զի է զի 'ի մեայլ խաւարի 'ի խորհուրդ ակմբին աւագ որեարն Հայոց. և ծերունի ոմն ծաղկեալ ալեօք, գեղեցիկ կերպարանօք, հայեցուած հանդարտ, աչք բոցատիպ, և ոգի ինն 'ի նոսա. արութիւն կորովի անսովոր հասակին. և կարկառէ զձեռան 'ի միջի անդ ակմբին։ Այլ ընդ ոյր երբէք մարթէր ընդ միտն անցանել, եթէ տաղտկացեալ որեարն յիւրմէ աբքայէ յետ վեցամեայ խաղաղաւէտ թագաւորութեան՝ խորհուրդ վատ խորհի մատնատու լինել նմա ազգաց օտարաց, և օտարոտի տեարս կանգնել 'ի վերայ իւր՝ որոց բոյս բարուց դրացի է գազանականին. ո՛վ նկուն մտայն։

Ա՛յր խորհրդակորոյսք, չաձէք զմտաւ թէ յառաջ քան զամն սակաւս յոր տառապանս պարտանդեալ կայիք. դուք ինքնին աչօք ձերովք տեսէք զյափշտակութիւն ընչից ձերոց և հայրենատուր արարոց. զխախտումն ամենայն յօրինուածութեանց. 'ի վտանգ մատնեալ ամենթխած պարկեշտութիւն դատերաց ձերոց. ուստերք ցա-

կանեալք. առագաստք սրբութեան յաւարի առեալ. և զսակաւ աւուրս կենաց ձերոց հաղիւ տառապանօք շահեալ՝ի դժուարս ելեալց։

Ա. Յլ բաբէ, ՝ի զուր վաստակի Սահակ, վայրապար ճգնի խմաստուն և խորատես բանիւք հաւանեցուցանել զարդարութիւն խմաստազիրկ ատենին։ Ընձեռապանձք Պարսից յակդիռս կան ընդ համարձակախօս քաջաբանութիւն առնն ուժգնասրտի. իսկ քրիստոսադաւան նախարարաց կոյսն խնուն զականջս՝ի լուր աւետարանախօս բանից հօրն իւրեանց։ Ոչ ոյս ընդդիմախօս և սոցա յորդորական զբանս իւր առնէր խմաստուն ծերունին. նոքա պարգևօք և պատուով մեծարեն, և սոքա ընկեցիկ յաստուածահրամանն աթոռոյն զնա կացուցանեն։ Ո՜վ կուրութիւն անհաւանելի։

Յիրաւի են հառաչանք ձեր ընդ յանցաւորութիւնն, որում՝ չէք փնտռապարտ։ Սակայն ընդէր այլազգունին երեսք ձեր. ոչ զայս բնաւորեալ է հաստուցանել աշխարհ իւրոց բարեբարաց. ոչ ընդ արեանն, աւաղ, և զբախտ Ներսիսի ժառանգեաց Սահակ։ Ոչ դուք իսկ անձամբ ձեր ոչ կնիք ճշմարտութեան էք բանիցս։ Ա. յդչափ քրանաքան երկանց ձերոց զինչ արիտուր ընդունիք։ — Ա՜տելութիւն, զրպարտութիւն, նախանձ։ Սակայն մի՛ ինչ վհատիցիք. քանզի ախտք իրեարաց հակառակամարտք, որ և ոչ մարթին գոգցեալ կալ՝ի միասին, անմեկնիք են յառաքինութ-

թենէ. և որպէս ստուերը գեղեցկախառնեալ ընդ լուսոյ, նեղեցէք թէ յիշեցուցանեմ ձեզ բան սովորական, ակնախտիղ իմն կենդանութիւն պարգևէ տեսարանաց նկարչին, այսպէս և թըշնամանք ախտիցն՝ ձերոց ոսոխաց՝ զառաքինութիւն ձերոց ազդողագոյնս տան զհաստատս։

Օ բարտութիւն որեաց զժանիս իւր և ընդդէմ Սահակայ յատենի արքայից արքայի, և 'ի յանցանս զրեցաւ նմա՝ զի աւետարանագիր կարգաց գտեալ գեղեցիկ օրինապահ ոչինչ չարախոսեր զԱրտաշէս առ հեթանոսս։ Այլ որպէս ժայռ 'ի ծովու անսասանելի 'ի բարկացայտ աւերաց, այսպէս և Սահակ ոչ ինչ երեսս ոչ առներ ոչ սպառնալեաց և ոչ հրապուրող բանից արքային և պարտականաց նորա. և հայրենասէր առաքինութեանն հօր քո, ով աշխարհ ապաշնորհ, յատենի ոսոխաց քոց կշռեցաւ վարձ տխուր բանտարգելութիւն։

Անվրդով կերպարանօք իբրև իմն յարքունիս դիմէր ծերունին 'ի բանտն անդր. մանաւանդ թէ յորդորագոյնս 'ի բանտն քան յարքունիս. որքան զի 'ի սմա զարանակալ զոգեալ կայր առաքինութեանց նորա. և այն պակ անկարտելի այնոցիկ։ Այսպէս ընդ հակառակս իմն հային սուրբք յամենայն երկրեղէնս։ — Ունէցին ժանգահար ծիսնիք, փակեցաւ դանդաղաշարժ դուռնն. լուռ թէ ընդարձակ շուքանակի. և Սահակ արքայազն հայրապետն Հայոց միայնակ 'ի խաւարչուտ զընդանին։...

Ա.յլ խաբիմք, նա չէ միայնակ. նոյոյլ անմեղութեան 'ի Ճակատ նորա. առաքինութիւնք նորա ընդ նմա շուրջանակի. ընդ նմա բարեբարութիւնքն, զոր շռայլեաց նա քեզ, Հայաստան ժողովուրդ. և դու զայս նմին հատուցեր տրիտուր։ — Ա.րժանի էիր դու, ո՛վ Հայր, արժանի լաւագոյն բախտի, եթէ բախտք երկրաւորք իցեն ինչ։

Կալան զձեզ, ատեան Հայրասէր, կալան արհաւիրք, և ցուրտ տրտմութիւն երկաթի ձեռօքն ձնչէ զսիրտ ձեր։ Ա.ւ կարի յիրաւունս. ցայսօր և Հայաստան ամենաապարտ ընդ եղեալն՝ նասի մնայոյզ 'ի վերայ հանդերձելոց։ Ա.յսչափ ինչ ահա կարող են աղմուկք կրից։

Ա.թէ պատմութիւն անողոքելի դատաւոր արքայից և ժողովրդոց, անաչառ մատակարար պարտաւանաց և գովութեանց, ատոմաածութիւն իմն անխաբելի, յորոյ աչաց չիք յանցաւորութիւն, թէպէտ և մեծապատիւ, որ մարթիցի թաքչել, և ոչ առաքինութի, թէպէտ և ամայի, որ մարթի մնալ անծանօթ. եթէ պատմութիւն չէր պահեալ մեզ զաղետալի յիշատակ իրացս, սրբանուէր իմն առաղաստիւ ծածկէի և ես զամենայն հարցն մերոց, խնայէի և յարդարացի հառաչանս ձեր։

Ա.յլ սակայն որ 'ի բարձանց երկնից անթարթունի զաչսն 'ի վերայ մահկանացուաց, և ոչ երբէք լքանէ զարդար, և մերձ ընդ մերձ զանենկուն

նահատակաց իւրոց բոլորէ զՀակատ անթառամ պսակօք, փեռեկեաց, որպէս երբեմն 'ի Մեմ փիս, զերկաթապատ զրունս բանտին. խորտակեաց յոտից և 'ի բազկաց զԺանգալից զանիրաւ շղթայսն, ած կացոյց զնահատակ իւր առաջի բռանց երկրի։ Այլ որպէս գալարաձև որոտաձայն կայծակն բարկութեամբ շանթահարէ զգոռոզ գլուխ բարձրաբերձ լերանց, այսպէս և բանք բերանոյն Սահակայ յատենի անդ հեթանոսականաց զգաղաղացուցին զհայհոյիչ լեզուս մեծամեծաց աշխարհի։

Ներկիւղ արութիւն սրտի, աստուածութե՛ն ինն վեհ նկարագիր, միշտ իսկ բռնի ապաքէն պահանջէ և յոսոխաց անդամ իւրոց զհարկ մեծարանաց։ Այլ իշխեաց և Սամ ժխտել զնոյն անվեհեր արութեան Սահակայ, որ շքեղազարդ միւսանգամ դարձ առնէր յաշխարհ մեր. և ոչ այնչափ Հոխացեալ գայր աղքայատուր պարգևօք 'ի շինութիւն աշխարհին, որչափ անոխակալ առաքինութեամբն զարդարեալ 'ի շինութիւն եկեղեցւոյն Քրիստոսի։ Քանզի թէպէտ և յինքեան խաղաղացեալ նստեալ կայր, այլ անյիշաչար կամօքն ոչ յաչաղէր զմնունդ վարդապետութեան, յորոց քաղցեալ և փափաքէին այնմ։ Որոշուտ 'ի պատուոյ աթոռոյն, այլ ոչ 'ի վաստակոցն. զի Սահակ ոչ վասն պատուոյն յաթոռ անդր ձկտէր վարդապետութեանն, այլ զի վաստակեսցի, այլ զի բարերարեսցէ մարդկանն։

Այլ վասն իսկ զգժուարութիւնս Հանապարհաց յաչս դնէր. յատենի թագաւորաց անէր. կիւզ համարձակախօսէր. յիշխանուէ ոչ ակն ածէր 'ի յանդիմանելն. և մեծապատիւ մեծարէր զառաքինութիւն թէպէտ և ընդ գերանօք շինականին. և զամենայն մանկտի Հայոց, կրկնապատիկ երանի հատակին յայնմ ժամու, և զամենայն մանկտի Հայոց իբրու զծնունդս աղեաց իւրոց այնպէս խնամէր. զորս 'ի բնիկ յաշխարհին, զորս ընդ օտար աստեղօք նախանձաւորս վնասէր բարեաց։

Դարձեալ ուխտ եկեղեցւոյն, դարձեալ խմբի նախարարակոյտն առ ոտս ծերունւոյն։ Սակայն ո՛րչափ այլատարազ քան զառաջինն։ Ա՛ն զանս յանձն առնուն, աղերս սրտառուչ արկանեն նմա, զի յաթոռ հարց իւրոց, յաթոռ իւր անցցէ բազմեսցի վերատին։ Ա՛թէ արքայականին կնքեալ էր կործանումն զահու, մի գուցէ և հայրապետականն ընդ նոսին անկցի Հակառապրաւ։ — Ա՛մբէ, վասեմ յաղթանակ առաքինութեան։ — Սակ առաքինին, որպէս յառաջնումն, նոյնպէս և յերկրորդումն միօրինակ անյողդողդ, միօրինակ անվրդով, միօրինակ քաղցր։ Ա՛ն յայնժամ, ո՜հ, յայնմ ժամու տպաւորագոյնս էտ հաւատոյս զառնութեան ոչոյն մեծանձնական նեղելոյն։ Ա՛նգի ներողութիւն առաւել ևս բնաւորեալ է տալ զյարացոյց զօրութենէ մնաց, որով և գերէ իսկ զսիրտս, քան զնուաս-

տամիան վրէժխնդրութիւն, որ և զսիրելիսն սար-
տուցանէ։ Մինչ զի և աստուածութիւնն ինքնին՝
վրէժխնդիրն արդարակրիւ, եթէ միոքն արհա-
մարհս անհնարին ածէ զմեզ, միւսոքն զսիրտս
մեր յինքն զրաւէ։

Արդեաւ զձեռանն՝ առ որս փարելին զծնգովք
նորա. Ոչ առ ատել ինչ, ասէ, քաւ յինէն, քաւ
'ի քրիստոսական նկարագրէն, որ տպաւորեալ է
յանձին իմում, եղեռն այդպիսի. այլ բաղմա-
վաստակ ծերութիւն 'ի դժուարամարտ ժամա-
նակիս չէ բաւական ելանել յասպարէզ ընդ-
դէմ ասորեաց եկեղեցւոյն Քրիստոսի. ահ, ընդ-
էր չմարթիցիմ զայս մի անգամ յանձն առնուլ
զինդիր ձեր։.. Լաւ հառաչէր. և թերաբաց է-
յոյց նոցա զահաւոր տեսիլն, որ որպէս այժմ զա-
տեանս ամէնիմաստս, այսպէս և զաղաչաւորսն
յայնժամ յարտասուս հարկանէր։ Այլ նոքա
մեղապարտք. դուք զնոցին մեղանացն, աւաղ,
զայսչափ ամն անպարտ լուծանէք զվրէժ. ան-
հասանելի դատաստանաց Ցեառն այսպէս սահ-
մանեալ։

Ոչ այնչափ զրկեալքն 'ի հայրական խնամոց
Սահակայ, որչափ նա ինքն ծերունին յոգի հա-
բեալ էր ոչ եթէ վասն ծանրակիր հիւանդու-
թեանն որ սպառնայր սուգ անմխիթար համօրէն
աշխարհին, այլ մանաւանդ վասն հանդերձելոց
տառապանաց զաւակացն։ Օ՛ի արդարև վշտա-
նայրն անդամք մարմնոյն, այլ սիրտն սիրտարա-

ասր , այլ միտք զուարթուն 'ի գեղազուարդ վայրն Ը.յրարատայ , զաւա՛ռ լի յիշատակօք , բաժանեալ էին ընդ Ը.ստուած և ընդ Հայրենիս իւր . և զՀայրական օրհնութիւնն կուտեալ 'ի սիրեցեալ գլուխն Ա.արդանայ , յորում բազմապատիկ ակնկալութիւնք հանդուցեալ կային , կարծեցեալ զաչն յերկրաւորաց աստի , զի բացցէ առ երկնայինսն , և տարաւ ընդ իւր զիրձս մեր յաթոռ Ը.նտահին ։

Ա.կեաց արդեօք կարի շատ բնութե . եկեաց արդեօք Սահակ կարի շատ փառաց . այլ աւա՛ղ , կարի նուազ Հայրենեաց ։ Ը.ռաքինութիւնք նորա նորոգութե էին աշխարհին , և բանալի աստուածապարգև գանձուց 'ի ձեռին նորա ։ Ը.՛հ , օր տրիւ բազին , որ գունատեալ եռես զզուարթածաղիկ դէմն հօրն լնոյ . սակայն ոչ , ոչ յեռին անուանեցաւ նման օրն . արդարև մահկանացու ծնեալ , այլ անմահ եթող իւր յիշատակ . և ցորչափ բաբախեացեն հայ սիրտք , անանց կացցեն փառք Սահակայ ։

Ոսմբանն ազատ կարծոյց զմանն երկրաւոր , այլ կենդանի է ոգին 'ի միջի մերում . դուք նոքին մնացն և կամոյ ասպնջական , դուք ժառանգորդք նորա ոգւոյն ։ Ա՛չ դու , Հայր , զահագլուխ պատկառելի ակրմբիս , ո՞չ դուք խնաստախումբ ատեան , աջակիցք Հօրս մերոյ , ո՞չ դուք յարեալք փոխանակ Ճշմարիտ հովուաց պայազատք նոցին առաքինութեանց . աւանդապահք

գանձուց նոցա ։ Ո՞չ զանխաբէլի պատկեր նոցին նկարէք Ձիգրիտ յանձինս ձեր ։ Ցեսանեմ շուրջ զձեօք, որպէս և յայնժամ, ջինաղ պսակ ուսումնասէր մանկուց . որոց արդեամբք քան թէ բանիւ վարդապետ բազմեալք կրկնակի առաքինութեանց սրտի և մտաց, խոստանայք աւուրս բարեաց տառապելոց մերոց Հայրենեաց ։ Փառք ձեր առաջինք՝ երաշխաւոր են ապագայիցն . և որպէս յայնժամ, անշուշտ և այժմ սրբեսցէ տխուրն Ս. Լրարատ 'ի ծնօտից իւրոց զաղի արտասուս՝ մխիթարեալ 'ի ժառանգորդսն առաքինութեան և իմաստութեան իւրոց դիւցազանց ։

ՆԵՐԲՈՂ

Ի ՍՈՒՐԲՆ ՄԵՍՐՈՊ

ԹՈՒՅԼՍ և ընդ օտար աստեղօք, ո՛վ աստուածարեալ Հայրապետ, և կաՀառ խնամանախու�մբ Վարդապետաց, Թէպէտ և պանդուխտ ընդ օտարոտի աստեղօք և 'ի մէջ այլախօս ժողովրդոց և օտարաձայն ազգաց նեժդեՀացեալ, սակայն 'ի լանջս իմ բարախէ սիրտ Հայրենասէր. սակայն 'ի սրտի իմում, ո՛Հ ներբեսցի Թերևս աւելազանց յանդգնութեանս, սակայն 'ի սրտի իմում արծարծուն է այն Հուր, որ զծերունի Հայրն մեր 'ի սեբաստական խանձարրոցն աՀ ձգեաց և յածեցոյց ընդ ոլորտս տիեզերաց, մինչև Հասուցեալ Հանգոյց 'ի խաղաղաւէտ յայս ծոց և 'ի դաստակերտ նախանձելի՝ 'ի Դուստր Ովկիանու։ Արանի՛ աչաց նորա, զի տեսին զյիշատակարանս, ո՛վ տխուր յիշատակ, զյիշատակարան Հարց մերոց. և այն յիշատակարանք չէին անձայն 'ի լսելիս մտաց նորա. այն յիշատակարանք անցելոց փառացն Վարարատայ խրախուսեցին զնա կանգնել անանցանելի յիշատակ ա-

ռաջի երկնից և երկրի, նախանձարկու խրոխտ պետութեանց։ Զի՞նչ ասիցն, որ կոխեցին զերկիր, որ բարձրաբազուկ հանդիսից Զնմահին և մահացուաց լեալ երբեմն ասպարէզ, արդ աւա՜ղ, ոնհար յամենեցունց, և ոչ ուղևոր որ յանձն առնու գոնեայ վեր 'ի վերոյ աչս արկանել 'ի նա. այլ ասպնջական եղև ջայլեմանց և որդւոց համբարուաց, և հառաչանք ազնուամիտ զաւակաց իւրոց։

Այլ ես թէպէտ և վտարանդի յափանց եղեմական խոխոջանացն, անդր 'ի թևս սիրոյն թռանիմ, ուր կեցին հարք իմ, ուր հարք իմ զսիւգ կենաց շնչեցին. ա՜հ, արտասուալից աչօք համբուրել ցանկայի անդէն զփոշին, ուր կոխեցին երկնաչու զարշապարք նոցա։ Այլ եթէ անհետազօտելի կամք երկնից զլացան մեզ զայս, գոնեայ թոյլ տացի ինձ խտալացի արձագանգաց, ուսուցանել զանուանս հարցն իմոց։ Զի՞նչ ինչ լուութի գերեզմանական կալեալ ունի զաշխարհս մեր, կամ թէ աղխատրոյզ և եթ բարբառովք պղծաշուրթն ժողովրդոց պղծին սրբանուէր ոսկերք խաղաղացելոց հարցն մերոց, հնչեսցէ Զբոսէ զանուանս նոցա, զի նախանձ օտարոտեաց թերևս 'ի սիրտ որդւոցն վառեսցէ զբոցն հայրասէր, որ առ յաչաղանաց ժամանակիս, բա՜ւէ, թուի շինչեալ 'ի սպառ. և նշոյլ փառաց նոցա լուսաւորեսցին զմեզ նախանձաւորութեամբ նոցին առաքինութեանց։

Վասն այսորիկ յաւուրս յայսմիկ, յորում Ժողովս պատկառելի միաբանեալ է խորհել զօգնութեան բարեաց ազգիս մերոյ, և խրախուսել զերկիրս զարշապարս բարենշան մանկուցն ընթանալ ընդ հետս հարց առաքինեաց, 'ի ձահ թուեցաւ ինձ զանատերիւր օրինակ մեծախոհ առաքինութեանց զմեծին Վեսրոպայ ածել 'ի հանդէս առաջի անմոռացկոտ ակմբիս. զառաքինութիս առնս աւաղի, որ 'ի գլխովին նուիրեալ էր զանձն 'ի սէր հայրենեաց. որ զամենայն ինչ առ նովաւ երկրորդ համարէր. և ուղիղ գիտեալ յուշ նպատակին յերկրէ յերկինս հրաւիրեաց զորդիսն Հայկայ. մանաւանդ թէ զերկինս յերկիր խոնարհեցոյց զաստուածաբարբառ ձայնն հնչեցուցեալ ընդ ծագս հայաստանեայց. և զաստուածատուն զրախտն փափկութեան միւսանգամ բազմաշատակ քրիստոնէութեան արգասաւորեալ 'ի գաւառս մեր, եբաց զարոբէափակ դրունս նորին առաջի աբսորելոցս անդուստ. և տնկեաց մերձ առ միմեանս զծառ կենաց և զծառ գիտութեան, յետս ընդդէմ դարձուցեալ զաստուածահրամանն պատուիրանն իւրով անխոնջական երկնատարած բազկօքն։

Եւ ո՞ ժխտեսցէ զի առ 'ի յաճախել զօրինակս առաքինի կենցաղավարութեան չիցէ օգնն մեծ յիշատակել ստէպ զնոսին 'ի ժողովս, և մեծացուցանել փառաք, որով և այլք 'ի նոցին խրախուսեսցին նմանութիւն։ Վնասք յաչագկոտ լռութեան, որ ազիս և զոնոսիակս արկանէ, ա-

զահ շրթանց հայ որերոյն 'ի զովութիւն հարց առաքինեաց։ Այդ պատճառք են, որով շինեալ սէր հայրենի 'ի սիրտ որդւոց, անլսող եղելոց մեծագործութեանց հարցն, ոչ ոք 'ի նմանութի հայրենականացն նկրտի առաքինութեանց, և քաղցրանան ամենեցուն օտարոտի լուծք, և արհամարհեալ զնախաբարբառ խօսս աստուածաշարժ շրթանցն, օտարաձայն բառիւք խնամատս սիրեն յօդել խուժադուժս։ Ի բարեհաճան աւուրսն մինչդեռ քաջք շուրջ բոլորեին զԱյրարատաւ, և կամար երկնաւոր հաշտութեանն շքեղազարդեր զսէգ զամբարտաւան գլուխ նորին, յայնժամ լերինք և անտառք հնչէին զանուանս դիւցազանց մերոց, և երգոյն Այրարատայ արձագանգս տային բամբռունք Պողթան։

Այլ արդ 'ի ձէնջ հայրենիք մեր ակն ունին վերստին նորոգութեան. դուք վարժապետք առաքինի կենաց, դուք բողբոջիք սրբազան հրոյն հայրենասիրութեան։ Ցուք ինձ խրախոյս ձերով երկայնամիտ ունկնդրութեամբդ լինել իւիք սպասաւոր մեծի և կարևորագունի գործոյս, որ գրաւեալ ունի զձեզ բովանդակ։ Ի նոյն դիտաւորութիւն ահա և ես համարձակիմ 'ի սուղ բանս իմ առաջի առնել պատկառելի ժողովոյս զանհամեմատ առաքինութիւնն Եւրոպայ։ Ոչ եթէ ձարտարախօս դարձուածովք բանիս, և կամ ձախարակեալ ողորկութեամբ յանդգնեալ 'ի հանդիսիս, այլ ծանուցեալ զմեծութիւն առաջար-

կութեանն, և նորին բարձրութեամբն յուսամ ոչ մնալ 'ի սպառ գեղեցարարշ։

Այն ամենատես, որ 'ի բարձանց երկնից նկատէ զամենայն. ձեռնն ամենաբաւական, որ տակաւ վարէ զամենայն ստեղծականս 'ի կատարումն խորհրդոց իւրոց, և զամենայն ասա 'ի խնարհ ծածուկ խորհրդովք 'ի լաւ անդր բարեկարգէ երկրածնացս, 'ի Հայեկաց աւանի տարօնական գաւառին լսելի արար զառաջին Ձիւ անտիական հասակին Աստուծոյ, որդի առն Ալարդանայ։ Ովքր երանութեանց արժանաւոր հայր, անզուգական այսպիսւոյ որդւոյ։ Այդ ծնաւ Աստուծոյ, որ առաջին բարգաւաճեաց զկնի մարդաբաւն հեղեղաց. յայնմ աշխարհի, ուր ծաղկեցին առաւելապէս պաշտամունք զոհից և օրինաց, մինչդեռ տակաւին չէր ծաղեալ լոյս կենագործակ արփւոյն տիեզերաց, և ծուխ դիւամոլ պաշտամանց պատեալ կալեալ ունէր զերեսս երկնից. անդ և յետ այնորիկ առաքելական հայրապետաբար մեր զայսախուռն բանական հալածեալ, կանգնէին զառաջինն զնշանս դիւ ասասատ խաչին. անդ ամբառնային օդաձեմ գագաթունք աստուածանուէր տաճարաց. անդ և Ալարժոցաց երբեմն փոթթէին իբրև զծաղկալից բուրաստանս յաձախութիւնք։

Այն գաւառ բացաւ տեսարան հանդիսից առաքինութեան Աստուծոյ, ասպարէզ յաղթա-

նակի նորա։ Որոյ կանխեալ քան զՀասակին՝ տայր զանձն անխոնջ յուսումն իմաստից։ Եչ որպէս զայն անմիտ մանկանին, որ ակամայ և բռնադատութեամբ ընթանան ընդ՝ Ճանապարհ իմաստութեան, այլ ըստ օրինակի նոցա, որ 'ի միտ առեալ զկարևորութիւն նոցին, և գիտեն թէ մանկանացուք չէն ծնեալ զի վատանուն կեցցեն յաշխարհի և անկարեկիր իջցեն 'ի գերեզման. և վասն այնորիկ տակաւին Թոթովախօս տղայական լեզուաւն զՀելլէն զՊորի և զՊարսիկ հիացուցանէր 'ի նոցին բարբառ։

Ամենայն արփիափայլ շառաւիղ լուսատուիս մերոյ՝ Երսէս՝ հայրաբար յանձանձէր յայնժամ զամենայն ընդարձակութիւն մերոյ հայրենեաց, անենիաղ էր յամենայն օձանաց աստուածապաշտ կարգաց, և բարգաւաճ կենցաղօղուտ վայելչութեամբք։ Նոյն միայն՝ Երսիսի 'ի վերայ ժամանակին շատ է տալ ձեզ զպատկեր ամենայն բարեմասնութեանց դարուն։

Հայաստան ճոխացեալ էր յայնժամ բազմապատիկ մեծապայծառ շինուածովք, ուր օթևանէին ապիկար ալիք. ուր դարմանէին և ծածկէին հանդերձիւ որբք և այրիացեալք. ուր մանկութիւն վարժէր յարուեստս մեծահանճար գիտութեանց. ուր յափշտակեալ 'ի միջոց տղմոյ ռամիկ մանկտին կրթէր լինել պիտանի հայրենեաց, և մի բեռն նմին և հառաչանք. ուր փութաջան վաստակէր Ճարտարութիւն ձեռաց, որ

յառաջագոյն անգործ էին և կամ՝ ի մոլր եւ էթ բազմահնար։ Ընդ և Մեսրոպ վարժեալ՝ ի կաբևորսն, այնուհետև զիմէր առ ոտս սրբոյ Հայրապետին, ՝ի հանդէս մեծագործ առաքինութեանց, լինել անդէն տեսող նոցին և նմանող։

Այլ աւա՛ղ ցաւոցս. ոչ կարեմ սանձել աստանօր զարդարակշիռ արտասուս. զի յիշատակեալ զՀայրապետս մեծ, և ոչ կարեմ չյիշատակել զմեծեղեռն անօրէնութիւն ազգուՇեաց ժամանակին։ Այլ ո՞ր ազգունիք սուրբ իցեն յեղերանց։ Որ ոչ ըստ արժանի ծանուցեալ զորդեսէր Ճգունս մեծի Հայրապետիս, Հայրաշրաւ նենգութեամբ՝ ի սուգ գերարտօսրալից թախծութեան նատոյց զորդիացեալն նմին զազգ Այրատոյ։

Այնուհետև՝ ի կատուցանել աչաց փեսաւիրին՝ ի լուսոյ արփւոյն՝ անկանէին սարդիոստայնք յառագաստ փեսային Քրիստոսի. լուէին օրհնութեանցն Աստուծոյ ձայնք. շիջանէին լապտերք նորա, որ վսեմն Ճեմ առնու՝ ի մէջ բոցաձաձանչ Ճրագարանաց. կողոպուտ՝ ի փառաց իւրոց խորանն սրբանուէր, և զանցեալ գնացեալ զգեղ վայելչութեան յուշ արկանէր անձկալից հառաչանօք։

Այլ մի՛ ինչ վհատիք, ո՛վ կաՃառ հայրենասիրաց, զի տեսչութիւնն աստուածային զԱՀեսրովպ սահմանեալ էր նորոյ տաՃարիս կրկին Օ՝ զրաբաբել. զնա սահմանեալ էր նորոգիչ խաթարելոյ և վատթարելոյ հանրին տանս աստա-

նազեան . և յայն սակս առաջնորդեաց նմա ընդ ամենայն պայմանս կենաց , զի աչօք իսկ իւրովք տեսցէ , և անձամբ առնուցու զփորձ տգիտութեանն մանկանց . անօգուտ քրտանց պաշտօնէից Աստուծոյ . անգիտական չարութեան զօրականին . անկիրթ քաղաքականութեան գործակալաց աղքուենեաց ։

Այլ զինչ ։ — Ի դրանէ հայրապետանոցին յափշտակեն աղքունիք զԱԵսրոպ . և դիւան չորից և հնգից թագաւորաց մերոց նովաւ բարգաւաճէր ։ Ընդ 'ի հպոյ տեսող լինէր դժուարաբոյժ աղետիցն , եթէ քան զկորով մարմնոյ ամրութիւն էն աղքունի գահոյից վարժք հանձարոյ . և իմաստութեանն աչալուրջ հսկողութիւն անենուաճելի ևս է քան զպատուար լանջաց սպառազէն բանակաց ։ Ամենայր և զհնարսն , և շտեմարանէր յընդարձակ գանձարան սրտին ։ Որպէս իմն սերմն ատոք ընդ խաւարային հողոմն ծածկի առ ժամանակ մի , զի 'ի դէպ ժամուն շռայլեսցէ մշակին զցանկացեալ տոհմականն ։

Անանդուն աշխոյժք և բարեհամբոյր բարք նոցին և փառաց զօրականին ոչ եղեն անբաժին . Իբրև զհայր սիրէին զնա , և իբրև առաջնորդ յաղթութեան բիւրաւորք ցանկային զնիզակն նոցա հովանի 'ի վերայ բանակաց իւրեանց ։

Սակայն այլ խորհուրդք սահմանեալ էին յերկնից 'ի վերայ Ասիոպայ ։ Ընհատանելի կամք Արարչին , որ յարքունեաց 'ի բանակ զօրա-

կանին, և 'ի խմբից դասուց ձգէին զնա յաղքու-
նիս, 'ի մեծ ևս ինչ և 'ի կարևորագոյն առաջ-
նորդէին նմին։

Սերմն աւետարանին արկեալ յերկիր Հայոց
և ուռոգեալ արեամբ նահատակաց, խառնեալը
տակաւ. և անօրէն օրէնք հեթանոսութեան
առ տակաւ տակաւ զօրանային ունէին զոլորտս
Հայաստանեայց։ Այլ էր արդեօք ակնկալութիւն
բարւոյ 'ի բազմայոյզ պատերազմաց պարսկա-
խումբ, յոյն և հայ բանակաց, որ հոսանս ընտա-
նի և օտար արեան գետահեղեղին ընդ Հայա-
ստան 'ի չարաժամ աւուրսն։

Այլ դու Տէր, դու՝ որ թուես զամենայն
հերս գլխոյ մերոյ, և ոչ անկանի և ոչ մի 'ի հե-
րաց մերոց առանց կամաց քոց, ո՞չ տեսանիցէ ա-
մենահայեաց ակն քո՝ զի ապականեն զայգի քո
խոզ անտառի և երէ վայրի։ Դու՝ որ զարգաւան-
դութիւն առեալ 'ի գանձուց քոց բաշխես մար-
գարտափայլ ցօղոյ առաւօտուն և խաղաղաւէտ
անձրևոյ երեկոյի ամարայնոյն, որպէս զի պըտ-
ղեսցի շուշան և փեսրովք զարդարեսցի երամն
օդաձեմ. դու՝ որ զբիւրաւոր հրեշտակս պաշտօ-
նեայս կարգեցեր անքննելի կամաց քոց, միթէ
անտե՞ս առնիցես զմարդ, զոր ըստ պատկերի
քում կերպարանեցեր. զերկիր, որ փոշի յա-
ղարշաղոծ ձեռին քում կենդանացար։

Այլ մի, ո՛վ ունկնդիրք։ Այ՛մբարձէք զաչս ձեր
յերկինս. որ զայս խաղաղեալ է Այ՛ստուած՝

ոչ 'ի դերև եկանեն ակնկալութիւնք նորա։ Ա'ի ինչ խռովեսջիք, եթէ տեսանիցէք զի Ա'եսրովպ և յարքունեաց 'ի բաց մեկուսանայցէ. յոր և եթէ կառուցեալ էր յայնժամ զակն վատթարեալ գահ արքունի։ Ա՛ւ զիարդ ոչ խուճապեսցէ արդարն 'ի միջոց անօրինաց և 'ի դարանակալ նոցին չարութենէ, որ առաքինութեանցն մանաւանդ, քան թէ կենաց նորին սպառնային։

Ա՛ւ արդարև յանկարծ ինն առ ոտն հարկանէ զամենայն պատիւ արքունեաց, և զպատուական կամար զինուորութեանն. արհամարհէ զփառս աշխարհի, և զմթերս արծաթոյ, փոշի փայլուն, և զիմէ։ . . Ա՛ւ յո՞ դիմեսցէ։ — Ա՛ստուածամ 'ի հայրապետանոցն 'ի կիրթ քրտնաջան վաստակոց։ Ա՛ստուածամ առ սեամն խմաստնոց օտար աշխարհաց 'ի յագուրդ անյագելի ցանկութենն խմաստից։

Ա.յլ նա առաւելագունի իմիք տենչիս վառեալ է. այլ նա դիմէ 'ի խորշս ուրեք լերանց զհրեշտակակրօն կարգաց բուռն հարեալ. անդ մերկացեալ յամենայն աշխարհայնոց, արկանէ զանձն յանդունդս, ո՛վ ընդարձակութենն, յանդունդս աստուածային տեսութեանց, որ ոչ ափամբք սահմանի, և ոչ խորութիւն նորա չափի։

Ա՛նդ 'ի սեր ապաշխարութեան համեմէր զիստաբուտ խոշոր կերակրիկն. անդ հանապազատարած ձեռք նորա յերկինս ամբարձեալ մաղթէին ինքուցանել 'ի վերուստ զառատաձիր սպար-

գեւս երկնից 'ի վերայ համայն հայաստանեայց։ Անդանօր բաղում անգամ մինչդեռ թագաւորէր գիշեր ընդ ամենայն, և բովանդակ տիեզերք թաղեալ կայրն 'ի քուն թանձրութեան, ձայն հառաչանացն Մեսրոպայ լուծանէր զաշխարհակալ լռութիւնն. և աչք նորա կրկին մշանջենաբուխ գետք ուռղանէին զյատակս քարանձաւին։ Անդի տրտմութիւն էր նմա և անպակաս ցաւք սրտի վասն եղբարց իւրոց և ազգականաց. որոց այլանդակութեանցն ինքնին իսկ լեալ էր տխուր ակամատես յամենայն բախտ աշխարհակարգ կենաց, ընդ որս առաջնորդեաց նմա տեսչութիւն աստուածային։ Այցոյց նմա զայն ամենայն. եդ զամենակարող ձեռնն 'ի վերայ ամենահանձար ձակատուն, և ասէր։ — Տեսեր. ահա աստպարէզ առաքինութեան քո. ընթա և մի վհատեսցիս. փոփոխեսցին իրացն կերպարանք։

Որպէս 'ի խաւարի ուրեք եթէ յանկարծ ընդ անձուկ ծերպ ինչ նշոյլ ճառագայթից արփւոյն ձայթռիցի, շլացուցանէ զաչս հայելեացն 'ի նա, այսպէս և արփիափայլ վարուցն Մեսրոպայ ընդ համայն աշխարհս ցոլացեալ նշոյլ, ոչ միայն զլսողսն ափշեցուցանէր, այլ և առեալ ձգէր բազմաժողով խումբս 'ի նորին նմանութիւն։ Եւ ահա գունդք ցանկացողաց աշակերտութեան նորա հատանեն անցանեն ընդ լերինս և ընդ դաշտս, և զմիայնարան առնեն Այ քաղաքացուցանեն։

Մերձենայր այնուհետև ժամն ցանկալի վե-

բաժնութեան մերոյ, զոր 'ի յաւիտենից սահմանեալ էին կամք Արարչին 'ի դպրութիս անհանջելի հրամանաց իւրոց։ Անզի որպէս 'ի բարեզուարձագոյն ժամանակ գարնայնոյ ծաղկի արև ընդ ալեօք, զի յառաւօտուն վարդագեղ պայծառութիւն վայելչագոյն ևս զուարթացուցէ զտիեզերս, այսպէս և Աստուծոյ 'ի խաւարեալ միայնանոցին ընդ հոյլս աշակերտացն դիմէ 'ի մերձաւոր գաւառն քարոզ բանին Աստուծոյ։

Աղողագոյնս նշմարեմ՝ ես 'ի նմա զօրինակ տիրագործ քարոզութեանն, որ մերթ առեալ զաշակերտն դիմէր մեկուսանայր յանապատուրեք, զի 'ի միայնական Ձգնութեանն մաքրեալ զնոսա 'ի թերութեանց աղցաւոր կենցաղոյս, և առատագեղ լցեալ շնորհօք՝ պատկանաւոր ևս գործի յարդարեացէ զնոսա բանին Աստուծոյ։ Այլ մերթ 'ի դէմն աշակերտացն՝ աշխարհախումբ ազգաց վարդապետէր զքրիստոսակարգ առաքինութեանցն հանդէս 'ի լայնածաւալ հրապարակի դաշտաց 'ի մէջ խռնելոց ժողովրդոց։ Այս 'ի Ցեառնէ իւրմէ վարդապետեալ՝ սահման անձին դնէր Աստուծոյ մինչև ցշունչն յետին։ Այս առաջին ուսկնդիր բանիս նորոյ վարդապետիս, դու ինքն եղեր, ո՛վ գաւառդ Գողթան, դարձուցեալ զվաստակաբեկ լսելիսդ յառասպելախօս երգեցկաց 'ի լուր աստուածախօս պատգամացն։

Ո՛չ նէր անխոնջելի մշակն յարդասաւորութիւն տեառնական դրախտին. այլ աւա՜ղ, նենգաւոր

էր երկիրն. և արբեալ ստէպ զբիրսն նորա ոչ արգասաւորէր և ոչ զերեմտաւորն. զի հոգեշունչ հրամանացն պատգամք տակաւին կնքեալ էին ոսկին։

Սէրն յուզէր 'ի միտս նորա խորհուրդս անլուրս։ Տեսանէր զանձին անբաւականութիւն, այլ ոչ վհատէր. և ցանկայր կատարել գործ, զոր ոչ եղծցէն արկածք աշխարհի. և ոչ լռեսցէն դարք համերք. և ոչ ձնշեսցէ դժուարաբեռն ծանրութիւն ժամանակին։ Այլ արդարև զոր սէր կանգնէ ոչ բնաւ եղծանի. անմահ է կենդանութիւն սիրոյն. անընկճելի զօրութիւն սիրոյն։ Ոռնութիւնք աշխարհակալաց, խռովութիւնք ժողովրդոց, հարուածք ամենց ոչ ժամանեն ինչ ստնանելնոմս։ Այս նորա փայլէ առաջի ազգաց. բոց նորա ջեռուցանէ զցուրտ ամենս զերեզմանաց. ձայն նորա հնչէ անդադար առաջի աթոռոյն Աստուծոյ։

Կործանին քաղաքք. քակին թագաւորութիւք. ասա Աեմիեայ խառն 'ի խուն շեղջակուտեալ բեկորք քանդակագործ վիմանց. անդ 'ի մոխրոց զառամելոյն Հռովմայ յառնէ նոր փիւնիկ. կիսականգուն սիւնք Հեղիոպոլեայ՝ յարթանակք տկարութեան մարդկան՝ յամենի առնեն զամբարտաւանութիւն մահացուաց. Կարքեդոն նախանձաւորն այն դշխոյին տիեզերաց, խլտի է աւաղակաց։ Այլ զոր կանգնէ սէր Անմահին, նկուն առնէ զհոլովումն դարուց, և 'ի միջոյ ա-

լեծուփ մերկաց ժամանակին գոռոզս ամբառնայ զգլուխ իւր. վասն զի մատն Աստուծոյ պատշտպանէ նմին։ Այս սէր ոչ կշռէ զզօրութիւն անձին. ոչ հայի՛ի վհատեցուցիչ տկարութենէ մարդկային. այլ ոյժ առնու յամենազօր յուսոյն, զոր խարսխեալ է յԱստուած։ Զուք լինջ երաշխաւոր երկոտասան բոկոտն ձկնորաք, որ՛ի բոց սիրոյն նորահրաշ ձուլեցիք զկռամոլ աշխարհ, եղեալ զայն տեսիլ արժանի աչաց հրեշտակաց և նորին իսկ Արարչին։

Յոյս և սէր իբրու կրկին թևք թռուցանեն զԱՀերովպ առ Աստուած. տեսանէ անդէն զի ժողովք եպիսկոպոսաց աշխարհին միաբանեալ են նովին հոգւով առ սրբոյ հայրապետին՛ի հնարս հայթայթանաց նորոգութենէ աշխարհիս։ Զուք մնաց նկարեալ էին՛ի պատկառելի Ճակատս ալևորացն։ Երկանայ նոցա Հերովպ զանակրնկալ խորհուրդն, որ յուզեր՛ի միտս իւր։ Ընդ խնդի սրտին գնային արտասուք ընդ խորշս այտից ծերունեացն. թևատարած օրհնութիւնք հոսէին՛ի գլուխ նորա։ Նա խրախուսեալ՛ի կրկնակի քաջալերութեանց յերկնայնոյն, զոր զգայր՛ի գործարան սրտին, և՛ի յորդեսէր բերանոյ հայրապետացն, արիաբար տայր զանձն՛ի կատարումն մեծի խորհրդոյն։

Այլ մերկայիր արդ, դու ո՛վ մեծդ, մերկայիր զգրգռեակ միայնանոցիդ. առ զքեզ զհանդերձն՝ զոր պատրաստեաց քեզ Տէր՛ի սկզբանէ

յաւիտեանց. արկ զանձամբ զպատմուճանն, զոր հիւսեցին քեզ ձեռք հրեշտակաց. ահա ժողով հայրապետացն կապեն 'ի գլուխ քո զխոյր քահանայութեան։

Պատանեաց յաչս իմ նկարի նա իբրև զերիվարն ահիպարանոց խորհրդական մատենից, որ յաչս դնէ զամենայն վտանգս։ Զ նորհք աստուածային աղուցին ընդՁաց նորա զօրութիւն գերմարդկային, որով անփայլ ճանապարհք փշալից շաւղաց դիւրագնալի պողոտայք հարթեցան ոտից նորա։ Օ գեղեալ զբահ ընդ պարանոցաւն՝ ոչ ընկճէին զարութիւն ոգւոյն վհատեցուցիչ խորհուրդք մարդկան։ Որոտայր աստուածաբեր պատգամաբն 'ի դաշտս, և դափր հատանէր անժուժկալ հողումն 'ի տես թափառելոց ժողովրդոց։ Այլ ընդ սրբակոբն զբազմածուփ փոշի աշխարհական մրրրկաց վտարանդի հողմոց մատնէր։ Արհամարհէր զնեռս հակառակորդաց և զսլաքս այպանողաց. և ոչ դառնայր յերկաթոյ բռնակալաց աշխարհի։ Զ ողաստին 'ի վերայ նորա աղեղն և սուսեր, և շարժիւն վահանի և նիզակի, նա սաստկութիւն բռնութեան սիրոյն նուաՁէ զամենայն։ Ի հեռաստանէ առնու զհոտ պատերազմի ոխորմանց իւրոց՝ ջարութեան և տգիտութեան. զամենայն վայր հեռաւոր և մերձաւոր տեսարան առնէ իւրոց առաքինութեանց. անդ ուր առաւել են անձկութիւնք և պէտք կարևորագունի ուժոյ, նա վա՛շ վա՛շ կարդայ, և անդր վազս առնու փուրն-

չելով. անձկացան սահմանք Հայոց ընթացից նորա։ Եւ որոյ առաւելագունի բարեաց չիցէ ակնկալութիւն 'ի գեղեցկայանդուզն իմաստալի երիվարէ աստի։

Բայլ բաբէ, Մեսրովպ զլերինս և զդաշտս հատեալ, ուղխից յորձանաց հրաման տուեալ, արտաքոյ հայրենի սահմանաց վտարանդի թափառի։ Որպէս անդ ուրեմն օրինատուր իսրայէլեան բանակացն թագչէր 'ի փայլակնացայտ և 'ի խաւարային գագաթն Որեբայ յաչաց յակոբեան զաւակին, այսպէս և նորս այս Մովսէս ուծացեալ 'ի հայրենեաց, զօձան բարեաց աղգին իւրոյ կրէր միշտ 'ի միտն. և զամենայն ձիգն երկարութեան ձանապարհաց և բոլորման անտուաղ ամոց թեթև համարէր։

Հայէր խոնարհ աչօք յանձն և տեսանէր տրկարութիւն յինքեան. և 'ի զօրաւորագունից ձեռն օգնականութեան խնդրէր։ Ցուսալեցան քաղաքք այցելութեանց նորա, կարձեցան երկարութինք ձանապարհաց անվաստակ ընթացից նորա. այլ նա ամենայն ուրեք ձեռնթափ 'ի մարդկանէ. ոչ ոք ոչ ուրեք հատու բարձրութենէ խորհրդոց նորա։ Սակայն ոչ վհատէր ոգին վեհագին. և որ յայլոցն յուսայր գտանել, զնա ինքն պատրաստեալ էր Աստուած գտակ և մատակարար անհատանելի գանձուցն երկնաւորաց։

Եւ ահա յուսահատ 'ի մարդկային ձեռնտուութենէ, այլ ոչ 'ի կարող ձեռանէ Արարիչ

լոյն։ Այլ յետ կատարելոյ զոր իւրն էր ըստ կարգաց աստուածատուր խոհեմութեանն, այնուհետև առ նա ինքն Արարատեանն ապաստան առնէր 'ի գիշերաջան աղօթսն զցանկալին իւր. և վերջ քան զառաջինն՝ երկրորդս Մովսէս զքարինս աստուածախօս տախտակին 'ի հրեշտակային ձեռաց գտանէր յարդարեալ։

Նման Աստուած, այսպէս ուրեմն սիրելի էն քեզ յարկք որդւոցն Հայկայ քան զյակոբեան զաւակին։ Յափշտակեալ 'ի նոցանէ զերկնապարգև շնորհդ, հրաշափառապէս ժառանգեցուցեր օտարացելոցս մեզ։ Այլ ապա, ո՛վ ոգի անզուգական, էջ անկապտելի աստուածաշնորհ աւարաւդ, էջ առ ժողովուրդ քո, որ ոչ միայն իբրև զառաջինն ոչ անկուշեաց զառաջնորդ իւր, այլ մանաւանդ հայրապետն, վաստակակիցն քո Սահակ, ուխտիւ եկեղեցւոյն, և թագաւորն, արդարև հայր ժողովրդոց իւրոց, ընդ նախարարացունդ աւագանւոյն զան քեզ ընդ առաջ բազում օթևանօք արտաքոյ քաղաքին։

Ո՛հ, արդարև գեղեցիկ են ոտք աւետարանչիդ համբաւոյն խաղաղութեան. և դէմք միոյ միոյ համաշխարհիկ որերոյն զնոյն ահա բազմապատիկ հաստատեն. և կայթք ուրախութեան ծագաց 'ի ծագս հայ խօսից։

Երանի՛ քեզ Հայոց աշխարհ, երանի՛ որում հետ ընդ հետ ծագէն նորագործ արեգակունք։ Այն օր ոչ ստորև ինչ է քան զամենայն աւուրս

փառաց քոց. այն դէպ շքեղազարդ յօրինեալ զկնքս պատմութեան քո։ Լոյծ թէ յաձախեցին վէպք այսպիսիք, և ոչ բերկրալից ձայնիս յաջորդեցին արտասուալից հառաչանք։

Ոչ ինձ հարկ յուշ արկանել երագատես ակրմ. բիս, զի չև լուեալ՝ի միտ էառ եթէ պատճառք ուրախութեան հանուրց գիւտքն էին նշանագրաց մերոց։ Յետուհետև բացան զանձք արքունեաց՝ի ծախս անթիւ վարժարանաց. և Ռոմ. շապուհ նոր ժողովրդոց յանկարծ գտեալ թագաւոր հայենասիրութեանն աշխարհակալութիւն՝ նորօրինակ հանդէս առնէր հայ առատամտութեան։ Ա աղաղշապատ՝ ոչ ևս երկրորդ համբաւատենչն Ալեքսանդրիոյ, և նախանձաւոր եղեալ գոռոզ մայրաքաղաքին Յթենացւոց, առաւել քան զուամիկն իմաստասիրաց ծածանէին՝ի շաւիղս պողոտայից նորա հոյլք։ Ուշեղ մանկունք վարդապետացեալք՝ի ձեռն քաջի վարդապետիս, ծովացուցին զերկիրս Հայոց գիտութիւն Ցեառն։

Սէր ոչ յաչալէ, սէր ձարտար է՝ի հնարս հայթայթանաց. և ահա գիւթական ինն զօրութեամբ իւրով յարոյց սէր յեղակարծում յամենայն գաւառս մեր վարժոցս անհամարս։ Հապա, մանկտի բարեմոյն, գիմեցէք յանբոյթ փարախս անդր, զոր սիրաբորբոք հովիւն բանայ առաջի ձեր։ Ո՛վ տգէտք աստուածային ձանապարհացն, ընթացարուք՝ի վարժարանն Եւրոպայ, զոր փոխանակ դրանց երկնից բանայ առաջի ձեր։

Լ՝ անձկանային վարժարանք առ հաւասարութիւն ցանկացողաց աշակերտութեան նորին։

Խորատես ծերունին սուր դիտեաց զդարանս բանասարկուին, և նորագործ Ճարտարմտութիւնն շքեղաշարդեաց զերկինս՝ աւար Ճոխ յափշտակեալ 'ի ժանեաց սանդարապետին։ Օ՛ի զոր կանգնեացն Մեսրոպ ոչ այնչափ վարժարանք էին դպրութեանց, որչափ հանդիսարանք աստուածազգեցիկ առաքինութեանց։ Ընդ դիւաց յամօթ լինէին նենգութիւնք. անդ հոգւոցն ախտից բուժէին հիւանդութիւնք. անդ իմաստազիրկ տգիտութիւնք բանային աչք 'ի լոյս տիրապարգև. անդ կաղացեալոցն 'ի Ճանապարհի Ցեառն ուղղէին շաւիղք. անդ դիւապատիր երկչոտացն զօրանային գարշապարք յերկնահանդէս ասպարիզին։ Լ՝ զի մի մի թուիցեմ. այսպէս ահա այցելութիւն երկնաւոր անծանօթ Ճանապարհաւ առաջնորդեաց սիրելւոյն իւրոյ բղխել մեզ անակընկալ և մշանջենահոս աղբիւրս բարեաց։ Օ՛ի թէ ոչ սխալեմ, Մեսրոպայ շնորհք են՝ եթէ ցայսօր ոչ խոնարհեցաւ ընդ լծով օրինաց դիւապատիր արաբացւոյն ազատ գլուխն Մասեաց։ Ո՛հ, քո, հայր, քո տուրք են և այս, զի այսօր խմովք փանաքի բայիւք ժողովս այս պատկառելի քոյոցդ ունկնդիր լինի առաքինութեանց։

Ասան այնուհետև լերինք և դաշտք զհետս ընթացին Մեսրոպայ. չափեաց քայլիւքն զընդարձակ սահմանս Հայաստանեայց, և ոչ ճնայ

խորշագոյն տեղի ամայի, անայցելու 'ի նմանէ։ Ոչիմէր յանդարման տեղիս Ողղթան, և 'ի սատանայական գերութենէն 'ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր զգաւառն։ Ընդուստ 'ի բնագաւառ իւր սլանայր 'ի Տարօն. և անդ վանականօք զաշխարհն լնոյր։ Ընչաւէր 'ի կողմանս Պարսից և զխեցբեկագոյն և զխափարաձայն լեզու աշխարհին պարզախօսս հռետորաբանս կրթեալ՝ աստուածատուր իմաստութեանն ծնունդս կացուցանէր։ Ի Տաշիրս զխիստ պարանոց գաւառին ընդ փոքրոգի լծոյ աւետարանին հլուացուցանէ։ Պարզմանացիք իւրեանց տերամբն ինքնամատոյց աշակերտին կենսապարգև վարդապետութեանն։ Ընդուստ վարդէ ընդ ափափայս սիւնական աշխարհին, և զգազանամիտ և զձիւաղաբարոյ մարդիկ զգօնացուցանէ այնպէս, զի և 'ի վայրենեաց անտի տեսուչս կարգէ բարեհամբոյրս և աստուածիմաստս. և ջահն իմաստութեան երկայն ժամանակօք անշիջանելի պահեցաւ 'ի բարեբաստիկ գաւառին։

Այլ ոչ գմբէթք և եթէ եկեղեցեաց տային արձագանգս վարդապետութեան նորա, կամ միայն որմք վարժոցաց հնչէին 'ի բանից նորա, այլ և 'ի վերայ ձոնչաձայն ծխնեաց փեռեկէին դրունք բանդից առաջի Եսրոպայ։ Այլ զամենայն նըւազս այցելութեանն 'ի տխրագին վայրս անդր կողոպուտ շքեղ ածէր արտաքս ընդ ինքեան՝ զապաշաւանս զգաստացելոց որդւոց, զգրաւական բարգաւաճանաց աղգին։

Յասպաւէն թշուառութեաց ախտացելոյն մար-
մնով մերձենայր Ճարտար բժիշկն հոգւոց, և
զբերանն երկնաչու Ճանապարհի նոցա կաղ-
մեալ սանդուխս՝ զերկրածիւնն դասակիցս խմբէր
զուարթնոց։

Զեռք նորա սրբեցին զաղի արտասուս բիւրա-
ւորաց որբոց և այրեաց՝ պատառեցին զմուրհակս
անիրաւութեանց. ուղղիչք եղեն մոլորելոց, կան-
գնիչք անկելոց, և առաջնորդք կարգաց աստուած-
պաշտութեան։ Լաւ ուր ոչ ժամաներ անձամբ,
անդ շնորհագիր Ճառիւքն և զգայուցիչ թղթով-
քն եռանդն հոգևոր բորբոքեր առ ամենեսեան.
ամենայն ուրեք ածէր զխաղաղաւէտ անուն Յի-
սուսի, զոր յանձին կրէր։

Աւյլ առաքինութեան և սիրոյն Աստուծոյ
անձուկ էին սահմանք Հայոց. բացան առաջի
նորա և հիւսիսականացն կողմանք իբերացւոց և
Աղուանից. զորս և քան թէ դպրութեանց,
աստուածախօս պատգամացն յարդարէր աշա-
կերտս։ Աւյպէս զՀայս, զԱիրս, զԱղուանս,
զԱրաս և որ ինչ միանգամ բարբարոսական ծը-
նունդք, միով աստուածաբարբառ պատգամաբն
մի ազգ կապէր, և փառաբանիչս միոյ Աստուծոյ
յօրինէր։ "Այրկիր որ Համբաւոյն անգամ օտար
էր աստուածագործ սքանչելեաց, վաղվաղակի
ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր. քանզի
անկարծ ուրեմն օրհնաւսոյց Աղվանս մարգա-
ելական դասուն, և յառաջադէմն Պաւղոս բո-

վանդակ առաքելական գնդոնին , հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Պրիստոսի հայաբարբառք հայերէնախօսք գտան ,, ։

Լծուի ինձ նկատել աստանօր զԼեսրոպ ըստ վսեմ նկարագրի սրբոց մատենիցն կացեալ յեզերս սահմանաց երկրի , և կարկառեալ զբազուկսն ընդդէմ ամենի աշխարհաց խուժադուժ և այսակիր սովորութեանց , և ասիցէ ։ — Հաստատիկ սահման քո . մի՛ անցցեն ընդ այդ աղիք քո . այսր և այսր սրբութեան և խաղաղութեան թագաւորութիւն ։

Այլ բա՛ր , յորոյ առաջի հարթէին առապարք , որ գնալի ոտից իւրոց յարդարէր զբարկասաստ խոխոջանս գետոց , որ ընդ պարիսպս և ընդ բերդս դժուարամատոյցս թափ անցանէր , և օտար աշխարհաց աստուածապարգև այցելութեն լինէր աւետաբեր , յիւրոց որդւոցն անիրաւ նախանձ և չարաժամ կասկածանք ուծացուցանէին զնա ։

Պանդի մարդադաւ քաղաքավարութիւն , որ զամենայն ինչ սրբանուէր երկրորդ համարի խորամանկ խորհրդոց իւրոց , յերկուս պատառեալ էր զբաժին սահմանաց մերոց ։ Կորիցէ օրն այն , յորում շնչեաց տարտարոս զայս խորհուրդ ինաստակար հայրենեաց մերոց 'ի խորհրդարան արքունեացն բիւզանդիոյ . յայնմ աւուր խախտեցան ամենայն բարեկարգութիւնք մեր , և յօրէ անտի ըսելի եղեն հառաչանք ողոյն պահապանի մերոյ աշխարհիս ։

Այլ որ ձգտեցաւն ծագաց 'ի ծագս աշխարհի, յաղթական եղև բազմահանձար հնարագիտութեամբն և յայսմ հանդիսի։ Այս ընդ որ աղբատութիւն բանակք անձնագեղն Պարսից ոչ իշխէին անցանել անպատուհաս, սա անզօր անպատապար անցեալ ընդ դժուարամուտ պահսն, զյաղթողական ընթացս իւր ուղղէր մինչև 'ի սէգն Խուզանդիոն, ուր նախ քան զնա կանխեալ էր համբաւ առաքինութեանց նորա։ Այս անդանօր անակնկալ ինն փառաւորէր զնա Տէր յաշաղկոտ ձեռօք նախանձորդաց նորին, մինչև դարձ առնէր միւսանգամ 'ի խումբ զաւակացն, և կաթամբ վարդապետութեանն աձեցուցանէր զնոսա 'ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի։

Այս իմ իմիք յետ այսորիկ ակն ունիցի լսել ժողովս պատկառելի։ Այլ՝ որ աւետարանական երկամբն հայր եղև ազգաց. որ 'ի վարժարանս իմաստութեան իւրոյ աշակերտս զարգացոյց այնպիսիս, որ ոչ զայն եւթ դար նախանձելի յօրինեցին ազգաց, այլ և ցայժմ պարծանք են դպրութեանց մերոց և զարդ եկեղեցեաց. որ ծովացոյց զաշխարհս բարեկարգ հանդիսիւք, և ծաղկեցոյց զհամօրէն գաւառս մեր և զօտարաց յանձախութեամբ հրեշտակակրօն օրհնելոյ Աստուծոյ. որ զառաջին շքեղ պայծառութիւն եկեղեցեաց դարձոյց վերստին 'ի նոսա. որ հայր եղև արքունեաց և դպրեակ ժողովրդոց։

Աշուշտ զմնաւ ածիցէք, եթէ այնուհետև

արժանապէս 'ի պտղոյ այգւոյն վայելեսցէ մշակն քրտնաջան. և փառք, որ անմեկին ստուեր էն առաքինութեանէ, շքեղազարդեալ իցէն զնա պատուոյ ինչ անուամբ և կամ հայրապետական խորհրդոյն։ Այլ խաբիք, քանզի նա որում պատուոյ անուն այն էր՝ կոչել հայր աշխարհին, իբրև էտես զերկիրս լցեալ ցօղո

ին ամենայն բարեբաւութեանց, զոր անկեալ ինքնին, և բարգաւաճեցին ուղղեալ 'ի բազմաբեղուն քրտանց նորա, և 'ի ջերմութենէ սիրոյն կենդանացեալ։

Եւ ոչ եթէ պարտասեալ ինչ 'ի բազմավաստակ աշխատութեանցն և կամ տաղտկացեալ 'ի դժուարաբեռն սպասաւորութենէն խնդրէր անդորր։ Քանզի գործք վկայք են հաւատարիմ ծածուկ մտացն խորհրդոց. զի ուր պէտք ինչ եկեղեցեաց կոչէին զնա, դիմէր անձանձիր ծերունին, և կարդէր զամենայն, և յորդառատ վարդապետութեամբն զպատուք ժողովրդեանն բուժէր։ Հովիւ զուարթուն՝ եթէ յանկարծ մերձ առ սահմանս տեառնաւանդ հօտին նշմարէր հետս ապականարար գայլոյ, ահեղաձայն ձայնիւն 'ի բարձանց անտի հեռի 'ի փարախէն հալածա կան տանէր զնենգաւորն։

Բայլ չգիտեմ ոպէս ընթացք բանիս ածին ձգեցին զմեզ յայս վայր խօսիցս, զոր ոչ արդեօք կամէի յուշարկանել հայրենասէր ակմբիս։ Քանզի զայնու ժամու հասանէր առ Պետրոպ գուժ կան աղետալից մահազեկոյց ժամուն, որ սպառնայր որբս թողուլ զորդիս Թորգոմայ 'ի գորովալիր հօրէն իւրեանց։ Յայնժամ Պետրոպ արտասուք յաչսն՝ թողոյր լքանէր զցանկալին իւր միայնանոց, և սրացեալ ժամանէր առ վաստակակից իւր, առ տեսանող հոգւոյն ակամբ ամենայն աղետից մերոց, ժողովէլ զյետին տուր և

առ Հնչոյ նոցա , կախուցանել զսրբասէր աչսն մեերիմ ձեռօքն ։

Եւ այնուհետեւ ոչ ժուժկալէր սիրտն Հայրենի ընդդէմ զառնալ պաղատախառն Հառաչանաց որբացելոց զաւակացն . յանձն առնոյր առ ժամանակ մի ունել զգաՀն այրիացեալ, և զորբութեանն աղէտից Հայրական խնամՀքն ոչ թոյլ տայր առնուլ զչափ ։

Բայլ առաջ սակաւ ժամանակեայ մխիթարութեանն . ոչ ինչ ընդՀատ խիստ Հարուածք պատրաստէին նոցա ։ Բռաբինին քան զամենոցն առաքինացեալ իւրոց ժամանակին , ցանկայր այնուհետեւ սակին արդարութիւն . բոլորիւր զիւրև զՀոյլս զաւակացն , պսակ շքեղազարդ . և Հարտարախօս արտասուօքն օրէնս գնէր նոցա զիւր վարսն, և յանձն առնէր խնամոց նոցա զվաստակս իւր ։

Այլ ապա , էլ յերկնաչու կառս քո եթէ այդչափ տաղտկալի իցէ քեզ այսուհետեւ յարկ մահկանացու ։ Օ՜ուարթունք երկնից ոչ ևս ժոյժ ունին մնալ անբաժին 'ի քոյին երգակցութիւնդ ։ Բստեղք նախանձեալ ընդ երկիր , յորում դու պանդխտացեալ կաս , լքանեն զկապուտակ կամարն բարձրածիր , և մինչև առ քեզ իջանեն 'ի խնամարՀ ։ Լայն լուսոյ՝ կարապետ գալստեան արքային , ահա ցոլանայ 'ի վերայ գլխոյ քո . սիւն լուսոյն Հրաւէր գայ և առաջնորդ յերկիրն աւետեաց սիրեցելոյ զաւակիդ ։ Բ՜այսպէս 'ի չու յաղ-

թական Էլանէ հայրս մեր բազմել յայն աթոռ, զոր կազմեցին առաքինաջան վաստակք նորա։

Ինձ առէլորդ է յիշեցուցանել ձեզ զհոգւոյ հանուն թիւնս, զհառաչալից արտասուս հայրասէր զաւակացն. զի ձայնք աղիողորմ ողբոց նոցա մինչև ցայսօր արձագանգս արձակեն 'ի սիրտս մեր։ Ցեռանէին զառաջեաւ զսրբասուն մարմինն, և տեսին հրեշտակային երկնապարգև նշուլիւքն շքեղացեալ. այլ առ ցանկալին իւր Քրիստոս, հանապազատարած ձեռք յերկինս կարկառեալ, այլ բերանն աղխեալ 'ի քաջալեր խրախուսանաց. այլ լեզուն անշարժ 'ի բարւոյն յորդորանս. լաւական և բարեխորհուրդ բանք լռեալ անենորոգելի։

Քրդար են ցաւքդ, անզուգական վարդապետի սիրասատար աշակերտք. այլ 'ի վեր դարձուցէք միանգամ, դարձուցէք յերկինս զաչս ձեր, և քաջալերեցարուք։ Ընդ առ աղբերն բարեաց նրատեալ միթէ ապաքնտ առնիցէ զձեզ։ Որ ընդ աղցեօք գերեալ, և այնպէս յանձանձէր, այժմ յախտաւորացս մերկացեալ միթէ անտէս առնիցէ զձեզ։

Ա՛յս ձեզ յանձնեաց պահել անշէջ զհուրն սրբանուէր, զոր ինքնին բորբոքեաց ընդ ոլորտս հայաստանեայց։ Ա՛նպա, գործակից լերուք քրիստանց նորա։ Ետս լուսաւոր եթող ձեր առաջի, ընթացարուք ընդ այն, և տաճար անանցական փառաց միցանակ լիցի Ճանապարհիդ ձերոյ։

Զրդալև ընթացան նոքա ընդ հետս հարց իւրեանց, հայրական առաքինութեանցն արժանաւոր ժառանգորդք. և յելն իւրեանց մեզ յանձն արարին զայն հուր անշիջանելի սրբանուէր առաքինութեանց։ Զրկածք աւաղելի քանդեցին յաշխարհիս մերում զտաճարս երկնային շողոցս, այլ դանդաղամած պահեալ կայր 'ի սիրտ Խիթարայ, մինչև նշոյլք երկնաւոր Հառագայթեալ միւսանգամ 'ի վերայ՝ արծարծեցան բոցքն սրբազան։ Սակ այժմ դուք ինքնին, ո՛ պատկառելի ակումբ, դուք ինքնին սպասաւորք էք և պահապանք լուսոյն իմաստութեան։

Հնապա, վարժապետք առաքինիք, ժրացարուք յայսնուիրական պաշտօնս նախանձելի. ժրացարուք, ահա հոյլք մանկտւոյ, ակնկալութիւն հայրենեաց մերոց կախեալ կան զշրթանց ձերոց։

Գիտեմ զի դժուարաբիրան է սպասաւորութիւնդ. գիտեմ զի ծանր են վաստակքդ. այլ դարձուցէք միանգամ զաչս 'ի մրցանակն, որ մնայ ձեզ։ Զէք զմտաւ՝ զի ձեօք միւսանգամ զգեղ իւր առնուցու զանձամբ այրիացեալն Հայաստան։ Յուշ լիցին ձեզ՝ եթէ զործ ձեր զործ է արանց զիւցազնականաց։ Սուր աչօք գիտեցէք անդր քան զհոծութիւն խաւարային դարուց, և տեսանէք զի այնու անցանիցէք 'ի կարգս Սահակեանց և Մեսրոպեանց և նոցին աշակերտելոց։

Այս են տիպք կերպարանաց զաւակացն Խիթարայ. ո՛հ մի՛ օտարախորթ եղիցուք որդիք։

Լոյսք մեծախոհք իբրև զհարս մեր, և այնու խոյտասցին ցուրտ ոսկերքք նոցա 'ի տուէրամնած տապանեն։ Զոմ յանկարծ անցեալ Մեսրոպ հառաչանօք ընդ ամենայն աւէրակս Հայրենեաց մերոց, այսր ապաւինեսցի, ակնահաճոյ տեսիլ ժողովոյս ժպիտ զուարթութեան ծաւալեսցէ 'ի բազմամեայ խորշոմն Ճակատուն։ Լրթէ օրինակ հարց այսպիսեաց ոչ խրախուսեսցեն զմեզ, ա՛հ, լուռ է ապա առաքինութիւն 'ի սիրտս մեր, և ոչ հայրենասէր տրտմութիւնք բաբախեն ընդ լանջիւք մերովք։

Ա՛յս խնամատք ահա և զիս զյեռինս 'ի թիւս որդւոց քոց, ո՛վ Հայր զահագլուխ պատկառելի ակմբիս, այս խնամատք խրախուսեցին և զիս զոյս ամն երիս 'ի հանդիսի ասպարիզիս։ Զիտեմ զի արդիւնք արգասեացն նուազ են յոյժ քան զիրգս իմ, և քան զակնկալութիւնս զաւակասէր ծնողիդ. այլ ինքն առատաձիր օրհնութիւն քո յիմ վերայ և 'ի վերայ իմոց անխոնջելի գործակցաց, ինքն և 'ի վերայ մանկտւոյս, և այնուհետև հաւիւրաւոր արդիւնս ժողովեսցես 'ի շտեմարանս քո։

1839

ԵՆԹՐՈՊ,

Ի

ՄԵԾԱԳՈՒՅՆ ԱՐԴԱՐԱՀԱՅՐ

Արար ինձ մեծամեծս հզօրն *։

Յառեալ միանգամ զաչս մտացն 'ի Ճանապարհս աստուածային տեսչութեան, այլ ընդ այլոց և օտար ամենևին գտանիցեմք զայն 'ի Ճանապարհաց մարդկան։ Ի գործ ինչ մեծ ընտրել զաղնուական ծնունդ, զօրութիւն ուժոյ և բանի, շքեղութիւն 'ի խստղել զաչս, համառօտ ասել օՃանս պատշաՃաւորս 'ի կատարումն առաջադրութեանն, այս ամենայն ոչ են արտաքոյ հասողութեան մտաց մարդկան, մանաւանդ կանոնք են անհրաժեշտ բազմատիրոՃ խոհեմութեանն աշխարհիս։

Այլ զոչինչսն ընտրել, և նոքօք յամօթ առնել զէսն, զԱնիել մանուկ սակաւօրեայ դատաւոր դատողացն Իսրայէլի ծերունեաց հաստատել, զՀողիաթ խաղալիկ տալ մանկան տղայոյ, տալ զօրութիւն բազկացն Յայելայ ընդդէմ

* Գկ ա. 49։

զօրավարի հաղարատորացն քանանացւոց, զՀո-
ղեփեռն առ ոտս կնոջ Թաւալել, այսոքիկ Աս-
տուծոյք են, և արտաքոյ արդարև չափաւոր հա-
սողութեան մնաց մերոց։

Այս ահա Հիգրտիւ յուցցէ մեզ և հանդէս
կենայն Մխիթարայ, զոր ետ Տէր Հրէից 'ի
գայթակղութիւն և Հեթանոսաց յիմարութի-
սակայն յաչս երկաքանչիւրոցն իսկ Աստուծոյ
զօրութիւն։ Օ՜ի արար ինձ մեծամեծս Հզօրն։

Լսկեղեցին Հայոց՝ որ 'ի սկզբան ոռոգեալ ա-
տոր քրտամբք առաքելոց և առաքելանման հարց
Գրիգորեանց, Ներսիսեանց և Սահակեանց՝
ծաղկեր իբրև զդրախտ Աստուծոյ. և 'ի հոտ
անուշութեան նորա յարևելից և յարևմտից
անուշանային ազգք։ Լա մինչդեռ Հերանիսա՝
մեծն այն՝ այլ յայլմէ եղեալ ընդ տխեղծ կեր-
պարանս եկեղեցւոյն աղէկեղ հառաչէր, յայնմ
ժամու անթառամ ծաղիկք փթթէին 'ի դրախ-
տին, զոր տնկեաց Աստուած Լդեմ ընդ ա-
րևելս։

Ամլ բաբէ, անցին գնացին աւուրքն այն երա-
նութեանց, 'ի դարս մոռացութեանց ընկղմե-
ցան. և 'ի յետին և 'ի մերձաւոր մեզ ժամա-
նակս, աւաղ, ղի մատնեալ այն աստուածատունկ
պարտէզ 'ի ձեռս ապականարար մշակաց, խա-
թարեալ էր չար ևս քան զանապատ ամայի։ Լա-
չէր իսկ Լրուսաղէմ առաւել ողբոց արժանաւոր
քան զեկեղեցին Հայոց յայնժամ։

Կանոնք և օրէնք՝ ամուր պատնէշք եկեղեցւոյ ընդդէմ ապականարար անկարգութեան, կործանեալ կային. պղծեալ նուէրք և պատարագք 'ի զոշաբաղութենէ պաշտօնէից և 'ի ճոտի պաշտամանց ժողովրդեան. բեմք լռեալ 'ի վարդապետութենէ ուղղութեանց։ Ամենայն ինչ վեր 'ի վայր, ամ բարեկարգութիւնք զեղծք, և օր ըստ օրէ 'ի չարագոյնն միտագոյն։ Զ երկրին ապականեալ, շինչեալ ձրագունք Յակոբայ. 'ի տիղմն հրապարակաց թաւալէին, ողորմ տեսիլ, քարինք տաճարին Աստուծոյ։ Այլ եթէ ոչ ամենազօր բազուկ Խարձրելոյն թումբ հակառակ դնէր ապականարար այսոցիկ հեղեղաց, արդ Ազիլնն և Վերջին շարժէր զաշտանակն քո, ով եկեղեցի Հայոց, և յաւուրս յայսմիկ և ոչ հեռք քրտանցն Գրիգորի նշմարէին յերկրի։

Այլ կանգնեաց Աստուած արդարև, կանգնեաց ամբարտակ հզօր ընդդէմ ամենայն ապականարար հեղեղացս. կանգնեաց, այլ արտաքոյ ամենայն ակնկալութեան մարդկան։ Կուսանք միայն երկու՝ անծանօթք 'ի մարդկանէ, նոքա միայն խորհրդազգածք խորոցն Աստուծոյ։ Ցեսանեն նոքա զՄխիթար այսմ ամենայնի նորոգիչ. նոր Օրաբաբէլ դիւրիչ երկնաչու Ճանապարհին վերին Երուսաղէմի, և կանգնող զկործանեալ յարկան Սիոնի։ Յիրաւի ապա վարդապետեալ 'ի Կուսէն, զոչէ Մխիթար որդեգիր նորին Աբար ընդ իս մեծամեծս Հզօրն։

Այլ զի սակաւ ինչ իրազգած լեցուք խորհրդոց կամաց Բարձրելոյն 'ի մեծամեծսն, զոր արար ընդ Մխիթար, նեբրեցէք, ով Հարք, և յանձն առէք յառել ընդ իս զրաւոյն եւ քան զիմն զաւլ մնաց ձերոց։ Յառել նախ 'ի մեծամեծս վշտացն, յորս կամեցաւ Տէր ընտիր կացուցանել զսիրելի ծառայն իւր, և պատկանաւոր նոքաք 'ի կամն խորհրդոց իւրոց։ Այլ ապա 'ի մեծամեծս փառացն, յոր բարձրացոյց զնա Տէր 'ի վեր քան զհատուածութիւն մարդկային մնաց։ Օ զի արար ինձ մեծամեծս Հզօրն։ Օ մեծամեծս վշտացն, զոր յանձն առ Մխիթար վասն առաւելութեան սիրոյն իւրոյ առ Աստուած, և առ եղբարսն ըստ մարմնոյ։ Այլ զմեծամեծ փառսն, զոր Աստուած պատրաստեաց նմա յերկրի և յերկինս, վասն առաւելութեան սիրոյ իւրոյ առ հաւատարիմ ծառայն իւր։ Օ փառաւորիչս իմ փառաւորեցից։

Այս առաջարկութիւն բանի ծանր է արդարև, ծանր յոյժ քան զտկարութիւնս իմ։ Այլ զի զհօրն առաքինութիւնս առաջի սիրասպասար որդւոյն կայ ինձ մերկանալ, զայն բարեբախտութիւն մեծ հանդիսանձին, զի և չէ ընդդէմ բանիս մտեալ, տեսանեմ ահա զայր այր՝ զի փութան յառաջ քան զիս։ և իբրու ամենայն բանիս նախածանօթ՝ բարձրացուցանեն զոլութիւնն զիսն Մխիթար, զիմ հայրն դրաւատուն։

Ա՛հ ահա և անսովոր կացուրդ տեսիս զդայն

ինձ զոչշակէ. ոչ և զանցեալկուանալն հաւատոյս սիրոյ ձերոյ, ոմ Հալբը, և 'ի վէմն կենդանատիպ զրոշմեալ* նկատեմ յանդիմանն, յորում ընդ Ճշգրիտ վեմամիտ պատկերի հօրն ձերոյ, որդւոյդ փայլէ հայրասէր առաքինութիւն։ Իբրու զի ոչ այլով օրինակաւ կարացեալ ձեր արտայայտել զՄանդէս սիրոյն, զՆարտարութիւն հնաշխարհիկ զարուեստաւորին ստատր 'ի ձեռին առէք զսիրոյ ձերոյ և զերախտագիտութեան հաւատոյս անջընջելի ուսուցանել ապառնի ժամանակաց։

Սակայն դու, արուեստաւորդ Ճարտարագործ, զինչ կարծիցես առ իւրաքանչիւր հարուած քանդակող զրչիդ Ճշգրտել։ — Ոչ, ոչ զպատկեր Մխիթարայ, ոչ։ զի Ճշգրիտ պատկեր Մխիթարայ սոքա են. սոքա որդիքս նորա, որ զանձինս 'ի նորայն պատշաՃեցուցեալ տիպ ազնուական խորհրդովք՝ յաղթականք ամենայն խափանարարաց, 'ի մի կէտ դիտաւորութեան զանձինս ուղղեն. դիտաւորութիւն վեհ՝ սոցին և հօր նոցին արժանաւոր. վառեալք նովին խորհրդովք, որով հոգի նոցա նահատակեցաւ յերկրի. երկրորդ զանձն համարեալ առ սիրոյն Աստուծոյ։ Օ՜ինչ ապա քանդակեսցես դու մնադրութեամբ արուեստիդ։ — Ոչ ինչ այլ բայց հանել 'ի տես աչաց զանխիթարական սեր որդւոցն 'ի պատկեր

* Յաւուրսն յայնոսիկ կանգնեցաւ 'ի համբարանոցի մատենից Վանայ սրբոյն Ղազարու վիմաւոր գեղապաշաՃ պատկեր Մխիթարայ։

անդր հօրն։ Անաւանդ թէ ես և ոչ իսկ անչատել կարեմ զերկոսին զդոսա 'ի միմեանց։

Այսպա ներեցէք յանդգնութեան խնդրեմ, ով Հարք, եթէ 'ի ստորև ճնասցեն բանք իմ, քան զառաւելութիւն սիրոյ ձերոյ. զոնեայ զտայց արժանաւորի երիք փափաքող. և երկայնամիտ լսողութեամբ արգահատել աղաչեմ եռանդան հայրագորով սրտիս։

Այլ դու, հայր, դա՞ որ լսես 'ի բարձանց երկնից զթոթովել հայրասէր շրթանց որդւոյ քո 'ի քոյին ներբող, դու կաց ինձ առընթեր, և թելադրեա բանս պատշաճաւորս 'ի շրթունս իմ, զի մի անարժանութեամբ բանիս, նկնաձև երևեցուցից զգերաստիճան բարձրութիւն առաքինութեանց քոց։

Օ՜ն՜ զ ինչ է յաշխարհի, որով մեծ համարի ոք յաչս մարդկան, և որով մեծամեծ գործոց յիշատակարանս թողուն յետնոց։ Անշուշտ. ծընունդ ազնուական. ազգաբանութիւն անուամբք գիւցազանց ճոխ. ընչից և պատուոյ յաճախութիւն։ Ինդ այս ոչ ոք յերկուանայ։ Բայց զառաքինութիւն Մխիթարայ բան ճառեալ, չէն ինձ պէտք զնախահայրցն նորա, կամ զայնպիսի գանձուց և զբարեմասնութեանց ճառել ձեզ որ արտաքոյ է սրտի նորա։ Առաքինութիւնք արդարոց գանձք են նոցա, ամրապահեալք 'ի ներքս 'ի խորս սրտից նոցա անտես յերկրաւոր աչաց.

և անմահ համբաւ քաջութեան նոցա։

Ծնունդեան Մխիթարայ ոչ մեծութիւնք սպաս հարկանէն, ոչ ազնուականութեանն շքեղութիւն զխոնարհարուբս նորա սրատէ. զի և ազգովիմբ իսկ անկեալ էին 'ի պերճութենէ ազնուականութիւն բնոյն իւրեանց որդիք Հայկայ։ Սակայն ծնանիլ ընդ նմա առաքինութիւն նոր վերածնիչ համբրէն ազգին արամեան։ Ի ծնողացն էառ միայն զնոխութիւն անմեղութիւն. յերկրէ անտի իւրմէ, և ոչ քիչ մի ժառանգեաց, յորմէ օտար և պանդուխտ լինելոց էր նորոյ ազգատոհմիս այս նահատակայր։

Կորը էր և օրինակ դատարարակութեան նորա։ Ոչ շրջեցաւ 'ի սեռամն դպլրոցաց, զի և չէին իսկ։ Ոչ կանխեաց առ դրունս վարդապետաց, յորոց և ամենի էր հայաստան։ Այլ սակայն վարժ դտաւ յայն ամենայն ուսմունս աստուածխնամ, յորոց խորթացեալ էր ամենևին ողբմ ժամանակն այն խաւարամած. որում և պատրաստէր Աստուած զայս մանուկ սքանչելի արեգակն անմուտ։ Եւ այս է չքնաղ Ճարտարութիւն աստուածային արուեստգիտութեանն. որ գիտէ և 'ի քարանց յարուցանել որդիս Աբրահամու. և զսղինձ անարգ կանգնել նշանակ փրկութեան ժողովրդեան իւրոյ 'ի խածանող օձիցն մահադոյժ թիւնից։

Եւ զի յամենայն ուսուցչաց աստուածայնոց վարդապետիքն, եթէ յոր ընտրէ զոք Աստուած,

'ի նոյն և զկարևորսն սարգևէ նոմին զօժանդակութիւնս, ահա և մանաւանդ Մխիթար 'ի սրբեղջ հասակին յանձին բերէ զՀաւատոյ այնոր ամենայնի վշտաց, զոր ընդ ամենայն կեանս իւր վշտանալոց էր յառաւել սիրոյն իւրոյ. որովք և պատրաստէր Աստուած ընտիր կացուցանել զծառայն իւր 'ի բովս կամաց իւրոց. և յառաջ քան զնմանաչելն զաշխարհս, հրաժարեր յաշխարհէ....

Հանպա դու, ո՞ւր... ո՞ւր դիմեալ ես միայնակ մանուկ ապիկար։ Ա՞չ երկեցուցանեն զքեզ միայնութիւն լերինդ, յոր ընթանաս. ո՞չ դողացուցանեն զանընկնելի սիրտ քո սպառնալիք գազանաց վայրենեաց, որոյ լի են վայրքդ. դու ունչս առնես արհաւրաց գիշերայնոց, որ բնաւորապէս երկիւղալի են ամենայն մանկան. ո՞չ ձնիկն զաղիս քո գութք ծնողաց, սեր աղգականաց, խնամք բարեկամաց։

Ա՛յլ վայրապար է մեզ ձիգն՝ հասանել զկնի ընթացից մանկանն։ Այլ ոչ միայ բանի երեսս նայ ոչ առնէ. սրանայ 'ի խորշ մի լերին՝ նախանձաւոր ընթացից առաջնոյն նորս այս Կարապետ աբեգականն արդարութեան, ձգնել ըստ նմա 'ի լերին անդ վշտաւարչաւ կենաց։ Ա՛յսու թերաբաց ցուցին և ետ մեզ կամք աստուածային, յոր պատրաստէին զՄխիթար. վասն որոյ վերատին ածէն զնա 'ի գիրկն մայրենի, որ զոչն ցերեկ 'ի խնդիր էր սիրելի որդւոյն զանծանօթ արձանգանդս առեալ իւր ընկեր։

Լրբև օր ըստ օրէ, ամէր հասակաւ, և ոչ տեսանէր տակաւին զբանակս վշտացն, որ պատրաստէին 'ի յառաջատեսութենէն Աստուծոյ մեծամարտել ընդ նմա, զի յայտնի լինիցի անվեհեր առաքինութիւն արի նահատակիս, ինքնին անձին դահիճ լինէր և տանջանարան։ Տակաւին չառեալ իսկ զհան մնոյ և զինուոյ և պտղոյ, որոց հետամուտ է աղկաղկ հասակն, հասակն մրգուզ, յամենայնէ 'ի սոցանէ հատանէր զանձն կամակար. մինչ զի և զժնդակ ախտք խօթութեանց, ոչ հաւանեցուցին զնա անցանել զօրինօք ժուժկալութեանն, զոր եղեալ էր ընդ անձին, մինչև զսպասաւորութիւնն փոխանակեալ առաքինութիւն հնազանդութեան, խրատուք առաջնորդաց հոգւոյն՝ մեծապոյն և սպասաւորութեամբ՝ լուծանէր երբեմն զօրէնս պահոցն խստութեան։

Այլ սիրոն աստուածասէր ոչ ասէր շատ յայն վշտաչարչար Ձգունն, յոր այլք 'ի Ձգնողաց 'ի կատարած Ձգնութենանցն արդեօք ժամանէին, զակարացեալ գնուաձեալ մարմնոն անաշխատասանձիւ հնազանդեցուցեալ։ Զորահնար տանջանարանս պատրաստէր փափուկ անդամոցն հրաշալիս այս պատանի։ Զատուի երկաթապատ 'ի վերայ մերկ մարմնոյն, զայն ոչ բաւական տանջանս համարէր խոշտանգել զմարմինն անբաժ 'ի մեղաց. վասն որոյ արկանէր զանձամբ շապիկս կաշեայ երկաթի տատասկօք լցեալ խուչաձև 'ի

թիկանց, և խաչաձև յառաջց յերկոցունց կողմանց։

Սակայն ներեա համարձակութիւն հարցուածոյս, հայր իմ. այդ մարմին, զոր տանջեսդ այսպիսի անողորմ խստութեամբ եղև՞ երբէք մարմին մեզաց. իցէ՞ բնաւ գործի լեալ անիրաւութիւն դա՝ զոր այդպէս խիստ պատուհասես արդարութեանն գործեաք. ապստամբեա՞ց ինչ մարմինդ ընդդէմ հոգւոյ, զի այդպիսի դառն զինուք վառիս հակառակ։

Ա.յլ թերևս եռանդն անփորձ մանկութեան 'ի սկզբան դարձին առ Ա.ստուած լեալ իբրև զբուռն հեղեղ յանկարծերևեաց, և փութով անդէն դադարեսցէ։ Այ եթէ նուաձեսցի առաջին այն վառումն սիրոյ, և շիջցին աշխոյժք պատանեկութեան, աւուրք անցելոց ձգանց յիշատակք միայն եղիցին 'ի մնացեալ աւուրս կենացն. մանաւանդ թէ գուցէ և դիւրութեան իսկ անձին լիցի երբէք 'ի խնդիր յառաւել խստամբերութենէն խորտակեալ հոգւոյն։

Զ'ն անդր. Ա'խիթար ոչ երբէք հեռացաւ յԱ.ստուծոյ, զի դարձցի առ Ա.ստուած։ Ա'խիթար անմեկին երբէք 'ի հնոցէ անտի ձշմարիտ սիրոյն՝ օր ըստ օրէ 'ի հաւասարութիւն ջերմութեան նորին նկրտէր։ Ա'խիթար և 'ի մանկութեան տիսն ոչ թեթև խորհրդովք շարժեցաւ երբէք։ Ա'ինչ զի ամենայն գործք նորա և խորհուրդք զլխովին օտար էին 'ի տխեղծ հասակէն։

Այն զի և ոչ ինքն էր որ գործէրն, այլ դարա-
նեալն 'ի նմա 'ի մանկութենէն շնորհն աստուա-
ծային, որ օր ըստ օրէ պատշաճեցուցանէր զնա
'ի կատարումն խորհրդոյն իւրոց։

Զանազի ոգպէս իմաստուն Ճարտարապետ, որ
ցանկացի զանուն փառաց իւրոց յաղթական
առնել ամենաճախ նախանձու ժամանակաց, 'ի
վէճն՝ զոր պատրաստեալ է 'ի մեծագործ շինուա-
ծին իւրում ամրացուցանել 'ի կարևորագոյն ինչ
տեղւոջ 'ի տես ամենայն աշաց հայեցողաց՝ ոչ
ինչ խնայէ 'ի հարուածն, մինչև Ճշգրտեսցէ
զնա ըստ պատկերի կերպարանացն, զոր 'ի միտն
իւր՝ 'ի մեծաց Ճարտարութեանցն հնարագէտ՝
նկարեալ էր, այսպէս կանխագիտութիւնն աս-
տուածային աշխատէր 'ի Աստիթար 'ի մեծ ինչ
գործ պատրաստեալ զնա կամաց իւրոց։

Աերթ թողոյր մերձենալ 'ի նա ոխերիմ թըշ-
նամւոյն բարեաց. մերթ հարուածք զառն կըշ-
տամբանաց յանողորմ մարդկանէ 'ի կեղեքել
զսիրտն, զոր ոչինչ կարող էր մեկնել 'ի սիրոյն
Աստի. մերթ վտարանգութիւն յերկրէ յերկիր
հալածական յերեսաց չարայաչաղ թշնամեաց
ամ բարւոյ։ Այսմ ամենայնի և նա ինքն Աստի-
թար վերահասու ամենայն ստուգութեամբ,
զոյն ապա վարդապետէր աշակերտաց իւրոց
զամենայն ժամանակս կենացն։ Աեզ բաժին էլ
Այստուծոյ վիշտս կրել. առակ նշաւակի եղաք
ընդ առաքելական գնդին նոցին խմբակիցքս՝ ա-

մենայն աշխարհի։ Ի կարգս տեսչութեանն Աստուծոյ, ասէր, սահմանեալ են յաշխարհիս ո-մանց վիշտք, և փառք այլոց. մեր բաժին վիշտք են. այլք փառաւորեալք և մեք անարգք. բայց այս ոչ արտաքոյ կամաց խորհրդոյն Աստուծոյ. ապա քան զամենայն փառս սիրելի են ինձ վիշտք զի զինչ քաղցր, զինչ փառաւոր քան զկամսն Աստուծոյ։

Եւ ոչ միայն զայսոսիկ խնամսս պինդ ունէր 'ի միտսն 'ի տղայութենէն ցմահ, այլ և արդեամբք իսկ ցուցանէր։ . . Որվ աղէկիզեալք սրտիւ նոքին աշակերտք, որ գԹացեալ 'ի վիշտս հօրն ձերոյ, զոր 'ի կամսն Աստուծոյ կրէր, խնայէիք 'ի բազմաչարչար մարմնին, և խստանել ջանայիք և զկամաւորսն տանջանսց, դուք ինքնին լերուք վկայք հաստատութեան բանիցս իմոց։ Օր և ահա ոմն արիւնազանգ խարազան 'ի հայրապետով ձեռն, ցուցանէ զգողգոն՝ զոր բարձեալ է զաղտ 'ի մահճսց հիւանդութեանն Մխիթարայ. այլ ոք վերկաթի զտատասկալից գօտին թաքուցանէ. միւսն զխարազանն, որով տանջէր զմարմինն՝ արդէն հասեալ 'ի դրունս մահու 'ի դառն խստութենէ դժուարին հիւանդութեանց։

Այս 'ի Մխիթար Եռանդն Հգնոզական ոչ մանկական իրաւ էր վաղանցուկ։ Այլ որպէս նահատակ առաքինի ոչ 'ի փափկութիւն մատնեալ զանձն, և ամէն ունիցի ապա յասպարիզի մար-

ցութենն զբրաբիան յաղթանակին առնուլ. այլ ցանկ 'ի վշտամբերութենէ, հանապազ 'ի ձգունս վշտաց պատրաստէ զանձն փառաց մրցանակին։

Գ. Յոպէս և արի նահատակս առաքինութեանց յառոյգ հասակէն կուռ վառեալ զանձն 'ի համբերութիւնս ձգանց, բազում պատկօք յաղթութեան շքեղացոյց զբրտնավաստակ ձակատն. և ջախեաց զգլուխ ոգոգայթադիր թշնամւոյն, որ հրապուրանօք աչաց սոլոր է խարդաւանել զերկիւղածս Տեառն։

Գ. Յլ յաղթութիւն արտաքին թշնամւոյ, յաղթութիւն 'ի վաղանցուկ և 'ի սակաւատև պատերազմի, այս ամենայն գործ է դիւրաձեռնարկելի։ Սակայն յաղթել նեղբին թշնամւոյ, սակայն յաղթական հանդիսանալ յերկայն պատերազմի անխոնջ մրցութեամբք, հաւատարիք են աննուաճելի արութեան առաքինի նահատակին։ Զիտէք իսկ, առաքինի ունկնդիրք, զիարդ դժուարին պատերազմ է ձանձրութեանն մրցութիւն, որ բռնեալ 'ի մեզ, 'ի մէնջ առնու զծագումն իւր, և 'ի նեղբս անդր 'ի մեզ զաղդ ապականարար թիւնիցն արկեալ, օր ըստ օրէ կրծէ զանդութիւն ոգւոցն թուլացուցանել զնա։

Ամենեքեան վերառեալ յաստիճան սարկաւագութեան անզբօս ևս մնօք պաշտել զսիրելին որտի իւրոյ, զգիշերս 'ի փոխ առնոյր յերկարել զկարձութիւն տուընջեան 'ի կրթութիւն անձին առատաձուռոյց բանիւք հարց սրբոց, և զտիւս

'ի դատարակութիւն մանկանց, և 'ի քարոզութիւն բանին Աստուծոյ և ուղիղ վարդապետութեան հաւատոյ 'ի տունս տունս առանձին, և առաջի ժողովոց։ Այլ բաւ է, զի արդ փակեալ կայ իբր 'ի բանտի, կապեալ խիստ և կապանօք քան զսարիս երկաթիս։ Անհանգիստ պապարապուն յընթերցուածս բանից գրոց սրբոց, և անխնայ ոտնհարութիւն առողջութեան մարմնոյն 'ի վաստակս միակութեան անդաստանայ Խարձրելոյն, ածէն արիւն յորդ յաչսն, և խիստ ցաւօք կուրացուցանէն զնա 'ի սպառ 'ի տեսութենէ։

Սակայն 'ի հոյլս վշտացելոց բարեկամացն զանընկճելին և էթ տեսանեմ զԱխիթար, որ զողորմ արտասուս մօրն արգահատեալ ցամաքեցուցանէ, և զլքեալ բարեկամս և զազգականսն 'ի կամակցութիւնն Աստուծոյ քաջալերէ։ Այլ աւաղ, զի թուի իմն էթէ զայս միանգամ ահա նկուն լեալ և նա 'ի ծանրութենէ խստութեան երկայն պատերազմիս, տեղի տայ ամօթապարտ յասպարիզէն. և ձանձրացեալ ոգի նորա և ոչ 'ի սպառ ժուժկալեալ մրցանակի համբերութէ, խնդրէ 'ի Տեառնէ ազատել զանձն 'ի ծանրատաղտուկ նեղութենէ անտի։ Այս թերևս վեր 'ի վերոյ հայեցողաց ոչ զուգական թուեսցի ընդ անմեղկելի առաքինութենն, զորոյ ցարդ Խիթար եցոյց յանձին զհաւատիս։ Այլ խաբիմք. խնդրէ արդարև, խնդրէ լոյս աչացն. այլ այն

չափ միայն, զի կարող լիցի զտանել զզրուն տանն Տեառն, յորում առաւել սիրէ Մխիթար ընդ աղբս գալ, քան բնականալ 'ի յարկս մեղաւորաց։

Իսկ որ փորձել ևեթ կամէր զծառայն իւր, և զգործս սքանչելեաց իւրոց փառաւոր առնել յաչս մեղաւորաց, նա որ տղմոտն էրաց զաչս կուրին, ակնարկեաց միայն, և ահա փարատեցաւ 'ի նմանէ ստուերատած խաւարն մթութեան։ Եւ դարձաւ միւսանգամ Մխիթար 'ի սիրելին իւր միայնանոց, անդ ուր պատրաստեաց նմա Աստուած նորոյ նահատակութեան ասպարէզ գժուարընթաց։

Մնալակաս 'ի ժամ հասարակաց աղօթից, անխոնջ 'ի քրտնաջան վաստակս, անընկճելի մշակն առաքինութեան կրթէր հանապազ զանձն 'ի տեսական և 'ի գործնական առաքինութիւնս 'ի հանդարտութեան անդ։ Եւ 'ի ժամանն՝ որք յաւելանային նմա, պարապէր անձանձրոյթ յայն ինչ, որով առաւել և աւելի արծարծէր սէր ՏԱԾԱՅԻՆ 'ի սրտի նորա։ Եւ իբրև զմիր մեղու 'ի մանրգաց ծաղկափթիթ բանից Հոգւոյն սրբոյ քաղէր մեղր անուշութեան 'ի պարարումն ոգւոց իւրոց, և որոց ունկնդիր հոգեբուխ բանից նորա լինէին։ Եւ յառաւել զեղմանէ եռանդանն կազմէր պատրաստէր 'ի բերան մանկանց երգս փառաբանողականս մեծութեանց Արարչին և փառաց Տիրամօրն։ Յաւելոյր 'ի նոյն՝ կշռել 'ի չափ ոտից

և զկիրսն Աստակայ 'ի գիւրութիւն կրթութեան տէսս հասակին։

Այլ թէնամին ոխերիմ, որ յաչադկոտ աչօքն տեսանէր զհանդերձեալ օգուտսն մեծամեծս 'ի խրատակարկատ եկեղեցւոյն Աստուծոյ, փորձի հնարի լքուցանել զԱխիթար, և պատերազմ դժուարամարտ բանայ նմա առաջի։ Գոխտէր իւրաքանչիւր, ով հարք, որպէս դժուարին ցաւ է կորուսանել զերկս բազմամեայ քրտանց. կորուսանել 'ի միում վայրկենի, յանդէտս ամենեին. և կորուսանել առ չարութեան մախսացող նախանձոտաց։ Այլ ընդէր ոչ 'ի խոր լռութեան իցէ ինձ օրէն թաղել այսուհետև զյառաջադիմութիւն բանիս. զի և նախատինս մեծ առնիցէ քրիստոնեայ անուան, թող թէ կրօնաւորելոցն յաշխարհէ, առաջարկութիւն ճառելեացս։ Այլ զի հրաւիրեալ եմ յայս բեմբ զմեծութիւն առաքինութեանցն Ա՛խիթարայ յանդիման կացուցանել, հա՛սցա անեղկմիտ յառաջ խաղացուք։

Այլ Ա՛խիթար 'ի մենաստանէ 'ի քաղաք անդր 'ի միթարութիւն վշտացելոց, և 'ի վարդապետութիւն արքայութիւն երկնից. զի զհուր սիրոյն, զոր բորբոքեալ էին հնորհք աստուածային 'ի հոգւոջ նորա, արկցէ և 'ի հոգիս մարդկանն, նովին հրով խարուկեալ զոլորտս աշխարհայ։ Ընդ ահա աբեղայ ոմն, անուամբ Լեթ աբեղայ, չգիտեմ յորպիսւոյ այսոյ վարեալ, իբրև զգոռեխ ապականարար

մեծապէս վաստակոց պարու անուշարար մեղուայ, մնանէր գաղտ 'ի սենեակ անդր Մխիթարայ. և յանիշատակող ձեռօքն առաջակարար ժողովէր զամենայն զերկասիրութիւնս նորա. և միահաղոյն յաձիւն դատեցաւ։

Այ ժպիրհ յանդգնութիւն։ Զգաստ և ոչ ձեռն մի զթած արգելուլ զառաջումն 'ի նա խանձոտ չարութենէ անտի։ Անմահ Աստուած, և որպիսի առաքինութիւն արիասցի բնաւ յայս մարտ դժնդակ։ Այլք, ով անմահ հրեշտակք, իջէք յաստեղաց երկնից, իջէք ձեռն տալ նահատակիս զի յոյժ ահաւոր է յարձակումն։

Այ արդարև զաղփաղփումն առաքինութիւն, որ ոչ Աստուած խորհրմնտ ամրացեալ իցէ, ոչ կացցէ յակաստանի։

Ա.ԱՆ—Արդք, ասէ Մխիթար, 'ի փառաբանութիւն էին Աստուծոյ, քաղցրք 'ի վարդապետութենէ դժուարին ճանապարհի առաքինութենց, տաղք 'ի վարժս մանկտուոյն հրեշտակաց վինել ճայնակից. և եթէ այսպէս առաւել ևս փառաւորի փառաւորեալն, օրհնեալ է Տէր։ Այ թէ փաստոք առաքինութեան իմոց շահելոց իցեն այլք, ոչ ինչ օգուտ է ինձ եթէ զաշխարհ ամենայն շահեցայց, և զանձն տուժեցից։ Որ եան միանգամ, կարող է տալ և միանգամ, եթէ կամք նորա իցեն, եթէ փառք անուան իւրոյ այնպէս պահանջեսցեն։ Իմ անտարտունջ և զուարթամիտ հանդերութիւն մեծ ևս փառք են նմա,

յորոյ ընծայեալ եմ զանձն 'ի պատարագ բոլորանուէր, քան զդարձ աշխարհաց բազմաց։

Այսաց զայս, և 'ի խիստ և ս պատերազմի քան զՅովբայն, զնորայն առաքինացաւ համբերութիւն առաքինի նահատակն. և փոխանակ լուսանացն՝ շնորհակալ լինէր չարարարին, իբրև օժանդակ նմին և մարտուսոյց յասպարիզի Ճրգնութեան։ Անգի և զայնպիսին մտերմագոյն 'ի բարեկամն իւր սովորեալ էր կոչել Խիթար զամենայն զկեանս իւր. և խողովակս անուանէր զնոսա շնորհաց Արարչին։

Եւ ահա զայսպիսի համբերութեան եթող մեզ հայրս մեր զհաւատս, ո՛վ Հարք սուրբք, հետևողք անստերիւր հետոց նորա։ Համբաւէին զնա. այլ նա՝ ներեսցուք, ասէր, զայս նոցա տկար վրէժխնդրութիւն։ Են նոցա թերևս իրաւունք. այլ մեզ անշուշտ փառք մեծ։ Ներեսցուք զնոսա, և ստասցուք զնոսա առ Աստուած. յայնժամ նոքին եղիցին մեր իրաւարարք։ Եկեղեցին հիմնացեալ է 'ի վերայ խաչի, մեզ չէ օրէն յայլոց հիման վերայ շինել։ Աղօթեսցուք վասն հալածչացն մերոց. սովին պարտիմք մարտընչել ընդ նոսա, և այսու ապրեցուցանել զանձինս 'ի հարուածոց նոցա։ Այսպէս ոչ միայն ուսանէր սուրբ լինել, այլ և յաւուր միում թողուլ և բազմութիւն սուրբ զաւակաց։ Օրս տեսին աւուրքն անցեալք, և հիացան. զորս և մեք իսկ աչօք մերովք տեսանեմք. մեզ երանի, թէ և

նախանձաւորք նոցայոցն գոցուք շաւղաց ։

Սակայն տեսանեմ ես զՄԽԻԹԱՐ անկեալ լքեալ. և անտրտում էրեսք նորա 'ի թուխս տխրութեան համակեալ. հեծութիւն 'ի բերանի, և արտասուաց ծով 'ի սրտին ։ Այլ առ ինչ ։ — Առ ինչ. քանզի անյաղ վաճառականն աւետարանական զանձուն չգտանէր զոք կատարեալ վարդապետ առաքինութեանց, որոց արդէն խակ ամբարեալ էին ձոխութիւնք 'ի սրտի նորա ։

Այրանի ծաղկէնկար ափանցն, որ ասպնջական էղէն նորա ։ Յիշէին արդեօք նախանձաւոր կապուտակ ալիք Սևանայ զօրն զայն, յորում 'ի վերայ ծիծաղախիտ ալեացն Զթամարայ՝ սքանչելոյն Գրիգորի նոր զօրավիգն ինքանէր յերկնից Գոչխոյն եթերայ Աստուածորդուոյն 'ի գրկի. և ասա ահա 'ի նորս Մեթել էջ վերատին Տիրամայրն 'ի քաջալերս խրախուսանաց որդեգրեցելումն իւրոյ ։

Այսոր զորովալից սիրտն մայրենի յերկնից 'ի վերուստ զսիրասպատար որդւոյն զԹալկացումն սրտին, լուսաւ զՀեծութիւնս հառաչանացն զի ինքեր իբրև տատրակ միայնացեալ, և ոչ ժուժեաց անտես առնել ։ Ի զանձարանաց երկնից զգեղապաճոյճ զգեստուն զարդ արկ զանձամբ, որ Ճշգրիտ գուշակեր զառաւելութիւն շնորհացն, զոր գայր առատացուցանել 'ի հոգւոջն ՄԽԻԹԱՐայ ։ Ինքանէն յերկնից և երկու երկնաբազբացի կուսանք ընդ նմա. պատառեցան երկ-

կինք, և առատաղեղ ալիք լուսոյ կարապետ լինին թեթևընթաց գարշապարաց Գաչխոյին երկնից։ Այլ առ Մխիթար, մինչ նա տարածանէր զաղէտս սրտին անմռունչ միայնակ 'ի տաճար փառաց Արարչեանն. էջ և հեղեկ բարբառով մատուցեալ մայրաբար քաջալերել զնա, իւրովք խակ աստուածամերձ սուրբ ձեռօքն, մինչովք վարդից և շուշանաց, որբէ զարտասուս յաչաց նորա. Այլեցին, ասէ, եղեցին քեզ, Մխիթար, խնդրուածք քո։ Այլ խնդրուածք Մխիթարայ էին կատարումն կամաց Աստուծոյ 'ի վերայ իւր։

Հեղեղաբար առին յայնժամ զսիրտ Մխիթարայ խաղաղաւէտ հոսանք երկնաւոր քաջալերութեանն։ Այնուհետև իբրև եղջերու ծարաւի 'ի խնդիր ակամակիտ վտակաց, յամենայն հանգամանս ձգնէր կատարել զկամն սիրելոյ Աստուծոյ իւրոյ. ձգնէր 'ի զլուխ հանել զառաջարկութիւն մեծի գործոյն, զոր տպաւորեաց 'ի սիրտ նորա ինքնին խակ Ցիրամայրն։ Այ հաստատութիւն Աստուծոյ, երկնաւոր մտաւորութեան գործ անսուլոր, արգասիք են կամաց Ցիրամօր։ Ակամանձելի՛ զգաստոնմ, որդիացեալք այսպիսւոյ Աստուծոյ։

Արդ 'ի ձայնն կուսական զգէր ինն 'ի սիրտ Մխիթարայ, հօր նորոյ գրոհիս, հրաւէր երկնաւոր։ Այլ յերկրէ քումմէ, և ելլ յերկիր, զոր ցուցից քեզ։ Այլ յայն հրաւէր սուրբ արհամարհեաց Մխիթար զամբ հայրենեաց, արհամար-

հեաց զզուլթ ծնողաց, առ ոսն եհաղ զյոյս էր-
կրաւոր մեծամեծ փառաց. յաչս եդ զամենայն
սպառնալիս վշտաց։ Լ՝ զի բոկոսն ընդ առաջ-
պարս. էր զի հիւանդաբայլ յերկայն ձանա-
պարհս. անդ ամայի մնացեալ յանմարդի և 'ի
դաղանաբնակ լերինս. ասա հետևակ ընթացիւք
'ի միջոց աւազակաբարոյ մարդկան զիմէր 'ի
կէսն, յոր յերկնից հրաւիրեցաւ։

Լ՝ ընդ բազում վիշտս և ընդ բազում աշխա-
տութիւնս անցանէր, որոց չէ իսկ անտեղեակ մի
մի յունկնդրաց ասատի խոսոց. և ոչ կամիմ յիշա-
տակել երկայն բանիւք, զի կարճատեղ ինձ ժամն։
Ի՝ երկայն վարդապետութիւնսն 'ի քաղաքս քա-
ղաքս. զդարձ բազմաց հեստելոց յեկեղեցւոյն
Քրիստոսի, և զբազմագոյն մեղաւորաց. զհա-
լածական փախուստ յերեսաց ծարաւեաց արեան
նորա. զքրտնաջան վաստակս ձեռացն 'ի հայ-
թայթանս աւուրն պարենի։ Ի՝ այս ամենայն և
զսոցին նմանսն զանց առնեմ յիշատակել, ընդ
որս անցեալ անվտանգ, հասանել խաղաղութիւն
Մուլթան Պեղոպոնեսեաց։

Ի՝ սա թուէր զի վախճան առեալ վշտացն,
ծայր այնուհետև արձակէր արև փառաց նորա։
Ի՝նդունելութիւն սիրալիր լինի նմա 'ի քաղաքին
յայնմիկ յանծանօթից. մեծամեծք վայրացն
բարեկամութեան նորա նախանձաւորք, և յան-
լինչ աղքատութենէ հիմնարկէ և կառուցանէ
մենաստան գեղեցիկ և շքեղ եկեղեցի, զորոյ

գնաւակատեացն հանդէս ոչ միայն փառաք շքեղացուցանէ ուխտն եկեղեցւոյ, այլ և զոռոզ պետութիւն վայրացն։

Օ՜ինչ քան զայս բերկրարար նմա, որ զամենայն կեանս իւր 'ի խնդիր և ի թեթ էր սոցա։ Զանազի տեսանէր թէ այսու միայն Ճանապարհաւ առաւել ևս, և մինչեռաւորապէս ծաւալեցին փառք անուանն Աստուծոյ։ Մխիթար հայր քաջազօտի որդւոց, կացեալ 'ի միջի նոցա հրձուէր 'ի նոսա։ Հրձուէր՝ զի յայնմ հետէ բազմապատիկ օգտութեամբ պտղաբերեցին հեղեղք բարութանց իւրոց, զորս գնացոյց, և Ճգունք հալածանացն և տառապանաց, զորս վշտացաւ։ Այս ընդ քարոզութեան ուղիղ հաւատոց՝ յոտս որդւոց իւրոց և համբաւ անուանն ընթանայր ընդ ծագս հայաստան խօսից։

Սակայն չէր տակաւին ժամանեալ Մխիթար 'ի գլուխ ասպարիզի դժուարամարտ իւրոց նահատակութեանն։ Այս արդեօք դառնագոյն հանդիպեցաւ նմա քան զամենայն կեանս իւր այն վայրկեան մահահրաւէր, յորում հարկ եղև նմա թողուլ զկառուցեալն իւր զտաճար Ցեան. թողուլ զմենաստանն, աքանչելեօք ինն յոչընչէ 'ի վեր երևեալ. թողուլ, ա՜հ, թողուլ և զոմանս յորդւոցն իւրոց մատն և տուր 'ի սպառնալիս անողորմ երկաթոյ բարբարոսաց, և անջատել մեկնել 'ի նոցանէ։

Որպէս միակ օգտաճարաւ 'ի տես անտառա-

մել և փշալից անդաստանի զարդասաւորութիւն
երկրին գուշակեալ, սրբէ զփուշն և զդաղձ.
մաքրէ 'ի բիւրաբեղուն հողոյն զխստութիւն քա-
ղանց. և քան թէ արօրօք՝ մանաւանդ քրտանցն
առաւելութեամբ, կակղացուցանէ զերկիրն. բա-
ժանէ 'ի բազում ածուս ըստ մտադրութեան ա-
ղուեստին իւրոյ. և ըստ տեսակաց տեսակաց սեր-
մանցն և ծառոց՝ հմուտ ձեռօքն առատացուցա-
նէ, և կամ ազահէ զպարարտացուցիչ աղբն. և
շուրջ զփափկիկ շառաւիղօքն բաժակեալ մատ-
ռուակէ, մայրաբար զհիւթն անձեցական ըստ իւ-
ղաքանչիւր պիտոյից։ Այլ զկնի այսոցիկ բազմե-
ղինակ վաստակոց, յուսով մեծաւ սպասէ ժա-
մուն առատութեան բերոցն 'ի տրիտուր աշխա-
տութեանն և փութոյն, զոր անհնարանձ կամօք
եւ 'ի փոխ բազմաբեղուն անդոյն։ Այլ ահա
յանկարծ ամպ թանձրախիտ մթերեալ մեծաւ
սպառնալեօք խուճապեցուցանէ զլոյս տուընջեան
'ի տիեզերաց. ահեղաձայն գոռան որոտմունք.
Ճայթիւն հրալից փայլատակունք. կատաղին մրը-
րիկք. հողմք սաստկաբախք 'ի յաւիտենական
հիմանցն զերկրնա սասանեցուցանեն. և հոծ քա-
ղինք կարկտի զյետին աւերածն սպառնան ա-
ծել աշխարհի։ Այլկերկ մշակն վաստակաբեկ
տեսեալ զողորմ կոտորած ձեռատունկ ար-
դեանցն իւրոց՝ իբրև զդիակունս առոյգ երիտա-
սարդաց և օրիորդաց, աղիողորմ արտասուօք ըզ-
հերան ցետ, և Ճողէ զմորուս։

Բ. յսպէս և առաւել քան զտպաւորութիւն օրինակիս զմարդատունկ դրախտն իւր զեղապա-ճոյճ՝ բռնադատի ելանել Մխիթար յահեղա-սատ սպառնալիս մահագոյժ պատերազմաց, և ելանել 'ի լաստափայտ մի ընչին ընդ սակաւուց ոմանց 'ի սիրատուն որդւոցն։

Գ. Հ, որդեակք իմ, յեկեղեցւոջ առաջի սե-ղանոյ Տիրամօրն խօսէր առ իւրան. ա՛հ, որդեակք իմ, իմոց դժուարին երկանցս ծնունդք սիրա-տուն. ո՛հ բռնադատիմ ահա մեկնել... անջա-տել առ 'ի ձէնջ. և որպիսի անջատումն դժուա-րին։ Բաջ սպառազէնք Քրիստոսի, կուռ վա-ռեալք յայս մարզոց զինուորութեան, քակելոց էին զամուրս սատանայի. 'ի զինարանաց իւրոց հանեալ զաղդոզագոյն զէնսն տարտարոսազէն թշնամին, մարտ յուսահատութեան յարուցանել 'ի վերայ մեր. այլ մի, մի վշտանիք. ահա Այր մեր ամենեցուն, ահա 'ի մայրենի խնամն նորա առնեմ զձեզ ապաստան։... Լա՛ հեղձուցին ար-տասուք զբանս նորա։

Գ. յ անողորմ ալիք, այս քանիցս մնչէք ընդ ոտիւք նորա, և ահաւոր ատուերածս սպառնայք ածել առկայծեալ յուսոց եկեղեցւոյն Հայոց։

Սակայն տեսչութիւն վերին, որ ոչ կամէր ընկղմել զծառայն իւր 'ի սաստկութենէ փրփա-նաց, յաջողակ հողմով առաջնորդէ խարիսուլ նաւուն այսր 'ի խաղաղաւէտ նաւահանգիստ քա-ղաքիս։ Ինձ աւելորդ է այսուհետև մի առ մի

անցանել ընդ կիրս վշտաց նորա, յերեսաց աղքատութեան, վտանգաւոր հիւանդութեանց, յաւազակաց, 'ի ծովէ, 'ի գետոց. զի ըստ ամենայն հաւատեաց Ճշգրտագոյնս պատշաճեցաւ առ հայրս մեր առաքելականն. վիշտս 'ի ծովէ, վիշտս 'ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս 'ի սուտ եղբարց։ Եւ աւա՜ղ, զի յետինս այս մեծամեծ վիրաց թողցեր սպիս յընդարձակ սիրտ Մխիթարայ։

Եւ որպէս զշինութիւն երկրորդի տաճարին Զ.ստուծոյ, այսպէս միով ձեռամբն զվահան պաշտպանութեանն զանձամբ առեալ Մխիթար, և միւսովն վաստակէր 'ի շինութիւն մեհեանս։ Եւ այսր, յորում բնակեալս եմք արդ, Հայրք սուրբք, խաղաղաւէտ կենաց, բարձրացան որմունքն դժուարին քրտամբք։

Որ բարեպատեհ օրն այն, երանի ժամուն այնմիկ, յորում կոխեաց Մխիթար յայս կըղզեակ անդորր՝ պատրաստեալ մեզ ամուր ապաւէն 'ի մրրկածուփ վշտաց։ Ո՛հ, կոխեմք զօր ամենայն զհետն, ուր կոխեցին անվաստակ ոտք նորա յառաքինութիւնս ճանապարհին. երթեալ յեկեղեցին հեծութեան նորա արձագանգք տակաւին լսելի լինին յականջս հարազատ որդւոց նորա. ընդ սրահս և ընդ սենեակս ստուերք նորա սաղրեն պատկառանս աշակերտելոցս իւրոց։

Բայց ահա դարձեալ զառնաշունչ ծուխ նախանձու բարդեալ դիզադէզ, կամի խաւար ըս-

տուէրամած ածել զդաստակերտիս Մխիթարայ։ — Ո՛հ, հայր, ներեա յանդուգն հարցուածոյս, ներեա հատնձակութեան որդւոյս. սակայն տուր ինձ իրաւունս։ — Ո՛չ այնչափ գեղանշոյլ կաղմեցեր զդաստակերտս քո զայս պանդելագործ, մինչև շլացուցանել զաչս հայեցողացն 'ի նոյն։ Օ՛խարդ և դու այնչափ փայլեցեր արտաքոյ զգեղ վայելչութեանքս, ո՛վ դրախտ աստուածատունկ, մինչև նախանձաբեկ լինել ընդ քեզ ամենեցուն, և դիւաց դաշնաւոր զմարդիկ առնուլ խախտել զքեզ յարմատոց։

Ա՛յլ մի վնատիք, առաքելեան ունկնդիրք, զի այս ուխտս Մխիթարայ տպաւորագոյնս յոյժ բերէ յանձին զօրինակ պետրոսեան նաւուն, յորմէ Քրիստոս բանս յաւիտենական կենաց վարդապետէ ժողովրդեան իւրոյ։ Որոտմունք, շանթիք, սպառնալիք կայծակաց, մրրիկք, վեր 'ի վայր լինին երկինք և երկիր, և լեռնակարկառ ալիք փրփրացեալ բերանանան կլանել զնա, այլ նա սիգաձեմ 'ի ծայրս ալեացն՝ յաղթական փոթորկաց ամենայն ժամանակաց, ուղղի զեկավարի յուշ նպատակի հանդերձելոյ աշխարհին։

Այ՛ կամ թէ որպէս քաջ նկարիչ Ճարտարութեամբ արուեստին, զի զգեղ վայելչութեան նկարուցն իւրոց 'ի մի հայեցուած տացէ յաչս տեսողաց, խառնէ ընդ լուսանկար տեսլեանց և զտուեր խաւարամած. այսպէս և Ճարտարապետն ամենայնի Աստուած 'ի ձախողակս յայտնի

կացուցանել զանընկՀելի առաքինութիւն իւրոց նահատակաց։ Օ՛ի թէ և ոչ ամպ յաչաղկոտ գողացի երբեմն յաչաց մերոց զտակեւարս ՀաՀանչս արփւոյն, ոչ այնչափ 'ի վերադարձ նորին 'ի նշոյլս Հառագայթից նորա հեշտանալք։

Սակայն զի է, զի ալեկոծ ծուփք խորհրդոց տեսանին 'ի միջի իսկ անդորրաւէտ Հակատ անդր Մխիթարայ։ Մինթէ խիտ ստ խիտ թանձրութիւնք ամբաստանութեանցն ՄՀ արկանիցեն 'ի նա. կամ թէ զինուցն տկարութիւն 'ի պաշտպանութիւն անձին երկեղմ՛կս արկանէ յարի նահատակն չմնանել յասպարէզ Հանդիսին։ Ա՛յլ խաբիմք. զի 'ի մերկ լանջս անմեղին չիք զօրաւորագոյն զինուորութիւն քան զանմեղութիւնն ինքնին։ Ա՛պա զինչ այն Հառաչանք Մխիթարայ։ — Օ՛անտերունչ անդաստանն 'ի մշակն երկնաւոր յանձն առնէ, Հսկել 'ի փչմանէ ապականարար հիւսիսոյ։ Հաղարապետն 'ի Տիրոջ Հին անդր զտանն խնամն վստահանայ, զի ինքնին լիցի այցելու 'ի հեռանալն իւրում։

Օ՛այս արարեալ, և ահա ամբաստանեալն Մխիթար 'ի մեծն Հռոմ. այլ 'ի Հռոմ խորհրդակից փոխանորդին Քրիստոսի, զլխոյն եկեղեցւոյ։ — Ա՛մբէ, զինչ նոր օրէնք լցեն այս։ — Ա՛ստուծոյ անտեսութիւն է Հակառակ խորհրդոց աշխարհի։ Ա՛յսպէս կամեցաւ նա, և այսպէս ոչ միայն զարդարութիւն ծառային իւրոյ, այլ և զիմաստութիւնն յայտնի արար աշխարհի։

Օ այն խնամատութիւն, որ զողբիչս իւր փրկեաց 'ի ցաւոց, և եցոյց նմա զարքայութիւն Աստուծոյ, և 'ի դարանակալաց նոցա զգուշացաւ։ Այլ իցէն փառք մեծագոյն քան զայն, զի քարշեալ յատեանն վնասապարտ, փոխանակ զատելոյ՝ դատաւոր նստցի 'ի նմին ատենի. և զնմանէ կախեալ իցէն ոչ միոյ կամ երկուց բաղդ, այլ բախտն, ներեցէք ինձ ասել, այլ բախտն եկեղեցւոյն Աստուծոյ, այլ յառաջադիմութիւն ուղղափառ վարդապետութեանն 'ի ժողովս այլոտոհից։

Աստ ահա՝ յետ բազմապատիկ վշտացն սկիզբն առնուն մեծամեծք փառացն, զոր արար Տէր ընդ նմա. Օ՛ի արար ինձ մեծամեծս հզօրն։ Այլ մնանանդ թէ անմեկին էն 'ի Ամենեթար վիշտքն 'ի փառաց։ Օ՛ի եթէ զօրավար քաջ՝ առաքինացեալ 'ի դժոխամարտ պատերազմի զյաղթութիւնն պսակ փառաց բոլորեալ 'ի գլուխս, ո՞ քան զԱմենեթար 'ի դժուարին մրցութեանց եղ բնաւ յաղթական։

Բայց ծայրագոյն փառացն Ամենեթարայ այն է, զի կանգնեաց զայս շքեղ մենաստան, որ միշտ խակ տեսարան եղեալի և հիացուցիչ աշխարհի։ Ամենեքեան չէն ամրութիւն նորա, և շինուած վայելուչ ոչ է շքեղութիւն նորին։ Հաստատեաց օրինս աստուածիմաց կարգաց կրօնաւորականաց, և նոքօք ամրացոյց զհիմունս սորա։ Այլ զի ընդ զուարն տպիտութեան եմուտ աստանաց աւար

առնուլ զեկեղեցի, հիմնարկեաց վարժարան ուսմանց։ Եւ այսոքիկ են ահա ամրութիւնք և շքեղութիւնք մեր. որոց և ցանկայր առաւել հայրս մեր լինել մեզ ժառանգորդս, և նախանձաւոր աւանդապահս։ Բանզի գիտէր քաջ եթէ շրթունք քահանային աւանդակիրք պարտին լինել ասատուածապարգև գիտութեանց, և վարք բարեկիր՝ վարժոց առաքինութեանց։

Եւ վասն այն իսկ ամենայն հոգոց իւրոց կալեւորագոյն զգաստութիւն աշակերտելոյն իւրոց համբակաց կալեալ միշտ, առ իւրաքանչիւր յառաջադէմ քայլափոխս նոցա, ցնծայր սիրտն հայրենի, տեսեալ զի գործնեայք խորհրդոց իւրոց 'ի փառս անուան Տեառն օր ըստ օրէ բազմանան յօրհնութեանց Բարձրելոյն։ Եւ միթէ, ո՛վ Հաղբ, միթէ չիցէն նորա յառաջատես իմաստուն անտեսութեան արդասիք և այն չնորհ մեծ պարգեւեալ 'ի բարերար ձեռանէ Տեառն 'ի միսիթարութիւն տառապելոց ազգիս, որում մեք ինքնին, չնորհք Բարձրելոյն, մեք ինքնին եղեաք ակամատեաք։

Ուրախ լեր, եկեղեցի սուրբ, զի նոր փայլ առնուն փառք քո և յերկիրս, որ ընդ անհաւատս բարբարոսացն հեծեն երկաթի լծով։ Յայսմ հետէ, որ 'ի խորչս և 'ի սոյզս թաքչէր փառք ուղիղ վարդապետութենէ Քոնի քո, բարձր 'ի գլուխս պարծեսցի 'ի մէջ խուժանին անհաւատից, և քան զանհաւատան չարագունից մռայլելոց զկը-

նիքն սրբութեան՝ որում նուիրեցան. որ և անդադար կեղեքեն պատառեն զսիրտդ մայրենի։ Ուրախ լեր յերկնից և դու, հայր հաւատոց մերոց Գրիգորիս, և դուք ուրախ լերուք հայրապետք սուրբք, որ զՀեռս վաստակոց նորա կոխեալ, 'ի զարդ և 'ի շքեղութիւն եկեղեցւոյն Աստուծոյ՝ ոչ խնայեցէք 'ի քիրան և յարիւն։ Ահա նորա այս մշակ աւետարանին արծարծանէ զերկիս քրտանց ձերոց, և գեղ վայելչութեան վերատին զարձ առնէ 'ի սեղանս ձեր և 'ի մատրան։

Ինքն միայնակ միոյ քաղաքի հաղիւ թէ լինէր բաւական. ահա գեղեցիկ ոտք աւետարանչացն խաղաղութեան որդւոցն նորա ընթանան ընդ ամենայն պորտս Հայաստանի ժողովրդոց։ Եւ ուր ոչ ժամանեն ոտք, տպագրէ զերս ոգեշահս. զնոսա անդր հասուցանէ։ Անկանց տայ 'ի ձեռս զուսումն քրիստոնէական կարգաց. պատանեաց զարուեստս քերականութիւն ընդիկ հայ խօսից, յորմէ օտարացեալ էր խորթացեալ ժամանակն. զարդացելոց իմաստասիրութեան դասս վարդապետէ. վարդապետաց զիսորս իմաստից զրոց սրբոց 'ի վեր հանէ, և ուղիղ հաւատոց վարդապետութեան խելամուտս զնոսա կացուցանէ։ Եւ ուր երբեմն ծերք, ամաչեմ ասել, և վարդապետք ինքնին զլեզուին չգիտէին բացայայտել զկարևորագոյնսն 'ի մատանց հաւատոցս, որդ մանկունք զիսորհուրդս քրիստոնէական

բարեպաշտութեան թոմոսին։ Յամենայն ձեռս մատեանք նորա յածին, և ամենայն բերան յօրհնութեան նորա լուծանին։ Աչ քահանայապետք ինքնին օրհնութեան նամակաբն 'ի բարձր գահոյից իւրեանց քաջալերեն զնա՝ խրախոյս առնուլ յառաջարկեալ գործն օգտակար։

Աղիսկոպոսք և մեծանուն վարդապետք առ ոտս անկեալ Մխիթարայ, ընդ գրաշակաւ նորա ժոմին զինքեանս զինուորել։ Ժուարին ուղևորութեանց մատնեն այլք զանձինս 'ի տես առնն հրաշալոյ։ Ամենայն ուրեք համբաւ նորա, յամ բերանս գովեստ նորա. միայն 'ի բերանոյն Մխիթարայ անձին անարգութեանն լսելի լինին ստգտանք։ Ամենքն զակին յառեալ 'ի նպատակ անդր սիրոյն իւրոյ, 'ի տիպն յայն, յորոյ 'ի տերունական բերանոյն հրաւիրեցաք 'ի նմանողութիւն. Աղերսք կատարեալք, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։ Յայն զաչսն յառեալ՝ զամենայն ինչ յաշխարհի անհամեմատ տեսանէր. զամենայն՝ ոչինչ առ նորա հաւասարութիւն, և զանձն զլիսովին ընդ այլում ամենայնի. զամենայն ինչ երկրաւոր անարժան սրտին իւրոյ։

Ամն որոյ և այնպիսի հիմնացոյց զուխտս, զի յամենայն ժամ փառաւորի 'ի սմա անուն Աստուծոյ. և աստուածային խմաստութեամբն իւրով, զայն ինչ՝ յոր առաւելապէս ամբարհաւաճեն միաք մարդկային, որբեալ յամենայն երկրաբարոյ թերութենէն՝ ջահ առաջի փառացն

Աստուծոյ վառեաց յեկեղեցւոջն Հայոց, զշի-
ջեալն զգիտութեանց զամբար։

Լաւ եթէ ըստ աստուածային անսուտ պատ-
գամանցն Տէր փառաւորէ զՀայր 'ի վերայ ծննդոց,
ոչ և որդւոյն Ամենաթարայ փառք յաճախեսցէն
զփառս հօրն։ Յորոց է որ բովանդակ քա-
զաքաց նոր քարոզն առաքեալ. է զոր քահանայ-
ապետաքն Հռովմայ հայրապետական խուրիսն
պանեն. զկէս համբաւատենչ Ղեմնարանք գի-
տութեանց Լուրսապայ կցորդ ունել փափաքէն
միաբանութեան իւրեանց. ոմանց հաւատան ըզ-
դաստիարակութեն մանկանց զյոյսն պայծառու-
թեան եկեղեցւոյ. այլք հրաւիրին 'ի զլխաւոր
գահս փառաց։ Լաւ այս ամենայն լցցէ՞ն փառք
Ամենաթարայ առ 'ի յերկնից կշռեալ փոխանակ
տառապանացն բազմաց, զորս վշտացաւ առ սէր
փառացն Աստուծոյ։

Ով Տէր, ոչ էն բաւական աչք երկրածին
հայել 'ի դալարութիւն տեսչութեանցն քոց, թէ-
պէտ և խղճք որդւոյ ձկտեսցին 'ի խաւարային
աւուրս ապագայց, և տեսանել և զայլ ամենայն
փառսն, զոր պատրաստեալ էն և յերկրի անհա-
խանձ կամք քո նորատեսիլ այսմ նոր հատակիս։
Օ՛ի որպէս անսահման էր չափ սիրոյն, որով
զքեզն սիրեր, անսահման ապաքէն և փոխա-
բէնքն պատրաստեալք առ 'ի քէն առաքինութեց
նորին։

Օ՛այս ահա փառս շնորհեաց Տէր Ամենաթա-

ըայ 'ի յերկրի, զոր արդ երկնաւոր փառաբն փառաւորէ. և այսմ փառաց նորին՝ մեք եղաք աւանդապահք։ Այլ եթէ արդիւք եմք հօրն արժանիք, պարտիմք նախանձաւոր լինել փառացն նորա. և լինիմք, եթէ ընդ հետս նորա 'ի նոյն կէտ ընթանայցեմք։

Այլ դու, հայր, դու, որ տեսանես զեռանդն սիրոյ որդւոյդ քոց, տեսանես զի ոչ վեր 'ի վերոյ զաչս մեր յառեալ եմք 'ի քեզ Ճշգրտել զմեզ ըստ քեզ, տալ լրումն ամենայն խորհրդոցդ քոց 'ի փառաւորել զաստուածպետութիւն մեծվայելչութիւն ուղիղ վարդապետութեամբ։ Տեսանես զի ըստ քոյոյ օրինակիդ ոմն յորդւոյդ չանխայէ զանձն 'ի դժուարին Ճանապարհորդութեանց վասն փառացն Աստուծոյ. ոմն վասն ուղիղ վարդապետութեան ընդ դաւազանաւք հեծէ անմարդեաց. ոմն յաքսորս 'ի տես վայելչութեան փառաց տանն Աստուծոյ հառաչէ առ բաբելական գետովք. ոմն աշտարակ կացեալ հզօր ընդդէմ ուժոյ բռնութիւն թշնամեաց քոց, մանաւանդ թէ թշնամեաց Աստուծոյ քո, նպատակ անխախտելի արձանանայ ոխերիմ մեքենայից, որ զյետին աւերած սպառնան դաստակերտիդ քո. և ոմն, ա՜հ, ընդ միտ ածեալ և ոչ կարեմ ժուժել արտասուացս. և ոմն, քոյին Ճշմարիտ պատկեր, նախանձաւոր քոյոյ հայրականացդ առաքինութեց, յորոյ ընդ ցպոփն երջանկանալ յուսայ ընդ երկար հօտս քո փոքրիկ.... ա՜հ, ողորմ հառաչ-

չեմ՝ ընդ հառաջանաց նորա, որ այս երրեակ ամբ
են՝ զի հեծէ 'ի ցաւագին անկողնոյ զաչն ուղիղ
առ քեզ զիտաւորեալ։ Ո՜հ, դու հայր, դու որ
տեսանես զայս ամենայն, դու այժմ առաւել և
կարող ես օգնել որդւոցդ, դարձո միանգամ յեր-
կնից զՀայրական աչս քո 'ի վերայ տառապելոցս
որդւոց քոց։ Տես զի շուրջանակի պաշարեալ են
զմեզ արհաւիրք, և դժոխք բացեալ զբերանս
իւրեանց սպառնան կլանել զմեզ։

Ահա իրագէտք մերոցս Թերութեանց, ոչ հա-
մարձակիմք համբառնալ զաչս յանթոռ Դշխոյին
երկնից, որ կամեցաւ հաստատել զայս միաբա-
նութիւն, և յանձն առ կոչել զանուն իւր 'ի
վերայ մեր. այլ դու, հայր, անցո 'ի մէնջ զամենայն
երեսաց մերոց, և լսելի արա մեզ զայն ձայն
քաղցր. — Ա՛ի երկնչիք. կացէք հաստատուն 'ի
պատուիրանին, որ աւանդեցաւն ձեզ. և ձեռք
Տիրամօրն ոչ վերասցին 'ի ձէնջ։

1834

ԵԵՐԲՈՂ

Ի

ՄԵԾԱՐ ԱՐԱՐԱՉԻՆ

ԲԱՐՁՐԵԱԼՆ, ո՛ աստուածապատիւ Տէր և խնամատարդ կաՀնաւ, Բարձրեալն, որ 'ի բոլոր ունի զամենայն, 'ի տիեզերական վՀէն 'ի դուրս էած զէակքս առ Հասարակ միով քաղցր շարժմամբ յօնիցն, և իբրև զգնտակս խաղալկաց ոստոյց յամենակալ ձեռացն զլայնատարած գունտս յանսահման դատարկութեան, և եցոյց նոցա ՀանապարՀս անստերիւր'ի գեղեցկայարմար բարեկարգութիւն Հանցն տիեզերաց. և ձայնիւ բարբառոյն վայելչագեղ պատրաստեաց զայս ընդարձակատարը բնակարան պատուականագունիս արարածոց իւրոց գեղեցկապար ընթացիւք մանուածաւալ առուակաց, չքնաղագեղ նկարուք անուշահոտ ծաղկանց, մեծատարած ծմակային Հովանեաւ բարձրաձաղկ գոռոզ անտառաց, աշխոյժ օդապարօք, վսեմ, վիթխարի, երագընթաց և բիւրապիսի չորքոտանեօք, և գունագոյն զուզակացն զանազանութեամբք. զայս ամենայն միով ակնարկութեամբն կատարեաց։

Բայց թէ յերկրածնաց զոք մեծամեծ խոր-
հրդոց իւրոց ընտրեաց երբէք սպասաւոր, ընդ
կորզան Ձգանց կամեցաւ անցուցանել նախ զնա,
և իբրու այն թէ քրտամբք վաստակաբեկ Ձա-
կատուն պատրաստեալ զատաղձն, եթէ ներբէ
ինձ այսպէս ասել, ապա կառոյց զշինուածն ամ-
բարտաւան, զոր կամեցաւ նշանակ կացուցանել
դարուց ժամանակաց 'ի ծովահանդոյն ալէտանջ
յաւիտենից։

Անտանդ թէ և ինքն իսկ ամենաբաւական
բնութիւն, յորժամ էջ յերկնից՝ ծածկեալ ընդ
մերակերպ պատկերաւ զմեծի փրկագործութեան
կատարել խորհուրդ, հրաժարեցաւ յաքբայական
թագէն, զոր երախտագէտ ամբոխ ժողովրդոյ մե-
ծարանօք մատուցանէին առնս. քանզի 'ի խնդիր
էր փշեղէնին, որում և կամակար մատոյց զաս-
տուածային Ձակատն։ Ոչ դանց առաւելութիւնք
կշիռ էն մեծութեան գործոց։

Այսօր, եթէ հնարէեսցէ ինձ ատեանս պատ-
կառելի ներողամիտ ունկնդրութիւն, 'ի սոյն վար-
դապետութիւն աշակերտեսցէն զմեզ և բաղմա-
վաստակ կեանք Այսիթարայ։

Զանզի հաճեցաւ Այմենատէրն իւրովքն ազ-
դողազոյնս տպաւորել 'ի մեզ զայս Ձմարտութիւն,
ընդ ժամանակս ժամանակս ցուցեալ մեզ զնոսա
քաջալերութեամբ տարացոյց 'ի դժուարակոխ սա-
պարիզն կենցաղոյս։ Որպէս զի եթէ յանկարծ
զոք 'ի կեանս աղցաւոր անպարտակիր հանդիպեսս-

ցի անձկութեանց, մի վհատեսցի. այլ մնասուցանդ առաւել ևս առեալ խրախոյս, 'ի միտ առցէ թէ զուցէ ոչ վարկպարազի ինչ բուռն հաբեալ իցէ կատարել զործ։

Ուստիր ապա, ով մարդ, զի 'ի մեծամեծս մեծամեծ վաստակոց պէտք են, քրտանց, հառաչանաց և ոգեսպառ վշտաց. եթէ կամիցիս թողուլ յերկրի հետս լուսաւոր, կամ զործ, որ յաղթական իցէ նախանձու ոխերիմ ժամանակին։

Մանաւանդ զու, աշակերտ Մխիթարայ, հայեաց միանգամ 'ի նախահայրն քո. տես և 'ի միտ առ թէ որպէս եկեաց նա, որպէս յաջողեցաւ 'ի զործն մեծ և կարևոր։ Մեծ՝ զի արտաքոյ էր մարդկային կարողութեան։ Կարևոր՝ զի առանց այնր օտարախորթեալ այժմ 'ի խաւարամած վիհ ոգիտութեան, թերևս և 'ի բազմաշաւիղ մանուածոյ ոլորս մոլորութեան դանդաչելիր։

Կեանք Մխիթարայ նուիրեցան միայն յայս զործ մեծ և կարևոր. կեանք Մխիթարայ լի եղեն մեծամեծ տառապանօք՝ և վասն այն մեծ է արդարև զործած Մխիթարայ և հրաշալի. մեծ է և անուն Մխիթարայ և անմահական յերկինս 'ի քնարս հրեշտակաց, յերկրի 'ի բերան համայն տիեզերաց։

Այլ որպէս հնչիւն արձագանգաց 'ի հարկանելն առնէ պատասխանի, հաղիւ հնչեցեալ ա-

նուն Ա՛խիթարայ, և յամենայն սիրտս պատ-
կառելի ժողովոյս ձայն տան մեծարանք, բանք
հիացման, հեծութիւնք հառաչանաց։ Այլ ո՞ իցէ
յանդուգնն այն, որ այնչափ ինչ իշխեսցէ հա-
մարել զանձն, զի Ճախարակեալ բանիւք և կու-
տական իմաստիւ փառս և շքեղութիւն յաւե-
լուլ համարիցի յանուն այսպիսի, յանուն Ա՛խի-
թարայ։

Ա՛յլ ես՝ թէ յանդգնիմ երևել այսօր 'ի հրա-
պարակիս, յորում Ճարտարագոյնք քան զիս և
պերճախօսք 'ի բեմէ աստի ունկնդրութեամբդ
ձերով պատուեցան, ձերոյ ներողամտութեանդ
հաւաստիք են։ Այլ ինձ չէն կորանաց բանք խոս-
տովան լինել անկեղծաւոր լրջմտութեամբ զկա-
րի յոյժ նուաստութիւն իմ քան զառաջարկու-
թիւն բանիս։

Օ՛ որ և ոչ արդեօք համարձակէի յանձն առ-
նուլ, ո՛վ իմաստաՃեմ ժողով, եթէ օտար ոք
էիք դուք յայնմանէ որ ինչ էքդ։ Այլ ակն ունիմ
զի նոյն ինքն ներողամտութիւն ձեր՝ անշուշտ
լրումն ածեալ անպաՃոյՃ իմոց բանից, նուաս-
տախոհ բանիւք ոչ ատուերածս ինչ արկիցէ մեծա-
մեծար առաքինութեանց նախահօրս մերոյ։ Այլ
ոչ կասկածեմ թէ պատրիցէ զիս մեստի ակն-
կալութիւն. քանզի ներողամտութիւն անմեկին
է 'ի Ճշմարիտ իմաստութենէ։

Այլ չէր ինձ ծանօթ առեանս, որ զաղնուա-
կանութիւն մարդոյ յառաքինութեանցն չափէ և
ոչ՝ի ծննդենէն, հանդարձակէի այժմ առաջի առ-
նել առանց երկիւղի վրիպելոյ զմեծատոհմ ազ-
նուականութենէ նախահարց Մխիթարայ։ Օ՛ի
սկիզբն մեատանեբորդի դարուն տարաղակա-
ցեալ յարիւնառուշտ դարանակալութենանց հա-
զարացւոց և սկիւթացւոց, որ յաւէր յանա-
պատ դարձուցանէին զգեղեցկանիստ տուն Հայ-
կայ, ընդ Անեքբերիմայ արքայի մեծահամբաւ
աշխարհին Ասպուրականի ուստանիկք գաւառին
դիմեցին՝ի խաղաղաւէտն Աբբաստիա, ընդ հո-
վանեաւ քրիստոսազօր կայսերայ Կոստանդնու-
պօլսի անվրդով կենաց քրիստոսական առաքինու-
թեանցն պատկառ կալ։

Ընդ՝ի Աբբաստիա յաղնուական շառաւիղաց
անտի՝ի կատարած կոյս եօթնեւտասներորդի
դարուն եբաց Մխիթար զաչսն՝ի լոյս արփենե-
ւոյն. ոչ յուրախութիւն միայն հանդերձն ազ-
գատոհմին, որ մշտամնունչ պաղատանաց զնորս
Սամուէլ խնդրեր Յ՚Աստուծոյ։ Լրաւամբք. քան-
զի նեցուկ տան և ազգատոհմին հանդերձն զա-
ւակք արու, զոր ցայնվայր չէր հաճեցեալ Տէր
շնորհել նոցա. զի անագան շնորհն ցանկալի էս
եղիցի։

Բայլ այս մանուկ ոչ միայն հանդերձն՝ տանն
զրաւ եղև ուրախութեան, այլ և ամենայն ա-

բամեան զաւակաց։ Օ այս Ճշգրիտ գուշակեաց և անուամբն, զոր յաւուր նուիրելոյ սպասաւորութեան սեղանոյ Տեառն առնոյր զանձամբ՝ զոլ Մխիթար տաւապելոցս 'ի ստուերամած վայրս բազմամոլար տգիտութեան։

Պարտ էր ինձ աստանօր առաջի առնել ձեզ զՄխիթար՝ զի բազմավաստակ և անխոնջելի բազկօքն բրէ և հարթէ զառապարս դժուարակոխս սառուցեալս յաստուածայինն սիրոյն, և տարածէ ոտից որդւոց Ադամայ արահետ պողոտայս 'ի բերկրալից տաճար Ճշմարիտ իմաստութեան։ Պարտ էր ինձ նկարել ձեզ զպատկառելի ժողովաղեացն, որ մի զմիով եղևեալս առնէին քաղցրացուցանել զշրթունս նորա հոգեբուխ բանիւք աստուածայնոց մատենից տալ կերակուր քաղցելոցն թորգոմեանց։ 'Ներեցէք ինձ գոչել աստանօր. վեհ ինձ Մխիթար, որ զլրութիւն անուշից բովանդակէր 'ի շրթունսն՝ քան զհրաշալին Պղատոն. զայն, յորոյ յերկբայիկ դրուն բերանոյն մեղրածին որդնն սակաւաբեռն թիկամբն զհոյզս մթերէր անուշից. որպէս հաճոյ թուեցաւ ասել յունական ջերմ երևակայութեան։ Պարտ էր ինձ նկարել ձեզ զՄխիթար զի յաղթական բազկօքն յերկրէ յերկինս երկնաչու սանդուխս կանգնէ յեկեղեցւոջ հայաստանեայց, որպէս զի տարագրեալքս յերկրաւորէն յերկնաւորն դիւրահուպ եղիցուք դրախտ։

Ա.յլ բա՛ւէ, յառաջ քան զփառան զայն ան-

պատիր և միանձնեաւոր, ոչչափ քրոնանց պարտ է, նման հանքերել. ոչչափ խուչընդակաց լինել յաղթական. քանի աւուրս ցաւոց անցուցանել. սակայն մի կանխեացուք մեծագնել անպոռ զնշոյլս գեղածաղիկ մանկութեան նորա։

Ծնողք Մխիթարայ երկնաւորաւն առաւել քան թէ երկրաւոր լցեալ Հոգեւորութեամբք, զայն եղին կէտ նպատակի դաստիարակութեան որդւոյն իւրեանց, զի մանուկն աճեսցէ յերկիւղն Աստուծոյ, որ սկիզբն է ամենայն իմաստութեան։ Եւ առաւել քան զծնողսն զնոյն ջան 'ի մտի էդեալ նորա՝ 'ի վեր երևեցոյց կանխահաս երախայրիս աստուածային սիրոյն։ Եւ 'ի գեռահասակ թոթովախօս բերանոյն լսելի լինէին բանք աստուածազգեցիկք, զոր ոչ միայն 'ի յիշողականին, այլ և 'ի սրտին տպաւորեալ պահէր մանուկն հնգամեայ։

Եւ իբրև այն ինչ ընդ փշալից և ընդ դժուարակոխ Հանապարհս անցանէր նախակրթութեց, վարդս բուսուցանէր անուշահոտս, և բոլորէր պսակս քաղցրանուագ երգոց 'ի գլուխ Աշխոյին երկնից, զոր 'ի տխեղծ հասակէն ընտրեաց իւր մայր և խնամակալ։

Ի մանուկն հրաշալի անմեկին էին ջանք ուսմանց յանխոնջ նահատակութենէ առաքինաջան վաստակոց։ Եւ ոչ միայն հեռացեալ մեկուսանայր 'ի մանկական խաղալկաց, այլ և իբրև զայր կատարեալ նահատակէր յասպարիզի բրիս-

տոսական խմաստութեանն։ Եւ զմարմինն, որ անծանօթ էր տակաւին ապստամբ շարժմանց ապականելոյ բնութեան, Ճնշէր խիստ խարազնազգեցութեամբ, 'ի սպառ հրաժարեալ 'ի մոց և 'ի գինւոյ 'ի տասնամեայ հասակէն։

Վերեւս հիանայք, Հարք սուրբք, եթէ զիա՞րդ 'ի սիրտ փափուկ այդչափ արիութիւն։ Այլ զի-տէք իսկ զի ոչ եթէ առաժամեան մանկական եռանդեան դիւրանցուկ իղձք ելցեն այսոքիկ. այլ զամենայն կեանսն ոչ մեկնեցաւ 'ի խաչէն, յորում 'ի մկրտութեանն աւուր խաչակից բեւեռեցաւ սիրեցելոյն իւրոյ Յիսուսի։

Ընդէք, աղաչեմ, վայր մի մտաք 'ի Վերիա. տեսէք զի ահա ոմն մերձենայ առ նա զաղտագողզի։ Մի է նա 'ի մտերիմ բարեկամացն՝ որ ածէ նմա շապիկս մաշկեայ, և խաչք երկաթագամ 'ի լանջաց և 'ի թիկանց. զի զկարծր այծեայսն, զոր 'ի մանկութենէ կրէր յանձին, թէթև տանջանս համարեալ այնուհետև անմեղսակիր անդամոցն, զերկաթագամն զայն արկանէր զանձամբ. և 'ի խորս սրտին անմեռունչ բարբառով գոչէր հանապազ։ Ո՛վ Յիսուս, փեսայ երկնաւոր, զրեցիր երկաթով զսուրբ անուն քո 'ի վերայ մարմնոյ իմոյ, և 'ի վերայ ոսկերաց իմոց քանդակեցիր արիւնաշաղախ տառիւք զյաղթութիւն քո. զի քև միայն պարծի անձն իմ։

Ինձ դանդաղելի է աստանօր յիշատակել զիսարաղանաբախութիւնն զիշերականս, երկաւուրքք

զանձաշակ ծոմապահութիւն, զծարաւի զեօթնեակսն։

Բայց բաբէ, եթէ յանկարծ ընկճեսցի մարմինն տկար յանսովոր խստամբերութեանց, զինչ եկեղեցի Աղբիստոսի, զինչ լինիցին փառք քո 'ի վայրսն, յորս երբեմն նախաժամանն փայլեր լոյս քո. յորս թագաւորք յարքայական զահոյից քարոզք լինէին ծագաց ցծագս երկրի նորասքանչ փառաց քոց · յորմէ ժողովեցին զուարթունք զկանխահաս շուշանն ծիրանեփայլ յառաջին զարդ ամայի դրախտին երկնաւորի։ Սակայն մի ինչ խռովեսջիք, ընդ նմա է ձեռն Տեառն, որ այսպէս զքրիստոսական նահատակս կրթէր յընտանի պատերազմին, զի արիագոյն ելս հանդիսասցի 'ի փորձ օտարայն և դժուարագունից։

Իբրև այն ինչ մարթացաւ քայլափոխս քանի մի առնել ինքնին, ելոյց թէ յո՞ր վայր ուղղիցին այն ընթացք, որ յաւուր միում զընթացս բազմաց ուղղելոց էին յերկինս։ Բայց և յայնժամ զոյգ նմին ելոյց Տէր, թէ յառաջ քան զայն ամենայն մեծամեծս, ընդ փորձ ծանուցեալ վշտաց անցուցանելոց էր զծառայն իւր։ Եւ ահա երաշխաւոր արտասուքն, որ ընդ փափուկ ծնօտս մանկանն ինքանէին, և մայրակոչ բարբառն, որ զմերձակայ լերինս Աբրահամոյ հնչեցուցանէր. յորում 'ի ծերպս ուրեք զողեալ Մխիթար՝ ապաստեալ ճնայր առատաձայնագոչ հայկանն ընդ Յովհաննու Մկրտչի։ Իսկ մայրն տառա-

պեալ սիրտ 'ի բերան 'ի խնդիր էր հեատոց որդ-
ւոյն։ Եւ ուր Թափառական շրջիս, կին դու.
գնա ընդ Ճանապարհն՝ որ հանէ յերկինս, և անդ
գտցես զՄխիթար։

Մխիթար 'ի տխեղծ հասակէն անմեկին էր 'ի
տաճարէ Ցեառն հրեշտակաց երգակից. սուղ
էին նմա երկարութիւնք տուընջեան, այլ և
զգիշերս ողջոյն ընդ տիւս խառնէր. յաղօթս
տեսանէին զնա աստեղք երեկոյին, յաղօթս
վարդագոյն արշալոյս առաւօտուն. որով և քան
զհասակն կանխեալ ժամանեալ ըղձիցն, ցան-
կայր փութայր հրաժարել յաշխարհական զբա-
ղանաց, զի միայն զմիայնակ սիրելին խնդրեսցէ,
զնա կալցի, մի՛ անջատեսցի 'ի նմանէ։

Լակ ծնողքն, թէպէտ և միամօր էր զաւակն,
թէպէտ ակնկալութիւն համօրէն ազգատոհմին,
ոչ խափանեցին զյօժարութիւն որդւոյն, ցան-
կացան նոքաւ ընդ երկնից առաքել բարեկամու-
թիւն, և այնու ազատեցաւ երկիրս Հայոց 'ի
վտանգէ կալոց մնալոց տակաւին 'ի խաւարի տգի-
տութեան։ Գնա, ասա, փութա Մխիթար 'ի
մենարանդ, անդ գուն գործեա նուաստացուցա-
նել զանձն, զի այն իսկ է սքանչելի Ճարտարու-
թիւն միանալոյ ընդ Աստուծոյ, որպէս զի 'ի ծո-
ցոյ նորա ծագեսցես մեզ արեգակն լուսատու։

Ոչ այնպէս եղջերու փութայ առ ափն վտակին,
ոչ այնպէս առու ականակիտ կոծեալ 'ի սայրս
քարաժայռից Ճեպընթաց սրանայ արծաթա-

փայլ՝ Թափառական ընդ դաշտս 'ի խնդիր մեծի հիւսուրցն ովկիանու խառնել ընդ վսեմ ալիս նորա և խաղաղանալ անդէն, որպէս Մխիթար 'ի ծանրատաղտուկ զբօսանաց աշխարհի դիմէ 'ի միայնանոց որբոց՝ Լճանի Խաչին, ապաւինել 'ի գիրկս Մօր իւրոյ, որում և զմեզ գրեաց բարեբաստիկ որդիս։

Լճանի՛ աստուածանուէր մենաստանին, որ ասպարէզ տարածեցար անպարտելի առաքինութեանց նորա։ Ո՞ տայր ինձ բան 'ի բերան և հանձար բաւական նկարագրել ձեզ զՄխիթար, որ մերթ ընդ ծովահանգոյն մնատենից ընդ խորն նաւարկեալ, և աստուածաշունչ իմաստիւք ակաղձեալ զմիտն, վարդապետ նստէր Ճշմարտութեան 'ի դեռաբոյս հասակին՝ ժողովրդոց և ուխտի մանկանց։ Մերթ զսեռան մաշէր վարդապետաց ժամանակին յուսումն գիտութեանց՝ յաչս եղեալ զամենայն Ճիգն գժուարաբառնալի. այլ աւա՜ղ, զի նոքին իսկ վարդապետք օտարացեալ էին յայնմանէ։ Մերթ ուղիղ վարուց վարժապետս խնդրեալ՝ հետի և բոկագնաց, անփոյթ և հիւանդաքայլ զլերինս հատանէր և զդաշտս, զցայգ ցրտաբեկ և զտիւ տանջեալ տօթակէզ։

Մարտեան ընդ նմա տարերքք, գետք և ծովմարտեան ընդ նմա գժուարակիր հիւանդութիւնք. մարտեաւ ընդ նմա և ինքն իսկ բանասարկուն ինքնադիմաբար աղտեղի և հայհոյական խորհրդովք։ Այլ նա իբրև զմարտիկ առա-

քինի ընդ քիրան եկեալ և ընդ ապաժոյժ 'ի վերայ փառաց Տեառն՝ և յաղթական ամենայն զիմանարտութեանց հակառակորդաց, յերկնից 'ի վերուստ ընդունէր զբարբիոն մրցանակին։

Ընդ երկար անմարթ էր մնալ 'ի խուսարի գերահրաշ ոգւոյն Մխիթարայ, որ զամենայն տեսողս 'ի հիացումն կրթէր։ Եպիսկոպոսք և վարդապետք ժամանակին յափշտակէին զնա յիրերայց յիւրեանց աշակերտութիւն։ Ընձկութիւն ժամուս խափան արկանէ ինձ յիշատակել աստանօր զշարս անուանց Ղ. ազարայ, Մինքայելի, Մելքիսեթայ և Ս. Էտէքի զեպիսկոպոսաց, և զվարդապետացն Յովսեփայ և Ղ. Գրիգորայ։ Զողովուրդք 'ի բեմն վարդապետութեան ցանկային ունել զնա իւրեանց վարդապետ և առաջնորդ, և խուճապեցուցանէին յատուիճանն սրբութեան։ Ա. յլ դու, Տէր, որ ըստ կամաց խորհրդոց քոց անօրինեաս զամենայն, և յամենաշնորհ բռին ունիս զգէպս իրաց աշխարհի, յայլ ինչ սահմանեալ էր զՄխիթար։

Ար անդ 'ի վանս սրբոյ Հրանին հնգետասանամեայ նուիրեր զանձն սպասաւոր սեղանոյն. զինի ամաց հնգից կոչեաց զնա Տէր յահաւոր աստիճան սրբոյ քահանայութեան, և յետ երից ամաց առնոյր զպատիւ վարդապետութեան, որ 'ի սարկաւագութենէն սկսեալ էր ուսուցիչ լինել ամենեցուն Հանապարհին երկնից։ Ա. յնուհետև համարձակագոյն ևս յասպարէզ մտանէր

արին Մխիթար. որոյ հասակ թիկնաւէտ, ձա-
կատ ընդարձակ մեծամեծ խորհրդոց օթևան,
աչք աշխոյժ և հանդարտահայեաց՝ ընդարձակ
սրտին պատկեր անխաբելի, կերպարանք զուարթ,
ձայն արի, և բարք քաղցունք, կապէր զամե-
նեսին 'ի սէր իւր՝ հազիւ միանգամ ակն արկեալ
'ի նա։

Ա.ՅԼ վայր մի աղաչեմ յեռս ընդ կրունկն
դառնալ ընդ իս, և տեսանել զդժուարին ձա-
նապարհորդութիւնն, զոր յանձն առնոյր 'ի
Մեբաստիոյ Յ.ՋՄԻԱԾԻՆ. անդուստ 'ի Սևան.
հակիրճ հատանել՝ զոգցես յամենայն վանս
հայաստանեայց. արհամարհեալ զդարանակալ
վտանգս անհարթութեան օդոյ, ջուրառնալիս
գետոց և աւազակաց, զարկածս դժոխքմբեր հի-
ւանդութեանց։ Այլ առ ինչ։ — Ի խնդիր վար-
դապետի հոգևոր կենաց։ Ա.ՅԼ բա՛ւբէ, և ոչ
գտանէր։

Ա՛Հ, միւսանգամ ակն ունին քեզ այդ ձանա-
պարհք, միշտ անխոնջելի. սակայն ոչ իբրև
աշակերտի, այլ պասքեալքն 'ի բանէն առատա-
բաշխ մատուռակ աստուածային ձոխութեանց
յուսան ընդունել զքեզ։

Օ այս անձուկ սրտին յաւուր միում, օր բիւր
երանութեանց արժանաւոր, հառաչանօք և հոր-
դահոսան արտասուօք սիրէր 'ի Սևան առաջի
Տիրամօրն առ սեղանով Ն.նահին։ Այլ որչափ
'ի դժուարագոյն ձգունս պատրաստէր Բարձ-

բեալն զնահատակ իւր , այնչափ կարեւորագոյն ձեռն օգնականութիւն կարկառեաց նմա 'ի յերկնից ։ Եւ ոչ որպէս երբեմն 'ի Սաբելն առ տեսանող իւր զոմն 'ի զուարթնոց , այլ նոյն ինքն զԱյրն յղէր առ Մխիթար կուսանօք երկու ։ Ծովացաւ յաստուածաբնակ տաճարին լոյս երկնաւոր , և հեզիկ բարբառ մայրենի . — Օ՜ինչ խնդրես , հնչէ առ Մխիթար ։ — Այլ անբարբառ է առաւելութիւն զեղման սրտին ։

Մինչև միւսանգամ Հոգեոյն երկնից ինքնին շարժեաց զվարդագոյն շրթունսն , և իբրև զքաղցրաձայն տաւիղ խրախուսեաց զնա ։ — Օ՜ինչ կամիս . խնդրեա և տացի քեզ ։ — Ոչք սահման պայմանի . որչափ իցէ կարողութիւն մեր Մեծակալին , ահա առաջի քո . ընտրեա զինչ և կամեսցիս ։ Եւ արդարև ընտրեաց Մխիթար զարժանին ։ — Իմ միտք չափաւոր են . կամք նմին զուգակից . քեզ , որոյ անսահման է կարողութիւն , յանձն առնեմ զպէտս իմ . դու գիտես զոր պիտոյն է , և դու կարող ես տնօրինել զարժանն . ապա զայն կամիմ, զոր դու կամիս ։ — Եւ ընկալաւ պատասխանի . — Հղեցի քեզ , զոր խնդրեցերդ ։

Ո՛հ պատասխանի քաղցր , պատասխանի առհաւատչեայ ամենայն երանութեանց մերոյ ։ Հապա զօրացիր Մխիթար , մի ինչ վհատիցիս ։ Ա՛ր ժամանակ կամիս վարուց սրբութեան . և դու լիցիս վարժապետ անստերիւր առաքինութեան . դու ինքն սուրբ լիցիս և աշակերտս բազումս

սրբացուսցես։ Տրամեցուցանէ զքեզ այն՝ զի վայ-
բաւատին է, ազգդ, և 'ի կործանել միտագոյն. ե-
ղիցի քեզ. զու նեցուկ լիցիս նորուն ամրութեան։
Ա Հատեցուցանէ զքեզ տգիտութիւն ժողովրդ-
դոյ. եղիցի քեզ. զու հայր եղիցիս հարանց և
վարդապետ վարդապետաց ապաշխարութեան։
Սարդիոստայնք անկեալ իցեն յեկեղեցւոջ հայ-
աստանեայց. եղիցի քեզ. զու ինքն իբրև զՀարան
գեղեցիկ զարդու զարդարեսցես զնա. զու ինքն
փեսաւէրս անարատս պատրաստեսցես փեսային
Քրիստոսի։

Ո՛վ Հաղբ, լցաւ յայնմ աւուր Մխիթար ան-
պատում խնդութեամբ, զի զձեզ, ո՛վ տեսիլ
բազմազուարթ, զձեզ 'ի միտս իւր տեսանէր.
զվաստակս ձեր յայգւոջ Տեառն նկարէր յաչս
և ուրախ լինէր։ Ի նմին աւուր կանգնեցան ան-
շարժելի սիւնք այսր շինուածոյ, որ արհամարհէ
զսպառնալիս դարուց բռնակալաց։ Ի նմին աւուր
դղրդեցան և դժոխք. քանզի 'ի միտ առին, եթէ
զաղնուագոյն աւար նորին կողոպտեսցէ Մխի-
թար յանիրաւ ժանեացն։

Ա՛ռ վասն այնորիկ դժուարագոյն մարտս յա-
ղոյց այնուհետև 'ի վերայ, որ մարդատեացն էր
'ի սկզբանէ։ Պարանակալ եղև կենացն, այլ
մահահոտ հանդերձք ոչ ինչ ազդեցին նմա. հաղ
մնասակար, և ոչ տկարացոյց զօթևան կենդա-
նութեանն. Հար զնա կուրութեամբ։ Այս
թերևս բռնաւորագոյն քան զամենայն պատե-

բազմունեան։ Այն աչք որ միշտ յարարածս զաբարիչն տեսեալ՝ անհատ փառաբանութիւն առաքէին. այն աչք որ 'ի գերաշխարհիկ տեսիլս ակնկառոյց լեալ էին, տեսիլ բնութեան անեւոյթ եղև 'ի սպառ յաչաց անտի։ Այլ ընդէր փակին, Տէր, աչք Մխիթարայ, և բաց են այն աչք՝ որ արժանաւոր են յաւիտենից խաւարին. այն աչք՝ որ թշնամանեն զմեծվայելչութիւն փառաց քոց, և զգեղեցիկ զայն քոյոց ամենաձարտար մատանցդ գործած վարեն յանարժանս։

Այլ Մխիթար ոչինչ վհատի. և գոյժ լալոց և ցաւոց տանն համօրէն հազիւ ընդ ականջն բաղխին։ Այրապար 'ի խիստ ցաւոց տանջին անդամքն, մինչ զի գողանալ 'ի նմանէ և զքուն. վայրապար արտեւանունքն բորբոքին անհանգուրժելի ցաւովք։ Աչդողագոյն ևս նշողէ մնայն լոյս. որով ոչ միայն զանտեսանելիսն տեսանէր աչօք հաւատոց, այլ և շօշափէր իմն ձեռօքն իբրև զեղեալքս. ունէր 'ի մտի անջնջելի զխոստմունս Տիրամօրն, և 'ի կուրութեան անդ իւրում երգէր զփառս նորա։ Այլ որպէս հաւատայրն, ընդունէր միւսանգամ զլոյսն աչաց, որ բանալոց էր զաչս բազմաց խաւարելոց 'ի յաւիտենական լուսոյն։

Ի դերևս եղեն և այս մեքենաւորութիւնք բանասարկուին։ Սակայն նա անխոնջելի 'ի մարտս իւր։ Գանղի նա լաւ ևս քան զմեզ Ճանաչէ՝ եթէ որչափ ծանրագնի իցեմք։ Այլ վասն այնորիկ մի

հանարիցիկը թէ մինչև ցայս վայր իցեն դաւանա-
նութիւնք նորա . թէ մինչև ց յատակն արբեալ
իցէ Մխիթար զբաժակն դառնութեան վշտաց ։
Մեծ ևս նահատակութիւնք կան նորա առաջի ։

Ցեսաք զիարձ վշտաց Մխիթարայ , որով հան-
զէս արար աստուածային սիրոյն ։ Բ. սէր Ա-
ստուծոյ նուիրեր զմարքութիւն մարմնոյն , և տան-
ջեր զնա խիստ խոշտանգանօք . առ սիրոյ նորին
յաչս դնէր զամենայն անձկութիւնս դժուարին
ճանապարհորդութեանց . զանձուկ սէր սրտին
ցուցանէր 'ի համբերատար հիւանդութիւնն .
զսէր Աստուծոյ քարոզէին անեղիւզ բանք նորա
անդ 'ի Վասրոս ընդդէմ հայհոյիչ բերանոց աս-
տուածամարտիչն ։ Այս ամենայն դժուարին ա-
ռաքինութիւնք , սակայն ոչ օտարոտի և նորա-
գործ ։ Դժուարին այն՝ զհանձար մտաց նուի-
րել Աստուծոյ , զայն՝ որոյ վասն ոչ մարդիկ միայն
մահկանացու , աւա՜ղ , այլ և գերագոյնն արարա-
ծոց Աստուծոյ ըմբոստացեալ գնաց վտարանդի
յերեսաց Ցեառն ։

Սակայն Մխիթար ոչ սրովբէական ևեթ վա-
ռեալ էր բոցով սիրոյն , այլ և քերովբէից հան-
գոյն՝ հանգիստ լեալ էր Բարձրելոյն . արկ պա-
տուանդան ոտից նորին ինքնանուէր զայն , զոր
յառատաբաշխ պարգևացն Աստուծոյ ընկալեալ
էր ։ Դիտեմ զի վաղ քան զիս կանխեցիք ժա-
մանեցիք դուք 'ի սենեակ Մխիթարայ յիւր
սիրելի վասն 'Լուսնին սրբոյ . տեսարան անթա-
ռամ փառաց նորա ։

Պարձ առնէ 'ի հոգեկեցոյց քարոզութենէ 'ի լուութիւն սենեկին, խնդրէ Մխիթար զմտաբեռանն և զվարդապետութիւնս բանին Աստուծոյ, զոր մթերեալ էր ինքնին յանդաստանաց աստուածաշունչ տառից և սրբոց հարց՝ յուղղութիւն վարուց բարեաց և 'ի զգաստութիւն մանկտուոյն յերկիւղն Աստուծոյ։ Անվրդով մտօք ծանեաւ եթէ բարիատեաց նախանձ, որ զկենդանարար ժանիսն սրէ ընդդէմ ամենայնի, որ լաւագոյն ի՝ցէ յաշխարհի, յատիշտակեալ է զայն ամենայն։ Այլ ծուխ անօրէնութեան կալեալ զաչս Պառուկայ ուրումն՝ անուամբ Եթէ կրօնաւորելոյ, յանդուգն լրբութեամբ մատչի առ նա անպատկառն և քրքիջ դիւական արձակէ։ — Այս 'ի հուր ետու զամենայն, զի փախիցէ Հոգին։

Պատմեցոյց հայհոյութիւն զՄխիթար, այլ ոչ եբաց բերան։ Մի՛վ արիութիւն անպարտելի։ Այլ այնու արիութեամբ զնորոյ ազգատոհմիս ժառանգեաց զՀայրապետութիւն։ Նա՛ել առաքինութեանն. կատարող աստուածահրամանն պատուիրանին չարհամարհելոյ զեղբայրն, այլ մանաւանդ սիրելոյ զչարարարսն և ունելոյ զնոսա 'ի լաւագոյն բարեկամաց համարի. և ոչ զգոյն դիմացն այլափոխեաց. և զսէր եղբայրական առաւել ևս այնուհետև շռայլեաց 'ի նա։

Այլ աւա՜ղ, մեծի խմիք ցանկայր Մխիթար, որ 'ի միում նուազի ջրասոյզ կորստեամբ ամե-

նայն երկասիրութեանց իւրոց առ Մելիտաւ 'ի գաղնանազայրն Մելաս շահեալ էր զկեանս սիրելոյն իւրոյ Ղոշնանու վարդապետի, և միւս անգամ յանուանեալ Կարմիր վանան Կարնոյ աւար Ձոխ, զոր տկարացան պատճառաբանութիւնքն, համբերութիւն նորա յաւիշտակէր 'ի հաղթից մոլորութեան զՊրիգոր եպիսկոպոս բարեկամ իւր և Ճշմարտութեան՝ իբրև լուրջ դէմն ցուցանէր բռնցի կուսահարութեանց նորա։ Ա. յոգիկ սովորական յաղթանակք էին Մխիթարայ, յաղթանակ պերճ. որում ակամատեսս եղև և կղզեակն՝ տեղի քառասնօրեայ զգուշութեան կասկածաւորելոց 'ի ժանտախտէ՝ մերձաւոր մեզ. մինչ դեռ ընդ վրէժխնդրութեան՝ հաց տայր թշնամւոյն իւրոյ և հանդերձ յօտար միայնութեանն. և զբոց սիրոյ Ճշմարտութեան՝ փոխանակ կայծականց հրոյ՝ կուտէր 'ի սրտի նորա։ Ա. յլ աւաղ, զայս նուագ վրիպեցաւ 'ի ցանկութենէն Մխիթար, և երկինք ինքնին յարեան նմին վրէժխնդիր։

Արդէս ըմբիշ արի յետ երկայնաժամանակեայ կրթութեանց 'ի վարժս արուեստին, և յամրութիւն ջղացն և ոսկերաց և 'ի պնդութիւն դիւրաշարժ անդամոցն, մատչի ապա յասպարէզն ձայն տալ հակառակորդին. այսպէս և Մխիթար 'ի կրթարան մենարանաց զօրացեալ 'ի դժուարին արուեստ առաքինաջան քարոզութեց, դիմէր 'ի քաղաքս և 'ի գիւղս վարդապետ և ա-

ռաջնորդ երկնաւոր հանդիսից ։ Լուսազեցան քաղաքք քարոզութեանց նորա . կարձատեցան հեռաւորութիւնք ձանապարհաց անվաստակ ընթացից նորա . և համբաւ առետարանին խաղաղութեան հնչէր ընդ ամենայն սահմանս Հայոց։

Աստանօր դու ընդ իմ խօսեաց , եկեղեցի Արիստոսի . բաց զբերան քո , որ 'ի յաղթանակս քո 'ի համար արկանես զբազում անգեղջս 'ի մեղաւորաց՝ բանիւ նորա յանձին բերեալ կըրօնս սրբութեան . բազում մոլորականս 'ի ծոցոյ քումմէ՝ դարձեալս առ քեզ . վարդապետք և եպիսկոպոսք զիմեն 'ի գիրկս քո 'ի յորդոր բանի բերանոյ նորա ։ Այլ և դժոխք խօսեացին , յորոյ 'ի ժանեացն քաղաքս և գիւղս ողջոյն յափշտակեաց Մխիթար , ո՛վ շքեղ կողոպուտ . քանզի չէք ազդողագոյն գովութիւն յաղթականին քան զպայրոյթս թշնամւոյն ։

Արդարդ է ինձ աստանօր յուշ ածել և զքեզ քաղաք ծննդեան իմոյ , խրոխտագ Փուզանդիոն , որ յառաջնոց եղեր ունկնդրաց առտուածալուր պատգամաց 'ի բերանոյն Մխիթարայ . զքեզ նախ պատուեաց նա . 'ի քեզ կամեցաւ հաստատել զայս ուխտ . ուխտ՝ որ տեսիլ եղեալ է հրեշտակաց , մարդկան և դիւաց . զորոյ արդ ոչ դու միայն , այլ և համօրէն ազգ հայկածին ձաշակէ զպտուղն քաղցրութեան ։ Այլ եղո՛ւկ , ոչ ծանեար զփառս քո . և որ եկեալ էր ձոխացուցանել զքեզ նորագործ ձոխութիւնք , և քան զյաղ-

թական հիմնադիր քո զեղեցիկ և պերճացու-
ցանել զքեզ, զու իբրև զմայր օտարախորթ վը-
տարանդի մերժեցեր զնա 'ի ծոցոյ քումմէ։

Այլ չև 'ի զուրս ելեալ 'ի քաղաքէ աստի,
տեսիլ հրաշալի յաչս իմ հարկանի։ Յանդաս-
տակս եկեղեցւոյն շինիչն իմն հարկանի, և Մը-
խիթար յաւիշտակեալ 'ի սեղանոյ Տեառն զիա-
զաղարար նշան խաչին, և իբրև զկայծակն թռա-
նի առ նոսա. ասասէ ամպարշտաց ոմանց որդւոց
Բելիարայ, որ սպառնային խռով հարկանել խա-
զաղաւէտ եկեղեցւոյն Աստուծոյ։

'Այր Ահարոն' սրբութեան զինուն անջրպետ
կացեալ ընդդէմ սատանայական դաւաճանու-
թեանցն, ինքնին պատնէշ ապաւինի կանգնի
անձամբն եկեղեցւոյն Քրիստոսի։ Տեսիլ արժանի
աչաց հրեշտակաց։ — Օ՜ խռովեալ էք,
եղբարք. մեզապարտս ինդրէք, ահաւասիկ ես.
չեմ ես օտար 'ի նոցանէ, որոց բանտս սպառնայք
և կոչկոնանս։ Այլ թէ արդարութիւն կամիք,
ահաւասիկ խաղաղարարս տիեզերաց, որ ժա-
ռանգս եթող զմեզ խաղաղութեանն, զոր յեր-
կնից առ մեզ եբեր. նա է արդարութիւն մեր.
նոքաւ ոչ միայն կոչեացուք, այլ և եղիցուք որ-
դիք Աստուծոյ։

Այս դաւազանն բազմարուեստ 'ի ձեռին Մը-
խիթարայ գետս արտասուաց ապաշխարութեան
գնացոյց յապառաժացեալ սրտից նոցա. և ցա-
ծոյց զալիս եղբայրազրաւ բարկութեանն։ Ո՛հ,

եթէ Մխիթարք բազումք էին 'ի ժամուն, ոչ այսպէս զառնաղէտ այրիացեալ տեսանէի արդ զքեզ, երկիր Հայրենեաց իմոց, երկիր բազմապատիկ յիշատակաց։

Սակայն ընդէր, Հայր. երբ 'ի կատարումն աճցես զխորհուրդն մեծ և կարևոր, զոր ազգեաց և խոստացաւ քեզ Տիրամայրն։ Ոչ տեսանես զի անթիւ պէտք սպասաւորութեան եկեղեցւոյ. և ո՞ քան զքեզ քաջահանձար 'ի հնարան։ Զոչ նամիք Տեառն ոյժ առնուն տակաւ, և ծովասցին ընդ ամենայն. հակառակամարտ բանակաց պէտք են. ո՞ քան զքեզ արի զօրավար։

Լո՛ արդարև ձայն ետ Մխիթար, և ահա բանք նորա նոր աշխոյժս արութեան վառեն 'ի սիրտ իւրոց ունկնդրաց։ Լ՝ որ թողու լքանել զմթերս ընչից. է որ ուծացեալ գաղթի փախստականաց յազգատոհմէն. է որ մոռանայ զխօսեցեալն իւր, զտուն, զՀայրենիս. արհամարհէ ըզհանգիստ մարմնոյ և զամենայն դիւրութիւն, և դիմեն գան առ նա զրիլ ախոյեան դրանց դժոխոց։ Ոչ բանք Մխիթարայ արձագանգք իցեն երանաւէտ վարդապետութեանցն, որով յաստուածախօս բանս իւր խրախուսէր զմեզ Փրկիչն յեղերաց ծովուն գալիլիացւոց 'ի վերայ հրաւիրեալ յալս երկնից՝ լինել նմանողք ՆՀօր իւրոյ և մեր։

Ա՛յլ էր ծուփք 'ի Ճակատուն. ո՞չ այսմ ցանկայր՝ զունդ կազմել արի արանց, և նոքօք

հանդերձ զոր զոր ծել՝ ի վերայ փառաց անուան Ամենակալին։ Այլ արդ հիմ զուն՝ ի զրանէ՝ ի խնդիր է իմիք, և մերժի յամենեցունց։ — Ահա, ասէ, ժողով արի զօրականաց, այլ զօրավար չիք՝ ի միջի։ — Օ՞ զօրավա՞ր չիք՝ ի միջի։ — Զու ինքն նոցա զօրավար. զու Հակատայարդար. զու ա-ռաջնորդ նոցա՝ ի նոր աշխարհակալութիւն վեհ քան զԱ՝ակեղոնացին զայն՝ յիշատակ դարուց։ Ընդարձակութիւն տէրութեան քո նախանձ արկցէ ընթացից արփւոյն. ասպատակք քո՝ ի Զանգիսէ մինչև՝ ի Ցիլբերիս, ՝ի խրոխան Ցամեսեայ մինչև՝ ի Լեղոս։ Ի զուր վհատեցու-ցանեն զքեզ յաստուածազգեցիկ խորհրդոցդ Խաչատուր վարդապետ և եպիսկոպոսն Արարատ. չիք՝ ի նոսա Հոգի Աստուծոյ. չեն նոքա խորհրդազգածք կամաց Արարչելոյն. զի վարանեին միտք քո։ Ի վերայ ամենայն քրտանցդ և վաստակոցդ՝ ահա քեզ տրիտուր փոխարինին։

Այլ թէ տրիտուր փոխարինին. այլ նա հա-լածական վտարանդի, և եթէ չէր Ցեառն զօ-րութեանց կալեալ զաչս խնդրակաց նորին, որ յայլակերպս ընդ պողոտայս Փուզանդիոյ խու-Հապէին զկնի շաւղաց նորա, այժմ՝ ի դերև է-լեալ էին՝ համ ակնկալութիւք քո, եկեղեցի հայաս-տանեայց։ — Փախիր, ասա, փախիր, Մխի-թար, ՝ի մարդադաւ ափանց այսր։ առաքինու-թեց քոց անմարթ է յարկակից լինել զեղծմանց աւուրցն։ Այլ ահա Մխիթար ամենայն հակա-

ռակ խոչընդակաց յաղթական. արհամարհէ զամենայն մուրացիկ նմանութիւնս. ընթանայ ընդ Ճանապարհ անկոխ 'ի մարդկանէ։

Յարիշտակեաց զնա Տէր 'ի բարկաձայթ ցասմանէ ամպարշտաց, յերկնաստան և 'ի մրրկալից կատաղութենէ աղեաց, աճ կացոյց 'ի Պեղոսպանես. ընդ հովանեաւ թևատարած առիւծու սրբոյն Մարկոսի. անդ բացաւ առաջի նորա Ճանապարհ ընդարձակ 'ի կատար փառաց։ Պարձոյց զաչն յամն առաջինս, յորժամ բարգաւաձեալ պերճանայր Ս. յրարատ ամենայն բարեզարդութեամբք. և եռեռս զի անհնարին է մեկնել 'ի միմեանց զաստուածպաշտութիւն և զգիտութիւն. և զայս արտասուօք ուսուցանէին նմա զարք համօրէն մերոյ պատմութեանէ։ Պարձոյց զկորովաբիւր աչն և յամն՝ որ զկնի զալոց էին. և հառաչէր սիրտն հայրենասէր։ Պարք խաւարային. տեսիլ աղէտալի, յորում ինքնահաճոյ կամք զաստուածսիրութեան փոխանակելոց էին զտեղի. մնացածին առասպելք՝ զգիտութեանց։ Կարկառեաց զբազուկն, և զդարն անցեալս բաժանեաց 'ի դարուց ապագայից. օրէնս եդ նոցին, և եկաց անսասան 'ի միջի։

Օ՜ սոյն խորհեցան երբեմն և Ալեքսիանք և Սահակեանք և անմահն Մեսրոպ. այլ Տէր զՄիսիթար սահմանեալ էր յարդիւնս մեծի գործոյն և կարևորագունի։ Ո՜հ, թոյլ տուք ինձ հառաչել սատանօր հառաչանս արդարացի։

Յորմէ հետէ փակեցան դրախտին ցանկալի դռնքն ընդդէմ որդւոցն Ադամայ, անարգասաւոր եղեն բարեհամ ջուրքն Աղբասխայ 'ի բարգաւաճանս ծառոցն գիտութեան և կենաց. այլ աստեղս ընտրեցին ծառքն պանդխատացեալք, և 'ի նժդեհութեան գաւառան լաւ ևս ուռճացան, եթէ այսպէս ներէք ինձ ասել, քան 'ի բնկանն։ Ադրագործ սքանչելիք են ձեռին Տեառն, զի ուր ամենայն տունկք արուգանան ընդ օտար երկնիւք, այս տունկ բարգաւաճէ, և աճումնաձիգ բարուկնակս 'ի վեր առաքէ։

Զարտուղի ընթանային շաւիղք յուղիղ պողոտայէ հաւատոց սրբութեան. ինքնակամ կլրծնք զրահետ վարէին զռամիկն և զդպիր. վարժոցք խաթարեալք. և փոշելիցք յանկեան ուրեք 'ի մոռացօնս մատնեալք վաստակք հարցն մերոց. զայս ամենայն ետես Մինիթար և խորհեցաւ. և յետս ընդ կրունկն դարձան բարեհնչան աւուրքն Աղբասխայ։ Ի մեռելութենէ 'ի նոր կենդանութիւն անմահացան բազմաստակ հոյլք հարանց մերոց. նորանոր անկապտելի Ճոխութիւնք նախանձելի յօրինեցին զազգ մեր ազգաց օտարաց։

Ոչ ինքնին վկայք բանիս, ոչ ժողով անխանջելի իմաստնոց, որ նահատակիք 'ի վերայ խորհրդոց հօրն ձերոյ։ Ոչ երաշխաւոր ընտիր ձեմարանք իմաստնոյն Աւրոպայ, յորոց ոմանք ցանկացեալ և 'ի դերեւս եղիք յանկեալս

թենէ ձերմէ՝ կաձառողդս ունել ձեզ զորդիս Մխիթարայ. այլք պարծիք նոքօք իբրու պատուականագոյն զարդուք կաձառաց ձերոց։ Զուք մատեանք և օրագիրք ուսումնականք, զուք սուէք լեզու և բարբառեցարուք 'ի հաւատարմութիւն բանիցս, որ կշռէք արդարադատ զգուլութեանց տոկոսիս զորդւոց Մխիթարայ։ Ա. յս ամենայն արդասիք են ուղղատես խորհրդոց հօրն մերոյ, այս ամենայն պտուղք անընկձելի արութեան նորա 'ի բազմաձուփ ալիս վշտաց։

Մխիթար անդ 'ի Պեղոպոնես իբրև զհրեշտակ Աստուծոյ եղև ընդունելի. մեծամեծք և փոքունք սքանչացեալ ընդ անմեղկելի առաքինութիւնսն՝ ցանկային բարեկամութեան նորա. և զանձ բազմաձոխս համարէին եթէ հանդիպէին միայն այնմ։ Ընդ եռուն նմա, և իւրոցն սեղի բնակութեան. պարգևեցին գիւղս և անդաստանս. այլ ձեռին միակութեան կարօտ։ Չ. վասն այնորիկ ջքաւորութի յառաժամայն կարևորաց 'ի պանդխտութեան վայրսն տառապէր զՄխիթար, և պայմանեալ հարկ 'ի վերայ կայր նորա կառուցանել զշինուածն սակեալ։

Սակայն անձկութիւնք զրգիռ էն մեծամեծ ոգւոց 'ի մեծամեծ արութիւնս. և ոչ լսէք զշառաչիւն կռածոյ փողոց, և զթնդիւն հրազէն անօթոց, որ անդ 'ի Յունան զօդս հնչեցուցանէն։ Ընդանօր Մխիթար մեծահանդէս փառաւք յամին 1706 արկ զհիմն մենաստանին իւրոյ. որ

յիշատակաց արժանի. օր ցաւոց տարտարոսաղէն բանակաց և գործակցաց նոցա։

Այնուհետև կարգեաց Մխիթար զմենաստան իւր բոյն, յորում՝ ի մի միաբանեաց զաղանին միամիտ և զձէն խորագէտ. և քանզի ոչ կամեցաւ Տէր բաժանել՝ ի միմեանց զսրբութիւն և զգիտութիւն, ՝ի մի ընդդէաց զնոսին և Մխիթար։ Քանզի կարի իսկ հեռի էին՝ ի մնաց նորա այն թիւր խորհուրդք՝ եթէ սրբութիւն՝ ի տգիտութեան իցէ բաղում մնստամբք. և համարեր թէ ախտք միայն են փուչքն, յորս ոչ գնէ գիտութիւն զբոյն իւր. և Ճարտար գիտէր թէ յանհնարիցն է քաջ և դիպեցուցանել՝ ի նպատակն այնմ, որ՝ ի մեծն արձակիցէ զնեռ յաղեանէ, քան զոր արձակեսցէ՝ ի լոյս պայծառ միջօրէի։ Հաստատեաց Մխիթար Ճեմարան սրբութեան և իմաստութեան. և անձանձրոյթ վարժապետն ուղղութեան վարուց և ուսման գիտութեանց, ինքնին դաս ասէր իւրոց որդւոցն քան թէ աշակերտելոց։

Ստանօր ցանկայի զի մի ոմն յաշակերտաց նոցա, որ բաղում էին և մեծահամբաւք, ընդ իմ պատմիչ իմաստասէր կաճառիս, թէ՝ որպէս Ճշգրտաբան՝ ի խօսսն, պարզ՝ ի բացատրութիւնն, ինքնազարդ պաճուճաբան յիմաստսն, անսայթաք՝ ի դժուարինսն։ Այլ փոխանակ բանից նոցա՝ վարք նոցին և գործք մեզ անստերիւր առհաւատչեայք. որք մնեալ յաշակերտութէ նո-

լա անգէտք ամենևին հեգենայիս իսկ լեզուիս, կատարեալ վարդապետք ապա սպասաւորէին բանին 'ի քաղաքս քաղաքս, զորոց քահանայք և ժողովուրդք՝ անյաղ ունկնդիրք՝ 'ի ինդիր էին ժողովել զծաղիկս շրթանցն։ Զուք հասէք վկայք բանիցս, դուք՝ Ա՛երտին, Զաղատիա, Լ՚ադոկիա, Կոստանդնուպոլիս, Աեբաստիա, այլովքն հանդերձ, յորոց պարիսպն հնչեն տակաւին փառաւոր անուանք աշակերտաց Ա՛խիթարայ։ Ա՚յլ մինայր ոխերիմ թշնամին, և զյետին ձիգն թափեալ ընկձել զարիութիւն Ա՛խիթարայ, զպետութիւն ընդ պետութեան զրգռէր, զի ընդ փլատակօքն ձմլեսցէ և զնա ինքն, և վճիռ ապրասցէ իրացն ամենայնի։

Լ՚ա քանզի մտադիր ունկնդրութիւն, զոր ընթեռնում 'ի դէմն իմաստուն ակմբիս, քաջալերէ զիս 'ի բանս, աղաչեմ վայր մի զմտաւ ածել թէ յամենայն կեանս Ա՛խիթարայ՝ յայնժամ առաւել դժուարակռուելի մարտս մղեաց ընդ նմա թշնամին, յորժամ ետես զնա մտադիրապոյն 'ի ջանս ուսմանց։ Ցանջէր զնա 'ի ձեռն Ա՛ինբայելի եպիսկոպոսին, Էհար դժուարին հիւանդութեամբք, զրգռեաց զՆ՚ատուկ, և զամենայն փաղանգս հալածչաց 'ի քաղաքս քաղաքս մղէր ընդդէմ, յորժամ ժողովէին առ նա քաղցեալքն իմաստից. և այժմ ջանայ հնարի 'ի կոր կործանել զվարժարանն նորակառոյց։

Լ՚ա ընդ այս մի՛ զարմանայք. զի և դուք իսկ,

ոմ Հալբ սուրբք , վասն այն թշնամանիք , զի խնամատուութիւն ձեր զինք էն , որ հիմն 'ի վեր տա պալեն զբռնակալութիւն դժոխոց ։ Օ՛ի եթէ վարժարանք Մխիթարայ լուին , ո՛ յամօթ առնէր զանպատկառ հերձուածողն . եթէ վարժարանք Մխիթարայ լուին , ո՛ սանձ արկանէր անդուն բերանոց ոսոխաց եկեղեցւոյն Քրիստոսի . եթէ վարժարանք Մխիթարայ լուին , ո՛ զպարզամիտ տգէտն ածէր յուղիղ պողոտայն . ո՛ այսչափ մանկունս , ընդարձակ ակնկալութիւնս եկեղեցւոյ և Հայրենեաց , ո՛ պատրաստէր ծառայս Աստուծոյ և փառաւորիչս անուան նորա , և անուանցն՝ զորոց երախտագէտ սրտիւ գովեն նոքա անլռելի զանազգականն Հայրենասիրութիւն ։ Այլ վասն այսորիկ զամենայն ինչ վեր 'ի վայր առնէին դժոխք բնաջինջ առնել զձեռակերտ Մխիթարայ ։

Բայց , զոռոզ խելք նաւաց մահմետականաց ահա զարդարեալ յաղթողական պսակօք խրոխտրս պատառեն զփրփրադէզ ալիս և մրմռեալ դիմեն 'ի Պէզոպոնես ։ Ընդդէմ տան բիւրուց գաղանաց զայրացելոց տկարացաւ մնչիւն վեհասանձ առիւծուն Մարկոսի ։

Գուէր իմն թէ ծափս ծափի հարկանիցէ Բելիար 'ի վերայ սպառապուռ կործանման հօրս մերոյ ։ Իսկ նա անվրդով ամենևին ժողովէ զիւրան 'ի տաճար Ցեառն յոտս սրբոյ Կուսին . աղաչանս սրտառուչս առ նա առաքէ 'ի խորոց

սրտին. դառնայ առ որդիսն։ — Մի՛ ինչ վհատիք. բամբիւնք սպառնալեաց զսիրտս վատթարս ընդ-ոստուգանիցեն. արիացիք դուք խարսխեալք Աստուած. ահա մայր մեր ամենեցուն, առ նա... — Լա՛ գեղջուկն բանք 'ի բերան նորա։ Ընկաւ զպարանոցաւ միոյ միոյ, եւ նոցա զհամբոյրն հայրենի, և պերճախօս լռութեամբ և բազմամտաստ արտասուօքն մեկնեցաւ 'ի զրկաց զաւակացն, որպէս հոգի մեկնիցի 'ի մարմնոյ։

Աբրհամարհեաց միւսանգամ զդարանակարութիս խաբուսիկ տարերն. լաստափայտ մի ևեթ հնոտի գտաւ 'ի նաւահանգստին. հարկ՝ էր մնտանել 'ի նա. աւուրք գարնայնոյ սպառնալիցք. այլ նա որչափ ուժգին իցեն վտանգք, այնչափ աներկեւանութիւն ցուցանէ յանձին։ Պանրտ ինչ էր զի այսչափ ծանրագնի լինէին բարերարութիք հնոտեալք քեզ 'ի Մխիթարայ, ո՛վ ազգ հայկածին։ Ընտա՛հ տեր, աչ քո հսկեացէ 'ի վերայ նորա. ո՛վ հրեշտակք Աստուծոյ, պահ կալարուք շուրջ զնովաւ աներևոյթ բանակաւ ձերով, և դուք անվտանգ առաջնորդեցէք յանքոյթն նաւահանգիստ այդմ լաստափայտի, քան զոր հրաշալի նաւ չեն տեսեալ ծովք։

Լա՛ արդարեւ ձեռն Աստուն անմեկին 'ի հօտապետին և 'ի հօտն նորա, խուճապեցոյց 'ի միջոց շկահելոց սուսերայ բարբարոսայ, որ միշտ ոխերիմ գտան բանտին Հայոց, և 'ի հեղեղայ արեանց։ Ամենայն և զսեղանակապուտ ձեռն

արձակեցին 'ի վերայ զառանցն անմեղաց, այլ աջ Տեառն փրկեաց զնոսա, և ած կացոյց և պատսպարեցոյց յայս կղզեակ անեղկևան, զոր ընդ առաքինութեանց իւրոց ելթող մեզ 'ի ժառանգութիւն հայրս մեր։ Յառանգութի՛ն Հոխ, ոչ ապականացու պերճացեալ ոսկեղինօք կամ արծաթեղինօք. այլ քան զամենայն ինչ ցանկալի հայրասէր սրտից։

Ոչք տեղի 'ի սմա՝ որ ոչ առաջի նկարեսցէ մեզ զառաքինութիւնս հօրն մերոյ. յեկեղեցւոջ կենդանի ոսկերք նորա աղերս արկանեն վասն մեր առաջի Տեառն և Տիրամօր կուսին. սենեակն քարոզէ զգաղտնի առաքինութիւնսն. որմք հնչեն տակաւին զարձագանգս ձաղկանաց նորա, զոր Հարտարահնար սէր աշակերտացն հազիւ մարթացաւ գողանալ 'ի դժուարին անկողնոյ յետին հիւանդութենն. վարժոցք պատկառանս ազդեն. անդուստ հայրս մեր բանիւն և օրինակաւ ուսուցիչ լինէր գիտութեանց և առաքինութեանց։ Ա՛հ, մի առ մի քարինքն ելթէ առնուին լեզու՝ զանյողդողդ արիութիւն ոգւոյ նորա քարոզէին, որ ոչ յընդդիմակաց վհատէր և ոչ 'ի դարանակալաց երկնչէր։

Ներեցէք ինձ Ա՛նտոն և Ա՛սահել, Ա՛մենեդիկտոս, Ա՛ռամինիկոս, Ա՛ռենարդոս, Ֆրանկիսկոս, Ա՛ղուանն և Հռոմուալդոս, և դասք անապատաւորաց, որոյք միանգամ պանծային ապուանք Ա՛ղեղոսի և Հոլանաւոր անտառք Ա՛ստրիոյ. ներեցէք

եթէ հրաշալի էս զրեմ էս զՄխիթար քան զՁեզ։ Բայց՝ մարտեալք և զուք ընդդէմ ախտից չարաժամ զարուցն. այլ սէր առաքինութեան ոչ բնաւ շինչանէ 'ի սպառ յամենայն մարմնոյս սրբոյ առհասարակ, այսպէս անօրինեալ՝ բարեխնամ աջոյ Յարձրելոյն. այլ ջահ առաքինութեանց ձերոց 'ի միջի համազգեաց փայլեալ յորդորամիտս առնէր սատար օգնականութեան լինել թէ ոչ զամենեսեան, գտնեայ զբազումն, գտնեայ զոմանս՝ 'ի յառաջադէմ բարգաւաճանս խորհրդոց ձերոց։

Իսկ Մխիթար հեռի լիւրոցն. 'ի միջի այլալեզու ժողովրդոց. անծանօթ ամենայն ումեք. ամայի յամենայն մարդկային օգնականութենէ. ընկեր նման և զօրավիգն Աստուած և արիութիւն իւր անուանձելն։ Լրվին կանգնեաց միւսանգամ. նովին բարգաւաճեցոյց, և նովին յանձնեաց մեզ պահել անսասան զայս իւր ձեռակերտ։ Բայլ բարբ, միւսանգամ յառնէ սատանայ բանակօք իւրովք, և մարդիկ՝ ախտիւ նախանձու՝ կործանել զայն։ — Զվանմիաք, ո՞ ժպրհեացի խախտել զվէմն, զոր արկ ամենակարող ձեռն Աստուծոյ։ Փուրվիշք ամբաստանութեանց կուտին զՄխիթարայ։ Լաւ առ ո՞։ — Բ. քահանայապետան Հռովմայ Կղեմէս ԺԱ. որ վեց ամաւք յառաջ յորդորիւր զախոյանն հաւատոց ուղղափառութեան քաջալերել 'ի սպասաւորութիւնն առաջարկեալ, և պարգևօք և գովութեամբք և անուամբ պատուոյ

մեծարէր զնա։ Իսկ ամբաստանօղքն ոչք. ան-
հաւատք արդեօք, հերետիկոսք, աշխարհասէրք։
Զղջուկ զիս. 'ի խորհել իմում հերք իմ զիզա-
նին, և պաղ յերակս իմ զնայ։ Ամաչեմ ասել,
զի մի ածիլ արհամարհանս ոչ միայն քրիստոնեայ
անուան, այլ և ուխտին սրբութեան։ Բահա-
նայք ոմանք արկեալ զանձամբ զպատրուակ նա-
խանձու բարեաց անդրուվար լինին բանաար-
կուին, յաձախեն բարդեն բարուրս ամբաստա-
նութեանց 'ի վերայ Մխիթարայ։

Հալածեցին զնա և այլապառք. զիտէք զՀրո-
վարտակն արքունի, զոր եհան Գրիգոր Հակա-
ռակ Մխիթարայ. յիշեք զիսորամանկ դատա-
ձանութիւնսն Գուտիքի 'ի ձեռս բերել զՄխի-
թար. չէք մոռացեալ, զի մինչև 'ի Օ միւռնէ
հասին արձագանգք աղաղակի կատաղութեան
նոցա և խուճապեցին զՄխիթար ձեպ 'ի ձեպոյ
'ի թագաւորանէն փախչել մաղապուրծ։ Այլ այն
փառք էին նմա, այս՝ խոց անդարմանելի։

Յիսպիսի ինն կուտեն բազբազայս, որ անհա-
մարձակելի պարտ էր 'ի բամբասողացն գոլ, և
անհաւատարիմ դատաւորաց. այլոց իրիք ամբաս-
տանութեան թերևս էր տեղի։ Որպէս. որ անդ
'ի Հայրենիսն անյողդողդ արութեամբ քարոզէր
զՀնմարտութիւն՝ համբերեալ խոշտանգանաց և
արհամարհանաց. վասն նորա առ ոտն կոխեալ
զամենայն անցաւոր փառս, որով հրապուրել
զնա կամէին. վասն նորա պանդուխտ վտարան-

դի 'ի Հայրենեացն. և այժմ 'ի խաղաղութեան ստերիւրեալ իցէ 'ի Աշմարտութենէ անտի։

Այլ էն ինչ զնրմանք. զի ուր չարութեան պարտ էր խորտանակ զող, բազում այն է զի անմնանայ առ իւրոյ չարի, որպէս զի լուսաւոր և Աստուածայնութեացէ նշոյլ Աշմարտութեան։ Այս առաքինութիւն անփոխ, որ թերևս մնայր անծանօթ, ընդ հարուածովք յաչաղանաց վայրէ իբրև զսակի։

Աղէ, գիտիցէք դուք զանուանս նախանձոտացն Արիսթարայ. խաւար մոռացութեան կալեալ է զնոսա։ Իսկ Արիսթար ոչ միայն նախանձորդացն և հալածչաց յաղթական, այլ և 'ի միջոց ծանրաբեռն ամանց 'ի վեր ամբառնայ զգլուխ իւր վսեմն, և անուանս տայ դարուց. կանգնեալ կայ վեհ, մեծապատիւ, միայնակ, որպէս 'ի լուութեան և յընդարձակութեան աստպատին բուրգին վիթխարի 'ի վեր ամբառնայ զանընկՀելի գագաթնն։

Օ այս Աշակատագիր եթող և ձեզ 'ի ժառանգութիւն Հայրն ձեր, ով Աշմարիտ որդիք Արիսթարայ։ Այլ եթէ անմեղութիւն զինուորեսցէ զմերկ լանջս ձեր, եթէ արդարութիւն պահ ունիցի սրտի ձերոյ, դուք էք յաղթական ամենայն խոչընդակաց։ Բանց քրտանց ոչ բողջոջէն յաղթողական դափնիք յանթառամ Աշակատս ձեր։ Անանուանդ թէ ցորչափ չիցէն 'ի բաց դարձեալ 'ի ձէնջ զէնք թշնամւոյն, ցորչափ բամբասիցիք

և թշնամանեսջիք, ուրախ լերուք. այդ ձեզ անխաբելի ապացոյց է, եթէ չէք ստերիւրեալ 'ի հետոց հօրն ձերոյ։ Սակայն, թէ չեմ վրիպակ 'ի տեսութիւնս իմ, բարեհաճեցէք ես ծագեսցէ արև 'ի վերայ զաւակաց մերոց։ Ուռաքինութեան և իմաստութեան նոցա ցոլք շլացուցին զաչս նախանձոտաց. և զպտուղս քրտանց ձերոց՝ նոքա հնձեսցեն։ Լրանի դարուն... սակայն ես ոչ նախանձիմ, այլ մանաւանդ աղօթեմ, զի մի զանցեցուսցէ զնոսա։.... 'Լերեցէք ինձ, եթէ թողեալ զհայրս մեր 'ի վերայ Ճանապարհացն Հռովմայ, յայլ ինչ ընդ քարշ ածին զիս իղձք որդւոյ։

Լմուտ Մխիթար 'ի նախանձելին Հռովմ որպէս զձկնորսն գալիլիացի անարդ և անծանօթ. յորոյ ապա խոնարհեցան յոտս գաւազանք արքունի, և թագք արքայից գահոյից նոցին սփռեցան պատուանդան։ Ցեսանեմ հոգւոյ աչօք, զի մուտք հօրս մերոյ 'ի Հռովմ ոչ յանցաւորի դատախազելոյ մուտք էն, այլ մուտք յաղթողական, որ առեալ բերէ ընդ իւր աւար մեծագանձ՝ զսիրտ ուծացելոց որդւոց 'ի մօրէն առ մայրն հաստատակաց; մայր եկեղեցեաց։

Ոչ մոին ընդ դրունս Հռովմայ պայծառագոյն յաղթանակք. ոչ տեսին պատուարք Հռովմայ զարդ շքեղագոյն. ոչ որմք Կապիտոլեայ Ճոխագոյն աւարօք պՃՆեցան. որպէս գահոյք ձկնորսին աւարաւն Մխիթարայ։ Լկեղեցի Հայաս-

տանեայց բաց զաչս քո, ծանիր զմայր քո, որ թեւատարած հառաչէ զկնի որդւոյդ։ Վակայն ծագեսցէ օր. յորում Պարձրեալն, ա՛հ ներբեա Տէր, եթէ հայրենասէր գուշակութիւնս իշխեմ բանալ զմատեան քո՝ կնքեալ մահացու աչաց. յորում Պարձրեալն գիրկընդխառն տեսցէ զարձեալ զՎեղբեստրոս ընդ Պրիգորի։

Պու վկայեա Ճշմարտութեան բանիս, նորատունկ եկեղեցիդ Պիւզանդիոյ. դու գրաւական բազմաչարչար վշտաց Մխիթարայ. դու երաշխաւոր փառաց նորա։ Ի ցուրտ վիմէ* այսի ոստիցէ միւսանգամ կայծակն, որ նոր բոց վառեսցէ սիրոյ աւետարանին և հայրենեաց ընդ ամենայն Հայաստան։

Հազիւ ասելի եղէն բանք Մխիթարայ յանխաբելի ատենի ծերակուտին Հռովմայ, և ահա ակնարկ յանդիմանի ոչ միայն արդարութիւն, այլ և փառք Մխիթարայ. և խորհրդական իսկ բարեաց նատի մեծի ատենին, զորմէ կախեալ կան բախտք ժողովրդոց։ Լաւ այն շրթունք որ զմեծամեծ վնիռս Աստուծոյ սովորեալ էին պատգամաւորել առ ազգս և առ ժողովուրդս, նոքին արժանի համարեցան և զարդարութիւն Մխիթարայ քարոզել։ Պարձ արար Մխիթար 'ի գիրկս որդւոյն բերկրեցելոց. և փառք յաղթո-

* Խօսեցաւ Ներբողս 'ի Համբարանոցի մատենից արբոյն Ղազարու առաջի մարմարիոնեայ պատկերին Մխիթարայ։

զական կարապետ ընթացից նորա. և խորհուրդք մեծամեծք յուզէին 'ի միտս նորա։

Զոմի ինձ տեսանել երկուս քաջամարտիկ ըմբիշս 'ի կրկէս կռուամարտի. և որչափ ոմն 'ի նոցանէ Ճարտար կշռէ զհարուածսն հակառակամարտ ոսոխին, այնչափ հնարագէտս խորամանգէ միւսն զդիպող հարուածսն։ Զ'գնի Մը-խիթար ամենայն հանգամանօք ջլատել զզօրութիւնս բանսարկուին. նա յամենայնի զտանէ դարանս խուսափել'ի հաստոյր հարուածոց նորա։

Զ.յլ դու Թռեալ երագընթաց 'ի Թիկունս Մխիթարայ, դու, ո՛վ Ճշմարիտ սէր աստուածային, բազմահնար 'ի գիւտս բարեաց. սէր, որ աւելազանցութեամբ դու միայն կոչիս առաքինութիւն. զի դու ես Ճշմարիտ առաքինութիւն և կնիք առն քրիստոնէի։ Լցեր դու յերկնից ընդ Յիսուսի. և յորժամ Փրկիչն մեր էլ յաշխարհէ, զքեզ եթող ընկեր անմեկին իւրոցն և նկարագիր իւրոյ աշակերտութեանն։ Զոմ Ճանապարհորդակից առաքելոց, դու յուզի անկար ընդ նոսա յաշխարհակալութիւն տիեզերաց. խորտակեցեր զշղթայս. միսիթարեցեր զվշտացեալս։ Մեծ ևս ինչ գործեցեր. ուսուցեր մարդկան ներել անիրաւութեանց. ուսուցեր նոցա զքաղցր հաշտութիւն և զներումն թշնամեաց։

Ներեաց և Մխիթար. և ոչ միայն ներեաց հալածչացն իւրոց և զրպարտչաց, այլ և խնամաւ զհնարս ազդողագոյնս ևս բարերարելոյ առ նո-

սա 'ի հալածելն իսկ և 'ի թշնամանել։ Խոչք խոսմանարարք ելին ընթացից աշակերտացն, որ բարձեալ բերելին յանձին զՀոխուԹիւնս երկնաւոր գանձուց. տկարացան ոտք նոցա հասանել ցծագս սահմանաց թշնամեաց իւրոց՝ շուայլել առ նոսա զբարեբարութիւնս հօրն։ Ընխաբելի հնարս իմացաւ իրացն սէր ամենահնար. հորդեաց Ճանապարհ Ճշմարտութեան ամենայն ուրեք. ակաղձեաց զմտաբանս իւր նորահրաշ Հոխութեամբք, և իբրև զնաւս թռուցիկս՝ արձակեաց ընդ ամենայն ծագս տիեզերաց. և զրաշակք Ամենարարայ ծածանին 'ի վերայ ամենայն ամրութեանց թշնամոյն։

Ընդարև իրաւունք ելին ինձ զաշխարհակալութիւնս Ամենարարայ վերՀ կոչել քան զԸնքսանդրի. կործանեցան գահոյք նորա, դարձք ամաց սակաւուց չափեցին զսահման իշխանութեան նորին. այլ Ճշմարտութիւն յաղթող է ամենայնի, այլ Ճշմարտութիւն անմահ է։ Ամենարար 'ի վարժոցս ուսուցիչ մանկանց, որում զՀաւատոյ անստերիւր վարդապետութիւնս, որում զՀայրենի բարբառոյն զսկզբունս, որում զաստուածայնոց մատենից զիսրս իմաստից։ Ընշակերտք նովաւ ուսանին. վարդապետք նովաւ պերճաբանեն. նա առաջնորդ հոգևոր Ճանապարհին փափաքողաց անձկագոյն շաւղաց քրիստոնէական կատարելութեան։

Ամենընդեր է ինձ այսուհետև ձգել երկայ-

նել զբանս իմ, որ որչափ'ի կատարած կոյս փ�
թայ, այնչափ գժուարաբառնալի ևս հանդիպի։
Այսու անմեղկելին Մխիթար զի միւսանգամ
կանգնեցաւ վարժարանն սրբութեան և գիտու
թեան. ետես զի առնուին բարգաւաճանս տունկք
քրիստոնէական 'ի նմանէ մշակեալք։ Այրկեաւ մի
գուցէ չարահնար թշնամին այլ ևս հնարս ինչ
խնայի, թերևս խորամանկագոյն քան զառա
ջինն՝ գողանալ 'ի նմանէ զպսակ Ճգանցն օգտա
բան գովութեամբք։

Այանգի ամենայն ուրեք այնուհետև հնչէր
անուն Մխիթարայ, և փառք անմեկին 'ի նմանէ։
Հնարագէտն՝ զՃարտարմտութիւն նորա. մեծա
տունն՝ զանընչասէր արհամարհութիւն Ճոխու
թեանց. աղքատն՝ զգթութիւնն, որ բաղում
անգամ կերակրեալ էր պատառով բերանոյ նո
ցին. քաղաքավարն՝ զխորագնին տեսութիւնս մը
տացն լիաբերան գովէին։ Այս ամենայն որո
գայթս համարէր ըարեալս կանգաղեալ իւրոց ա
ռաքինութեանց։ Մբարձ զաչսն յերկինս, և
ցանկայր թռանել տատրակն ամբիծ առ բաղձա
լին իւր, զի մի հաղորք որսողին շաղեսցին յոտս
նորա։

Հառաչանք լսելի լինէին յամենայն անկիւնս
սրահին, ընդ որս շրջիմք զօրհանապազ. թախ
ծագին որդիքն զիմեն յանկողին ծերութեան
հօր իւրեանց ոչ խորտկօք որսականաց, այլ ա
ռաքինութեանց պերճացեալ ծաղկանման պսա

կոք։ Այլ նորոյ աղգատոհմիս շուրջ հայեցաւ, և թնդաց սիրտն ուրախութիւն. հայեցաւ յերկինս, և յոգւոց Եհան. տարածեաց զբազուկսն և ոչ խտիր արկեալ տերութեան կամ ծառայութեան ընդ երեցն և ընդ կրտսեր, հայրական նայն օրհնութեանց առ հատարակ առնէր զնոսա ժառանգորդս։ Բ. Եանդ եթող նոցա զերկրայր սիրութեան քաղցր առաքինութիւն. յանձն ա՝ բար նոցա զերկս քրտանց իւրոց. կարիցց զաչսն և թռեաւ առ անձկալին իւր Քրիստոս։

Բ. Հ մի՝, Աստուած իմ, մի՝ արտասուք 'ի ծնօտս ձեր. նորին օրհնութեանցն և մեք եղաք հաղորդակից. զնորին աւանդ տեսանեմ 'ի միում միում 'ի ձեզ, որ արհամարհեալ զամենայն զիւր անձին, 'ի վերայ սիրոյ եղբարց արեամբ չափ նահատակիք։ Մի՝ և ես արտասուք 'ի ծնօտս ձեր, զի Մխիթար ոչ մեռաւ, ոչ մեռանի Մխիթար։ Մխիթար կենդանի է 'ի մատեանս իւր. կենդանի 'ի ձեզ, ո՛վ Աստուած սուրբք, նախանձաւորք նորին առաքինութեց. կենդանի յաստուածաշէն յայս մենաստան, զորոյ զպատուարս կանգնեցին առաքինութիւնք նորա քան թէ հանձար։ Բ. յս գործած առաքինութեան Մխիթարայ եռեռ անսասան զկրկին մեծամեծ պետութեանց զկոչ ծանուցն առ իւրև, և ոչ ինչ յերկուացաւ։ Ն՝ տես շուրջ զիւրև, ո՛վ տեսիլ արտասուաց արժանի, թաւալեալս 'ի տղմի զքարինս մեծակառոյց մենաստանաց, որ ընդերկար ապաւէն եղեն

փախստեայ առաքինութեանց, և ինքն անտա-
սան կայ. և իբրու 'ի միջոց հատնչանջինջ հե-
ղեղայ ջուրց խրոխտս 'ի վեր ամբարձեալ ունի
զգլուխս իւր, յորոց վերայ հովանի է աջն ամե-
նազօր։

Ո՛վ Հայրք, ոչ անծանօթս ինչ ձեզ յիշատա-
կեմ. բաղումք 'ի ձէնջ ոչ միայն տեսողք եղէք
ահաւոր դիպացն, այլ և հառաչողք. այն հառա-
ջանիք արձագանգք էին հառաչանաց հօրն ձերոյ.
դուք և վաստակողք եղէք յանդգնելի աղօթս՝ ձո
զոպրել 'ի տիեզերատատ սպառնալեացն. դուք
և զբաղուկս ձեր, զշնորհակալս բաղուկս ձեր
ամբարձիք 'ի վեր, և ինքուցիք յերկնից զօձանս
առատութեան շնորհաց։ Դիտեալ յառնթ եղէն
սպառնալիք ինքնակալաց. տկարացաւ զէն նա-
խանձու. խորտակեցան ալիք մրրկայոյզ ամնոյ, և
կանգուն կայ շինուածս Մխիթարայ։

Ո՛վ հայր մեր, ձշմարիտ փառք պարծանաց
մերոյ. դու և այսօր տեսեր յերկնից 'ի գահոյիցդ
զորդիս քո առ սեղանով Նշանահին, որ երեսք 'ի
խոնարհ և բաղուկք յերկինս տարածք միասն-
գամ տնտեցին 'ի տոն մեծահանդէս զփառս քո
յանհատ շնորհակալութիւն առատասպարգև բա-
լերարին. տնտեցին զերկայն և զփառաւոր շրջան
գարու միոյ*, յորմէ հետէ անկան հիմունք այսր

* Այն 1840, յորում ամի խստեցաւ Ղերբոցս, շրջան էր հարիւրեամեան շինութեան մենաստանի սրբոյն Ղազարու։

տաճարի փառաց քոց, և տակաւին լոյս առաքի-
նութեաց քոց շողայ 'ի սմա։ Ո՛հ, նեբեա, հայր,
յանդգնութեան բանիս, եթէ համարձակեցայց
ասել՝ թէ դրբա որդիքդ քո ոչ միայն լաղօտա-
ցուցին զփառս անուան քո, այլ մանաւանդ փա-
ռաւոր ևս բացափայլեցին։ Ա՛յլ խնայեցին ոչ 'ի
քիրսն և ոչ 'ի տառապանս քեզ հանգոյն, զի
անաղօտ պահեսցեն զՋահ փառաց քոց. և այս
փառք, ո՜հ, իցէ՜ թէ ոչ մէջբերեայ իցէ կէտ բարձ-
րութեան տան քո, այլ աղօտ լոյս արշալուսոյ.
և ծագք ժամանակաց երեկոյ բազմարդիւն ծե-
րութեան նորա։

Դու յերկնից 'ի վերուստ հովանացիր 'ի վե-
րայ մեր. մի արկածք ժամանակի, մի խորտանն
կութիւնք թշնամւոյն սանանիցեն ինչ։ Դու բա-
նակ պահպանութեան մերոյ. դու կառք զօրու-
թեանց մերոց։ Ա՛յ խրատատեսցեն ախտք զան-
սասանելի պատուարս բարեկարգութեանց 'ի
քէն հաստատելոց, զի մի կինձն վայրենի
ոտնակոխ արասցէ զգեղեցկատունկ դրախտ քո։
Խարազաւաճեսցին 'ի սմա անուշահոտ ծաղիկք
առաքինութեանց 'ի զարդ փառաց տան Աստու-
ծոյ։

Դու յերկնից 'ի բարձանց այսօր միւսանգամ
կարկառեա զձեռն քո և լեր զօրավիգն նմա, որ
ձշգրիտ կերպարանեմ մեզ յանձին զպատկերս ա-
ռաքինութեանց քոց։ Ցուր անվրդով արիութի-
ատենի ալեաց. հանձար զգաստութեան քաջա-

գօտի երիտասարդաց. օրհնեա և զտխեղծ մանկըտին, որ իբրև զգաւիտա անմեղս դրդին յաներկեւան փարախս քո, զի մի կուր անկցին գաւազանաղ թշնամւոյն, և կամ խորամանկ աշխարհ գողացի 'ի նոցանէ զաստուածապարգև շնորհն. ընտրեա զնոսա որդիս քեզ արժանիս։

Արձակեա, հայր, զձեռն քո, օրհնեա և զայս նոր ազգատոհմ մանկտուց, որ խռնեալ կան զքեզ, փափաքողք հայրականաց քոյոց զուարթ ակնարկութեանց։ Դժուարակոխ և ստուերամած են ճանապարհք կենցաղոյս. դիմեցին առ քեզ, զի 'ի լուսոյ վարդապետութեան քո լուցցեն ջահս առաքինութեան և իմաստութեան՝ անվտանգ ուղևորել յերկնային դիտաւորութիւնն, յոր քաղցր հրաւիրեցեր զհամազգիս քո առ հասարակ։

Դու, հայր, պահեա յակաստանի զայս քոյինակերտ վարժարան կրկնակի իմաստութեան. 'ի վշտաց ոչ երկնչիմք. դիմագրաւ եմք ահա անձկութեանց. միայն զերկնատուր խաղաղութիւն՝ զանդրանիկ պարգևացն և զյետին աւանդն Քրիստոսի՝ ծաղկեցո 'ի մեզ, և բեռինք դարուց ոչ ընկճեսցեն զհաստատութիւն օգաձեմ սեանց սորա։

ԴԱՍԱԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿՏՈՑՆ

Ի ՀԱՆԴԻՍԻ ԲԱՑՄԱՆ ՌԱՖԱՅԵԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Պարտ էր, ո՛ Աբրահամեան և պատկառելի ա-տեան, պարտ էր յայս բեմ եբանել առն, որ Ճարտար բանիւք և խորհրդավէպն հարուստ՝ բե-ռի առնէր համաշխարհի զաւուրս ցնծութիւն։ Ո՛վ օր բարեպատեհ. օր նախանձելի հարցն մերոց. յորոց յիղձն մեզ պահեաց Տէր վայե-լել. օր՝ զոր ՝ի հեռուստ նկատեալ աստուա-ծամերձ ծերունին Աբրահամ և խայտայր ցնծալով՝ քաջալերեալ խրախուսանօք ՝ի տաժա-նական կիրսն իւր առ գեղեցիկ գործոյս կատա-րումն. օր բազմաբեղուն շահաւէտ արգասեաց տառապելոյ աղգիս մերոյ։ Դարձ առնեն առ մեզ միւսանգամ գեղեցկանարհ աւուրք Ղեբսի-սեանցն և Սահակեանց, յորում՝ ընդ հոսանս ի-մաստութեան՝ յամենայն կողմանց ծաւալեին ՝ի մեզ հեղեղք բարեաց և քաղաքական գովելի կարգաց։

Օ՜ երանաւէտ դարուն այնմիկ նորոգեալ տե-

սանեմ միւսանգամ զպատկեր մնաց աչքք. զա-
ւրիագունդ պատանիս կրթեալ 'ի վարժոցս իմաս-
տութեան և վարուց բարեաց՝ թռուցեալս ընդ
ամենայն անկիւնս կործանելոյ հայրենեաց մե-
ղոց՝ կանգնել զերկայնժամանակեայ բեկումն նո-
ցա։ Ամենք 'ի նոցանէ զանծանօթ աշխարհաց
զկապուտ մեծհարուստ լցուցանեն 'ի դատար-
կացեալ գոգս համաղգեաց իւրեանց. այլք զա-
ղարդոյն աղքատութիւն զիմաստութեան հայրե-
նակցացն Հոխացուցանեն լնաբաժին աւարօք ժո-
ղովելովք ընդ օտար աստեղօք. ոմն զանանց Հա-
նապարհ ծովոց արահետ կազմեալ, և այլք ընդ
ցամաք հատանեն դաշտս և լերինս 'ի գիւտ փա-
ռաց հարցն իւրեանց թաղելոց ընդ ծանր աւե-
րակօք դարուց վայրագութեան։

Օ այս ամենայն այժմէն տեսեալ մնաց աչքք,
թէք հանդարտեցից սանձել ունել զբարբառ ու-
րախութեան։ Ո՞ տայր ինձ լսելի առնել զմեծու-
թիւն շնորհիս ընդ ծագս տիեզերաց. և ընդ
շնորհիս 'ի հիացումն կրթել զամենայն երկիր
ընդ փառս այնորիկ, զոր համարձակիմ սկզբնա-
պատճառ անուանել բարեաց մերոց։ Պիտէք
ապաքէն զի զաւուրս ցնծութիւն պատրաստեաց
մեզ ազգասէրն Լ,դուարդ Ռաֆայէլ Պ ալա-
մեան. այր՝ որ երախտագէտ առաքինութեամբն
ձեռն սատարութեան կարկառեաց որոց ոգի 'ի
բոլոր Հնդեին կանգնել զկործանումն ազգիս։
Պինեաց սուբ տեսութեամբ, խորհեցաւ ազնը-

ւական բարոյիւք, և հաստատեաց գովելի ազա-
տամտութեամբն՝ եթէ չիք զեղ դարմանոյ նո-
րոգութեան ազգիս բաց 'ի դատիարակութենէ
մանկուոյն։

Օ այս զեղեցիկ խորհուրդ, աւա՜ղ, բարեացն
խափանարարք 'ի բազում ժամանակաց հետէ
անգործ թողացուցին։ Ա՛յլ զի՞ է ինձ տխուր
յիշատակօք մեայլ արկանել 'ի լուսափայլ Ճա-
կատս բերկրաւէտս պատկառելի ակմբիս։ Յայն-
ժամ այնպէս թոյլ եղուն խորհուրդք երկնից
անհեռատեսելիք մահացու աչաց, և այժմ զե-
ղեցկահանդէս աւուրքս կամի տոկոսեօք ինն զյա-
պաղմանն բժշկել զվնաս։

Ա՛ր ժան էր արդեօք այսօր հիւսել գովեստ
նեբրոդնի անմահական բարերարիս. սակայն
ոչ միայն խիթամ՝ մի գուցէ նուաստ բանիւք ի-
մովք աղօտացուցից զմեծութիւն առնն, այլ զի
և թուի ինձ թէ տեսանել միայն զօգուտս խոր-
հրդոց նորա շատ իսկ գովութիւն ինչ նման։

Օ՜նորա զքաջ ընտրութեանն 'ի միտ էառ
զկշիռ և վեհ ոգին Ա՛կրտչի Սամուէլի Ա՛ուրա-
տեան, և գովեաց։ Ա՛յս առաւելագունի նախան-
ձաւոր փառաց՝ ընդ գանձու իմաստութեան փո-
խանակեաց մնան ինչ հարուստ 'ի բազմագանձ
Ճոխութեանցն իւրոց։ Օ՜ղոյ և զնուիրական
կամն 'ի գլուխ տարեալ արք արդարև բարեաց
ազգին վրէժխնդիրք, այժմ և անուանն նորին
վարժարան զեղեցիկ կարգօք ընդ իմաստուն

տեսչութեամբ վարժողաց ակնկալիք են ազգին մեծամեծ բարեաց։

Այրկոքեան սոքա բարերարք անկան ընդ անողոքելի մանգաղաւ մահուն չժամանեալք տեսանել զքաղցր պտուղս քրտանց իւրեանց, զկնի իւրեանց զբարերարութիւնն իւրաքանչիւր անմահ յիշատակ արձանացուցեալ յաշխարհի։ Այլ երանի, և բիւր երանի որդւոց նոցին և թոռանց և ընտիր ազգատոհմին*, որ 'ի բիւրաւորացն բերանոց լսեն օրհնութիւնս սրտառուչս. և 'ի միում ժամու ծնողս լեալ բարենշան մանկանց հազարաց, 'ի գեղեցիկ պտուղս վաստակոց հարցն իւրեանց զուարճանան։

Այրանի և ինձ, որում եհաս բախտ գեղեցիկ 'ի լուր նախառաձելի ակմբիս զաւուրս հանդէս հրաչակ հարկանել։ Այլաչեմ ևեթ, ո՜ Այրհիասպետ և դուք ազգիս բարեացասպարտք, և ատեան պատկառելի, շնորհել սուղ բանիս ունկնդրութիւն ներողամիտ երկայնմտութեամբ։

Գ՝ԻՏԻ քաջ կաճառս այս խմբատնոց, որոց կէտ առաջի եդեալ է զազնուական խմբատն ազգասէր՝ զբարգաւաճանս ազգիս, եթէ բարեկարգ երջանկութիւն ազգի իրիք կախեալ կայ միայն զգեղեցիկ դաստիարակութէ մանկուոյն։

* Ընդ ունկնդիրս բանիս էին և ոմանք յազգականութենէ բարերարացն։

Ոչ արդեօք յայս սակս 'ի սկզբանէ հետէ և այսր ազգք իւրաքանչիւր ջան 'ի մտի եդին մեծապէս զբարեկրթն կրթուիթենէ մանկանց։ Զի՝ դարձուացուք միանգամ զաչս 'ի դարս ժամանակացն առաջնոց, և ահա տեսանեմք զի ՀՀմարտութիւն բանիս՝ իբրև զանաղօտ ջահ՝ ցոլանայ յաչս մեր անդուստ 'ի նահեմ ժամանակաց պատմութեան։

Անգիպտոս առաջին վարժապետ ամենայն մեծամեծ իրաց, որչափ աւանդեն մեզ հնապատում մատեանք մինչև առ մեզ ժամանեալք, թող զանուտ վկայութիւն աստուածագիր տառիցն, Անգիպտոս առաջին լեալ է վարժապետ և դաստիարակութեան մանկանց։ Այնու ապաքէն Մեսոստր և այլք 'ի նոցին մեծամեծ ինքնակալաց զգաւառան Հայրենի յայն ծագ բարեմասնութեան հասուցանէին, որ և ցայսօր զկնի հոլովելոյ հազարաւորացն ամաց տակաւին 'ի հիացումն կրթեն զմիտս տեսանելեաց հրաշալեացն այնոցիկ։ Այնու և զՀայթիւն ահաւոր զինուց իւրեանց մինչև ցՀեռաւոր սահմանս անծանօթ աշխարհաց առնէին լեալ։

Ինձ աւելորդ է յիշեցուցանել իմաստութեան բազմահմուտ ժողովոյս զօրէնս Պարսից, և զամբոխս մոգաց նոցա վարժապետաց 'ի դաստիարակութիւն միոյ մանկան։

Յոյնք, ծնողք վերատին ծննդեան ազգաց 'ի վէճ խուժադուժ վայրագութեան, և արդարև

մայր և դայեակ իմաստութեան ..., անաչառ ձեռօքն յափշտակէին յորդեսեր զրկաց մարդն զմատաղերամ մանկտին, մի գուցէ ծնողական սիրոյն առաւելութիւն թերի արասցէ զլրումն բռնադակութեանէ զեղեցիկ դաստիարակութենն։ Այլոցին նախանձաւոր վառեալ է արդ և Պեր-մանիա, որպէս թէ առաւել իմն հսկեալ պահպանութեան օրինաց դաստիարակութեանէ մանկրտոյն, քան իստութեան քաղաքական հրամանաց։ Այս ընդէր այսչափ Ինքն և անլրեպ ստուգութիւն 'ի կիրթս մանկտոյն առ ազգն համարէն։ — Այլ եթէ զի արքն այնոքիկ իմաստութեան ասպնջականք Ինարտար գիտէին՝ թէ 'ի պահել զբարգաւաճանս ազգին, կամ եւ 'ի յառաջադէմսն մղել սիտք էն ստոյգ դաստիարակութեան աղկաղկ հասակին։

Այս այժմ իսկ ազգք, որ զնախանձ այլոցն շարժէն յիւրեանց նմանողութիւն, ոչ ապաքէն ընդ այս աստիճան ելին ժամանեցին 'ի ծայրն այն աւագութեան՝ յոր բարձրացեալ բազմին։

Օ այս ամենայն մի առ մի Ինքագոյն բանիւք Ինքնէի յանդիման առնել ատէնիս, եթէ ոչ խիթայի զի տաղտուկ իմաստութեան ձերոյ, և զինեւ կշտամբանս ածէի յանդգնութեան։

Ի կարևորագոյն հոգոց տեսչութեան ազգաց առաջին է մանկանցն պիտանի վարժութիւն։ Ի սոյն սակս զգաստ օրէնսդիրք ժողովրդոց, և մեծախորհուրդ իմաստասէրք համարին՝ յանու-

րեք անկեան ամիսոփեալ իւրաքանչիւր, և խո-
րատես գիտութեան իւրեանց առեալ օգնական
զփոյձ անցելոց ժամանակաց, տքնին քրտնաջան
'ի գիւտ գեղեցիկ և դիւրին կարգաց, որոց ան-
խաբելի իցէ յաջողութիւն։

Պատենիցն ևեթ համար, որ զդատիարա-
կութիւնն մանկանց Ճառիցեն 'ի սկզբանէ և այսր,
յապուշ կրթէ զմիտս. որք և միոյ միոյ մեծա-
րոյ մատենագրաց պերճանան անուամբ։ Այլ ո-
րոց զքաղաքական իրաց ծանուցց հոգ յանձն ա-
ռեալ իցէ, իբրու յանտեսս լեալ այլոցն ամե-
նեցուն, զկարևորագոյն ջանն 'ի կիր արկանեն
յընտրութիւն մանկածուացն և վարժապետաց,
զի զնոցանէ առաւել՝ քան թէ զայլմէ ամենայնէ
կախեալ կայ բարեկեցիկ երջանկութիւն ազգաց։

Ոչ և զձեզ, ո՛ իրաւատես ատեան, յիւրա-
քանչիւր 'ի կենցաղօգուտ և յանհրաժարելի
զբաղանաց ած ձգեաց այսր 'ի լուր աղքատիմաց
բանիս կարևորութիւն առաջարկեալս խնդրոյ։

Ամենի 'ի կիրթ ուսմանց անկանել զբարուցն
ամոքէ զխիստ վայրագութիւն, և ուղղէ զան-
կարգ բերմունս յախտս անառակ շուայտութենց,
և 'ի գործս անգթութեան, որ մոլորութիւնք
են արդարև վայրենի ազգաց ընդ ծանր լծով գե-
րելոց անկարգ ախորժակաց։ Որպէս և վենու-
սեանն երգէ քնար.

Ի կիրթ ազնիւ արուեստից ջան մի՛ տադիր
Ամոքէ զբարս, դրնէ զվայրագն անբասիր։

Լրթէ կամիցիմք ունկնդիր լինել վայր մի խօսից ուղղատես առնն Տակիտեայ, լե�՝ զի կայ ըստ Աշրիկոդայոս ոչ իւիք յաջողեցաւ նուաճել զխուժադուժ բարս զնախնի բնակչացն Արմատնեոյ, բայց եթէ վարժեալ զնոսա 'ի ջանս զիտութեանց և արուեստից։

Եւ այնուհետև բառնին ամենայն ուստեք խռովութիւնք 'ի միջոց զայսօրինակ կրթելոց, և տիրէ խաղաղութիւն. բարեբարոյ մարդկութիւնս՝ խաղաղութիւն, անհատ աղբիւրն ամենայն բարեաց։

Ի կրթել զմանկտին 'ի գեղեցիկ կարգս ըղդաստութեան, ըստ երկիր յետ այնորիկ զգօն մարդկաւ։ Օ՛ այնպիսի եղանէ մանուկն, որպէս 'ի տղայ տիսն դաստիարակեսցի։ Եւ ազգ ժամանակին՝ ապառնի ազգին լեալ վարժապետ, զգանձն խնայութեան, զոր ժառանգեալ է 'ի հարցն առաջնոց ուանդեսցէն յետնոցն իւրեանց. և այսպէս ամենայն խնայասնոց եղցեն ժառանգորդք։

Ի մեկնել խնայասուն քաղաքավարին 'ի ղեկավարութենէ ազգայ, ոչ ևս պարապորդ մնայ տեղի նորա. և 'ի լռել ալևորելոյ ճարտարախօսին՝ որոյ բերանովն կարգեր ամենայն, հնչէ տակաւին բեմն նորին զկնի նորա. զօրավար ըղզօրավար յաջորդեսցէ, և խորհրդական զխորհրդական։ Այսոքն վարէին օրինօք ազգին, որոյ ցարդ հնչէն պարծանք ընդ ծագս տիեզերաց։

Ա.յսպէս և զու, զու զաւառ Հայրենեաց իմոց, ո՛հ այրիացեալդ Ա.յրարատ, որ երբեմն նախանձելի էիր պարագայ ազգաց, այսու կարգօք և զու Հոխանայիր։ Ամիթէ չէին յայնժամ յամենայն խորշս Հայաստանեայց աթոռք հաստատեալ իմաստուն վարժապետաց։ Որոց և այնչափ էին առ մեզ յաձախութիւնք, մինչև յունաստանի անգամ, ամբարտաւանին յունաստանի առատաձեռնել մեզ վարժապետս Հարտարիւսութեան։ Ընկաւ արդեօք 'ի միտս ձեր Պարոյր, Հայկազնն Պարոյր՝ այնպիսի այր, զոր նա ինքն յունաստան անմխիթար ողբայր՝ խիթացեալ մի գուցէ 'ի բառնիլ նորա յերկրէ, և Հարտարաբանութեան անհետացի յիշատակ։

Ա.յլ աւա՜ղ. որչափ զհին պարծանան յիշատակեմ զՀայրենեացն մերոց, այնչափ ընդ այժմու հիքութիւնն աղբիւրս հոսեցուցանեմ արտասուաց։ Այլ զինչ այլ իցեն այնմ պատՀառք, բայց եթէ թերութիւն հոգոց դաստիարակութեան մանկտւոյն, և փակել վարժարանացն իմաստութեան և առաքինութեան։ Ա.յս ահա սկիզբն հիգութեանս մերոյ, և այս ծագ նորին գերելոցս մտօք և մարմնով։

Ի սկզբանէ և այսր չէն անտես մնացեալ աղէտք յանհրահանգ մնալոյ մանկտւոյն։ Ոչիք մնասակարագոյն թշնամի ազգի ուրուք քան որ զվարժարանացն դնիցէ դրունս ընդդէմ անարխական հասակին։

Յաշաղկոսն քրիստոնէական բարդաւաճա-
նաց՝ Յուլիանոս ուրացողն՝ նախատ կամեցեալ
կացուցանել ամենայն ազգաց զանուն քրիստո-
նէութեան, զայս խորհեցաւ դիւահնար չարու-
թիւն։ Լատեալ զի հալածչացն մնացեալն տանջա-
նարանք, և քրիստոնեայ անուն օր ըստ օրէ 'ի
յառաջադէմն նկրտէր։ Թէպէտ և մեծամեծ
հայրապետաց և հոյակապ արանց իբրև զՀեղեղս
դնային արիւնք ընդ հրապարակս քաղաքաց և
ընդ դաշտս, այլ ոչ պակասէին 'ի քրիստոնէից
արք անուանիք՝ զօրաւորք բանիւք և արդեամբք.
մանաւանդ թէ մի մի 'ի քրիստոնէից արք էին
պատկառելիք։ Օ՛ինչ հնարեցաւ ուրեմն չարի-
մացն։ — Լ.ուգել զի մի 'ի դպրոցս դաստիարա-
կեսցին մանկունք քրիստոնէից. եւ՝ զի ան-
դուստ եղանէին արք, որ յամօթ առնէին զՀե-
թանոսութիւն։

Լ.ս արդարև ինչաս բազում կրեր եկեղեցի՝
եթէ Ցեառն զօրութեանց չէր հոգացեալ յամրի
պահել զտուն փառաց անուան իւրոյ։

Ա.յսպէս դպրոցք նեցուկք են և աստուած-
պաշտութիւն. որոյ վասն իսկ հայրապետքս սուրբք
կանոնաւք սահմանէին՝ դպրոցս հաստատել ամե-
նայն ուրեք և վարժել զմանկտին առանց ինչ
ակնկալութեան 'ի մարդկանէ փոխարինի վաս-
տակոցն։

Օրինակ առաջի կալան նոքա զգործս մեծին
Յովհաննու սիրելւոյ աշակերտին, որ վարժարան

մանկուցն կարգեալ յԱրփեսոս, ինքնին վարժէր զնոսա 'ի գիտութիւնս սրբոց, զորոյ գիտութենն զլաւի ինքն միայն, և որ առատաձեռնեացն զայն նմին գիտէր ստուգութեամբ։ Օ հետ օրինակի վարդապետին Թեսակոխէր 'ի Օ միւռնէ և Պոզիկարպոս երանելին։

Ամ բարեկիրթ և Հոխ գիտութեամբ ոչ անհաշան ինչ է յաղգի ուրեք։ Արդ զուստաւորութիւն 'ի հաստատութեան ծագեացեն իմաստունք, ասէ Դանիէլ։ Զահ է իմաստունն լուսաւորիչ խարխապիելոցն 'ի խաւարի։ Ամուր է 'ի հաստատութեան, առաջնորդել 'ի Ճշմարտութիւն անդր ոչ միայն իւրոյ ժամանակի որերոյն, այլ և ապագայ ազգաց բազմաց։

Դաղաք մի անդ 'ի Պաղեստին փակեալ պաշարեալ կայր 'ի կատաղի զօրականէ։ Ամք և կանայք, ծերք և մանկունք յարհաւիրս մահու ընկնեալք՝ յաչս նկարէին զմօտալուտ զօրհաս իւրեանց։ Դանք չորք կնոջ իմաստնոյ փոխեն միանգամայն զկերպարանս իրացն։ Յիշէք ապաքէն զկինն իմաստուն. իմաստուն մի որ 'ի զինուորական ցասմանէն Յովաբայ ապրեցուցանէր զքաղաք իւր բովանդակ։ Որոյ ապա բարեաց չիցէ ակնկալել ազգի 'ի յաճախութենէ իմաստնոց 'ի միջի իւրում։

Իմաստութիւն 'ի միջոյ անտառաց հաւաքեալ զվայրենի մարդիկ 'ի քաղաքաժողով միաբանութիւն հանձարիմաց կարգաւ՝ մեծամեծ պետու-

թեանց արկ հիմունս։ Այլ զցանեալսն լերանց և դաշտաց յորս էրէոց՝ ժողովեաց 'ի Ներմարանս իմաստութեանց, տալ անդուստ ազգաց պատգամս գիտութեանց։ Այլ այսպէս Ներմարանք ապաւէն լեալ վտարանդի իմաստութեան՝ ամենայն օձանօք արգասեաց 'ի գլուխս բազմեցան բարեկիրթ ազգաց, պերճացուցեալ զնոսա հոյակապ արամբք և ճոխացուցեալ ամենայն բարեմասնութեամբք։

Մ.ԱԼ քանզի երջանկութեան ազգաց հիմն և հաստատութիւն աստուածպաշտութիւն է, ընդ խարխալել նորին, սպառնալիք կործանման 'ի վերայ կայ և բովանդակ ազգին։ Այլ աղիտից և 'ի հպոյ զփորձ առին ազգք, և ցարդ ողորմելի հառաչեն ընդ ահագին կործանումն չարաժամ աւուրցն անաստուածպաշտութեան։

Ազգք իւրաքանչիւր 'ի միոյ միոյ ազգայնոցն բովանդակին. և ուրուք ուրուք բարեկիրթն զոլ՝ զբովանդակ ամբոխութիւն ազգին բարեկիրթ կացուցանէ։ Որին վասն 'ի սոյն կրթի և առաջին փոյթ ընտիր վարժապետաց 'ի դաստիարակել զտխեղծ հասակն. տնկել 'ի նոսա զսերմանս բարեկրօն առաքինութեանց, և զանհաստատ և զդողդոջուն զարշապարսն հաստատել յուղիղ ճանապարհ աստուածպաշտութեան։

Այլ հաճի ինձ բանս ասել, թէ 'ի սոյն՝ քան թէ մարմնոյ ծնողացն՝ առաւելագոյն պարտք էն վարժապետաց. զի հոգւոց աշակերտելոցն իւրեանց

պատշաճեալ են սոքա ծնողք։ Ոչ այնչափ ուսուցանել զգաստութիւն արտաքնոյն խմբատասիրեալ, այլ մանաւանդ տպաւորել 'ի նոսա զպատկեր Յաչեցելոյն. ուսուցանել նոցա ոչ միայն անկողուստ պահել զտաղանդն, այլ և յարգել. զի և առ անպտուղ ծառ մերձ է սպառնալից տապարն։ Ընտրեալք պահել 'ի նոսա զսպիտակ պատմուճանն անմեղութեան, և արժանիս զբարկացն և սիրոյն Յիսուսի. որով առաւել իմն 'ի նոսա վառեալ Տէրն, քան թէ զողջես 'ի համբերն մարդկութիւնս, յայտնի իմն օրինակաւ՝ նոցա ասաց լինել զարքայութիւնն Աստուծոյ, զամենեսեան 'ի նոցին հրաւիրեալ նմանողութիւն։ Եւ 'ի մերձենալ նոցա առ նա՝ զկարևորագոյն վարդապետութեան զբանն հատեալ, կոչէր մի մի առ ինքն, և սիրելիագոյնքն ձեռաքն օրհնէր զնոսա, և աւանդէր 'ի ձեռս վարժողացն։

Ա. ձեզ, և 'ի ձեռս ձեր աւանդեաց Տէր զայս աւանդ իւր սիրելի, ո՛վ ակումբ վարժողաց. աւանդ արդարև գժուարապահ, այլ ըստ նմին չափոյ և ծանրագին, զորոյ՝ այնքանոյ աւանդողին իսկ ինամք ծանր ևս առնեն զգինան։ Պարտ է ձեզ հաստատութեամբ ունել զայս յուշի, զի յամենատես ատենին ոչ միայնակ գտանիցիք յահաւոր ընտրութենէն. քանզի աշակերտեալքն ձեր կամ ձեզ 'ի պարծանս, և կամ, ո՛հ, յամօթ լինիցին։

Գ. Ժուարին և բրտանալն է յոյժ զործդ,

այլ արժանաւոր քրիստոնեայ ձերոյ և տքնութեան։ Ձերով ջանիւք լցուցանէք զերկինս ամբոխիւ երկնաքաղաքացեաց. 'ի ձեզ են ակնկառոյց ոչ մարդիկ միայն, զի բարեաց յաճախութեամբ քաղաքացեաց լցցի երկիր, այլ և հրեշտակք ինքնին յերկնից՝ 'ի լուսին պակասութեան համարոյ իւրեանց։ Մեծութիւն գործոյն մի ինչ վհատեցուցցէ զձեզ, օգնական ձեզ յերկնից այն կամք ամենազօր, որոյ ակնարկութիւն գործ է կատարեալ։ Օ՛ինչ ոչ կարասջիք առնել միացեալք ընդ Աստուծոյ։

Հապա և դուք, բախտաւորագոյն մանկունք, որ 'ի բազմախուռն ամբոխէ հազարաւորաց առաջին հրաւիրեցայք 'ի վայելուին այսքան բարեաց։ Ցեսէք որքանեաց մեծամեծ իրաց ակընկալութիւն է 'ի ձէնջ. մի յամօթ առնէք զկոչողն. կալարուք միշտ յանդիման մտաց ձերոց զբարերարն ձեր զվերածնութեան ձերոյ զՀայր։ Աւուրք ձգանց սակաւք են, այլ արդասիք բարեացն յաւիտենից։ Ժամանակն գանձ է անզուգական, կորուսան անդիւտ. մի յումպէտս վատնիցէք զնա. զին է ժամանակն երջանկութեան ձերոյ յայժմուս և յանանցանելի յաւիտեանան, մի 'ի վատթարն 'ի վար արկանիցէք զնա։ Հապա վառեցարուք 'ի ջանս բարեաց, և ամենայն ինչ առցէ յաջողութիւն։

Սակայն ընդունայն են ջանք վարժողաց և ձիգն վարժելոց, եթէ զքո, արհիսպատիս Տէր,

խնայեացես 'ի նոցանէ զօրհնութիւնն հայրենի. զայն օրհնութիւն, որ առատատուրն է ամենայն բարեաց. նոքա դնին պարզախօսք լեզուք որ վարդապետեն. այնու և ունկնդրացն դիւրանասց գտանին միաք 'ի կիրթս վարժից։ Ա.յս պարտէզ է, զոր տնկեաց տաժանակիր աջ քո, և գեղա-ղէշ զարդարեաց ծաղկօք. թէ ոչ դարմանեացես ատէպ, հողմոց լինին անգին քրտունք քո. թաւամին ծաղկունք, և ընդ ակնկալութեան արգասաւոր պտղոց՝ փուշք փոխանակեն և դաղձունք զդարատանս քո։ Հայրապետութիւն շունչդ փոխանակ ջերմութեան արփւոյն լոյսի կենդանատու, և խնամք անխոնջ սիրոյդ՝ անձրև շայեկան և աղբիւր զովարար և աճեցուցիչ։

Պատուիք են սոքա արօտի քո, և հովիւքս ակնարկութեամբ գաւառապետիդ արածեմք զոսա առ հանգստարար ջրովք. ցուպ և գաւազան հսկողութեան քո մի հեռասցի 'ի վայրէս՝ 'ի բաց առնել զգայլս ապականարարս գառանց քոց։

Պատեմք զի ծանուցեալք և դժուարակիրք են հոգք հաւատացեալք առաքինութեան քո, սակայն և սոքա որդիք են քեզ դժուարին երկանց և ուժգին հառաչանաց։ Կրտսերքդ 'ի կարգս բազմաթիւ եղբարց իւրեանց. և վասն այնորիկ իսկ առաւել ի մեն քան զայլսն պահանջեն զսէրդ հայրական։ Ամբարձ 'ի վերս զհայրենի բազուկդ 'ի գլուխս սոցա, և դարձցին և եղիցին որպիսիս ցանկայ սիրտ քո՝ բարեաց ցանկացող։

Հայրապետաբար քոյին բազկաբ մատոս զատաս յոր-
զիսութիւն երկնաւոր Աստուծոյն, մի որդիս
վշտաց · և կոչեսցի անուն փառաց նորա 'ի վե-
բայ սոցա ։

1836 · Յաւուր սոնի անուան հրաշափառ Տիրուհւոյն ։

Ի ԴՊՐՈՑՍ ՄԵՐ

ԱՆՀՐԱԺԱՐԵԼԻ Է ՈՒՍՈՒՄՆ ՀԱՅ ԹԱՐԹԱՄՈՑՆ

Սէր Հայրենի, ամենապատիւ Տէր, և իմաստնախոհ ատեան, սէր Հայրենի ամենայն տա-ժանական կրից դիմագրաւ նահատակ վառեալ զանկումիս պատկառելի, նոյն ինքն և արդ ած ձգեաց այսր 'ի մի ժողով միաբանութեան 'ի կարևորացն խոհականութիւն։ Նոյն ինքն սէր Հայրենի ամբարձ և զիս յայս բեմ, թէպէտ և տկարութեան անձինս գիտակից. և նոյն շարժէ զշրթունս իմ 'ի լուր ներողամիտ ականջիս, որոց կորովատես աչացն ոչ անձահ թուեցաւ ինձ առնել յանդիման՝ եթէ ոչինչ առաւել օգտակարագոյն ազգի և Հայրենեաց քան զընդիկ Հայրենի բարբառոյն ուսումն կանխաժամանն. մանաւանդ մեզ, և յայսմ ժամանակիս, յորում յայլոց ամենայն անցելոց բարեմասնութեանց վերջացեալ եմք։

Մինչ դեռ թագին փայլեր ձնձանչ 'ի գլուխ որդւոց Լեւոնայ, և արքունի ծիրանւոյն գեղ շլացուցանէր զաչս, ոչ կարևոր ինչ ճնաստակարութեան կասկածք էին 'ի միջի եթէ զդոյզն

թերութիւն հայրենի դպրութեան մանրացածոյ յայլոց ազգաց 'ի փոխ առնուին մերքն։

Յայնժամ մինչև 'ի մեռաս արևու պարթեւաւ կան սրոյն բռնութիւն գողացուցանէր զսէգ հրոմվնայեցին։ Լաւ եթէ չառնուին զազգ դիւցազնաւ կան բարբառոյն, այլ հայ քաջութի այլագունէր զդէմն սէգ ժողովրդեանն։ Վնդ ամենայն արևելս հայկազն բարբառոյն հնչէին արձագանգք։ Լաւ աշխարհակալքն մեր հայրենասէրք հայերէնասխոսս զնուաճեալսն յազգաց գնէին։ Լաւ, անցին գնացին այն աւուրք բարենշանք։

Վակայն նոյն սեր հայրենի տակաւին ջեռուցանէ զհայրենասէրս սիրտս միոյ միոյ երկայնամիտ ակմբելոցս, որ ոգի 'ի բոին առեալ ձգնին զանցելոյն դարուց յետս դարձուցանել զշրջան։ Լաւ ոչինչ յերկարութենէն վհատեալ, զգուշաւորագունին ևեթ ճանապարհի, անստերիւր դաստիարակութեան մանկանց՝ ուշ ունին, կարևորագոյն, մանաւանդ թէ անհրաժարելի զուսումն հայրենի բարբառոյն նոցա համարեալ, որով թէ մտայն խոհականութեան, և թէ յօժարութեանց սրտին ուղղին գնացք։

Լաւ քանզի ուշ նպատակի 'ի կարգաւոր դաստիարակութեան այս է զմիտն և զսիրտ միանդամայն ամբել. կրթել զմիտս յուղիղն մտածութիւն, և զսիրտ 'ի բարւոյն յօժարութիւն, զի քանչ քան զուսումն բնիկ լեզուին անսխալ առաջնորդ 'ի սոյն զիտաւորութիւն։ Լաւ եթէ վեր-

ջասցուք ասասի յայսմանէ թերի առնեմք, նե-
բեսցի ինձ ասել, թերի առնեմք զդասատիարա-
կութիւն մեր յերկոցունց կողմանց։

Եվ պէտ և աւելորդ իցէ արդեօք առ հայրե-
նասէրսդ շատխօսութիւնս իմ, սակայն զի ար-
համարհեալ տեսանեմ յոմանց զձշմարտութիւն
խորհրդոյս, ազաչեմ երկայնամիտ ունկնդրու-
թիւն շնորհել սակաւ բանիցս։ Ցկարութիւն
իմ՝ի բան՝ վհատեցուցանէ զիս, այլ զի առ հայ-
բենասէրս են բանք իմ, քաջալերեալ խրախու-
սիմ յանձին։ Լցէ՛ թէ այլ և ս կենցաղօգտակա-
բագոյն ինչ առաջի առնէի ուղղաբեռ ակմբիս։
Սայց և սորայս կարևորութիւն ոչ ինչ զան-
խուլէ՝ի հայրենասիրացդ։ Օ՛ի զսմանէ կա-
խեալ կայ կամ տակաւ յառաջադիմութի հայ-
բենեաց, կամ՝ի սպառ եղծումն ընդ անողոքելի
հարուածովք նախանձոտ ժամանակին։

Ո՛հ, զիարդ ժուժկալեցիս ես ունել ասասա-
նօր զլեզու՝ի գովութեանց իւրաքանչիւր ձեր,
որ վասն հայրենեաց բազմապատիկ նահատա-
կեալ, արդ հազարաւոր մղոնօք տարագիր՝ի նը-
մանէ՝ զնորին բախտ խորհիք և զնորին բարե-
զարդութիւն։ Ա՛յն ունիմ զի գոյն իսկ նա-
խանձելի առաքինութիւն ձեր զտաղտկութիւն
բանիցս թեթևացուցէ։

Ի ԿԱՐԵՒՈՐԱԳՈՑՆ նկարագրաց կրթականի
առն մի և այս է, զի ուղիղ ճշգրիտ տիպք իրաց

իցեն 'ի միտն, զի ըստ նոցա և զխորհրդածութիւնն կերպարանեսցէ թէ յոր գործէն, և թէ 'ի քննութիւնս իրաց իրաց։ Եւ այսու ահա անսայթաք բովանդակի խոհականութեանն 'ի մեզ հանդէս։ Իսկ արդ խոհականութիւն մեր յոյժ անձուկ կապանօք լծորդեալ է ընդ բաւից. և տիպք իրաց 'ի միտս մեր պատկերք են բաւիցն յօդելոց լեզուաւ։ Եւ եթէ վրիպական իցեն այս նկարք մտաց, և օտար 'ի հեգելոյ բաւիցն, որպիսի թիւր դատաստանք աստի, և որչափ մոլորութիւնք։ Յայսմանէ բազումանգամ և այնպիսի կատաղի բանակռուութիւնք, որ 'ի վեր և 'ի վայր արարին զաշխարհ. 'ի սմանէ ձաւ կատամարտք ահեղ բանակաց, քանդմունք քաղաքաց և գաւառաց աւերմունք։ Զինպէս զի ոչ ոք անկարեկիր աչօք զէջս պատմութեանց դիպացն այնոցիկ կարասցէ ընթեռնուլ։

Զհ և մեր տակաւին ջերմ են աղի արտասուք 'ի վերայ ծնօտից 'ի պատճառս հիքութեց այսպիսի վրիպականաց դատիարակութեան։

Մանուկ հայկազն վարժեալ 'ի սովորութիւնս աղգին իւրոյ 'ի տղայ տիոց, և ընդ կաթին 'ի մօրէն արբեալ զօրէնսն հայրենի կարգաց, զի՝ արդ մարթիցի յօտար լեզու դատիարակեալ՝ ջնջել զնախատիպ նկարսն 'ի մտաց, և այլս ընդ նոսին փոխանակել ըստ աղգացն, յորոց 'ի լեզուսն կրթեսցի. մանաւանդ զի և ուսմամբն ոչ եթէ ապատաբսի ինչ 'ի հայրենեաց։ Վերեւս

մարթիցի մանկան տղայոյ 'ի բարս ազգի օտարի բնաւորել, եթէ և զամենայն կենացն ասպարէզ առ նոսա բովանդակեսցէ. լիցի հնար զկարևորացն 'ի նոցայոցն անտի հարկանել զապատաւորութիւն։ Այլ թէ 'ի ծոց դարձցի հայրենի, զիաւրդ մարթիցի գաղ զիացի և իտալացի խօսիւք վարժելոց առնուլ 'ի միտն զՀՇգրիտ տիպս հայրենի իրաց։

Եթէ զանջատեալքս 'ի միջոյ ազգին հեռաւորութիւն վայրաց և ժամանակաց, և սովորութեանցն փոփոխութիւն՝ է երբէք զի այնպէս վարանեցուցանէ. զի եղիցի ապա եթէ և օտարոտուով ոք վարիցի լեզուաւ։ Կուինտիլիանոս մեծ, որ կամէր զիւրն ասպնջականս ամենայն բանաւորական և իմացական Ճոխութեանցն Աքլադայ, խիթայ մի գուցէ յանջատել զընիկ բարբառոյն ուսումն 'ի յունէն զեան ինչ հայրենի դպրութեանն լինիցի։ Այն զի երկոցունց այնոցիկ լեզուաց և ազգաց այնչափ է ընդ իրեարս միաբանութիւն, որչափ է չմիաբանութիւն մերոյն ընդ այժմու ազգաց։

Թերանամք ուրեմն 'ի պարտս ուղիղ դատողութեան մնաց եթէ յայլոց լեզուացն հրամտութենէ անջատեսցուք զմերն։ Բազմաց 'ի մերոց ատի լեալ են գեղեցիկ դատողութիւնք յօտարոտի լեզուս ընդ օտար ատեղք, սակայն ո՞ 'ի Հայոցս և զանուն իսկ գիտէ զնոցին։ Որ օգտակարութիւն ապա որբացելոյն 'ի

հոգանել Ամրարատայ. զոնեայ զինչ պարծանք չիջելոփառ ազգիս։ Պարծի Հռոմ՝ի Տիրան առաջին զրապետ յաշխարհի առ Լուկուլեան։ և հայատան զոնեայ ոչ միխիթարի յաւետիս զրգռոցն իւրոց ուծացելոց։

Ամրարատ զի է ինձ զհնան յիշատակել։ Ոչ բազում անգամ՝ի ազիատեթենէ բառից կասկածաւոր թուեցեալ են իմոցդ առատաձիսնատ հարցն մերոց։ Այլ ուր առ այլ ազգս՝ի լուծումն ասատուածաբանական խնդրոց հարցն առաջնոց քննին մատեանք. մերոցն ասատուածաբանական երկրայութեանց բազում անգամ, ամենեմաս, բազում անգամ բառագիրք նատին դատաւոր։ Օրազանց՝ի ձէնջ լեամ առատեար, ամ պատկառելի ակումբ, զհառաչանս։ Ասատուցէք ապա զարմանն անհանդուրժելի վիրաւորութեան. զի՝ի ձեռս ձեր է։ Ի ձեզ յանձնեալ է ջահ շիջելոց փառաց հայրենեացն մերոց. լուցէք, զի լուսաւորեսցին նոքա որդիքն Հայկայ, և նախանձորդք հայրենի փառաց, միաբանգամ անցցեն՝ի տեսիլ ազանց և ազգաց։

Ոչ ինչ ազնուագոյն է՝ի կիրս պատին քան ըզսէր. և ոչ ինչ հրաշալեաց գործոն քան զհայրենասիրութիւն։ Այս ինքն զիւրաքանչիւր հայրենասէր վաղակատարաս զաջ քաջանպատիկ զօրականին առնուլ զվրէժ փառաց հայրենեաց, կամ անկարգաւ աւարաս Հոխացուցանել զնա։ Ամենն առաջնորդեալ սիրով և նաւարդիր՝ի ծանութ

յեղեալս պիտակն զառաջաւորսն նաև մարտնչել ընդ ահեղաւոր ոլիս և անծանօթ ափանցն Հոխուեանքն շրջեալ զտուն Հայրենի։

Հայրենիքն քաղաքաժողով միաբանութիւն է մարդկան. և այնմ Պղատոն զօր եդ զերկիւղ զաստուծոյ. և Արիստոտելի զմարդկան ասաստուածս. այլ ինձ սիրելի են Լիբոտաեղեաց կարծիքն՝ որ զընկերութիւն բնութեան շաղկապ եդ միաբանութեան մարդկան, և հիմն հաստատութեան հայրենեաց իւրաքանչիւր։ Լա այսոցիկ ազգասէրս բնութեան զինչ իցէ յայտարար, որով փարին հարք զորդւովք, և սորա զնարօք, առաւել քան զտարփանս որթոց զկրնեանս։ Օրինչ. բայց եթէ լեզու յայտարար իմաստից մտաց, և անխարդախ թարգման խորհրդոց սրտին։ Լեզու ապա կապ է և ամրութիւն հայրենեաց. լեզու արմատ ամենայն յառաջադիմութեան հիւսացելոյ ազգիս։

Ո՛հ հեշտութիւն մեծ մարդկութեանս, հեշտութիւն ոչ ախտաւոր, այլ իմաստալի, այլ 'ի հոգւոյն յառաջ բղխեալ. ծագումն բանի և ծնունդ մտաց. հեշտութիւն զորոյ զփոյթ առնումք իւրաքանչիւր, յորժամ փոխանակեմք իրերաց զարտանխոհութիւնս մտաց հեգիւք բառից իրան իմն և մարմնեղութեան անենութիւն ոտաղ մնացութեանց։

Օ՜ անեկշռելի հեշտութեանս առեալ զփոյթ

գեղեցկաբանն Յուղղիոս, որ և ինքնին չէր անչնչակ քաղցրութեանց միայնութեան, վՀիս այսպիսի ոչ ինչ երկբայեր հատանել։ Այթէ ի մատուռն գերմարդկային ինն զօրութիւն յանկարծ փոխադրեալ՝ ի միջոց բազմամարդոց՝ ի միայնութիւն անմարդի ուրեք անապատի, և անդ նեկտարաւ և անմահական Հաչակօք երկնից դարմանեալ, ոչ Հանդուրժէր թերակատար երանութեանն. խուսափեր փախչէր՝ ի միայնութենէ անտի՝ ի Հրապարակս իւրոյ բնութեանն կցորդելոց՝ վայելել անդ՝ ի քաղցրութիւն տուրևաոիկ վարՀառաչՀութեանց խորՀրդոց մնաց։ Գեղեցիկս ապա նա ինքն Յուղղիոս առ կուիրինեանն իւր ասեր. Ա՛յ ինչ առաւել, ոչ ինչ առաւել սիրելի քան զՀայրենիս։

Արդարև ապա քաղցր են Հայրենիք, ուր միոյ Հօր որդիք Հանդէս առնեն սկզբնական եղբայրութեան իւրեանց։ Այս Հայրենիք ոչ օդք են միայն կամ Հող կամ ջուր, այլ առաւել լեզուն, որով և եղբարք՝ ընդ օտար երկնիւք թափառականք՝ յեղակարծում՝ ի ծայրից տիեզերաց՝ ի մի վայր եկեալք Հանդէպ զիրեարս, ընդ միմեանս ողեխառնին, և՝ ի բերանոյ իրերաց զՀայրենին լուեալ արձագանգս այնպէս Հեշտանան միմեանք։

Որ սիրէ զՀայրենին, սիրէ զլեզու նորին. զի նուիրական ինչ է նմա և ամենայն ակնածու յարգանաց արժանաւոր լեզուն, զոր խօսեցեալ

են նոքա, որ իւրեանց առաքինութիւնն սկզբնա-
հայր լեալ են ազգին։ Այլ սիրոյ, վեմք և
կոթողք, հայրենի առաքինութեանցն անկորուստ
յիշատակք, չեն համր առ սիրտ բարեզգած, ոչ
ապաքէն առաւել ազդողագոյն իցէ լեզուն, որով
նոցին փառաց արժանաւորքն զմեծախոհ իմաստս
դիւցազուն ոգւոցն յայտ արարին։

Այլ յանկարծ փոխեսցուք յասխուն Այրաս-
խայ, որոյ ալիք անխոս ակամատեսս լեալ են հայ-
րենի մերոց փառաց, զիարդ ընդ լանջիւք մե-
րովք բաբախեն սիրտք մեր, և 'ի միտնջենահոս
ալեաց նորա ցանկամբ ըմբել զվեպս մեր։ Այլ մի-
թէ չիցէ նոցնպէս ստուգապատում գեղեցկա-
խոս պատմէնք պատմագրաց մերոց։ Այլ և նո-
քա իբրև զալիսն Այրասխայ անխոս հանդիպեսցին
մեզ, եթէ ոչ խնամով զուն գործեսցուք 'ի
տղայ տիոց ընդ լեզու հարցն մերոց ընդգրանել։

Յոյնք զՀոմերն յափշտակէին յիրերաց՝ նո-
ցին քաղաքակցութեանն պերճացեալ պանծա-
նօք. ահ, միթէ այնչափ վերջացեալ իցէ 'ի մեզ
հայրենասիրութիւն, զի անկարելիր աչօք հայ-
եսցուք 'ի հարսն մեր 'ի՞ Այերսխեանս և 'ի Վահա-
կեանս այլովքն հանդերձ։ Թաբէ, յորժամ
զմտաւ ածեմ եթէ նոցին բառիւքն զբանս իմ
յօդեմ, և այն խօսք, որ զչրթունս նոցա շարժե-
ցին, շարժեն և զիմս, այլ յայլմէ լինիմ, և
յանձնէ արտաքս ելեալ իբրու յայլ ինն տարազ
էութեան յեղաշրջեալ զանձն հանարիմ։

Հայտ և ապեմն եթէ ասասին եւեթ լեզուին բարձրագոյն ի մեզ գկարի չիջեալն, զանցեալն բոց հայրենի։ Լաւ եթէ տակաւին ամենայն արդիք Հայկայ խօսիւք հոր իւրեանց 'ի վեր բերելին գիտնասս սրտին, այն խոսք կոչցակոնս ցոյսեցուցանելին սիրոց։ և 'ի բոցոց անտի հայրենասիրութեան անձերանալի նորոգեր մանկութենի կենդանութեան ազգին։ Լաւ հեռացեալքս 'ի մեծամեծաց հարց մերոց երկայն վայրոք և ժամանակաք՝ անբակ մնայսք 'ի նոցանէ ոլորիւք սիրոյն։ Լակ այսոր, առաջ վերիսանացս, գեղանիծաղ հոյ շրթունք շարժին 'ի հնչիւն խուժադուժ անուանց, լքեալ անկիշատակ զանուանսն, որ մի մի կերպարանք են հրաշալի առաքինութեանց։

Ո՞չ ապաքէն խրատանչիւր յանձինս նեղանուերք զերաշխատուր բանիցս հասատատութեան։ Որոց լեզուի վարժիւքն հրահանգ իցէ որ, ընդ նորին ազգի և սիրոյն կապի կապանաց, և ախորժէ ի մեր փառաւորագոյն և Հոխագոյն զոլ զազգն զայն ըստ ամենայն տեսութեանց առ հատատարութեան այլոց ազգաց։ Լչ այս, թէ ոչ խաբիմ, անձնասիրութիւնն ինչնին՝ անանկին 'ի բուսոց բարոց իւրանչիւր, յորդորել զմեզ։ Երբու այն թէ լեզուաւն հաղորդս լեալ նոցին, որ Հոխացեալ իցեն բարեմասնութեամբն։ Լաւ թէպէտ չիցեն արդեամբք, սակայն սիրելի է մեզ այսպիսիս զոլ նոցա։ Լաւ որ խորը իցէ ընդ

այս սէր ազգի ասպրի , և ընդ խնասս հայ-
բնասիրութեան , որով Ձնեղիս հայրենասէրք
փառաց ազգին ըղձանան ։

Ազգաշէտ այս խորհուրդ հայրենասէր թեւս
յաւել երաշխիսաց Աստուծոյ սրանալ ծա-
գաց 'ի ծագս հայասատանեայց , հատանել զի-
բանց և զգաշտաց հեռաւորութիւն , խոյանալ և
յոտարայն խնասուն խորհրդաբան 'ի գիւտ զբ-
պրութեանս մերոյ , յորոյ միք արդ գիւրաքան
'ի քրառնան վայելելք . և վասասկարեկ ձեռաքն
կանգնեաց անթիւ վարժարանս հայ մանկաց ։

Ա՛ թերի էին և առ նասս վարժք յոյն և լա-
տին լեզուաց , զի 'ի թագաւորէն մերմէ և 'ի հայ-
բասպետէն խրախուսեալք գիւրագործ էր հարցն
մերոյ Ձնեանպարհարգել յիմնասասէրն Աշքա-
սանդրիա , 'ի Ձնառանդան յԱթէնս . և 'ի յաղ-
թանակն Հռոմ . որպէս և իրացն հանդէս
վիպել մեզ գնոյն ։ Սակայն կորսաբիր ծերու-
նին եռեսն՝ զի տակաւ սասանէր ինն գահն ար-
քունի . և ուղղագատ մնաքն կշռեաց եթէ 'ի
հանազգի վարժարանաց էլցեն , որ զիրաս ազգին
կալցեն յանկասանի ։

Այս արդարև 'ի զարս ծաղկելոյ գեղեցիկ մա-
տենագրութեանն մերոյ , և հայրենասիրութեան
ծաղկէին առատբաղէս արգասիք ։ Ոչեմ զան-
ընկձելի արութիւն զօրավարացն մերոց , որ ոգի
'ի բոլոր եղեալ՝ 'ի վերայ հայրենեաց նահատա-
կէին . այլ ասա՛ զ , 'ի գերեսս ։ Սակայն անանհ

թիւն և եթէ մերոյն Ճգնեցայ ցուցանել. եթէ միայն յաջողեցայ 'ի նոյն 'ի ներողամտութենէդ ձերմէ. զի հզօր հակառակախօհք վարանեցուցին զիս՝ մի գուցէ օտարոտի ինչ կարծեաք հեռացեալ գտանիցիմք 'ի շաւղաց ուղղատես հարցըն մերոց։ Այլ թէ ոչ գիտեմ և ես զյիշատակաց արժանին զայն մեծաբանութիւն արքայի ուրումն գալրութեանց սիրելւոյ, որ՝ ողբանեաք խօսիցի զբ, ասէր, լեզուաք, այնքան մարդ է։

Զտարք հինաբար յարձակեցան 'ի տառապեալ Հայրենիսն մեր յաւարի առնուլ զբազմաժամանակեայ շքեղութիւնս ակրղձեալս առ մեզ յաշխարհակալացն մերոց։ Եղ արդ ժամ է գեղեցիկ ասպատակութեամբ զիմանալի նոցայն կողոպտել Ճոխութիւն, և նոքաք զպէտս կարօտութեան մերոյ լրացուցանել։ Զողանացուք յիտալացւոյն զկորովամիտ հնարագիտութիւն. յանգղլիացւոյն յափշտակեցուք զանխոնջ և զվաստակասէր բարս. 'ի գերմանացւոյն զուղղատես խոհականութիւն. 'ի գաղղիացւոյն զյանկուցիչ Ճարտարմտութիւն. և այսու լիաբաժին աւարաք Ճոխացուցուք զբազմակարօտ Հայրենիսն մեր։

Հայքս առանց յայլազգութիւն դառնալոյ՝ զայլազգի Ճոխութիւնսն յինքնաբուն 'ի մերն համբարեցուք։ Զոմին այսու և զմեծախոհ բաբերարաց կրկին վարժարանացն մերոց գոցուք կատարեալ զՀայրենասէր ուշ նպատակին, որ ընդ հիգութիւն ազգին ողորմելի հառաչեալ 'ի

թիւն և եթէ մերոյն Ճգնեցայ ցուցանել. եթէ միայն յաջողեցայ 'ի նոյն 'ի ներողամտութենէդ ձերմէ. զի հզօր հակառակախօհք վարանեցուցին զիս՝ մի գուցէ օտարոտի ինչ կարծեաք հեռացեալ գտանիցիմք 'ի շաւղաց ուղղատես հարցըն մերոց։ Այլ թէ ոչ գիտեմ և ես զյիշատակաց արժանին զայն մեծաբանութիւն արքայի ուրումն գալրութեանց սիրելւոյ, որ՝ ողբանեաք խօսիցի զբ, ասէր, լեզուաք, այնքան մարդ է։

Զտարք հինաբար յարձակեցան 'ի տառապեալ Հայրենիսն մեր յաւարի առնուլ զբազմաժամանակեայ շքեղութիւնս ակրղձեալս առ մեզ յաշխարհակալացն մերոց։ Եղ արդ ժամ է գեղեցիկ ասպատակութեամբ զիմանալի նոցայն կողոպտել Ճոխութիւն, և նոքաք զպէտս կարօտութեան մերոյ լրացուցանել։ Զողանացուք յիտալացւոյն զկորովամիտ հնարագիտութիւն. յանգղլիացւոյն յափշտակեցուք զանխոնջ և զվաստակասէր բարս. 'ի գերմանացւոյն զուղղատես խոհականութիւն. 'ի գաղղիացւոյն զյանկուցիչ Ճարտարմտութիւն. և այսու լիաբաժին աւարաք Ճոխացուցուք զբազմակարօտ Հայրենիսն մեր։

Հայքս առանց յայլազգութիւն դառնալոյ՝ զայլազգի Ճոխութիւնսն յինքնաբուն 'ի մերն համբարեցուք։ Զոմին այսու և զմեծախոհ բաբերարաց կրկին վարժարանացն մերոց գոցուք կատարեալ զՀայրենասէր ուշ նպատակին, որ ընդ հիգութիւն ազգին ողորմելի հառաչեալ 'ի

վարժոցաց ատտի հայ որեարս բարեկիրթս, 'ի սիփիւռս Հայոց ցանկալին հասուցանել, 'ի նորա գումն անհնարին բեկմանս մերոյ։

Զ. 'ի վեր 'ի բազմամեայ փոշեաց տարանիդ, առ 'ի վեր զգլուխդ բարեաց յիշատակաց արժանի, արդարև բարեացապարտդ Լղուարդ. տես զորդիացեալն քո զժիր պատանեակս, որ ըստ քոյոց արդարադատ խորհրդոց կամացդ զոտար աշխարհաց յափշտակեալ զՆոխուռթիւնն՝ զքոյդ հայաստան նոքօք բարգաւաճեն, զփառս ա-նուանդ տարեալ ամ ուրեք։ Որ արև ծագէ, և ուր արև ամիսոփի արգասիք քոյոց խորհրդոցդ գովին։ Ոչին հայրենակիցք յոճանս բարեացն վայելեալք մինչև 'ի ծմակային ձորն Կովկասու զանուն քո հնչեցուցանեն. և օտարաց 'ի շողոյ նշուլից փառացդ շլանան աչք։

Եւ այս ամենայն բազմաբաղձ զարուց դուք նորոգիչք, ո՛ Հարք, ուղղատես խորհրդովքդ ձերովք. 'ի ձեզ համբարեալ կան ակնկալիք թորգոմական զաւակին։ Ի ձէնջ ակն ունի Զ. յարատատ պՀնել միւսանգամ 'ի գեղ հարմար պաՀոյՀ. զսիրատուն որդիսն, զանկարութիւնս իւր, աւանդ տուեալ 'ի ձեռս ձեր՝ ոչինչ երկմտի ընդ գեղեցիկ արդիւնս իրացն։ Ի ձեր ժրաջան ձեռս հաւատացեալ զանդս իւր՝ ոչ ինչ յերկուաւ նայ 'ի տոհմականացն յուսոյ։

Գեղեցիկ ասա 'ի նախադրունս ուսմանց վարժարանիս օրինադրեցան Հայրենի բարբառոյս

մերոյ հրահանգք. և եթէ այսօր տեսիք ինչ դուք, ո՛ մեծիմաստ ատեան, ձեզ արժանի 'ի հարցափորձ հանդիսիս, ձեր են արգասիքն. մանաւանդ քո, ո՛ արհիական Պետ, քոյոց հայրենի շնորհաբաշխ օրհնութեանցն են արդիւնքն։ Այլ եղո՛ւկ, զի ոչ քեզ և քոյոցդ արժանի միակիս հանդիսացեալ Հարտարութիւն. որոյ և թերութիւնք չեն ինչ ծածուկ յումեքէ համախմբելոցն յակմբիս։ Այլա թէ ոչ՝ արդ զուարթ ևս ժպիտ ընթանայր 'ի դէմս քո՝ յակնարկել 'ի ջուխացեալ բարգաւաճանս քոյոց դրախտիդ։

Սակայն զայս մի ինչ հարկ համարիմ չթողուլ անյիշատակ, ո՛ անարգամեծար Տէր, զի թերութեանց ամենայնի՝ զոր տեսանիցես, ոչ եթէ թիւրութիւն սրտի ի՛ցէ չարեացապարտ, այլ տըկարութիւն ուժոյ առ հաւատարութիւն մեծի այսր և կարևորագունիս իրի։ Որում և զօրավիգն սատարութեամբ հանապազ զհայրենի օրհնութիւնդ ծանուցեալ անեղկաց, զնոյն մաղթեմ առնել անընդհատ 'ի տնկոցդ քոյոց և 'ի նոցին միակողաց։

1837

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ՈՒՍՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ինձ երանի է, ո՛ աստուածարեալ Հայրապետ, և պատկառելի կաճառ իմաստուն ունկընդրացդ, ինձ երանի է, զի 'ի շրջան սակաւ ժամանակաց այս երկրիս շնորհի զձեզ ունել ունկնդիրս։ Բայց և այս զինքեանս ըսելեացդ մանաւանդ փառք են քաղցր մարդասիրութեան, քան շնորհք իմոյ նուաստ բանախօսութեանս. որ ոչ միայն չգիտէ շպարել զձեզ Ճշմարտութեան 'ի զօշոտել զաչս և գողանալ զլսելիս, այլ և մերկ իսկ վերջացեալ գտանի տպաւորագոյնս առնել զայն առաջի։

Սակայն ես ընդ ձեր մեծապէս զարմանամ ընդ ներողամտութիւն, որ 'ի դուշնաքեայս յայսոսիկ երբեւ 'ի կարեւորագոյնս Ճիգն ծախէք և ժամանակ, և երկայնամտէք 'ի լուր մանկական թոթովախօսութեանց։ Յուցանէք այսու թէ ոչ եթէ յառաժամայքս զկայ առեալ դադարէք, այլ կորովատես բբօք կշռեալ 'ի հեռուստ զգալոց դարան, այրիացելոյն Աւրարատայ մանկունս պատրաստէք աղնուախոհս, որ զսգոյն տխրու-

թիւն 'ի բաց մերկասցին 'ի գեղաղէշ դիմաց մօր որդեսիրի։

Եւ զի դիտաւորութիւն ժողովոյս այս է, նեղեսցի ինձ եթէ զարդարակչիս միտս ձեր առեալ դարձուցից յայն ինչ, որ 'ի կարևորագունիցն է առ 'ի հասանել յուշ նպատակին։ Եւ զայս ահա 'ի նմին իսկ 'ի պատմութեանս Ճգնեցայց ցուցանել, յոր բանքս իմ այսօր ուղղեսցին։

Վասնզի հասարակաց փոյթ 'ի գեղեցիկ դաստիարակութիւն մանկտւոյն բռնադատեալ զիս զայս ևս նուազ զհակիրճ բանքս իմ 'ի նոյն նուիրել, և սղաբար սուաջի առնել զմեծ կարևորութիւն ուսման պատմութեան։ Պատմութեան, զոր ընդ քաջի հռետորին հռամայեցուց ախորժեմ կոչել ջահ Ճշմարտութեան, և առաջնորդ կենաց։ Պատմութեան, որ ըստ ծերունւոյն Լոլինոյ իմաստնացուցանէ զմեզ ըստ աշխարհօրէն կարգաց, և քաղաքական ուսուցանէ կարգս։ Որով և արդարև գովութեան արժանի այնք 'ի Թագաւորաց, որք զրով և պատմութիւն զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս։ Օ՛ի իբրու այն թէ պինդ կալեալ խափանիցին զերազանթեւ թռիչս ժամանակին. և կամ 'ի խաւարային ծոցոյ յաւիտենից յետս ընդ կրնանին վերջանիցին զմոռացեալ հոսանս դարուց՝ ամենաիայելուչ կենցաղագուութեանց խորհեցեալ օձանս։

Վասնզի մարդ՝ անոք անօգնական եղեալ յաշ

խարհիս, անկարող առ ամենայն, զուրկ 'ի բնաւորականացն զինուորութեանց, տկար ըստ մըտացն բազմապատիկ տեսութեան առաւել քան զմարմնոյն տեսաւորութիւն, թափուր յազդեցութեանց անտի, զոր բնութիւնն՝ դայեակ որդեսէր՝ առատաձեռնեաց անասնոց անբանից, զամենայն ժամ մատն և տուր լինէր մոլորութեանց, եթէ չէր նմա ոք առաջնորդ 'ի դժուարին և 'ի տաժանակիր շաւիղս կենցաղոյս։

Մարդ, Հիզրիտ պատկեր ինքնաբաւ իւրոյ Բարձրին, ինքնին Հարտարէ զհնարս հայթայթանաց դժուարագունի իրիս։ Զխաւար մտացն՝ հատանէ 'ի վերայ բարերար Ջահ հայրենի խրատուց լուսաւորս յարդարել, և ընդ ուղիղն առաջնորդել դիւրապատիր քայլափոխից զուսակացն։ Զայն ամենայն խրատ պիտանի, զի մի հողմոց ցնդեսցին, ձեռն բարերար ամբարեաց 'ի շտեմարան մատենից, մերձ եղեալ առ նմին զօրինակ իւրաքանչիւր, որոց անատերիւր հետևեալ ընդ ուղիղ շաւիղն՝ տարան զբարեմատնութեանն մրցանակ. և որոց անտիրոյթ եղեն՝ զապագովութեանց այպանս։

Զայս ուսումն, որ ոչ միայն օգտակար, այլ և կարևոր իսկ է մերոյ պայմանիս, ցանկալի է մեծապէս առաւել ևս խնամօք զարգացուցանել 'ի վարժարանս մեր. զի, եթէ չիցեն յանդրգնութեան բանքս, հիմն է գեղեցիկ դաստիարակութեան և անհրաժարելի մատն նորին։

Բաղարկութիւն կարևորագունի իրիս ինքնին պահանջէ զանխաբելի դատաստան իրաւակրիս ակնարիս. զոր և, եթէ չնորհիցէք ինձ երկայնամիտ ունկնդրութիւն ըստ ընտանի ձերոյին քաղցրութեանդ, սուղ բանիւք Ձզնեցայց առնել յանդիման։

Յամենայն դարս ոչ վրիպեցին մարդիկ 'ի գեղեցիկ յայսմ ծանօթութենէս՝ քան զամենայն կարևորագոյն համարել զդաստիարակութիւն ապագայ դարուն։ Գեղեցի գուն գործեալ է ցանգ 'ի ձեռն անխոնջ իւրոց մշակաց արգասաւոր մարդատնկոլք զաստուածային բուրաստանն զուարձացուցանել։ Այոյս իւրեանց միօրինակ աղգք նուաձեալք և աշխարհակալք յառաջագոյ դարն առնեն ապաստան թօթափել զլուծն, և կամ զհայրենի սուսերին փայլ յաղթական ցհեռաւոր սահմանս 'շողացուցանել։ Բաղաքք իւրաքանչիւր յորդւոցն ակն ունին ոչ միայն ըզժառանգեալն անկորուստ պահել զշքեղութիւն, այլ եկամուտ ևս փառաք Ձոխանալ։ Այր ընդ բեռամբ ամայն յորդին հայի, զի 'ի վեր կանգնեսցէ զնուաձեալ ծերութիւնն. այլ և զտունն համբրէն, զսիրելագոյն 'ի հոգս իւր, նորին լաւութեանն հաւատայ պահել յակառաստանի։

Այս ամենայն՝ յառաջնոց անտի և 'ի մեծամեծաց մինչև ցյետին նկուանն՝ երաշխաւոր է կարևորութեան քաջի դաստիարակութեանն։

Մինչև նշան մեծ ասատուածոյին հաշտութեան համարել ամենեցուն զայր այնպիսի, որ օրինակաւ իւիք լիցի օժանդակ լաւագոյն և յարդարել զգալոց դարձն մարդասէր խորհրդովք կամ 'ի դիւրութիւն դժուարագունի իրիս Ճարտարեալ հնարս, և կամ պատրաստեալ տեղի ապաւինի բազմաչտանգ հասակին։

Աղէ, դարձուցէք միանգամ զաչս 'ի սպառնալից ալիս անդր, 'ի սահանակարկաջ և 'ի փրփրադէզ ջուրն մահագոյժ, որ 'ի վերուստ և 'ի ներքուստ մարտ յարդարէն ընդ բնութեանս։ Տեսէք զկապուտակեալ դիակունս՝ խաղալիս լեալ ժպիրհ կոհակաց, զաւեր և զկողոպուտ համայն բնութեան։ Այլ տապան մի 'ի մէջ համակոծման աղէտիցն՝ արհամարհեալ զամ սպառնալիս՝ սիգաՃեմ սահմամբ երթայ խաղաղ և անվտանգ ապաւինի 'ի գլուխս Աստեաց։ Ընդ երկրորդի հօր մարդկութեանս երդումն կուէ, և նշան հաստատութեան կնքէ անստելի բերանն։

Ելից ապաքէն յանդգնութիւն զնաւն զայն՝ աներկիւղ 'ի բարկացայտ ալեաց՝ տպաւորել 'ի վարժարան առաքինութեանց, յոր խուՃապեալ ապաւինի երկչոտ հասակն 'ի ծովածուփ ալեաց կենցաղոյս. և գեղեցիկն 'ի նմա դաստիարակութիւն, նշան հաշտութեան երկնից ընդ երկրիս։

Աղէ, զինչ իմանայցեմք դաստիարակութենն անուամբ։ — Զինչ այլ, եթէ ոչ զան-

ստգիւտ քաղաքավարութիւն՝ի կենցաղակից միաբանութեան մարդկան։ Ոչ այս խորհուրդ հիմն արկ վարժարանաց յամենայն դարս. ոչ և քիրտն մարդասէր անխոնջ վարժապետաց յայն ևեթ ձգնի՝ զի յառաջադէմ զարդասցի՝ի գեղ պերճութեան կենցաղասէր ընկերութիւն մարդկան։

Այլ եթէ՝ի բարեմասնութիւն մարդոյս չէին պիտանի նաւարկութիւն, շինութիւն, քանդակաց և նկարուց գեղ, լսելեաց բերկրութիւն՝ի քաղցրաձայնութիւնս, էր ջան ամենայնի այսորիկ և ուսումն՝ի վարժարանս։ Ինդէր ատեղադէտն անխոնջ առ արուեստագործ ապակեօք շլացուցանիցէ զաչսն։ Ինդէր բնագէտն և բնալոյծ՝ի քիրտն և՝ի մոխիր մրճոտիցին։ Ինդէր հրաշալին Ոգեմոսթենն՝ի ծովափունսն զօդս կոծիցէ, և զլեզու և զատամունս։

Օ՛ի անասունք, որոց չէն օրէնք միաբանութեան, յիւրաքանչիւր կաղապս միայնացեալ գաբանին։ Այլ որչափ առաւել արիւնարուշաք իցեն, նովին չափով և՝ի համաբնութիւն ընկերացն մեկուսի։ Այլ յայս իսկ սակս ոչ պաշտի առ նոսա և ոչ մի ինչ յայսցանէ։

Մարդ միայն վասն միաբան ընկերասէր կենաց հաստեալ յԱ՛ստուծոյն, հեզահամբոյր բնութեանն հպատակեալ՝ ՝ի նմին միաբանութեան կոյ։ Այլ որ օգտակարարդոյն հանդիսասցի բարեաց հասարակաց՝ զնա ամենեքեան գովեն, զնա ա-

մենեքեան սիրեն, զնա ամենեքեան 'ի նկարս և 'ի վէմս բազմացուցանեն։

Այս գլխաւորագոյն ջանք էն գաստիարակութեան. վարել ընդ նմանեսս ըստ պատշաճ արժանեաց. եղբայր լինել բարերար, քաղաքացի ազնուամիտ։ Այլ արդ ո՞ր իցէ սղագոյն Հանապարհ առ այս կէտ նպատակի։ — Այլ եթէ զմանկըտին վաղագոյն ընտանեացուցանել ընդ մարդկութեան։ Այլ զայս ահա անեբկմիտ ընձեռէ մեզ պատմութիւն, ազգողագոյն նկար քաջ և վատթար խորհրդոց, զինչպէս կրից և չարաշահութեանց մարդկան, ժամանակաց և հանգամանաց իրաց։

Օ՛ի զինչ այլ նկատեմք 'ի պատմութեան, այլ զմարդ նկարեալ ընդ ընտանի գերանօք. այլ զմարդ՝ որ ուրախութիւն է ծնողաց, որ ապաւէն է ընտանեացն, որ պարծանք է հայրենեաց։ Նկատեմք 'ի նմա գործս մեծամեծս. կործանիչս տերութիւնք, և յաւերակս նոցին այլք յառնեն. 'ի բեկորաց քարանց միոյ քաղաքի ամբառնան բարձրագլուխս սեգ աշտարակք այլոց։ և այսմ ամենայնի գործն ո՞ այլ, բայց եթէ մարդն. կամ հայրենասէր առաքինութեամբք 'ի բարեվայելչութիւն հոմանգեաց, և կամ չարագուշակ ախտիւք և ամենակործան հակառակութեամբք՝ արտասուաց չարեացապարտ։

Ո՛հ գաւառդ իմ հայրենի, որ նստիս արդ յընդարձակածաւալ լռութեան. ո՞չ ապաքէն

մախացող ձեռն հակառակութեանց ծանրացաւ և 'ի վերայ բարձրակամար ապարանից և հոյակապ շինուածոց քոց, զնել արդ զքեզ ասպնջական Ճիւաղաց և որդւոց գազանաց։

Վեղեցիկս արդեօք առակաբանեաց որ ասացն՝ եթէ խօսեաց ընդ որում կենցաղավարեացիս և ասացից քեզ թէ որպիսի ոք իցես։ Այս զինչ քան զայս դիւրագոյն հնարս իցէ իմանալ 'ի վերանորոգել զազգ մի վատթարացեալ. որպիսի, ա՜հ, ոխերիմ ժամանակն կամեցաւ արդ և զմերս։

Վանդի մանուկն վաղ քաջ 'ի պատմութեան՝ դիւցազանց գտեալ կենցաղակից, և նոցին նախանձաւոր վառեալ առաքինութեանց՝ Ճգնեացի անմահ յիշատակարանաց և ինքն զոլ արժանաւոր. և զիւրն ընդ հոյակապ անուանս նոցա հիւսել։ Այս յայնմ հետէ որ ակնկալութիւն բարւոյ ոչ ծաւալեացի 'ի հայրենիս։

Այսու օրինակաւ անցեալ ժամանակք դաստիարակեալ զապագայն, ձեռն 'ի ձեռն տան քորք երեքին՝ այժմու ժամանակն միով ձեռամբ զանցելոցն և միւսովն զապագայիս զրկախառնեալ՝ 'ի լաւագոյնն զաղգացուցանել զազգս, և 'ի մի կէտ դիտաւորութեան միաբանեալ՝ զկանդաղ դարս վարժապետ կացուցանել դիւրաստաղապ ժամուց։ Որով և առոյգ գանպուլքք ալեւոր իմաստութեան հարցն առաջնոց գտանին ասպրնջական։

Վանդի քննութեամբ անցելոց ժամանակացն

'ի դուրս եկանէ, յանձուկ սահմանաց անտիսա-
կան հասակին. և այնուհետև ոչ որ մանուկ.
այլ ամենեքեան կանխեալ ժամանեալ քան ըզ-
հասակն, ալիք խմաստութեան նախաթոռ բազ-
մին 'ի խորհուրդս։ Այս յորմէ եղևն՝ խրատեալ
զայն զոր պարտն էր առնել, ոչ ինչ վեհերոտի
յօգտակարացն ձեռնարկութենէ։ Օ՛ն եթէ
ազգողագոյն բնաւորեցան զոլ աչք քան զլուր, և
հակիրճ՝ օրինակաց քան խրատուց ճանապարհ,
որով իւիք քան թէ պատմութեամբ նկարի յաչս
մանկտւոյն դիւցազանցն հանդէս։

Զոգցես բնութիւնն ինքնին քաջ գիտակ ի-
բացս օգտակարութեան զազգողագոյն լեզու,
զլեզուն բռնաւորագոյն կրից, զյանկուցիչ լեզուն
քերդողութեան յառաջինն 'ի փոխ ետ պատ-
մութիւն, զի տպաւորագոյնս ամբարեսցին դէպք
անցելոց ժամանակաց 'ի միտս և 'ի սրտի դիւրա-
մոռաց մահացուաց։ Քերդողութիւն, որ գեղա-
զարդեաց զբնութիւնս քար 'ի քարի վերայ յա-
ւուցեալ 'ի շինութիւնս քաղաքաց, և զտնկոց ծ-
ինաղրեալ պար գեղեցիկ, նոյն ինքն շքեղա-
զարդէ զմիտս, վառէ զսիրտս, նուագեալ յերգս
իւր զազգաց ազգաց քաջազունսն։

Յառաջնոյ անտի ծերունւոյն դէմ առցուք, որ
զցասումն երգեաց Աքիլեայ և զայրն բազմա-
հնար, և տեսանեմք զի կարգ ըստ կարգէ ամենայն
քնարք նախ քաղցր հնչեցուցին զանուանս դիւ-
ցազանց ազգաց իւրաքանչիւր։ Ընդուստ 'ի ծայ-

ւրից Աչից երկեցին Պիրմանք զատոյգն և զկեղեցիկ Ասան, և 'ի Մահապարագ բազմաբան-դակ տողիւք աւանդեցին զդիւցախառն պատմութիւն ծագման ազգին։ Յետոսի 'ի Շահ Ալամ նոր փառս յաւել թագաւորաց Պարսից քաղցրաբոյս քնարան։ Արդիւք բարեպաշտին Անեայ զն՝ որ ջնջեալ կամարդեալ 'ի ձայն սակեթել քնարին։ Վերմանացիք յահիճուս կան ընդ դիւցազնականն իւրեանց Դիւելանկ։ Այ 'ի զողարական թրթռումն լարիցն Ոսխանայ կալեանեան Պարտեայն արդարև անագան այլ ծայրից 'ի ծայր Աբրապայ լալի լինին արձագանգք անուան Յինկարայ և Ոսկարայ։ Վանդաղիմ յիշել մի մի զյետինն, որոց չեն զանխուլ առ 'ի ձկնջ մեծաձայն անուանք։

Ա՛ և Վողթնացի բամբռանցն երբեմն երգք քաղցրաձայն, որ, ա՜հ, լռեալ են այժմ 'ի լռութիւն մահու, խրախ առնեին զերբինն Հայոց անուամբ մերոց աշխարհաշէն դիւցազանց, և ուսուցանեին ընիկ և օտար անտառաց զքաջութիւնս Արամեանց, Տիգրանեանց, Արտաշիսեանց և այլոց։

Ո՛վ երաժշտութիւն, հոգի երկնային, որ բարեյեղանակ նեբգաչնակութեամբ կարդեցեր զգաթիզերս ամենայն, որ զեղեցկայարմար յօրինուածով թագալեալ 'ի վերայ զլեռց մերոց գունաս վիթխարիս, մեծաձայնագոյն լուութիւնս երկնից պատմեալ մեզ զփառս Արարչին,

դու 'ի վերայ թեթև թևոց քաղցրաձայնութիւն բարձրացուցանես 'ի վեր յերկինս և զՀոգի մարդոյ, դու յափշտակեալ ինն արտաքս յանձնէ զմարդ մահացու՝ անխոցելի յարդարես զրահիւք առաքինութեան, և յաղթական նախանձոտ դարուց. դու աղքողազգոյն քոյին ընդուստ 'ի նմանողութիւն հարց զիւցազանց վառես զդամդաղ թոռունս, երկնային ինն տուեալ զօրութիւն ալեաց պատմութեան։

Բայց սակայն անդ 'ի զրուցս բանիս կարծելի ինն զլացեալ մեզ բնութեան զընդաձին զայն ազգ, որով անբանիցն հարկանին պէտք կարեաց. այլ արդ 'ի միտ առնում զի վրիպեցայ 'ի խորհուրդս իմ։ Բանդի աղէ զինջուք խոնարհեցուք վայր մի առ անտիկան հատանին. մանաւանդ թէ զմտաւ ածցուք զնախկի հատակս մեր։ Ոչ արդեօք բան զամենայն ինչ՝ անցելոց ի բաց յիշատակք քաղցր եին մեզ. և առ ոտս հաբեալ զամենայն զբաստաս խաղաղկաց, ոչ ժամք երկայնք յանզգաստս անցանելին մինչդեռ պատմութիւն բացեալ զբերան իւր բազմահմտաւ՝ առաջի մեր նեարբէր զդարսն սահեալս 'ի լռութիւն յաւիտենից։

Հետաքննութիւն, բնութեան պարգև ծանրագին, յառաջ քան զամենայն յօժարեցուցանէ զմեզ 'ի ծանօթութիւնս մերոց նմանեաց։ Որով ոչ միայն խրատիմք մի ապախտ առնել զտուրան բնութեան, այլ և այնու զիւրաքոյծ

Ճանապարհ հորդի 'ի սիրտ մանկտոյն՝ զհոյակապ օրինակս առաքինութեանց ակրղձել վաղ 'ի նմին։ Ասձ հաճոյ է մանաւանդ ասել թէ ամենայն կեանք մեր ուսումն է պատմութեան։

Անդի սեր գիտելոյ զանցեալն ոչ սահմանի ընդ տիս մանկութեան, այլ մինչև 'ի գերեզման կենցաղակից է մեզ անմեկին։ Զթէ երկուք յանկարծ 'ի վայրի միոջ հանդիպեսցին իրերաց, հարցուածք խիտ առ խիտ զիրեարս փոխանակեն, խնդին զմիմեանց կնի յերկոցունց կողմանց՝ իմանալ ինչ 'ի չգիտելոց։ Զոչ վրիպեմ ասել թէ յանցեալն կեցցեմք մանաւանդ՝ քան թէ 'ի ներկայն։ Վէպէտ և ապառնեացն իսկ գիտութիւն ոչ նուազ բռնաւորագոյն ի մեզ։

Զնքն իսկ Զարատարապետ արարուածոյ բնութեանս ուսոյց զայս բնատուր պարգև մարդոյս չառնել անտես, այլ մանաւանդ յօգուտ 'ի՞ կիր արկանել, ընդ այն Ճանապարհ գործելով 'ի հոգին պիտանի և կարևորագոյն կանոնաց բարեշաւիղ կենաց։ Զնորին ինքնին եցոյց մեզ զօրինակն համր դարուցն անցելոց բարբառս ստեալ 'ի լուր ծառային իւրոյ։

Անդի 'ի հոլովել երկայն ամաց, ըստ հեռանալ մարդոյն 'ի ծայրէ անտի մարդկութեանս, և նախնի տպաւորութիւնք և սկզբունք գոգցես 'ի սպառ եղծան 'ի միտս և 'ի սիրտ մարդոյ։ Որպէս եթէ առու յատակ, որ 'ի կարկաջ հեղուծայն քերիցի առ վրանաւ հոսելն, անծանօթ

և անհամբաւ, այլ ակամակիտ և քաղցրահամ հիւթոքն զպատուք հոսուին և զարօտական խաշինն բուժէ. իսկ ըստ հեռանալ յաղբերականց ստուարացեալ յօժանդակութենէ վտակաց բազմաց մեծահոչակ անուամբն և ահաւորաձայն խոխոջանօք, որ 'ի մի ձուլէ զվէմն և զաւազ ալէստատ պղտոր թաւալմամբ, կորուսանիցէ զարծաթափայլ գեղն։

Այսպէս և ազգ մարդկան, իբրև հեռացեալ 'ի ծագմանէ անտի իւրոյ կալաւ զաշխարհս, մոռացօնք եղեն նմա առաջին անուագիւտ վարք, և յամենայն այլանդակ մոլորութիւնս անկղիտացեալ, և զանհաղորդական անուն իսկ շուայլեալ առ ամենայն, զամենայն ինչ աստուածացոյց բաց 'ի Հշմարտէն Աստուծոյ. զի ընդ գաղղիացւոյ մեծի Հարտարաբանին * խօսեցայց։

Եւ զինչ առ այս ահագին վիրաւորութիւն դարմանս իմանայցէ ամենաբուժիչ Հնարագէտն։ — Եւ 'ի ձեռս մարդկան զպատմութիւն դարուց անցելոց։ Օտղայութիւն նոցա գեղեցիկ վիպօքն զբօսեցուցեալ, անաղդելի Հարտարութիւնք 'ի բաց դարձոյց 'ի մոլորութեան յերկայն Հանապարհէն։ Այսպէս առաջին մատեան ստուածային, որ երկոց է և ամենայն մատենագրութեան մարդկան, եղև պատմութիւն անցեալ ժամանակաց։

Այլ եթէ ընդ հողով իցէ ոսկի ոչ մի ինչ

* Պասքալ։

զպիտանեաց հարկանել զսպասաւորութիւն. այս-
պէս զի մի մոռացութեան փոշի թանձրասցի 'ի
պատմութիւնն յայնոսիկ, ոչ միանգամ կամ
երկիցս, այլ բազում անգամ Հայրն անմահից
և մահացուաց պատուէր հրամանի 'ի վերայ կա-
պէ ժողովրդեան իւրոյ յորոտաձայն ամպոցն
Սինայ՝ ընթեռնուլ զցայգ և զցերեկ զբանչելիս
աւուրցն առաջնոց, հեղուլ և յականջս նորատի
զաւակաց։ Զովաւ ևեթ դիւրապատիր գաղշա-
պարաց արահետ հոդեալ Ճանապարհ 'ի բազ-
մահրապոյր կենցաղումն։

Զեթէ միանգամ յանձն առցուք և յընտանի
մեր մատեանս ակն յառել, նախկին յաչս մեր
հարկանի քաջափառ անուն արշակունեանն Ա-
զարշակայ, որ յառաջին քայլափոխս 'ի բազաքա-
կան կցորդութիւն կենաց՝ զպատմութիւն հարց
մերոց անհրաժարելի համարեալ, զայն նախ
պատրաստեաց իւր և զաւակացն իւրոց ուսումն
կարևոր։ Որով և բարձրագլուխ խրոխտանամբ
մեք արդ առ այլովք ազգօք ուղիղ ազգաբանու-
թեամբ զկնի սրբազիր մատենիցն։ Զգիտեմ
զի՞ 'ի մեծախոհութեանց բազմահանձար առնն
'ի գովեստ առից։ Զնուն՝ որ բազմախօս է 'ի
սիրտ ամենայն հայ որերոյ. այլ այնու առաւել՝
զի բարբառ ետ պատմութեան։ Զի ևեթ համ-
էր առ մեզ պատմութիւն, զարմանայիք դուք ընդ
մեծագործութիւնն վեհագոյն ձերոյ Ա՛զարշ-
ակայ։ Զ՚այդ զարմանք ձեր, այդ գովութիւնք

խրախոյս տան ինձ տակաւին 'ի խանջել բանից իմոց։

Զգ մեր Թերևս քան զայլ ամենայն ազգս քաջ իմացաւ յառաջին դարուն բարեզարդութեան զգիտութիւն այսր ուսման։ Պատմութիւն Թագաւորացն 'ի մեհեանս և յանառիկ ամուրս ընդ մեհենական իրաց յամրի պահեալ, անմերձենալի գործէր անտուրբ ձեռաց։ Նշուշտ ցուցանել իմն կամելով Թէ որպէս անհրաժարելի է ամենեցուն ուսումն կրօնից իւրաքանչիւր, զոգ նմին և պատմութիւն գիւցազանց ազգին։ Այլ՝ աւանդողք նոցին՝ ոչ սինքրոնք ոմանք կամ վարկպարագի մարդիկ, այլ արք նուիրականք, օտարացեալք յամենայն կենցաղականաց։ Բանզի քուրմք մեր և քրմապետք ոչ միայն աւանդապահ էին նոցին հաւատարիմ, այլ և ինքեանք մատենագիրք։

Այս այսու Թագաւորք մեր իբրու այն Թէ հարկաւ իմն գուն գործէին անընդհատ պահել զկարգ ժամանակաց։ Այս օրէնս իմն դնէին անձանց՝ հայրենասէր վաստակօքն զամն արքայութեան իւրեանց նշուլագեղ ցոլացուցանել 'ի միջոց խաւարային դարուց։ Բանզի եթէ 'ի կամն իւրաքանչիւր մնայր ապատան, ըստ մտաց Թելադրութեան կարգել զպատմութիւնս դիպաց, զայր Թերևս ժամանակ, զի անպարապութիւն և կամ՝ այլ ինչ 'ի խափանարարաց զրկէր զազգն 'ի կարևորագոյն ուսմանէն։

Այս խորհուրդ օգտակար ունկնց այժմու թա-
գաւորաց անմահ կանգնեաց յիշատակ . զոր
մերք , արդարև անմահութեան արժանաւորք ,
ոչ միայն խորհեցան այնչափ գարուք յառաջ ,
այլ և յարգիւնս իսկ ածին ։ Փառք և կորանք
միանգամայն յետնոցս . զի բախտ նախանձոտ , ա-
ւա՛ղ , զ զ ջ ա ց ե ա լ ընդ նախկի առատատուր պար-
գևան , ձախողակի ինն այնչափ 'ի խնամարհ նուա-
ճեաց արդ զմեզ , որչափ երբեմն ամբարձեալ
էր 'ի վեր ։ Այս հարք մեր մեռացկոտք փառաց
և պատուոյ անձին շինչուցին զամենայն իմաստ ազ-
նուական , և 'ի սպառ եղծին զամենայն զեղ
բարեվայելչութեան ։

Ո՛ , ո՞ պատկառելի ատեան , մի՞ աղաչեմ
յանդուգն հանարեսցի ձեզ այս ցասումնանման-
ձու աղգասիրութեան ։ Վանգի ընդ արհամար-
հանաց պատուութեան , տակաւ եղծան և ապա-
կանեցան և այլ ամենայն բարեզարդութիւնք
մերոց հայրենեաց , և խրթնեցան ամենայն գե-
ղեցկայարմար վայելչութիւնք ։ Վանգի պատ-
մութիւն ոչ միայն վարժապետ է կենաց , որ ա-
ռանց աչառանաց իրիք կամ՞ վրիպանաց զգաս-
տիարակեալն խրատէ , այլ և հին և աղբիւր
ամենայն կարևորագոյն գիտութեանց և արուեստ-
ից կենցաղոյս ։ Վասն այնորիկ եթէ անտես
լիցի գիտութիւն իրաց գործեցելոց՝ նկուն լինին
և այլ ամենայն գիտութիւնք ։

Այս ապաքէն , եթէ ըսխալեցեմ , ունի ակ-

հարկումն և այն, զի քաջախոհն յունաստան, որ ախորժէր զամենայն իմաստ կարևոր առաս-պելեայն գեղեցկանկար քողով առագաստել, մայր Ոսայից, զոր զամենայն գիտելիս բո-վանդակէր, զՆեմոսինէ ասաց, զոր յիշատա-կարան սիրեմ կոչել անցելոց։ Անդր պատմու-թեամբ արդեօք ընդարձակաձաւալ գեղարուես-տիցն տարածանի առաջի ասպարէզ։ Ոչ ապաքէն 'ի Հրաշալեաց անտի 'ի Պիթիայ և 'ի Դրասի-դեայ մինչև 'ի Կանովայ, փառք աւուրց մերոց, զրիչ քանդակագործին պատմութեամբ խրա-խուսեաց 'ի զարմանալեայն ձեռակերտութիւն։ Ոչ պատմութիւն զՊիցիանեայ և զՍոֆայելի երկնային իմն հրով վառեաց զոգիս լինել հիա-յուցիչս գարուց բազմաց։ Ոչ և ինքնին ատե-զագիտութիւն, բնագիտութիւն, հնարիմաց մեն-քենականութիւն, 'ի պատմութենէ խրախոյս առին 'ի թռիչս յանդգնագունս խոյանալ։

Զեքսանդր յԱղիականէն Հոմերոսի, որ ա-ռաջին պատմութիւն է դիւցազանցն Յունաց, ոչ միայն ուսաւ զկարևոր առաքինութիւնս առն կարգելոյ առաջնորդ ազգաց, այլ և զկեզակարծ արուեստս պատերազմի, զոր առաւել յաղթա-նակս կանգնեաց քան քայլս փոխեաց։ Մին եղև նախանձաւոր և մեծն այն, որ իբրև վարսամ նորանշան փայլեալ յաւուրս մեր, յակռնիս կա-յոյց զոգիս նուաճեալս և զնախանձաւորսն իւր։ Փառացն նորա կապուտակ ակն նախանձոտ՝ սահ-

մեն եղ զանձուկ սպառաժ սեաւ, որ անկուն 'ի լեռնատասատ ալեաց ցասկոսն Ովկիանոս՝ անելիւղ յամպս ամբառնոյ զմայլ գագաթին, Ձնգրիտ պատկեր գիւցազնին, որում անկշռելի փառօք գտաւ ասպնջական։

Ո՞ ընդ Վենկիլինատեայ անցեալ ընդ վէպն, որ զարօր ընդ Ծիրանեաց, և զծիրանիս ընդ աբօրոյ բաղում անգամ փոխանակեաց անվրդով, և արհամարհիցէ զնշակութիւն։

Կենցաղագէտ քաղաքաւարն յամենայն կաբևորագոյն պէտս ազգաց և պետութեանց 'ի պատմութենէ խորհուրդս հարցանէ։ Ղանդի յորժամ պարտ ելցէ գործել ինչ, 'ի գործեալսն արժան է զակն յառել։ Օ՛ի հանդէսք գործոց՝ զՁնմարտութիւն ուսուցանեն. խորհուրդք՝ վրիպակք են կամ զանգիտողք։

Պատմութիւն և յաստուածայնոցն գիտութիւն անատերիւր առաջնորդեաց մարդկան։ Ինձ շատ է յուշ արկանել ձեզ զայրն հոյակապ. Նեբեցէք ինձ անուանել զնա նոր հայր եկեղեցւոյ, որ ծագեաց 'ի Պաղեստինոյ լուսազարդել զարևմտակողմինն առ հասարակ։ Ղանդի ոչ ասպաքէն պատմութիւնն ինքնին եբաց առաջի ընդարձակածաւալ մտաց Պոսիւէի ասպարէզ անհուն՝ 'ի բազմամբոխ գործս մարդկանն կատել զանփոփոխելի տեսչութիւնն աստուածային, որ 'ի մի ուշ նպատակի ուղղէ զամենայն։ Ղարևելեալ գեղեցկայանգուշն գրչի նորա նկար անմահական՝ ոչ

միայն նախանձ արկանել հրաշատեսիլ գեղեցիկութեանց Պոլիանեանց և Սոֆիայելեանց և այլոց համօրէն Ճարտարաց, այլ և պատկառէն իսկ գալ ընդ նմա 'ի կշիռ հաւասարութեան։

Պիտեմ զի անցագ եղէն բանք իմ քան զպայման, և պարտ է ինձ 'ի կատարած կոյս խուճապել խօսիցս. սակայն աղաչեմ և զմի ինչ կաբևորագոյն քան զամենայն յուշ ածել կարձ 'ի կարձոյ։

Վանզի պատմութիւն յոյս է անմահութեան աշնուական հոգւոյն, և խրախոյս 'ի կենցաղս գուտ մեծագործութիւնս։ Այս բնաւորական իրաքն են մարդոյ անմոռանալի գոլ՝ ոչ միայն ժամանակակցաց, այլ մանաւանդ և որոց յետնի դարն գալոց իցեն։ Մինչև եղեռնաւորի ումեմն Հրոստրատայ, որ չէ անծանօթ բազմահանձար կանանիս, յանդուգն ձեռօք հրձիգ լինել 'ի մեծահամբաւ տաճար Արտեմեայ Եփեսացւոց, զի թէ ոչ քաջագործութեամբ ինչ, գոնեայ չարութեամբն լիցի անմոռաց առ ապագայս։

Այն այս իրաքն արդեօք անմահութեան զօրացոյց զմիտս և զձեռս դիւցազանցն Աստոյ, Աքիլլեայ և Հերոպայ և նորին իսկ Աքերիկայ յանցեալ ժամանակաց անտի ամբառնալ 'ի վեր նախանձաւորս լերանց յաւիտենականաց կոթողս, բրդունս, և շիրիմս դամբարանաց, յաղթականս ամենակործան բռնութեց ժամանակին։ Այլք պանեցին պատկերս բարեչափս և նկարս զօշտ-

տիչա , զի գոնեայ անզուգական գեղեցկութիւնքդ նոցա հրապուրեսցին անագան թոռունք պահել զայնոսիկ անդրժելի նախանձաւորութեամբ յիշատակ անմահ ։

Այլ անազդելի և լուռ են յիշատակարանք . լուռ պատկերքդ և նկարքդ , եթէ լռէ պատմութիւնն ։ Սակ եթէ 'ի վարժս նորին որ կիրթ իցէ , ահ , մի մի քարինք փողոցաց , օդն և ջուր , լերինք և գետք Ճարտարախօս են առ այնպիսին , և ամենայն քայլափոխ խրախուսէ զնա 'ի Ճանապարհ փառաց հայրենեաց ։ Որ ակն մարթ իցի անկարեկիր տեսանել զտաճար փառաց հայրենեաց , և անբնդոստ սրտիւ 'ի նա հայել ։

Ահա զարի նահատակն խրախուսէ ժուժկալել խիստ երկանց պատերազմի , յաչս զնել զմահ , յոյս ևեթ անմահանալոյ յէջս պատմութեանց ։ Սէք ապաքէն զհառաչանս մեծին այն մակեդոնացւոյ որ կայ առ շիրմաւն Աքիլեայ ։ Մի կարծիցէք , ոչ ցաւոց հեծութիւնք են , ոչ արտասուք սրտին անձկութեան , այլ նախանձաւորութիւն մեծ , զի ոչ նմին հանդոյն և իւրոց արութեանց իցէ որ հռչակող ։

Ապաքէն այսու նուրբ տեսութեամբ սիրելի էր բազմահանձարն յունաստանի , զի ընդ ողիմպիականացն և այլոց բազմահանդէս խաղուց 'ի վէգ եկեսցեն և քաջ նոցին մատենագիրք , վաւել յոգիս մանկուոյն զանձախնելի բոց հայրենասիրութեան ։ Այսու ահա որչափ որդիս հա-

մարէր բարեբախտն 'ի մարս յունասատան, նոյն-
չափ և դիւցազունս։ Անդի ամենեցուն այս
մի էին խղձք՝ փառաց թողուլ յիշատակ երկայն
և անանցանելի, անդր քան զանձուկ սահման հա-
մառօտ կենացս։

Ցպաւորագոյնս և ս արդեօք տեսանեմք զկրաց
արգասիս առ սինէացիսն, որ ամ կենցաղօգուտ
բարեզարդութեանց անդրանիկք և արժանիք ար-
դարև գոլ օրինակ։ Վասն ատեան առանձին հաս-
տատեալ արանց իմաստնոց և առաքինեաց, պա-
տուիրանաւ յանձն առնեն զամենայն գործս թա-
գաւորաց ժամանակին անխարդախ աւանդել
յետնոց։ Անդաղիմ յիշատակել 'ի նոցին իսկ
մատենիցն՝ եթէ որպէս այս կարգ, ամենայն գո-
վութեանց արժանի, ոչ միայն յորդորեաց զինք-
նակալս նոցին 'ի պիտանեացն ձեռնարկութիւն,
այլ և զյանդգրգունսն ձեռնապահ առնէր 'ի ինա-
սակարաց։

Եթէ այսչափ օձանք օգտակարութեան իցեն
ուսման պատմութեան ազգաց, ո՞ մարթիցի մի
մի թուել զբարենշան արգասիս՝ եթէ զբ զիւրոյ
գաւառին միշտ ընթեռնուցու և ուսցի և խոկաս-
ցի զպատմութիւն։ Եկատէ 'ի նմին թէ ոչ վեր
'ի վերոյ դուշնաքեաց ինչ զբ, այլ շառաւիղ է
դիւցազանց. այլ այնպիսի խաղայ արիւն յե-
բրայեն, որ բազում անգամ ոռոգեաց զՀայրենիս,
որ բազում յաղթութեամբք Նոխազոյց զնա, և
բարձր 'ի գլուխ պանծացոյց 'ի վերոյ ասոխաց և

աւարառուաց նորա։ Լ.յնպիսեաց որդի է հարց, որ զամենայն ինչ, և զկեանս անգամ եղէն 'ի վերայ հայրենեաց։

Լ.յսու այր ազնուախոհ գուն գործեսցէ արդեօք ոգւով չտի չաղարտել զանուանն փառաւոր, որ կոչեցեալ է 'ի վերայ նորին։ Լ.թենացի ոք լուեալ զանցսն Կողբոսի արքայի իւրեանց, յոր ինչ ոչ խրախուսեսցէ։

Հերակլեանք, ազգ հզօր և միշտ յաղթական, պատեալ պաշարեալ պահէին զքաղաքն աթենացւոց։ Լ.ուր եհաս յունին արքայի՝ եթէ պատգամախօսն այնմ կողման խոստանայցէ զյաղթութիւն, որոյ նախ մեռանիցի զօրավար։ Հայրենասէր սիրտն արի խորհեցաւ և հաստատեաց զարժանն։ Ի բաց մերկացաւ զզարդս և զծիրանիսն արքայական, և առ յանձն ոչ եթէ զհանգերձս զդգնն զօրականի՝ խառնել յառաջին դասականսն. քանզի խիթայր թէ գուցէ խնայեսցեն 'ի նա սլաքք թշնամւոյն և վրիպեսցի 'ի ցանկալւոյն իւրմէ 'ի մահուանէ։ Լ.յլ ընդ հանապարհ անքոյթ խորհեցաւ եղանել ընդ առաջ մահու։ Լ.ուկ զանձամբ զրզլեակ աղքատի և զնաց 'ի բանակ ոսոխին գողանալ անտի զմահ քան խուիս քանի մի։ Նկաւ Կողբոս քաջութեամբ անծանօթ յայլոց ամենեցունց, անձին եւեթ ծանօթ. այլ մեռանէր ուրախութեամբ, զի մահուամբ իւրով շահէր ժողովրդեան իւրոյ ազատութիւն և փառս։

Ա՛հ, միթէ և մերոց պատմութեանց էջք ա-զահիցեն մեզ այսպիսի օրինակս հայրենասիրու-թեան, և այլ բազմահոյլ առաքինութեանց։ Ինկեալ իցեն 'ի մոռաց մերոց Ա՛բամ, այր աշխա-տասէր և հայրենասէր, որ անմահ փառս համա-րէր զմեռանել 'ի վերայ հայրենեաց։ Որ ընդ մեօք նուաճեալ ազգս և թագաւորութիս հրա-ման տայր ընդ քաղաքական կենաց, ուսանել և զիսօսս և զլեզուս հայկական։

Ա՛բայ գեղեցկագոյն հոգւովն քան զմարմնոյն գեղ, վեհ առաքինացեալ քան զերբայեցին գե-ղեցիկ, կորանս անհնարինս ածէր 'ի վերայ բոր-բորիտն աշխարհածուհւոյն։

Ցիգրան թագաւորացն մերոց խոհեմագոյն և ամենեցուն քաջ, կացեալ առ Ա՛ռասխաւ, և յու-նական կղզեաց տայր հրաման։ Ա՛ռ նորին համ-անուն աշխատ առնէր զսէգ հռոմայեցին զամ-բաղումն։

Ա՛ռտաշէս, յորոց հիացեալ 'ի համբաւոյն՝ առ հասարակ Ա՛լլաղայ զահն մատուցանէր։ Ա՛ռ միւսն Ա՛ռտաշէս ամենայն առաքինութեանց և գործոց պարապեալ ուղղութեանց, նախանձա-ւոր իւր յարդարէր զխրոխտ զահակալ պարսկա-կանի պետութեանն։

Ա՛ղաղչակ կորովաբան և հանճարեղ, որ ամենայն կենցաղական կարգաց զաշխարհս մեր բարեզարդեալ, միւսանգամ նախանձելի յար-դարէր զնա ազգաց հեռաւորաց և մերձաւորաց։

խոտրով, որ յափանցն Նշրասխայ յաղթա-
կան դրօշակօքն անցեալ զանցեալ զազգօք և
զթագաւորութեամբք, մինչև առ Գանգիսիս
ետեղի արար զՀայթիւն լայնալիճ աղեղանց հոյ
բանակաց։

Ամենայն առաքինութեամբք բացափայլեալն
Տրդատ, որ մարմնոյն արութեամբ յակՃիռս
կացուցեալ զՀելլենականն, զՀռովմայեցին, զ-
Գոթս, զՊարսս, զասորեստանեայս, այլովքն
հանդերձ, հոգւոյն առաքինութեամբ ծայր 'ի
ծայր լցուցանէր զՀայաստան աջակցեալ Հոգւոյս
Լուսաւորին։

Գանդաղիմ յիշատակել զԱրդանեանս և
զԱհանեանս, որ առաւել Հայրենասէր առաքի-
նութեամբ, քան թէ մեծաձեռն բանակօք զդողի
հարին 'ի գահոյն իւր զարքայից արքայ։

Ո՞ թուեսցէ զվաստակաբեկ քայլափոխան, զոր
առնէին 'ի սէր Հայրենեաց 'Ներսէս, Վահակ,
Մեսրոպ և հոյլք նոցին զաւակաց։

Տեսէք ահա զթռոյց սլաքի, որ Ճայթէ 'ի լայ-
նալիճ աղեղանէ նախահօրս մերոյ Հայկայ, և
թափ անցեալ ընդ երկաթապատ լանջն դի
ցուրտ տապատ յերկիր արկանէ զՀսկայն որ-
սորդ։ Ո՞րպէս Հաստաբազուկ և գեղապատշաճ
դիւցազունն թումբ կանգնեցաւ ընդդէմ յորձա-
նաց յաւէրժից քաջաց։ Ո՞ զօրացոյց զկարշնեղ
բազուկն նահատակին։ Ո՞ ուղիղ առաջնորդեաց
ընդ ծայրս ակընջաց քաջազինն անվրիպելի և-

րեբթեւեան երկաթոյն։ Ինքնին ահա առնէ պա-
տասխանի ոգին վերհազուն։ — Էր հայրե-
նեաց։

Բ.յլ յայնժամ տակաւին չէին հայրենիք,
տակաւին չէին Ճոխացեալ այնչափ փառօք, որ-
պէս այժմն. այլ յայնժամ յոյս եւ թեթ հանդեր-
ձելոց քաջալերեաց զարի նահատակն։

Ինձ մարթ էր յիշատակել տակաւին զանթա-
ռամելի փառս հայրենեաց մերոց, որովք մար-
թին անկասելի շքեղազարդել ստուարակար-
կատ մատեանք։ Բ.յլ յաձախութիւն նոցին
միայն եղև ինձ խոսիանարար։ Ո՛հ երջանիկ խա-
փանարար։

Բ.յսոքիկ ամենայն չիցեն բաւական քաջա-
լերել զմեզ 'ի լուսագունիցն թեւակոխութիւն։
Ո՛հ, առ մեզ հարք մեր, առ մեզ աղաղակեն 'ի
վերէ զամբարանաց իւրեանց։ Ի մեզ, ո՞ ազգա-
սիրաց ակումբ, սոպաստան արարին զսէր հայրե-
նեաց, և զփառս անձանց։ Մեծամեծաց ակն
ունին 'ի քրտանց մերոց. և յոյս անխաբելի ահա
նշոյլս ուրախութեան ցոլացուցանէ 'ի բազմա-
մեայ կնձիռն Ճակատուց նոցա։

Հապա, մանկունք ուսումնասէրք, անվրիպե-
լի յոյս հայրենեաց, հապա խրախոյս առէք ան-
վեհեր սրտիւ նմանել առաքինութեանց հարց
ձերոց։ Եթէ 'ի լուր նոցին առաքինութեանց
ցան աչք ձեր քաղցր արտասուօք, եթէ ուժգին
եւ ընդ անընկճելի լանջօք ձերովք տրոփէ սիրտ

ձեր, եթէ հուր սրբութեան արծարծեցաւ 'ի ձեզ և ծածուկ բռնութիւն զօրանայ 'ի վերայ ձեր, անխաբելի են ակնկալութիւնք հայրենեաց 'ի ձեզ։

Հապա քաջալերեցարուք նմանեալ նոցին. բուռն հարէք տպաւորել 'ի ձեզ զՔրիստոս պատկեր նոցին առաքինութեանց։ Օ՛ի առաջին փառք նորովքն ևեթ մնան անեղծանելի։ Առաքինութիւնք հարց ժառանգութիւնք են ձեզ ծանրագին. գանձ անկշռելի ընդ ամենայն մեծութեց. ջահ լուսապայծառ։ Այլ յուշ լիցի ձեզ՝ զի որպէս այն ջահ անշիջանելի նշողիւքն լուսաւորէ զփառս ձեր, նոյնպէս յայտնի արասցէ և զթերութիւնսդ, եթէ 'ի նոցին նմանողութենէ վերջացեալ օտարասջիք։

Յայսմ անձուկ ասպարիզի ուսջիք զհանդէս արիանալոյ յընդարձակ ասպարէզ փառաց. 'ի սմա ամենայն ինչ օժանդակէ ձերոյ բարգաւաճանաց։ Հապա առէք քաջալեր. զի ահա և ձեռն օգնականութեան Հօր հասարակաց ամբարձեալ է 'ի վեր՝ հոսել 'ի գլուխս ձեր զառատաձիր պարգևսն երկնից։

1838

Ի ՀԱՆԴԻՍԻ

ՄԻՑԱՆԱԿԱՑ

Որ բարեհաճեալ է Աստուած տալ ինձ զայս յաւուրս տարաւոյն, զի խնդութեան մեծի, յորում, ո՛ առաքինի պատանեակք, հասանէ ինձ հռչակել զՀանդէս քաջութեան ձերոյ։

Թէպէտ և նախանձոտ ժամանակն, զիսերիմք Ճշմարտութենէ, զողացան յինէն զցանկալի վայրկեանսն, կորո՛ւստ անեղծոգելի, զոր ոչ այնչափ 'ի սովորութենէ, որչափ 'ի յօժարութենէ սրտի ամ ըստ ամէ նուիրեի 'ի շքեղազարդել զՀանդէս ձեր. Թէպէտ և բազմածուփ յուզմունք մտաց՝ զսիրտն անդորրութեան ցանկացող՝ մատնեցին յալիս տագնապութեանց, այլ ձեր առաջի, այլ 'ի տես քրտանց ձերոց՝ ոչ կարեմ լռել համբուն, և ահա այսու սուղ բանիւքս ցանկամ արտայայտել ձեզ զիղձս սրտիս՝ անբովանդակելի 'ի զիր և 'ի բան։

Որ է խնդութեան այսօր և պատկառելի ակըմբիս, որ զմի մի 'ի ձէնջ դառնավիշտ երկամիտք, Թոյլ տացի ինձ այսպէս զծանրատաղտուկ հոգս և զկիրս նորին 'ի դէմս ածել, դառ-

նավիշտ երկանքք ծնանի 'ի բարւոք կեանան։ Աղդ և զայլ ամենայն կարևորսն 'ի մոռացօնս արկեալ՝ ժողովեալ է այսր լինել ձեզ խրախուկից, և քաջութեանց ձերոց հանդիսադիր և պարգևաբաշխ։

Տեսէք ահա, զի աչք ամենեցուն 'ի դէմս ձեր խնդրեն զակնահաճոյ ակամակեաղ տեսութեան իւրեանց։ Այսպէս մեծ համարիմք զբարւոք ձերոյին դատիարակութիւն, և առ նովաւ երկրորդ զամենայն զմնացեալսն. քանզի քաջ գիտեմք թէ այնու միայն եղիջիք դուք ընտիր զարդք եկեղեցւոյն Քրիստոսի, և արք հայրենասէրք, արժանի մեծամեծար հարցն մերոց։

Այս երանի ձեզ՝ որ անխոնջ վաստակօք ուռոգեցիք և զայս ամ քրտամբք ձերովք զփառաց ասպարէզն, յոր բուռն հարէք ընթանալ։

Ի հեռաւոր ափանց գրկատարած բազուկս սիրոյ կարկառեալ փարիլ զձեզք՝ ընդ մեզ ուրախակից լինին ձեզ և անձկայրեաց ծնողք ձեր սրտատրոփ բերկրութեամբ, որոց 'ի ձեզ հաստատեալ է ակնկալութիւն։

Ուրախակից ձեզ և ամենայն ուղղատես որդիք Հայկայ, զի ձեօք յուսան զխրթնացեալ փառս իւրեանց նորանշոյլ գեղազարդել վերըստին։

Ուրախակից ձեզ և հայրենիք մեր առ հասարակ, զոր տեսանեմ հոգւոյ աչօք, զի առաւել քան զյաղթանակս դիւցազանց իւրոց Քրտաշի-

սեանց , Տիգրանեանց , Տրդատեանց , այլովքն հանդերձ , ընդ ձերս այս Հոխտացեալ պանծայ ։ Որչափ պերճագոյն իցեն իմանալիք , որովք դուքդ Հոխանայք , քան զՀոխութիւնսն կորստականս , զոր նոքայն ամբարեցին 'ի ծոց հայրենեաց ։ Բայց ուրախ լերուք և դուք , դուք որ արիաբար նա- հատակեալք , այսչափ խնդութեանց եղերուք պատճառք ։

Սակայն զայս ցանկամ քաջ ձեզ 'ի միտ առ- նուլ , ո՛վ սիրեցեալ պատանեակք , զի այս ուրա- խութիւն , այս հանդէս , որ զոշոտէ զաչս ձեր , ոչ այնչափ մրցանակ է վաստակոց ձերոց , որ հա- զիւ ընդ սեամն կոխեցէք դժուարագնալի Հանա- պարհի կենցաղոյս , որչափ խրախոյս յառաջա- դէմ և բարգաւաճելոյ 'ի ջանս առաքինութեց , և 'ի փոյթ ուսմանց ։

Որ խառն 'ի խուռն կացեալ իցէ ընդ ամբո- խին , ոչ ձգէ յանձն զաչս հանդիսականաց ։ Բայց որ միանգամ յաստարէզ քաջութեանց խրախու- սէ , միապիշ առնէ յինքն զաչս և զսիրտ ամենե- ցուն առհասարակ ։ Եւ ամօթ անհարին՝ եթէ 'ի սկզբանն արիացեալ , և ապա 'ի վատթարու- թիւն հատանիցիք ։ Եղո՛ւկ այնպիսւոյն ։

Բայց մեք , այլ այս ժողով հայրախնամ , այլ որդեսէր գութք Հօրս հասարակաց փառս ձեզ ըղձան և գուշակեն . և երանութիւն ևեթ գուն գործեն պատրաստել ծափաձայն խրախուսա- նօքն թէ յաղցաւոր կենցաղումն , և թէ առա-

ւել 'ի յարկան յաւիտենականս։ Այլ ժամանակացջիք 'ի կէտն ցանկալի, եթէ ոչ սկսանել միայն, այլ գիտասջիք և ցանկորդել 'ի փառաւոր ասպարիզիդ։

Վասիտէք արդեօք զի 'ի յաւիտենիս յայսմիկ պէտք կարեաց մարդկան բազմապատիկ են։ Այլ ցորչափ տագնապիցիմք 'ի կարեաց անտի, չիք որ եղկելի քան զմեզ։ Այլ, շնորհք Աստուծոյ, զի տեսչութիւն նորա, որ կամի զմեզ անանց և անցաւորաւս Հոխացեալ միանգամայն երանութիւնք, շնորհեաց մեզ զիմացողականն, զպատկեր նմանութեան իւրոյ։ Այլն ամենայն զլացաւ մեզ, որով անբանականքն հարկանեն զպէտս կարեաց իւրեանց. զայս միայն առատաձեռնեաց, և 'ի նմա գերօրինակ զայլն ամենայն։

Զոխանակ ամենայնի ած ձգեաց ժողովեաց զձեզ 'ի վարժարան այսր առաքինութեանց և իմաստութեան, որպէս զի անստերիւր դաստիարակութեամբդ ձերով բարւոք յարդարեալ զսիրտ և զմիտս, զկէս 'ի կարեաց պիտոյից անտի ուսջիք անտեսել. զայլս յանհրաժարելեացն ընդ լծով իմաստութեան նուաձել. և 'ի դարման մնացելոցն ուսելովքն զհնարս պաճարանաց հայթայթել։

Այս ահա ձեզ Հանապարհ երանութեանն, առ որ պատրաստեաց հայրախնամն Աստուած զամենայն սիրտ մարդկեղէն։ Սակայն ձեր երանութիւնդ ոչ ստապատիր ինչ եղիցի և վաղանցուկ,

եթէ հրամանաց իմաստութեանն պատկառ կայ-
ցէք. այլ ՀՇմարիտ, և այնու իսկ անանցանելի։

Օ այս Հշմարտութիւն ընդ այլոցն ամի յա-
ռաջնոյ օրէ անտի, յորում Հնարհեցաւ ինձ և
իմում բազմավաստակ գործակցիս տեսանել
զձեզ, զուն գործեցաք ազդողագոյնս տպաւորել
'ի սիրտ և 'ի միտս ձեր։ Այլ երանի՛ մեզ՝ եթէ
յաջողեցաք 'ի նոյն։

Այլ եթէ յաջողեցաք, ձեզ արդ պարտ է ձե-
րով բարեկիրթ քաղաքավարութեամբ և ու-
սումնասէր ջանիւք սրբել զքիրտն Հակատուց մե-
րոց, զոր քրտնեցաք յոռոգանել զսերմանիս ա-
ռաքինութեան զարկեալս 'ի սիրտ ձեր։

Այլ թէ յանկարծ գուցէ ոք 'ի ձեզ, ո՛ առա-
քինի պատանեակք, առ որ չիցեն ազդեցեալ
բանք մեր. և խիթամ, աւա՜ղ, թէ գուցեն, դուք
որ 'ի Հշմարտութեան կացեալ էք 'ի վերայ, դուք
օրինակօք և բանիւք զայնպիսի տառապեալն ա-
ծէք յուղիղ պողոտայն, ընդ որ դուք ինքնին
բուռն Հարեալ էք ընթանալ։ Նախանձաւոր
ձեզ արարէք զայնպիսին. նախանձաւոր գործե-
ցէք եղբարց ձերոց այնոցիկ, որ 'ի միջոյ ձերմէ
թռեան կոխել զերկնաչու Հանապարհն։ Մի՛
յանձն առնուցուք զի այնպիսիք ոմանք ձեզ ան-
նմանիք կեղտ ինչ վատ անուան և զձեօք շփեսցեն։

Սակայն այս բանք ոչ եթէ կշտամբողականք
ինչ իցեն առ այնպիսիս, զի և ոչ բազմազուարՀ

հանդէս թոյլ տայ ինձ զայն, մանաւանդ թէ սիրան հայրագութ, որ զձեզ զայ զտիւ և զգիշեր. այլ ցոյց են նախանձաւորութենէ յառաջադիմութեան և փառաց նոցին, և յորդոր 'ի լաւագոյնսն թեւակոխելոյ։ Օ՛ի զուք և նոքա առ հասարակ զրաւեալ ունիք զոգցես միայնակ զիրձս և զցաւս այսր սրտի։

Ա՛զաչեմ զձեզ զայս բան քաջ 'ի միտ առնուլ. զի վարժարանս այս առաքինութեան ոչ 'ի վեր բարձրանայ կորստական գանձու արծաթոյ, որ զնախանձոտ անյագութիւն ագահութենէ զրգռէ մարդկան. երանի թէ զօտարաց և ևթ. այլ հաստատահիմն խարսխեսցի 'ի վերայ ձերոյ ուսումնասէր առաքինութեան։

Ա՛նուանք ձեր յաւերժական յիշատակ եղիցին. ո՜հ, իցէ՛ թէ յիշատակ փառաց, և յորդոր խրախուսանաց ամենեցուն, որոց թեւակոխեսցեն զկնի ձեր 'ի նոյն աշակերտակցութիւն։ Ի մեծ ինչ կոչեցեալ էք 'ի Տեառնէ. մի ապախտ զկոչումն ձեր առնիցէք։ Հայրենիք բազմառատ շայեկանութեան 'ի ձէնջ ակն ունին. մի անշնորհակալու ինչ գործ՝ ունայնաձեռն զտառապեալն վրիպեցուսցեն և յակնկալութենէ աստի։

Մերևս հայեցեալ յանձին տկարութի վհատիցիք. և առ հաւատարութիւն մեծի գործոյս անբաւականս խոստովանեսջիք զանձինս։ Ա՛ր-դար են բանքդ. սակայն մնոտի երկիւղդ. 'ի սիրտ ազնուական չէ հիւր արժանաւոր այդ երկիւղ փոքրոգի։

Գիտեմ և ես զի զուք տկարք էք. ապիկար 'ի գործ այդպիսի։ Բայց մի թէ ձեզ նման տկար իցէ, որ զձեռան օգնականութեան յերկնից կարկառէ առ ձեզ։ Ո՞չ տեսէք զսրբանուէր պաշտօնեայս Խարձրելոյն, զհարս ձեր զալէզարդ ծերունիս և զառաքինի երիտասարդս, զի փոքր մի յառաջ զսուրբ բազուկն 'ի վերս ամբարձեալ առաջի Տառինն անմահի մաղթէին 'ի բարձանց զանհնահանջելի օգնականութիւն երկնից խնդրեալ առ ձեզ։ Հնչեն անշուշտ ականջք ձեր, հնչեն տակաւին որմք վարժարանիս գոհացողական բանիւքն, զոր 'ի խորոց սրտին կաթողին ձայնիւ 'ի վերս առաքէին առ Աստուած, գրաւական նորանոր շնորհաց առ 'ի նմանէ։

Արդ թէ այսպիսի բարեխօսք էն ձեր. թէ այնպիսի հեշտալուր և հզօր օգնական, զի և ես վհատել ձեզ։ Զուն գործեցէք լինել արժանի երկնաւոր օգնականութեանն ձերով հլու անսացողութեամբ, խոնարհ պարկեշտութեամբ և առաքինի վաստակասիրութեամբ, և այնուհետև քայլս թուեսջիք հսկայից յասպարիզի ձերում։

Օ՜ սոյն 'ի ձէնջ պահանջէ ժողովս առհասարակ. զսոյն և Հայրս աստուածապատիւ, որ զի-ջեալ այսր առ ձեզ, զայ ինքեան ձեռօք պտակել զքրտնաթոր Ձակատս ձեր. և առհաւատչեայ երկնատուր ձրիցն ահա բաշխէ ձեզ զաստուածապարգև օրհնութիւնն հայրենի։

«Ազգային գրադարան»
NL0104889